ՊԱՐՏԱԴԻՐ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅՈՒՆ

ՖԻՐԴՈՒՍԻ

ՇԱՀՆԱՄԵ



Antares

8(55)
Ֆ-65

ՊԱՐՏԱԴԻՐ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅՈՒՆ

ՖԻՐԴՈՒՍԻ

ՇԱՀՆԱՄԵ

Սերգեյ Ումառյանի թարգմանությամբ

Երևան
«Անտարես»
2012

ՀՏԴ 891-55-1 Ֆիրդուսի
ԳՄԴ 84 Իրն
Ֆ 651

Հրատարակվել է պետական պատվերով

Հրատարակության պատրաստեց
Արքմենիկ Նիկողոսյանը

Ֆիրդուսի
Ֆ 660 Շահնամե/Ֆիրդուսի; Թարգմ.՝ Սերգեյ Ումառյանի.–
Եր. Անտարես, 2011.– 544 էջ+4 գուն. ներդիր:

Ֆիրդուսու «Շահնամեի» ներկա հրատարակությունը ներառում է այդ էպիկական կոթողի ամենահայտնի ասքերը՝ «Զալ և Ռուդաբե», «Ռոստամ և Սոհրաբ», «Սիավուշ»: Հիմքում «Շահնամեի» 1975 թ. հրատարակության տեքստն է. կատարվել են անհրաժեշտ խմբագրումներ, շտկումներ և սրբագրություններ:

The current "Shahname" publication of Firdusi includes the most popular tales of that epic creation: " Zal and Rudabe", "Rostom and Zohrab", "Siavush". The base is the "Shahname" edition of 1975 with the necessary editions and corrections incorporated.

Данная публикация Фирдуси «Шахнаме» включает в себя наиболее известные сказания эпического произведения: "Зал и Рудабэ", "Ростом и Зохраб", "Сиавуш". В основе лежит издание «Шахнаме» 1975 года, отредактированное и с внесенными необходимыми поправками.

ՀՏԴ 891-55-1 Ֆիրդուսի
ԳՄԴ 84 Իրն

ISBN 978-9939-51-345-4

© «Անտարես», 2012

Ես կերտեցի փառքի մի գործ իմ աշխարհում հայրենի,
Այսուհետև ամեն հետնորդ ինձ արժանի գովք կանի:
Ո՛չ, չեմ մեռնի, թեկուզ անցնեն դար ու դարեր անքանակ,
Զի պտղաբեր խոսքի սերմեր ես ցանեցի երկնի տակ:
Եվ ամեն մարդ՝ ում միտքը որ լուսավոր է և արթուն,
Միշտ իմ մասին լավ խոսք կասի, ինձ կպահի իր սրտում:

ՆԱԽԵՐԳԱՆՔ

ԽՈՍՔ ԲԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Այժմ պատմիր, հերթը քոնն է, ով իմաստուն խորագետ,
Մեր բանական մտքի մասին պերճախոսիր դու մեզ հետ:

Խրատական խոսքեր ասա, խելքի մասին՝ մի ձոներգ,
Մի՛ թաքցրու քո բանական մտքի ծառը ոսկեբերք:

Ամենազոր Աստված տվեց մեզ թանկագին մի նվեր,
Արժանի է այն առաջին քաղցրաբարբառ գովքին մեր:

Մարդու խելքը գոյն է նրա ու փրկիչը ողջ կյանքում,
Թե՛ հողաշեն մթաշխարհում, թե՛ բարձրաբերձ երկնքում:

Եթե մարդու միտքը ընդմիշտ խարխափում է խավարում,
Ոչ մի անգամ նրա հոգին լույսի շող չի արձակում:

Մեզ այդպես է ուսուցանել մի հանճարեղ գիտնական,
Ծարավ ենք մենք նրա խելոք խրատներին իսկական:

Եթե խելքով չառաջնորդվես՝ կյանքում քայլել մի՛ փորձիր,
Քանզի սիրտդ մտքիդ հանդեպ միշտ հակառակ պիտ գործի…

Խելոք մարդիկ ամենուրեք քեզ կանվանեն տհաս մարդ,
Չեն ճանաչի մոտ ու հեռու բարեկամ ու հարազատ:

Թե՛ երկրում, թե՛ երկնքում խելքը միշտ է պետքական,
Ով խելք չունի՝ նա մեկընդմիշտ շղթայված է ամրագամ:

Մարդու խելքը աչքն է հոգու, որ տանում է լուսաշխարհ,
Ում հոգին որ կույր է աչքով՝ չունի բարի ճանապարհ:

Ամենից շուտ Աստված, անշուշտ, մարդուն խելք է շնորհել,
Որ համաչափ գործի դնի հոգեծնունդ սիրտը մեր:

Մեզ տրված է խոսող լեզու, աչք-հայելի և ականջ,
Այս եռյակն է հոգուն հայտնում չարի վտանգ, բարու կանչ:

Ո՞ր հանդուգն է երգել ուզում խելքի մասին կամ հոգու,
Խելոք մարդը հիմար մարդուց միշտ էլ գլուխ է թեքում:

Մի հարցրու ինչպես ծնվեց մարդ էակը առաջին,
Մինչև իմ ու քո ծնունդը, մինչև մրջյունն իսկ չնչին:

Աստված, սակայն, կատարյալ է երկնել մարդուն նորահայտ,
Ամեն գաղտնիք դու լավ գիտես՝ ինչն է հայտնի և անհայտ:

Թող բանական խելքը լինի քեզ հավիտյան առաջնորդ,
Որ խափանես չարությունը, լինես ազատ դու ճամփորդ:

Ո՜վ բարեկամ, գիտությունը օվկիանոս է անսահման,
Աշխարհին արար թեկուզ շրջես՝ ծարավ եղիր դու ուսման:

Քեզ նախնական գիտելիքդ ցույց կտա լույս լույսի փայլ,
Գիտությունը սահման չունի, դու ընթացիր քայլ առ քայլ:

ԱՇԽԱՐՀԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՄԱՍԻՆ

Եվ քանի որ դու կանխապես ուսուցանել ցանկացար,
Ուստի լսիր այս զրույցը իմ պատմության համաձայն:–

Ամենզոր Աստված առաջ ի հայտ բերեց ուժ գաղտնի,
Որ մեկընդմիշտ կեցություն ու լինելություն հաստատի:

Նա արարեց հիմնականը, քանզի պարզ էր, հեշտագյուտ,
Որ առանց մեծ դժվարության երկնեց նա չորս տարրանյութ:

Նախ՝ նա բերեց հուր-կրակը, որ ցայտում է շող ու լույս,
Ապա՝ օդը, հողն ու ջուրը, որպես գոյի կենսահույս:

Առաջնահերթ իր պտույտում Աստված երկնեց տոսկ կրակ,
Այնուհետև ի հայտ բերեց անծայրածիր մայրցամաք:

Իսկ քիչ հետո, երբ խաղաղվեց, Աստված երկնեց և քամի.
Աշխարհաստեղծ ջուր երկնեց նա՝ էականը չորս տարրի:

Ամեն մեկը իրենց հերթին գործակցելով անդադար,
Գոյության հիմք հաստատեցին մայրցամաքում դարեդար:

Հրաբորբոք քամին սուլեց, ջուրը հողին շաղախվեց,
Այդպես ծնվեց աշխարհին արար չորս տարրերից գոյաստեղծ:

Ապա նրա պտույտներից առաջացավ միացում,
Մինչև առավ մեծ հրաշքը, ու Տերն ապրեց հիացում:

Ու նորաստեղծ երկրի վրա հանկարծ փայլեց երկնաջահ,
Կրակ-հողից, օդ ու ջրից առաջացավ չորս օջախ...

Հողաշխարհին նա պարգևեց ազատություն լիիրավ,
Եվ ամեն ինչ բնականոն զարգացման մի ձև գտավ:

Ապա ծագեց համաշխարհի պտույտները մշտատև,
Երկրի վրա ծնունդ առան ծովեր, գետեր ու դաշտեր:

Մայրցամաքը, իրոք, դարձավ հսկայական լուսաշխարհ,
Քանզի ուներ գույնզգույն ու բյուրավոր լեռ, անտառ...

Այնուհետև ծիլ տվեցին խոտ ու ծաղիկ ու ցողուն,
Որոնք ելան մթնաշխարհից, փարթամացան մայր հողում:

Ու երկնքում փայլատակեց ցոլքը բազում աստղերի,
Հուր աչքերով վար նայեցին, որ գիշերը լույս լինի:

Կրակը երբ վեր խոյացավ, ջուրը հորդեց հողի մեջ,
Արեգակը պտույտ գործեց երկրի վրա անընդմեջ:

Ամենուրեք երևացին կանաչ ծառեր, ծաղիկներ,
Որոնք ծաղկում, աճում էին ու բարձրանում գետնից վեր:

Թեև նրանց վիճակված չէր ծլել, աճել ու ծաղկել,
Բայց ցամաքում չէին կարող գետնից պոկվել ու քայլել:

Մայրցամաքում երբ տարածվեց մի բուսաշխարհի հարաճուն,
Անմիջապես ի հայտ եկան վայրի գազան ու թռչուն:

Բայց գազանը կատարյալ չէր, ուներ շարժման հատկություն,
Նա սնունդ էր լոկ հայթայթում ու վայելում հանգիստ քուն:

Աստված նրան չէր պարգևել մտքի թռիչք ի վերուստ,
Չէր տվել և բարբառելու կարողություն ի ներքուստ:

Այդ պատճառով չէր հասկանում չարն ու բարին աշխարհի,
Կամ թե ի՞նչ էր էությունը թե ծննդի ու մահի...

Ամենագետ Աստված, անշուշտ, ճշմարիտ էր ու զորեղ,
Որ արարեց աշխարհին համայն իր էությամբ հանճարեղ:

Բայց չէր ծնել դեռ մի էակ մտքի ուժով իր հզոր,
Որ թափանցեր տեսանելի էության մեջ առայսօր:

ՄԱՐԴՈՒ ԾԱԳՄԱՆ ՄԱՍԻՆ

Մարդը թեկուզ շղթայի մեջ եղավ վերջին մի օղակ,
Բայց նրա մեջ պարփակված է ամեն լավ բան երկնի տակ:

Բարձրանում է միշտ դեպի վեր, ինչպես հպարտ մի բարդի,
Նա օժտված է ունակությամբ, շնորհներով բազմակի:

Մարդը հոգու աղբյուրն է մեծ, կյանքի, մտքի հենարան,
Համր ու խոսուն էակները ենթակա են միշտ նրան:

Ականջ արա խրատներիս ու խորամուխ եղիր արդ,
Ու հասկացիր, թե իսկապես ինչ ասել է՝ լինել մարդ:

Մարդը մի՞թե էակ է մի՝ այդքան չնչին ու նսեմ,
Որ չես տեսնում դու նրա մեջ լավ հատկություն, վե՛ի, վսեմ:

Չէ՞ որ մարդու մեջ է հյուսված կապը երկու աշխարհի՝
Թե՛ երկնքի ու երկրի, թե՛ ծննդի ու մահի:

Մարդը թեկուզ պտույտի մեջ եղավ վերջին մի օղակ,
Բայց տերն է նա փառքի, բախտի Աստծո հզոր աչքի տակ:

Այս հայտնության մասին, իրոք, կա հնագույն ասացվածք,
Բայց գուշակել ո՞վ կարող է գաղտնիքները մշտածածկ:

Խորհիր, թե ի՞նչ պիտի լինի քո ապագան ու ներկան,
Գտիր բարի նպատակի ազնիվ ճամփա իսկական:

Ով որ լուծի դժբախտության խառն հանգույցը այս կյանքի,–
Խելքով և թե գործով նրան ոչ ոք բնավ չի հաղթի...

Թե ուզում ես քեզ չօղակի չարչարանքի պիրկ շղթան,
Թե ուզում ես բախտից թասում թույն չլցվի դառնության,

Թե ուզում ես անվիշտ ապրել, թե այս և թե այն կյանքում,
Թե ուզում ես մաքուր լինել դու Տիրոջ մոտ երկնքում–

Համաստեղի մասին պիտի դու մտածես անպայման,
Քանզի նա է մեզ կյանք տալիս, նա պատճառն է մեր մահվան

Տիեզերքը չի ծերանում պտույտներից հարատև,
Նա չգիտի ո՛չ ժամանակ, ո՛չ աշխատանք ծանրաբեռ,

Եվ անդադրում կատարում է մշտահավերժ երկնավազք,
Մահկանացու էակի պես ոչ նսեմ է, ոչ նվաստ...

Նա դատում է գործը մարդու և բարիքներ պարգևում,
Դու Տիրոջից չես թաքցնի չարն ու բարին աշխարհում:

ԱՐԵՎԻ ՀԱՅՏՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Տիեզերքում մի հակինթ կա ճաճանչափայլ, շողշողուն,
Ոչ օդ է այն և ոչ էլ ջուր, որ տարածվի մայր հողում:

Մշտահավերժ կախված է նա երկրի վրա որպես ջահ,
Նրա փայլից աշխարհին արար դարձավ լույսի մի սրահ:

Անհունության մեջ լողում է ադամանդե լուսատուն,
Պարգևելով մեզ հանգիստ քուն և արշալույս կենսատու:

Նա ելնում է արևելքից որպես վահան ոսկեփայլ,
Աշխարհով մեկ հեղեղելով ճաճանչները իր շռայլ:

Աշխարհն այնժամ պայծառանում, շունչ է առնում վերստին
Ու կենսատու փայլ է տալիս մարդկանց հոգուն ու սրտին:

Բայց երբ նորից արեգակը թեքվում է խոր մայրամուտ,
Երկրի վրա տարածվում է բնականոն մուժ ու մութ:

Բայց ցերեկը ու գիշերը չեն հանդիպում մշտապես,
Հավերժական պտույտների անտես օրենքն է այդպես:

Ո՛վ Տեր, եթե արևի պես միշտ փայլում ես երկնքում,
Ասա՛, ինչո՞ւ չես շողշողում ինձ համար նեղ այս կյանքում:

ԼՈՒՍՆԻ ԳՈՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Աշխարհն ամբողջ պատեց խավար, ու լուսինը ելավ դուրս,
Մի՛ շեղվիր քո շիտակ ճամփից, քանզի նա է տալիս լույս:

Ամեն ամիս երկու գիշեր կորչում է խոր երկնքում,
Պտույտներից կարծես հոգնում, հեռանում է նա թաքուն:

Այնուհետև երևում է դեղնամած ու տանջահար,
Սիրո ցավից մարդու նման դառնում նվազ ու նիհար:

Իսկ երբ վերից նայում է նա հողաշխարհին ու մարդկանց,
Անմիջապես ծածկում է իր գունատ դեմքը ամոթխած:

Սակայն հաջորդ օրը կրկին արձակում է լույս վարսեր՝
Պարգևելով գիշերային խորախորհուրդ կյանք ու սեր:

Երկու շաբաթ հետո փոխվում՝ դառնում է մի հսկա գունդ,
Անշեղորեն կրկնելով նոր կորուստ ու նոր ծնունդ:

Ամեն գիշեր գունատվում է պայծառ դեմքը մեզ գերող,
Ու սահելով ձգտում է նա դեպ արևը ոսկեշող:

Աստված այդպե՛ս է սահմանել լուսնի համար կարգ, օրենք,
Դարե՛ր-դարե՛ր չի փոփոխվել ու չի փոխվի նա երբեք:

ՇԱՀՆԱՄԵԻ ԾԱԳՈՒՄԸ

Ինչ որ այժմ ես քեզ կասեմ՝ պատմել են դեռ շատ վաղուց,
Հավաքել են ամեն պտուղ իմաստության ճոխ այգուց:

Արդ՝ ինձ համար ուժից վեր է տեղ որոնել պարտեզում,
Ուստի նոճու շուքն է միայն հոգնած սիրտս երազում:

Գուցե նոճու շուքի ներքո գտնեմ հարմար մի տնակ,
Քանզի նրա տերևները բազմախիտ են, անքանակ:

Բայց տակավին չեմ խոնարհի իմ գլուխը հոգնաբեկ,
Մեր քաջերի մասին կրկին գրի կառնեմ նոր վիպերգ:

Դու մի՛ կարծիր բազմապատում մի հեքիաթ է վեպը այս,
Ավանդական ծեր մոգերը մեզ պատմել են մաս առ մաս:

Նրանք սիրով պահպանել են բազում մատյանք հինավուրց,
Որոնց մեջ և կային հազար վիպերգություն ու զրույց:

Բազմացրիվ այդ վեպերը ուներ ամեն մի մոբեթ,
Սակայն ամեն մեկը միայն մի մատյանի մեկնագետ:

Դեհկանական հին սերնդից ապրում էր մի փահլվան,
Զրույցների սիրահար էր ամրաբազուկ այդ հսկան:

Մատենագետ մոբեթներին իր մոտ կանչեց և ասաց.
«Գրի առեք զրույցները թե՛ նոր կյանքի, թե՛ անցած»:

Այնուհետև հարցուփորձեց ծեր մոբեթից խորագետ,
Թե ինչպե՛ս են հնում ապրել շահ, նախարար իրար հետ:

Եվ ի՛նչ կերպ են երկիրն իրենց իշխել արար աշխարհում,
Եվ թե ինչո՛ւ մինչև հիմա օտար լուծն է մեզ տիրում...

Պատմեց, իրոք, բախտը նրանց ինչ փառք բերեց,
ինչ վախճան,
Ավա՛ղ – ափսոս այդ քաջերը կորան անհետ ու չկան:

Քանի՛ դարեր, որդոց որդի քանի՛ մոբեթ պերճախոս
Գրի առան՝ ինչպես մեռան շահ, նախարար ու հերոս:

Երբ քաջարի մեր իշխանը լսեց ասքերն այս ամեն,
Նա հավաքեց ավանդական մատենագիրք Շահնամեն:

Այդպես կերտեց նա հուշարձան, մի գիրք թողեց հիշատակ,
Որ կարդում են ծեր ու մանուկ և աշխարհը բովանդակ:

ԵՂԵԼՈՒԹՅՈՒՆ ՊՈԵՏ ԴԱՂԻՂԻԻ ՄԱՍԻՆ

Բայց հինավուրց այդ վեպերը կարդում էին դեռ մանկուց,
Ականջում էր ողջ աշխարհը, քաղում հին խոսք ու զրույց:

Եվ ամեն մարդ սիրահար էր ասք ու խոսքին պատմական,
Ում հոգին որ լուսավոր էր, առաքինի գիտնական:

Մինչև աշխարհ եկավ մի նոր, երիտասարդ բանաստեղծ,
Որ գիտուն էր, ուներ լեզու և՛ պերճախոս, և՛ անկեղծ:

Եվ նա ասաց. «Չափի կառնեմ ամեն մատյան, ամեն տող»։
Լսողները ուրախացան, թե ի՛նչ մարդ է, ի՛նչ քերթող:

Բայց այդ ջահել բանաստեղծը ուներ դաժան մի ծառա,
Որ չարությամբ ջահել տիրոջ մահվան պատճառը դառավ:

Նա իր գլխին հանկարծահաս առավ մահվան սաղավարտ,
Ե՛վ իր կյանքը կիսատ թողեց, և՛ իր գործը անավարտ:

Նա Գուշտասպի և Արջասպի մասին քերթեց հազար բեյթ
Ու հիշատակ թողնելով մեզ՝ ամբողջական մի վիպերգ:

Աստվա՛ծ, ներիր ու թողություն տուր դու նրա մեղքերին,
Եվ երկնքից լույս տարածիր՝ պայծառանա թող հոգին:

ԻՆՉՊԵՍ ԿԵՐՏԵՑԻ ՇԱՀՆԱՄԵՆ

Միտքս երբ որ դադար առավ ու մոռացա քերթողին,
Արքայական գահին ձգտեց միշտ անդադար իմ հոգին:

Ես այդ օրից ձեռնարկեցի մի դժվարին, բայց լավ գործ
Ու կենդանի լեզու տվի մեր շահերին բազմափորձ:

Իզուր անցան թանկ օրերս, հարցմունք արի շատ մարդկանց,
Բայց ոչ մեկը չխրատեց, ոչ էլ մի նոր խոսք ասաց:

Ասի՛ գուցե երկար չապրեմ այս փուչ կյանքում անցողիկ,
Ինձնից հետո իմ այս գործը գրի կառնեն այլ մարդիկ:

Իսկ ինձ համար շատ էր դժվար առանց ապրուստ, առանց փող,
Չկար մեկը նեղ օրերիս նեցուկ լիներ, կարեկցող...

Եվ աշխարհում մահակործան պատերազմ էր, մեծ աղմուկ,
Իսկ քերթողի համար կյանքը ծանր էր անչափ ու անձուկ:

Այսպես անցավ դժվար կյանքս, սիրտս խռով, վշտապատ,
Բայց ոչ մեկին խոսք չասացի, միշտ մեկուսի, միշտ անհայտ:

Ունեի ես մի հարազատ ու բարեկամ լավ ընկեր,
Թվում էր, թե մենք երկուսս նույն կաշվից ենք դուրս եկել:

Նա ինձ ասաց. «Հավանում եմ միտքը, կամքը քո համառ,
Այժմ պետք է դու կատարես մի բարի գործ անպատճառ:

Ես քեզ կտամ պահլավական լեզվով գրված մի դաստան,
Սիրով լծվիր դու այդ գործին, զրույցներին պատմական:

Գիտեմ, ունես ճարտար լեզու, երիտասարդ էլ հասակ,
Դյուցազներին վիպերգելու բազում շնորհք ու ճաշակ:

Արի, այդ հին դաստանները չափավորիր դու նորից,
Փառք ու պատվի կարժանանաս մեծերից ու փոքրերից»:

Այնուհետև գնաց, բերեց այդ դաստանը հանձնեց ինձ,
Կարծես մեկեն սրտիս խորքում մի լույս իջավ երկնքից:



ԳՈՎՔ ԻՇԽԱՆ ԱԲՈՒ-ՄԱՆՍՈՒՐԻՆ

Երբ Շահնամեն գրի առա՝ կար մի իշխան անվանի,
Փահլևան էր անգերազանց, այր լուսամիտ ու բարի:

Բայց ջահել էր նա առավել, համարձակ ու բանիմաց,
Նա ինձ քնքուշ ձայնով կանչեց ու սիրալիր խոսք ասաց:

«Ես ամեն ինչ կանեմ, որ դու անհոգ ապրես աշխարհում,
Որ մեծարես Ֆարսի լեզվով մեր քաջերին բազմանուն»:

Նա խնձորի շիվի նման պահեց քամուց անվնաս,
Ինձ այս հողից տարավ մինչև լույս աստղերը երկնահաս:

Նա դժոխքի դուռն էր նետում անբավ ոսկի, փող, արծաթ,
Քանզի մարդ էր մի փառավոր, կարեկցող ու ձեռնառատ:

Բայց անվանի այդ հերոսը ափսոս գնաց այս կյանքից,
Ընկավ ինչպես նոճին այգում հողմի ահեղ հորձանքից:

Ավա՜ղ, գիտեմ՝ մահից հետո նորից աշխարհ չի գալու,
Ոչ կլսեմ քաղցր խոսքեր, ոչ երեսն եմ տեսնելու:

Այժմ չունեմ հովանավոր: Ես որբ գլխիս վայ տալիս,
Լացող ուռու ճղների պես հեծեծում եմ ու լալիս:

Նա մի անգամ ինձ մոտ եկավ, տվեց բարի մի խրատ,
Թե՝ Շահնամեն հանձնիր շահին, փող կստանաս դու առատ:

Եվ այդ բարի խոսքից նրա ուրախություն պատեց ինձ,
Հոգիս անչափ պայծառացավ, թեթևացա հոգսերից:

Հենց այդ օրից ձեռնարկեցի իմ Շահնամեն դժվարին,
Հանուն բարձր տիրակալի, հանուն շահի ու գահի:

ԶԱԼ ԵՎ ՌՈՒԴԱԲԵ

ՄԱՆՈՒՉԵՀՐ ՇԱՀԻ ԵՐԴՈՒՄԸ

Մանուչեհր շահը երբ որ գլխին դրեց ոսկե թագ,
Ռոսխների դեմ նա տարավ բազում կռիվ, հաղթանակ:

Նա խորտակող ուժի տեր էր, մեծատոհմ էր, քաջարի,
Գահի վրա իշխեց ուղիղ հարյուր քսան ձիգ տարի:

Երբ որ նստեց քեյանական գահաթոռին ոսկեհուռ,
Ողջունելու համար եկան բազում քաջեր ամրակուռ:

Եվ երդվեց նա, որ հայրական օրենքները չի խախտի,
Ողջ երկիրը ուրախացավ, արժանացավ մեծ բախտի:

Նա հավատով ազդարարեց. «Ես կլինեմ ճշտապահ,
Քանզի պատվով ժառանգեցի արքայական թագ ու գահ:

Ռոսխների դեմ կլինեմ մշտադաժան և ահեղ,
Իսկ բարեկամ մարդկանց համար՝ բարեգութ ու սիրազեղ:

Ես սուսերով կթրատեմ իշխաններին ապստամբ,
Հայրենիքի համար սիրտս ու հավատը իմ կտամ:

Գահաթոռիս շուքի ներքո չի լինելու չար ու վատ,
Եվ աշխարհում կցանեմ ես բարության սերմ պնդարմատ:

Ոսկեպախուրց երիվարս կսլանա սրընթաց,
Խավարամոլ ոսոխներիս կգլխատեմ՝ աչքը բաց:

Թուր ունեմ ես, ոսկեկոշիկ, պատերազմից չեմ դողում,
Ջի Կավեի դրոշակը իմ գլխին է շողշողում:

Պատերազմում միշտ կլինեմ հաղթանակող, փառապանծ,
Խնջույքներում ես շաղ կտամ առատ նվեր՝ փող ու գանձ:

Հիմնահատակ կտրորեմ թշնամության ամեն բույն,
Հողը նրանց տաք արյունով կդարձնեմ հրագույն:

Իմ գուրզով է փառաբանվել քեյանական գահը վես,
Ինձ ենթակա հողաշխարհը փայլատակեց լույսի պես:

Ստրուկ եմ ես մի անանուն հարձակման մեջ համարձակ,
Բայց և հզոր տիրոջ առաջ խոնարհվում եմ գլխահակ:

Աղաղակով երկու ձեռքս կարկառում եմ առ Աստված,
Աղոթում ու մաղթում եմ, որ ինձ պարգևեց գահ ու գանձ:

Աստված, անշուշտ, իմ նեցուկն է, պահապանս առհավետ,
Ջահել եմ ես, բայց գործերով մրցում եմ իմ պապի հետ:

Ամեն ինչում հետևում եմ Ֆերիդունին մեծագործ,
Ես ուրախ եմ, քանզի ունեմ ապուպապի բազում փորձ:

Ով որ աղքատ մարդկանց ճնշի և պատճառի մեծ վնաս,
Ժողովրդին տանջանքներ տա ու չարության բաժնեմաս,

Գոռոզանա իր գանձերով և թոյլերին հալածի,
Թունավորի խաղաղ կյանքը ժողովրդիս արիածին –

Սատանայից նա կրկնակի աղճատիրծ է, չարակամ,
Ես այդպիսի հանցագործին դաժան պատիժ պիտի տամ:

Չարի հանդեպ անմիջապես սուր կհանեմ ես հատու,
Բռնությունը կկործանեմ իմ ուժերով երկնատու»:

Իսկ բոլորը միաբերան, թե՝ «Իրեջի թոռան թոռ,
Ունես շահի հզոր կնիք և մեծության գահաթոռ:

Այսօրվանից քեզ ենք տալիս սիրտն ու հոգին մեր հլու,
Նվիրական մեր ողջ կյանքը ոտքիդ տակ ենք դնելու»:

Այնուհետև տեղից ելավ հզոր Սամը փառապանծ,
Դիմեց շահին՝ երկու ձեռքը դեպի երկինք կարկառած.

«Քեզանից մեծ հույսեր ունեմ, ո՛վ շահնշահ ոսկեգահ,
Քանզի գիտեմ, որ կլինես արդարամիտ, ճշտապահ:

Արժանավոր զավակ ես դու, ունես շահի թագ ու թախտ,
Իրանական հսկաների զորավարն ես, միշտ անհաղթ:

Անհիշատակ ժամանակի հիշատակն ես ինձ համար,
Հույս ու հենակ ես բոլորիս, արդարության մեծ կամար:

Տարար բազում հաղթանակներ, մաքրեցիր հողն արյունից,
Այժմ պետք է քեզ հանգիստ կյանք, կովի գործը հանձնիր ինձ:

Այսօրվանից ես կմտնեմ պատերազմի ասպարեզ,
Մեզ կռիվը և թունդ գինին, հրճվանքը թող մնա քեզ:

Ավանդական ժամանակից ապուպապն ու հայրը իմ
Եղել են միշտ արքունիքի պահապան ու մտերիմ:

Հռչակվել են Նարիմանը և Գերշասպը քաջատոհմ,
Նրանց մասին զրույցներ են մարդիկ պատմում ամեն օր:

Երբ նժույգիս ոսկե սանձը հանձնում եմ ես խենթ քամուն,
Իսկույն ցանցի մեջ եմ առնում քինախնդիր թշնամուն:

Եվ ծերության ժամանակ էլ պապդ շատ է դիմել ինձ,
Արդ՝ իմ սիրտը ջերմացել է քո գահական արևից»:

Բարեժպիտ շահը խոսեց մեծահամբավ Սամի հետ,
Այնուհետև հանձնեց նրան ընտրելագույն զորք ու նետ:

Հզոր Սամը առանձնացավ, որ ճապուկ ձին իր նստի,
Շահնշահը ելավ, գնաց իր դղյակը՝ հանգստի:

Իրանշահի շուքի ներքո աշխարհն ապրեց բախտավոր,
Քանզի նա մեծ թագավոր էր, խորագետ ու փառավոր:

ԶԱԼԻ ԾՆՈՒՆԴԸ

Իսկ ես հիմա ձեզ կպատմեմ մի պատմություն հինավուրց,
Ավանդական այս զրույցը մեզ հայտնի է շատ վաղուց:

Հզոր Սամի մասին կանեմ շատ զրույցներ սրտառուչ,
Դուք կիմանաք ինչ է բախտը և աշխարհը ոչ ու փուչ:

Սամը չուներ թագաժառանգ հզոր տոհմին իր արժան,
Ուրախության էր ձգտում միշտ նրա սիրտը ամեն ժամ:

Սակայն ուներ գեղեցիկ կին գանգուրներով սևաթույր,
Այտիկները խաս ու կարմիր և մարմինը մշկաբույր:

Սամի կինը շուտով ծնեց մի քաջ զավակ, մի կորյուն,
Պայծառ էր նա արևի պես, այտեր ուներ վարդագույն:

Բայց ափսոս որ նրա որդին աշխարհ եկավ թերությամբ–
Գլխին ճերմակ մազեր ուներ, ճերմակ, ինչպես ձյունե թագ:

Որդու մասին հսկա Սամին չհայտնեցին մի շաբաթ,
Հեշտ չէր նրան ասել, թե քո որդին ունի մի արատ:

Բոլոր կանայք տագնապով լի կանգնել էին ապշահար,
Բայց ոչ մեկը սիրտ չէր անում Սամին որդուց մի լուր տար:

Եվ մի ծառա, որ բոլորից համարձակ էր, կորովի,
Մեծ սարսափը հանեց սրտից, գնաց մոտը մեծ Սամի:

Սպասումի լուրը տարավ ու ողջունեց առյուծին.
«Շնորհավո՛ր,– ասաց ծառան,– ո՛վ փառապանծ արիածին:

Այսուհետև ոսոխների սրտերը թող որ պայթի,
Քանզի Աստված կատարել է մեծ բաղձանքը քո կամքի:

Ո՛վ Իրանի մեծ փահլևան, դու ունեցար մի կորյուն,
Սարսափահար կանի շուտով մեր չարամիտ թշնամուն:

Գեղեցիկ է դեմքը նրա, արծաթից էլ սպիտակ,
Նման տղա չես գտնի դու այս աշխարհում բովանդակ:

Մի թերություն ունի սակայն՝ գլուխ ունի ձյունագես,
Ամենազոր Տերը նրան պարգևել է քեզ այդպես:

Ի՞նչ արած, տե՛ր, քո որդին է, սիրով պիտի պահպանես,
Մաղթանք արա զորավորին ու մի տանջիր ինքդ քեզ»:

Հանկարծահաս բոթից Սամը դարձավ կարծես անխոս քար,
Գնաց դդյակ, որ զավակին աչքով տեսներ, հավատար:

Օրորոցում տեսավ պառկած ճերմակահեր իր որդուն,
Նա գեղեցիկ պատկեր ուներ և շրթունքներ վարդագույն:

Ու նեղսրտեց հզոր Սամը, դառն ու տխուր հեկեկաց,
Քանզի գիտեր՝ ծաղր ու ծանակ պիտի դառնար չար մարդկանց:

Դեպի երկիքն կարկառեց նա երկու ձեռքը դողդոջուն,
Աստվածային պատժի համար աղերսելով օգնություն.

«Ո՛վ Արարիչ, դու չարություն ու կեղծիքներ խափանող,
Դու գթառատ ու զորավոր, տեր աստղերի լուսաշող:

Եթե քո դեմ սատանայի մեղք եմ գործել կամ այլ բան,
Ներիր, քանզի իմ սրտի մեջ բազմաբազում ցավեր կան:

Այս ամոթը սիրտս է նեղում, հառաչում եմ դառնագին,
Հիմա եռում է արյունս ու ավերում իմ հոգին:

Գուցե մաքուր չի ծնվել նա, հարազատ չէ, ո՛վ իմ Տեր,
Քանզի սև-սև աչքեր ունի, գլխին՝ ճերմակ գանգուրներ:

Թե՛ բարեկամ, թե՛ թշնամի մարդիկ երբ գան ինձ մոտ հյուր –
Այս չարաղետ բոթը անշուշտ կտարածեն ամենուր:

Չէ՞ որ մարդիկ կհարցնեն՝ ի՞նչ է անունն իմ որդու,
Ես անտառի փերի՞ ասեմ, թե՞ առյուծի ժիր կորյուն:

Թե առերես և թե ծածուկ ծաղր ու ծանակ կանեն ինձ,
Ամաչելուց պիտի թողնեմ ու հեռանամ Իրանից»:

Խիստ զայրույթից նա տրտնջաց մինչև անգամ Տիրոջ դեմ,
Ծառաներին հրամայեց արագավազ ձի թամբեն –

Երեխային գաղտնածածուկ տանեն մինչև Էլբորզ սար,
Այն լեռան մոտ, որի թագը ամպերին է հավասար:

Ուր չի եղել գազանի հետք ու ձայն մարդու չի լսվել,
Ուր բարձրաբերձ ծերպերի մեջ Սիմուրղ հավքն է բույն հյուսել:

Նրանք տարան երեխային ու նետեցին կիրճից խոր,
Տարիները անցան, սակայն, չհիշեցին ոչ մի օր:

Ծնվեց և դեռ չէր տարբերում, թե ինչն է լույս, ինչը մութ,
Նետել տվեց ժայռերի մեջ իր հարազատ հայրն անգութ:

Գիշեր-ցերեկ լաց էր լինում, թաթիկները մերթ ծծում,
Գութ աղերսող աչիկներով մերթ նայում էր Աստըծուն:

Սիմուրղ հավքը իր ձագերի համար պիտի բերեր կեր,
Որսի համար նա աղմուկով թռավ բնից քարակերտ:

Սակայն հանկարծ լսեց ինչ-որ երեխայի լացուկոծ,
Որի համար հողը մայր էր, իսկ ժայռերը՝ օրորոց:

Անօգնական այդ երեխան չուներ սնունդ, խանձարուր,
Իսկ երկնքից արեգակը հուր էր թափում ամենուր:

Եթե, իրոք, վագր նրան ծնած լիներ այդ շոգին,
Արեգակի բորբ շողերից կպաշտպաներ իր ձագին:

Աստված գուցե Սիմուրղ հավքին տվել էր մոր զգացմունք,
Չծվատեց, երբ որ տեսավ մանկան դեմքին պաղ արցունք:

Նա ամպերից հանկարծ իջավ ու թևերով ամեհի
Ճանկեց, տարավ երեխային հանց զորավոր մի քամի:

Ժայռաբունը տարավ նրան ու հայթայթեց կերակուր,
Բայց երեխան ձագերի պես չուներ ծածկոց ու բարուր:

Երեխայի համար հավքը բերում էր կեր նորանոր,
Կաթ չկար, բայց արյուն էր նա տալիս փոքրին ամեն օր:

Շատ տարիներ անցան այդպես, ու մոռացված երեխան
Հասակ առավ լեռների մեջ, դարձավ կորյուն իսկական:

Երբ մի անգամ քարավանը իջավ մոտիկ լեռներում,
Մարդիկ տեսան՝ արծաթահեր մի մանուկ է թափառում:

Լուրն այդ նրանք տարածեցին մանկան մասին նորահայտ,
Այս աշխարհում չարն ու բարին չես թաքցնի, ո՛վ դու մարդ:

Լուրը շուտով դղյակ հասավ, հասավ Սամին անվանի –
Թե քո լքած զավակն, ահա, դարձել է պերճ պատանի:

ՍԱՄԸ ԵՐԱԶՈՒՄ ՏԵՍՆՈՒՄ Է ՈՐԴՈՒՆ

Երբ մի անգամ կեսգիշերին չկային լույս աստղիկներ,
Հզոր Սամը չար երազից տագնապահար ելավ վեր:

Նա երազում տեսավ ինչպես Հինդուստանից մի գուժկան –
Արագընթաց մի ձիավոր, բերեց մի խիստ հրաման:

Այդ սուրհանդակ զինվոր մարդը ուղիղ կանգնեց իր դիմաց,
Որդու մասին բարի լուր ու գերապատիվ խոսք ասաց:

Սարսափահար քնից զարթնեց, իր մոտ կանչեց մոգերին,
Որ իմաստուն գիտունները մեկնեն երազն այդ խրթին:

«Խորասուզվեք ձեր իմաստուն մտքերի մեջ, ո՛վ մոգեր,
Մեկնաբանեք այդ երազը, սպասում եմ անհամբեր:

Ճերմակահեր տղաս, արդյոք, կենդանի՞ է, ասեք ինձ.
Թե՞ վաղուց է ոչնչացել ցրտից, տապից ու սովից»:

Ամեն մի մոգ ուրախությամբ լսեց լուրը այդ բարի,
Մեկ մարդու պես բարբառեցին. «Քաջերի մեջ քաջարի,

Վագրակատուն և առյուծը անտառում են դնում բույն,
Հրաշք ձուկը օվկիանոսի խոր հատակում է ապրում,

Սակայն ամեն մեկը սնում, պահպանում է իր ձագին,
Ամեն մեկը ապրում է միշտ արյան մեջ իր ժառանգի:

Միայն դու ես Տիրոջ հանդեպ գործել մեղք ու չարություն,
Որովհետև լքեցիր դու ճերմակահեր քո որդուն:

Սիրտդ նեղվեց, երբ ալեհեր քո զավակին տեսար դու,
Բայց ճերմակը համարվում է միշտ անարատ ու մաքուր:

Գուշակություն մի պահանջիր, ճամփա ընկիր,– մոգն ասաց,–
Քո հարազատ որդուն, ո՛վ Սամ, մի համարիր դու մեռած:

Ջերմ մաղթանքներ արա անվերջ և աղոթքի դու չոքիր,
Որ գթության կողմը թեքվի խռովահույզ քո հոգին»:

Մոբեթների առաջարկով Սամը արագ ու հլու
Էլբորզ սարը պիտի գնար՝ իր զավակին գտնելու:

Ամբողջ գիշեր աչք չփակեց՝ ոչ մի րոպե, ակնթարթ,
Անհանգիստ էր նրա հոգին, քանզի ծանր էր երազն այդ:

Նա երազում տեսավ զորքեր և գունագեղ դրոշներ,
Հինդու հողից բանակներով գալիս էին ողջ գիշեր:

Երիտասարդ մի առաջնորդ ճամփաներով քարքարոտ
Զորքին բերեց՝ կանգնեցըրեց ուղիղ Սամի դռան մոտ:

Առաջնորդի ու զորքի հետ երկու մոբեթ կար խոհուն,
Ամենագետ մոբեթները շրջել էին աշխարհում:

Հենց առաջին մոգը եկավ՝ դիմեց Սամին նա այսպես.
«Ո՛վ դու դաժան, նսեմ հոգի, դու մարդկային խիղճ չունես:

Աստծու առաջ կորցրել ես չափը խղճի, ամոթի,
Անօգնական որդուդ գլխին խաղ խաղացիր տմարդի:

Երբ որ Սիմուրղ հավքն է պահել քո զավակին թևի տակ,
Ինչպե՞ս ես քեզ քաջ անվանում, արդարամիտ ու շիտակ:

Երբ ձյունածածկ քո մազերը չես համարում նսեմ բան,
Ճերմակահեր որդուդ ինչո՞ւ համարեցիր անպիտան:

Աստված նրան լույս աշխարհ է բերել ճերմակ մազերով,
Տարիները չէ՞ որ քեզ էլ փոփոխում են օրեցօր:

Քո սպիտակ գլխի համար բողոքո՞ւմ ես Աստըծուն,
Բախտը քո դեմ բարեսիրտ է, բայց լքեցիր քո որդուն:

Դժբախտներին դեն չեն նետում, մանուկ լինեն և կամ ծեր,
Դու արժանի հայր չես եղել, սրտում չունես գութ ու սեր»:

Սամը զարթնեց, կարծես լիներ փակ վանդակում մի առյուծ.
Նա մտածեց, որ պատիժ է իրեն եկել Աստըծուց:

Այդ պատճառով իր մոտ կանչեց մոբեդներին խորագետ
Ու պատվիրեց, որ զինվորը գնա թամբի ձին աշխետ:

Նա բանակով արագ թռավ, գնաց հասավ մինչ Էլբորզ,
Իր կատարած մեղքի համար Աստծուց ուներ դեռ մի հույս:

ՍԱՄԸ ԳՏՆՈՒՄ Է ՈՐԴՈՒՆ

Դեպի երկինք է մխրճվել Էլբորզ սարը ձյունափայլ,
Կարծես ձեռքով աստղերից են բռնել-կախել դեպի վար:

Այդ բարձրաբերձ լեռան վրա ոչ հող կա և ոչ ավազ,
Մարդու ձեռքով չի կերտվել այդ հսկա լյառն երկնահաս:

Լեռան վրա թափառում էր մի պատանի աննման,
Նա հասակով ամբողջապես հզոր Սամին էր նման:

Սամի սիրտը ուրախությամբ ալեկոծվեց կրծքի տակ,
Երեսնիվայր ընկավ գետնին, երկնավորին տվեց փառք՝

Նրա համար, որ ստեղծեց անչափ բարի մի թռչուն,
Որ պարգևեց որդուն Էլբորզ լեռան վրա տաքուկ տուն:

Սամը խորհեց, որ տիրակալ դատավորն է լոկ կարող,
Նա է միակ հիմքը գոյի և օրենքներ սահմանող:

Բայց, ա՜խ, ո՛ւր է գագաթ տանող ճանապարհը աննկատ,
Մի՞թե այնտեղ չի բարձրացել ոչ մի գազան զորաթաթ:

Սամը փնտրեց, բայց չգտավ ո՛չ արահետ, ո՛չ կածան,
Եվ աղոթեց նա Աստըծուն, որ ձեռք մեկնի օգնության:

«Ո՛վ Բարձրյալ, ամենազոր, աշխարհաշեն ու կարող,
Արեգակին և աստղերին, լիալուսնին լույս տվող...

Մեծ սարսափը սիրտս խուժած՝ սպանում է այժմ ինձ,
Իմ գոյության միակ հույսը արդ՝ կախված է քեզանից:

Իմ զավակը գոյացել է իմ արյունից անարատ,
Նա վիշապ չէ կամ սատանա, իմ տոհմից է հարազատ:

Օգնիր հիմա, որ բարձրանամ Էլբորզ սարը ձյունավեմ,
Ներիր, ներիր, ո՛վ Արարիչ, որ մեղքերս փարատեմ»:

Սրտակեղեք այդ բառերը արտասանեց Սամը մեծ,
Մինչև երկիքն հասավ նրա աղերսանքը վշտահեծ:

Սիմուրղ հավքը ժայռաբնից ներքև նայեց ու տեսավ՝
Սամը այնտեղ շքախմբով կանգնել է լո՛ւռ, սրտացավ:

Նա հասկացավ, թե ինչու է Սամը տխուր ու վշտոտ,
Ուստի գտավ, որ զավակին պետք է տանել իր հոր մոտ:

Սիմուրղ հավքը այսպես դիմեց. «Ո՛վ մոռացված պատանի,
Դու ապրեցիր մութ ու խոնավ իմ բնի մեջ շատ տարի:

Ես սնուցող մայր եղա քեզ, հավատարիմ պահապան,
Եվ սիրելով մեծացրի, անվանեցի քեզ Դեստան:

Դու կգնաս քո հայրական ապարանքը բարաշեն,
Ինչ անուն որ կնքեցի քեզ, թող այդպես էլ քեզ հիշեն:

Այսօրվանից պիտի հանձնեմ քեզ ծնողիդ, ո՛վ Դեստան,
Սամը այժմ պահանջում է՝ իր զավակին իրեն տան:

Դու մտածիր, անմիջապես ես կթռչեմ դեպի օդ,
Իմ հովանի թևերի տակ քեզ կտանեմ հորդ մոտ»:

Տղան տխրեց ու հուզմունքից կարծես շնչել չէր կարող,
Թարթիչներից թափեց արյուն և արցունքներ վարդացող:

Դեռ մարդկային խոսք չէր լսել Էլբորզ սարում մշտապես,
Սակայն Սիմուրղ հավքից խոսել սովորել էր մարդու պես:

Եվ Դեստանը թե՝ «Դղյակից լավ է բույնը քո հիմա,
Միշտ լուսավոր թագ են եղել մեծ թևերդ ինձ համար:

Աստծուց հետո լույս աշխարհում միակ բարի սիրտն ես դու,
Որ ինձ համար ծնող-մոր պես եղար սնող-կաթնատու»:

Սիմուրղ հավքը պատասխանեց. «Արքայական հարկի տակ
Կմոռանաս թռչնի բույնը, երբ որ քեզ տան ոսկե թագ:

Չարությունից չէ, որ հիմա քո հոր մոտ եմ տանում քեզ,
Երբ փառավոր կյանք ունենաս՝ կուրախանամ նաև ես:

Քեզնից ընդմիշտ անջատվելը դժվար է շատ ինձ համար,
Բայց բախտավոր կլինես դու, ի՛նչ է բույնը իմ խավար:

Անջատումից հետո ես քեզ կպահպանեմ թևիդ տակ,
Ա՛ռ փետուրս, ուր էլ գնաս՝ քեզ մոտ պահիր շարունակ:

Եթե մեկը քեզ չարություն ու նեղություն պատճառի,
Իմ փետուրը մոտեցրու թեժ կրակին ու վառիր...

Իսկույն քեզ մոտ ես կթռչեմ Էլբորզ սարից ձյունաթագ,
Չէ՞ որ ես եմ մեծացրել, պահպանել քեզ թևիս տակ:

Մնաս բարով: Գնա, բայց ինձ մի մոռանա, ո՛վ անգին,
Ա՜խ, անջատման տանջող ցավը չարչարում է իմ հոգին»:

Անմիջապես մագիլների մեջ օղակեց պատանուն,
Շանթի նման ամպից իջավ. նստեց գետնին նա իսկույն:

Դեստան-Զալի խոպոպները կախվել էին մինչ գոտին,
Կորյունի պես մարմին ուներ, արևի շող կար այտին:

Ճերմակահեր Սամը տեսավ ու հուզմունքից արտասվեց
Եվ գլխակախ Սիմուրղ հավքին այսպես ասաց վշտահեծ.

«Ամենասեր Աստված, իրոք, ստեղծել է քեզ հզոր,
Թռչունների ո՛վ մեծ արքա, ինձ դարձրիր բախտավոր:

Թշվառներին, ընկածներին, բարձրացրիր դեպի կյանք,
Չարության դեմ դաժան ես դու, ո՛վ փառահեղ Սիմուրղ հավք»:

Բայց Սիմուրղը վեր բարձրացավ, թռավ դեպի սարն Էլբորզ,
Զինվորները քար լռությամբ նայում էին սրտահույզ:

ՍԱՄԻ ԵՐԴՈՒՄԸ

Սամը տեսավ, որ զավակին անհրաժեշտ է սաղավարտ,
Քանզի ուներ առյուծի կուրծք և բազուկներ ամրահաղթ:

Իսկ կորովի ձեռքը նրա որոնում էր հատու թուր,
Հավինդի պես շուրթեր ուներ և աչք ու ունք սևաթույր:

Եթե գլխին ճերմակ մազեր չունենար նա ավելի,
Կլիներ նա հրաշք տղա՝ գեղեցկությամբ անթերի:

«Ո՛վ զավակս,– ասաց Սամը,– դու չես տխրի այսուհետ,
Ներիր գործած իմ մեղքերը, վերադարձիր դու ինձ հետ:

Քեզ սիրելուց բացի, չունեմ այժմ ուրիշ անելիք,
Ես մի չնչին արարած եմ, բախտի ձեռքին խաղալիք:

Վերադարձիր դու իմ գիրկը, ես հնազանդ ու խոնարհ
Կկատարեմ քո փափագը հար-հավիտյան, մինչև մահ:

Քեզ եմ հանձնում Սիեստանը ու Զաբուլը անեզերք,
Ինչ ցանկություն որ ունենաս՝ կդարձնեմ այն օրենք»:

Ապա բերեց որդու համար մեծամեծի մի թիկնոց,
Եվ ճանապարհ ընկավ Սամը իր գնդերով բազմահոծ:

Սիմուրղ հավքից երբ որ մի նոր անուն լսեց Սամ հսկան –
Այդպես, Զալզեր իր զավակին անվանեց նա Զալ-Դեստան:

Զինվոր մարդիկ, երբ չորս կողմից հզոր Սամի մոտ եկան –
Ցնծությունից հնչեցրեցին թմբուկները հնդկական:

ՄԱՆՈՒՉԵՀՐ ՇԱՀԸ ՏԵՂԵԿԱՆՈՒՄ Է ԶԱԼԻ ԵՎ ՍԱՄԻ ՄԱՍԻՆ

Լուրը շուտով հասավ նաև Մանուչեհր շահին մեծ,–
Թե քաջ Սամի որոնումը հաջողությամբ պսակվեց:

Շահը ուներ երկու որդի՝ մեկը մեկից գեղեցիկ,
Նրանք քաջ ու խելոք էին, նաև՝ հմուտ նետաձիգ:

Թե՛ Զերասպը, թե՛ Նովզարը Ազերգեշասպ էին հանց,
Թշնամու դեմ վարում էին մենամարտեր գերազանց:

Շահը կանչեց իր զավակին՝ քաջ Նովզարին, որ արագ
Թամբի ձին ու հզոր Սամին տանի շահից մի նամակ:

Աշխարհատեր շահնշահից տանի նրան ջերմ ողջույն,
Ինչպես նաև ոսկե զարդեր ու դիպակներ երկնագույն:

Շահը ասաց. «Հայր ու որդի թող որ շտապ գան դըյակ,
Որ անպատեհ եղելության մասին լինեմ ես տեղյակ»:

Քաջ Նովզարը ճամփա ընկավ՝ հանց աղեղից թռած նետ,
Դեպի Զաբուլ, ուր որ Սամի ապարանքն էր հոյակերտ:

Սամը եկավ ու գիրկն առավ արքայազարմ Նովզարին,
Ջերմ համբուրեց, բարեմաղթե նա Իրանի մեծ շահին:

Իսկ քիչ հետո հարցուփորձեց հսկաների մասին այն,
Որոնց սիրում, անվանում էր ամեն մեկին խիզախ այր:

Մանուչեհր շահի արած առաջարկը հենց լսեց –
Ծնկի իջավ ու մաղթելով սեգ գլուխը խոնարհեց:

Թե՛ Նովզարը, և թե՛ Սամը, թե՛ Դեստանը, վերջապես,
Չի նստեցին ու պլացան դեպի Զաբուլ քամու պես:

Շահնշահի հրամանի լուրը հասավ մինչ քաղաք,
Կայազորը ոտքի ելավ ու տարածեց աղաղակ:

Նարիմանի որդի Սամը տեսավ շահի համհարզին,
Ձիուց իջավ, որ Իրանի շահնշահի մոտ վազի:

Գնաց չոքեց, շահի ոտքի հողն համբուրեց և ասաց.
«Դու դարեդար փառավորվես, երկար կյանք տա քեզ Աստված»:

Բայց անվանի փահլևանին, ի նշան մեծ հարգանքի,
Շահնշահը հրամայեց, որ նա նորից ձի թամբի:

Շահն ու Սամը վերադարձան ապարանքը պերճաշուք,
Որ քաջերի հետ միասին անցկացրնեն ճոխ խնջույք:

Այնուհետև արքայական ծես կատարվեց բազմաճոխ,
Շահը նստեց բեհյանական գահաթոռին ոսկեզօդ:

Շահի կողքին կից նստեցին երկու հսկա զորավար,
Մեկը Սամը, իսկ մյուսը քաջ Կարենը կռվարար:

Սա է ձեզ ճերմակամազ Դեստան-Զալը պատանի՝
Շողշողում էր սաղավարտը, ոսկե կոթը պատյանի:

Դրամիկը բերեց նրան, բայց հիացման խոսք չասաց,
Մանուչեհր շահը Զալին նայեց երկար, զարմացած:

Ապա շահը դիմեց քաջն զորավարին Զաբուլի.
«Ես լիովին վստահում եմ, արդարացի դու եղիր:

Երբևիցե չպղտորես ջահել սիրտը քո որդու,
Մեծ հույսերով, վստահությամբ նրա գործին նայիր դու:

Նա ռազմիկ է, թեկուզ կյանքում տեսել է լոկ թռչնի բույն,
Բայց գիտունի խելք ունի և քաջ զինվորի հատկություն:

Թող սովորի, որ թշնամու դեմ չվատնի ճիգ ու ջանք,
Մի արգելիր, երբ քաջերի հետ նա վարի խրախճանք:

Չէ՛ որ միայն բույն է տեսել, լեռ ու թռչուն վերասլաց,
Ժամանակն է, որ սովորի իշխանական նիստուկաց»:

Ապա Սամը շահին պատմեց մի սրտառուչ պատմություն,
Թե ինչպես է կույր աչքերով տարել, նետել իր որդուն:

Թե ինչպես է Սիմուրղ հավքը պահել նրան մշտապես,
Ինչպես է նա սնել, պահել, մեծացրել մարդու պես:

«Այդ հրաշքի մասին, ո՛վ շահ, խոսում էին ամեն տեղ,
Սիմուրղ հավքի ու Զալզերի մասինասքեր կան շքեղ:

Աստված ինքը ցույց տվեց ինձ մի բարեհույս ճանապարհ,
Դեպի Էլբորզ սարը ելա իմ դղյակից անհապաղ:

Երբ տեղ հասա՝ տեսա այնտեղ ամպը ճեղքած սուր գագաթ,
Եվ ահռելի ապառաժներ ու բեկորներ բազմառատ:

Տեսա նաև թռչնային բույն բերդի նման ամրակերտ,
Չէր երևում այնտեղ մարդու ու գազանի ոտնահետք:

Սիմուրղ հավքի ձտերի հետ Զալը կանգնել էր մենակ,
Կարծես նրանց հետ էր ծնվել, կարծես լիներ երկվորյակ:

Որդիական սերը դարձրեց սիրտս ու հոգիս մի թակարդ,
Որոշեցի որդուս բերել, ինչ գնով էլ լիներ այդ:

Չարչարվեցի, բայց չգտա գագաթ տանող մի շավիղ,
Սրտիս ցավը քիչ էր մնում ինձ գլորեր խոր շիրիմ:

Հառաչանքով աղոթեցի՝ «Ո՛վ դու բարձրյալ Արարիչ,
Դու ապավեն, հույս ու հավատ, դու ինձ համար մեծ փրկիչ:

Քո կամքով է պտույտ գալիս տիեզերքը լայնահուն,
Շռայլում ես ճոխ բարիքներ՝ անծայրածիր աշխարհում:

Մեղավորս մեծ զղջումով աղաչում եմ ծնկաչոք,
Օգնության ձեռք մեկնիր, քանզի չի կարեկցում ինձ ոչ ոք:

Այն թշվառը, որին սնել, պահպանել է մի մեծ հավք,
Անօգնական, կարիքի մեջ կրել է շատ տառապանք:

Չեն փաթաթել նրան մետաքս բարուրի մեջ փափկատաք,
Արյունով են սնել, իրոք, չի ճաշակել նա մոր կաթ:

Իմ զավակին ինձ հասցրու, կամ ցույց տուր այլ ճանապարհ,
Որ բարձրանամ ես նրա մոտ, կամ՝ ինձ մահվան գիրկը տար:

Որդուս հանդեպ չար եմ եղել, բայց մի՛ պատժիր, ներիՙր ինձ,
Մինչև կյանքիս վերջը, ո՛վ Տեր, գոհ կլինեմ քեզանից...»:

Մաղթանքներով դիմեցի ես ամենազոր Աստըծուն,
Սրտիս խոսքը անհուն սիրով ու ցավերով էր լեցուն:

Անմիջապես Սիմուրղ հավքը Էլբորզ սարից իջավ ցած,
Ու վար բերեց իմ զավակին՝ մագիլների մեջ առած:

Եվ ինձ թվաց, որ երկնքից մուշկ էր բուրում ու համպար,
Եվ ուր որ է՝ մահը պիտի գա ինձ տանի անպատճառ:

Բայց Սիմուրղի մեծությունը և ջերմ սերը իմ որդու
Ուշքի բերեց, ինձ վերստին շունչ պարգևեց կենսատու:

Երբ որ տեսա դեմս կանգնած իմ մինուճար զավակին,
Ես ծնկաչոք մեծարեցի անչափ բարի այդ հավքին:

Ահա որդիս, շահ, քեզ մոտ է, քո աչքերով նրան տես,
Ինչ որ առաջ գաղտնիք էր լոկ, հիմա հայտնի դարձավ քեզ»:

ԶԱԼԸ ՎԵՐԱԴԱՌՆՈՒՄ Է ԶԱԲՈՒԼ

Մանուչեհր շահնշահը իսկույն հղեց հրաման,
Որ աստղագետ մոբեթները շտապ գործով իր մոտ գան:

Նրանք եկան, որ գուշակեն Զալի բախտը ապագա,
Արդյոք նրա աստղի վրա ի՞նչ է գրված, ինչե՞ր կան...

Եվ թե ի՞նչ է նա լինելու, պետք է արագ գուշակեն,
Որ այդ մասին Մանուչեհր շահնշահին զեկուցեն:

Ամենագետ մոբեթները հավաքվեցին ժողովի –
Գուշակեցին ու հայտնեցին բախտի աստղը Զալզերի:

«Դեստան-Զալին վիճակված է դառնալու մեծ զորավար,
Նրա փառքի մասին մարդիկ պիտի խոսեն դարեդար»:

Մանուչեհր շահնշահը ուրախացավ անսահման,
Սամին թվաց, որ աշխարհը վարդանոց է իր համար:

Ապա շահը Սամին տվեց ճոխ նվերներ թանկագին,
Ընծաներից շատ զարմացան ծեր թե մանուկ, այր թե կին:

Այնուհետև արաբական ձիեր բերին ոսկեսանձ,
Եվ ամրակուռ հինդու թրեր, և մուշտակներ, և թե՛ գանձ:

Զարդաքանդակ գորգեր բերին, ազնիվ քարեր շողշողուն,
Բյուզանդական ստրուկ մարդիկ կանգնել էին մեջտեղում:

Բերին ծանր, զմրուխտ թասեր՝ մուշկ-համպարով լեփ-լեցուն,
Պատերազմի համար զենքեր՝ ընտրելագույն, դիմացկուն:

Տեգ ու աղեղ, գուրզ ու վահան, ամուր պարան ու նիզակ,
Ճաճանչափայլ փիրուզե գահ, արքայական ոսկե թագ:

Նրան հանձնեց ողջ Քաբուլը, Դենբերը և Մայը մեծ,
Չինաստանի ափերից մինչ Հինդու գետը ծովամերձ:

Ինչպես նաև Բուստի հողը ու Զաբուլը գեղատես
Արքայական հրամանով տվեց Սամին մշտապես:

Իրանշահին ասաց Սամը. «Ո՛վ տիրակալ արիածին,
Քեզ պես հզոր իշխան չկա Ձուկ լուսաստղից մինչ լուսին:

Բարի ես դու և իմաստուն, մարդկանց հույսն ես, ապավեն,
Գանձը քեզ մոտ չնչին հող է, ապրես պիտի առհավետ»:

Հզոր Սամը շահի առջև ծունկի իջավ խնդագին,
Թմբուկների աղմուկի տակ կապեց ռազմի պինդ գոտին,

Ապա ճամփա ընկավ դեպի Զաբուլիստան ծաղկավետ,
Տարավ միակ իր զավակին քաջակորով մարդկանց հետ:

Սիեստանը պերճանքի մեջ շողշողում էր ծայրեծայր,
Գետնի վրա թափել էին անթիվ ոսկի ու արծաթ:

Ամենուրեք տոն էր, խնջույք, ուրախություն, աղաղակ,
Սամի շուրջը հավաքվեցին մարդիկ մեծ ու հասարակ,

Որ ողջունեն ու մեծարեն զինվոր Սամին փառապանծ,
Որ նրա ու որդու գլխին շաղ տան ոսկի, գոհար, գանձ:

ՍԱՄԸ ԻՐ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆՁՆՈՒՄ Է ԶԱԼԻՆ

Հզոր Սամը ուժ ու եռանդ գործադրեց օր-օրի,
Որ իր որդին զորք ու երկիր կառավարել սովորի:

Նա հավաքեց զորավարներ ու մոբեթներ բանիմաց,
Եվ մեծամեծ գիտուններին խորախորհուրդ խոսք ասաց.

«Աշխարհակալ շահնշահը ինձ հղել է հրաման,
Որ Զաբուլից ես շուտափույթ դեպի կռվի դաշտ գնամ:

Մազանդարան կտանեմ ես բանակներս հոծընթաց,
Քերկեսարայ բերդը կառնեմ՝ ոսոխներիս աչքը բաց:

Իշխանական ապարանքս ու երկիրն իմ լայնահուն
Ես հանձնում եմ իմ կյանքից թանկ, արժանավոր իմ որդուն:

Մի ժամանակ, հայտնի է ձեզ, ուրիշ մարդիկ էլ գիտեն,
Որ չարություն գործեցի ես իմ հարազատ որդու դեմ:

Աստվածատուր միակ որդուս նետեցի ես անապատ,
Կույր աչքերս չէր տարբերում՝ կյանքում ինչն է լավ ու վատ:

Բայց փառավոր Սիմուրղ հավքը նրան տվեց տաք անկյուն,
Սնեց, պահեց ու պահպանեց ինձնից լքված իմ որդուն:

Աստված ներեց ծանր մեղքս և իմ որդուն հանձնեց ինձ,
Եվ այդպիսով ազատվեցի հոգի մաշող տանջանքից...

Այժմ նրան թողնում եմ ինձ փոխարինող զորապետ,
Դեռ փոքր է նա, դաստիարակեք, որ դառնա այր խորագետ:

Նրա հոգին լուսավորեք, թողեք ձեզ մոտ մեծանա,
Որ նա բարի նպատակի ճանապարհով ընթանա:

Իսկ ես շահի հրամանով պիտի մեկնեմ կռվի դաշտ,
Պիտի ջարդեմ, գերեվարեմ ոսոխներին իմ անհաշտ»:

Այնուհետև Սամը դարձավ՝ դիմեց որդուն դառնավիշտ.
«Ապրիր խելոք ու բախտավոր, արդարացի եղիր միշտ:

Իմ դղյակը այժմ քոնն է, դու ես տերը Զաբուլի,
Իշխանների աչքի ներքո թող քո փառքը միշտ փայլի:

Իմ գանձատան մեծ բանալին ամուր ձեռքում պահիր դու,
Որ ես տեսնեմ՝ ուրախանամ երջանկությամբ իմ որդու:

Կյանքում ինչ որ ցանկանում ես՝ արա կամքով քո սրտի,
Իշխանական հաճույքներից նույնպես դու քեզ մի զրկիր»:

Երիտասարդ Դաստան-Զալը պատասխանեց. «Ո՛վ իմ հայր,
Պատերազմի դաշտ ես գնում, օտար աշխարհ, օտար վայր,

Այսուհետև քեզնից հեռու ինչպե՞ս պիտի ապրեմ ես,
Չի ծնվել եմ մեղքերով լի և կոտանջվեմ մշտապես:

Ծնված օրից զրկվեցի ես հայրական ջերմ խնամքից,
Երբ որ սիրով գիրկդ եկա՝ նորից պիտի թողնե՞ս ինձ:

Վարդից փուշ է սոսկ մնացել, հա՛յր, ինչո՞ւ եմ ես դժբախտ,
Աստված ինչո՞ւ գլխիս թափեց մեղքեր այսքան բազմառատ»:

ԶԱԼԸ ԳԱԼԻՍ Է ՔԱԲՈՒԼ

Երբ մի անգամ Դաստան-Զալը շրջագայել ցանկացավ
Հոր Սամի իշխանության կալվածքները ծայրեծայր,

Իր հետ տարավ ընտիր քաջեր, փահլավաններ փորձառու,
Որոնք Զալի հետ հավասար կարծիք էին բաժանում...

Դաստան-Զալը ցանկանում էր տեսնել հողը հնդկական –
Մերոն ու Մայը և Դեմբերը, և Քաբուլը խսկական:

Սակայն ամեն իջևանում խփում էր նա մեծ վրան,
Խրախճանում քաջերի հետ, ինչպես հսկա փահլավան:

Սովորություն և օրենք էր այդ երկրում դեռ հնուց,
Թե՝ հոգսերի մոռացումը կախված է սոսկ թունդ գինուց:

Նա Զաբուլից արագահեռ գնաց հասավ մինչ Քաբուլ,
Այնտեղ խսկույն ամրապնդեց իր բանակը բազմագունդ:

Քաբուլի քաջ թագավորին կոչում էին Մեհրաբ շահ,
Նա բախտավոր աստղի ներքո ուներ թագ ու ոսկե գահ:

Մեհրաբ շահը սողոսկալով եկավ Դաստան-Զալի մոտ,
Հարգանքի այդ ձևը երբեք ո՛չ նսեմ էր, ո՛չ ամոթ:

Մեհրաբն ուներ մոբեդի սիրտ և զինվորի վեհ հոգի,
Խելքով, ուժով, հարստությամբ չէր զիջում նա ոչ ոքի:

Թեկուզ արաբ էր ծագումով, սակայն ուներ մեծ անուն,
Նա Զոհակի սերնդից էր՝ այլ ցեղ ուներ, այլ անուն:

Մարզպան էր նա, բայց քաջ Սամին ենթակա էր, հարկատու,
Չէր մարտնչում Իրանի դեմ՝ Սամը մեծ էր, ինքը՝ թույլ:

Երբ որ լսեց Զալի մասին, նա մի պայծառ առավոտ
Գնաց, որ իր ուրախ օրը անցկացընի նրա մոտ:

Որպես նվեր իր հետ տարավ ակնեղեն ու զարդարանք,
Ճապուկ ձիու մեջքին դրեց հազվագյուտ մի ոսկե թամբ:

Տարավ նաև ստրուկ մարդկանց ու ոսկեկար հանդերձանք,
Եվ վարդագույն մետաքսեղեն, և դիպակներ բազմաձալք:

Արքայական արդ ու զարդեր, շահի փիրուզակուռ թագ,
Տարավ բոլոր այն ամենը, ինչ որ կար իր ձեռքի տակ:

Մեհրաբ շահին ուղեկցում էր զորագունդը Քաբուլի,
Իշխանական տոհմից նույնպես մարդիկ կային լիուլի:

ԶԱԼԻ ԵՎ ՄԵՀՐԱԲԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

Մեծահամբավ Սամի որդին՝ Դեստան-Զալը լսեց, որ
Ընդառաջ է գալիս, ահա, Մեհրաբ շահը զորքերով:

Նա շտապույթ տեղից ելավ, որ Մեհրաբին ողջունի,
Նրան քաղցր խոսքեր հղի, ինչ որ սրտի մեջ ունի...

Բոլոր մարդիկ հավաքվեցին փիրուզակուռ գահի շուրջ,
Ճոխ սեղանը հանդիսացավ մտերմության մի կամուրջ:

Աղմկարար խնջույք եղավ ու տոնական ցնծություն.
Մատռվակը թասերի մեջ գինի լցրեց՝ հանց արյուն:

Հենց այդ պահին Դեստան-Զալը շահին նայեց փառահեղ,
Տեսավ նրա արդուզարդը ու կեցվածքը շեն-շքեղ...

Կամքից անկախ հոգին ձգտեց շահի կողմը Քաբուլի,
Ասաց. «Իրոք սա ծնունդ է մի քաջարի զինվորի»:

Երբ խնջույքից հետո ելավ Մեհրաբ շահը լանջաբաց,
Դեստան-Զալը տեսավ նրա լայն թիկունքը և ասաց.

«Ո՞ր բանակում դուք կգտնեք մի այդպիսի մեծ հսկա,
Եվ ո՞վ կասի, թե կռվի մեջ Մեհրաբի դեմ մրցող կա»:

Մեհրաբ շահը ուներ ուշիմ ու բանիմաց ծառայող,
Դեստան-Զալին ասաց. «Ո՛վ դու հնարամիտ ու կարող,

Մեհրաբ շահի ապարանքում կա մի նոճի սիրավետ,
Գեղեցկությամբ արևն է լոկ մրցում նրա դստեր հետ:

Փղի ճերմակ ոսկորից է կարծես եկել լույս աշխարհ,
Արշալույսի պես հստակ է, խելոք է նա ու խոնարհ:

Ձյունի նման ճերմակ լանջից կախել է նա երկու ծամ,
Նա հրավարս աղջիկ չէ, այլ՝ հեզաճկուն մի այծյամ:

Կարմրավարդ այտեր ունի, կակաչի պես շուրթեր ալ,
Նռան նման գեղեցիկ կուրծք, եղնիկի պես թեթև քայլ:

Աչքն ու հոնքը շողշողում են ինչպես գարնան մի այգի,
Ունի երկար, սև թարթիչներ ու կեռ հոնքեր մահիկի...

Կեռ հոնքերը կարծես լինեն Թարազայի պրկաղեղ,
Բուրումնավետ մուշկի պես է, կախարդական, սիրազեղ:

Շրթունքները կարծես լինեն նրբաթերթիկ մանուշակ,
Լուսինն անգամ նրա առջև համարվում է թույլ ճրագ:

Նա ծաղկազարդ պարտեզ է մի, գեղեցկությամբ գերազանց,
Այնքան հեզ է, որ կախարդում, մոլորում է քաջ մարդկանց»:

Այսպես՝ Դեստան-Զալը գովքեր լսեց մինչև իրիկուն,
Խելակորույս մարդու նման սիրո ցավից չուներ քուն:

Մտածում էր. «Եթե հայրը գարնանապերճ է թվում,
Պետք է կարծել, որ դստեր պես էակ չկա աշխարհում»:

Մինչ լուսաբաց շրջում էր նա, ո՛չ քուն ուներ, ո՛չ հանգիստ,
Ռուդաբեին չէր տեսել դեռ, բայց տանջվում էր դառնախիստ:

ՄԵՀՐԱԲԻ ԵՎ ԶԱԼԻ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Եվ երկնի կուրծքը պատռեցին հուր շողերը արևի,
Աշխարհին արար դարձնելով հակինթե մի հայելի:

Զինվորական շքախումբը երկիրն առավ ոտքի տակ,
Շողշողացին արևափայլ, մերկ սրերը սպիտակ:

Զալի շուրջը հավաքվեցին փահլևաններ փառավոր,
Եկավ նաև արագաքայլ բանակներով բյուրավոր

Մեծ Քաբուլի երկրի տերը... Դեպ վրանը Զաբուլի,
Որ քաջանուն Դեստան-Զալին տա նվերներ լիուլի:

Զորքի դետքը տեղից ելավ, իսկույն գոչեց՝ «Ճանապա՛րհ»,
Ապա շահը մտավ Զալի ճոխ վրանը ոսկեկար:

Մեհրաբ շահը շքամուտքից քայլերն ուղղեց գլխիկոր,
Նա բերքառատ ծառի նման գեղեցիկ էր ու հզոր:

Զալը տեսավ Մեհրաբ շահի պայծառ դեմքը լուսավառ,
Մեծարանքի, ուրախության խոսքեր հղեց քաղցրաբառ:

Ասաց. «Սիրտըդ ի՞նչ է ուզում, ո՞վ անվանի իմ մարզպան,
Հինդու սուսե՞ր, ընտիր նվե՞ր, թե՞ նժույգներ տոհմական»:

Իսկ Մեհրաբը պատասխանեց. «Ո՛վ անվանի առաջնորդ,
Աշխարհը քեզ գիտե որպես խաղաղության լավ միջնորդ:

Սրտիս խորքում պահել եմ ես մի երկնային ցանկություն՝
Տանել քեզ իմ Քաբուլի պերճ ապարանքը, իբրև հյուր:

Գնանք այնտեղ, որ միասին անենք շքեղ խրախճանք,
Որ իմ սիրտը տաքացրնես քո արևի ջերմությամբ»:

Դեստան-Զալը պատասխանեց. «Այդպես երբեք չի լինի,
Անպատշաճ է, որ ես քեզ հետ մեկտեղ խմեմ թունդ գինի:

Ես իմ վարքով Սամի սրտում կսերմանեմ նոր զայրույթ,
Շահնշահը ինձ կանվանի թեթևամիտ և անփույթ,

Քանզի ես իմ կամքով եղա կռապաշտի հարկի տակ,
Գինին ի՞նչ է, որ ես գործեմ իմ հավատին հակառակ:

Քո խնդրածից ավելի մեծ բան պահանջիր հենց հիմա,
Անտարակույս, ես քեզանից գոհ կլինեմ մինչև մահ»:

Մեհրաբ շահը մեծարանքի խոսքեր հղեց առերես,
Բայց իր մտքում Զալին դիմեց. «Դու հավատով մաքուր չես»:

Նա խոնարհվեց, այնուհետև մեծ վրանից ելավ դուրս,
Համոզվելով, որ Դեստանից բնավ չունի մի լավ հույս:

Երբ որ Մեհրաբ շահը Զալի մոտից գնաց՝ չգիտեր,
Որ իր մասին Զալը սիրո խոսքեր ասաց ի սրտե:

Քաբուլի տեր Մեհրաբ շահը չուներ հռչակ ու մեծ փառք,
Համարվում էր դևի ծնունդ, արաբացեղ, օտար մարդ:

Ուներ հոգում ուրիշ հավատ, ուրիշ ճամփա, ուրիշ կյանք,
Ոչ ոք նրա մասին լավ խոսք չէր բարբառել լուսնի տակ:

Բայց քանի որ տեսան՝ Զալը հարգանք ուներ դեպի նա,
Պալատական ավագանին ու քաջերը ակամա

Մեծարեցին թե՛ կեցվածքը, և թե՛ նրա խելքը մեծ,
Ու զարմացան, երբ լայնալանջ իր թիկունքը ցույց տվեց:

Իսկ Զալզերի հոգում ուժեղ ահն էր նստել ծանրադիր,
Զի հաղթողը սիրտը եղավ, քան բանական խելքը իր:

Հին ժամանակ մի խորիմաստ միտք է հայտնել մի արաբ,
Հետնորդները նրա խոսքը բարբառում են շարունակ.

«Հավատարիմ երիվարս կծառայի ինձ ցմահ,
Եվ իմ փառքը կբարձրանա մինչ լուսինը երկնագահ:

Երբ մոռանամ մեծ պատիվս ու կոչումը իմ վսեմ,
Գիտունների աչքում թող որ լինեմ մարդուկ մի նսեմ»:

Դեստան-Զալը նորից ընկավ մտքերի մեջ խառնիխուռն,
Որոնելով դրությունից դուրս գալու ելք հաստատուն:

Կյանքում նորից ավելացան նոր մտքեր ու նոր հոգսեր,
Վախենում էր մնար առանց քաջի փառքի, առանց սեր:

Սակայն բախտի ճախարակը միշտ նույն պտույտն էր անում,
Թեկուզ Դեստան-Զալը սիրուց չարչարվում էր ու խամրում:

ՄԵՀՐԱԲՆ ԻՐ ԱՂՋԿԱՆ ՊԱՏՄՈՒՄ Է ԴԵՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ

Լուսաբացին Մեհրաբ շահը իր դղյակից ելավ դուրս,
Որ աղջկան ու կնոջը հայտնի մի նոր աչքալույս...

Կանանոցի կողմը գնաց, բացեց դուռը իր ձեռքով,
Տեսավ երկու արևադեմ գեղեցկուհի վառ դեմքով:

Մեկը Սինդուխտ կինն էր նրա, բարեժպիտ, հեզախոհ,
Իսկ երկրորդը Ռուդաբեն էր՝ դուստրը նրա մեծատոհմ:

Փայլում էին նրանք ինչպես գարնանային պերճ պարտեզ
Ամենուրեք բուրում էին ծաղկանց ծաղկի՝ վարդի պես:

Մեհրաբ շահը ուրախացավ գեղեցկությամբ իր դստեր,
Ու աղոթեց. «Տեր, աղջկաս դու միշտ չարից պահիր զերծ»:

Նման էր նա լուսնի ներքո աճած ողորկ, սեգ նոճուն,
Իսկ խնկաբույր խոպոպները սիրող սրտեր էր կանչում:

Զարդարված էր գոհարներով ու քարերով թանկարժեք,
Ուներ մարդու սիրտ գրավող կախարդական վարդադեմք:

Նա ցույց տվեց մարգարտաշար ատամները նռնահատ,
Մեհրաբ շահին հարցուփորձեց շրթունքներով ոսկեվարդ.

«Ինչպե՞ս անցավ երեկ օրդ, ո՛վ իմ ծնող սիրելի,
Թող քո կյանքը չարիքներից հար-հավիտյան զերծ լինի:

Պատմեիր Դեստան-Զալը, հայր իմ, ո՞վ է և ի՞նչ մարդ,
Նա արղավան ծառի ճյո՞ւղ է, թե՞ հաստատուն պնդարմատ:

Ունի՞ արդյոք լավ հատկություն՝ թե արտաքուստ, թե ներքուստ,
Կամ թե նախնյաց մեր քաջերի շնորհները ի վերուստ»:

Մեհրաբ շահը պատասխանեց Քաբուլի պերճ գեղուհուն.
«Արծակուրծք, լիալուսին իմ Ռուդաբե քաղցրանուն,

Ողջ աշխարհում չկա Զալի նման խիզախ փահլևան,
Անհաղթելի բազուկ ունի, առյուծ է նա իսկական:

Ոչ մի դղյակ իր պատերին չի պատկերել մի զինվոր,
Որ Զալի պես լինի հսկա աղեղնավոր ու հեծվոր...

Նա առյուծի քաջ սիրտ ունի և ամեհի փղի ուժ,
Նեղոսի պես կենսառատ է, հոգով նուրբ է ու քնքուշ:

Գահի վրա նա անհամար ոսկի, գոհար է ցրում,
Ոսոխների գլուխներ է պատերազմում թռցնում:

Նրա դեմքը շողշողում է, ինչպես ծառը արղավան,
Ժիր է, խիզախ, երիտասարդ, հանց անվեհեր փահլևան:

Մենամարտում չկա մի քաջ՝ Զալին գետնի ու հաղթի,
Թամբի վրա վիշապ է նա, գիտե ճամփան իր բախտի:

Երբ բարկացավ՝ նա կթափի գետի նման հորդ արյուն,
Ասպարեզում՝ մրցողներին ցույց է տալիս թուր, դաշույն:

Բայց ափսոս որ ճերմակ մազեր ունի գլխին այդ տղան,
Թե լավ աչքով նայես նրան՝ անթերի է անպայման:

Ճերմակ մազը դարձնում է է՛լ ավելի գրավիչ,
Ով նայում է՝ համոզվում է, որ նա քաջ է ու կտրիճ»:

Այդպես, հորը ուշիմ լսեց գեղեցկուհի Ռուդաբեն,
Նրան նման փայլփլեցին թշիկները վարդեղեն:

Ոչ ցերեկը դադար ուներ, ոչ գիշերը հանգիստ քուն,
Զալի սիրուց կրակ դարձած՝ հրդեհվում էր նա թաքուն:

Սերը մաշեց սիրտը նրա, կարծես եղավ խելքահան,
Ու մոռացավ կարգ ու կանոն, ինչ պատշաճ է աղջկան:

Կինը չպետք է քաջի մասին լավ զրույցներ իմանա,
Քանզի սիրո կրակից նա դառնում է չար սատանա:

ՌՈՒԴԱԲԵՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒՄ Է ՆԱԺԻՇՏՆԵՐԻ ՀԵՏ

Աղջիկները գեղեցկուհի Ռուդաբեին տուն տարան,
Հինգ սիրելի նաժիշտ ուներ՝ հինգ թրքուհի ու ծառա:

Այնուհետև նաժիշտներին նստեցրեց նա իր մոտ,
Թե՝ «Սրտումս մի գաղտնիք կա, իմ ծառաներ սրտամոտ...

Դուք բոլորդ բարեխորհուրդ նաժիշտներ եք անբաժան,
Կարեկցում եք, խրատում ինձ ամեն պատեհ, ամեն ժամ:

Բախտավորվեք դուք էլ նույնպես, ունենաք կյանք հարատև,
Ձեզնից բացի գաղտնիքներս ոչ մի էակ չգիտե...

Ես սիրում եմ... Այժմ սիրտս ալեհույզ է ինչպես ծով,
Անդադար ծով, որ կրծում է գիշեր-ցերեկ ժայռ ու ձոր:

Զալի սերը սիրտս մաշեց, հանգիստ չունեմ անդադար,
Երազում միշտ նա է աչքիս, ես դարձել եմ խելագար:

Զալը կարծես մի սիրավառ բոց է դրել սրտիս մեջ,
Սիրո ցավը գիշեր-ցերեկ հոշոտում է ինձ անվերջ:

Մ՜խ, օգնեցե՛ք, իմ նաժիշտներ, մի ելք գտեք ինձ համար,
Որ հոգեմաշ տանջանքներից ես ազատվեմ անպատճառ:

Գաղտնիքներս դեռ ոչ մեկին ձեզնից բացի չեմ ասել,
Քանզի, գիտեք, նեղ օրերիս վիշտս ձեզ հետ եմ կիսել»:

Նաժիշտները դեռ զարմացած նայում էին ապշահար,
Չէ՛ որ այդպես բաց խոսելը անպատշաճ էր, անհարմար:

Հինգ թրքուհի ծառաները տեղից ելան սարսափած,
Ամեն մեկը խրատական, խորհրդատու խոսք ասաց.

«Ո՛վ մեծանուն գեղեցկուհի, դու Քաբուլի արեգակ,
Գլխիդ ունես արքայական, լուսաճաճանչ ոսկե թագ:

Քո մասին են խոսում մարդիկ ամենուրեք և անվերջ,
Քո մատին է արքայական մեծ մատանին ակնապերճ:

Ոչ մի արքա չունի քեզ պես գեղեցկուհի աղջնակ,
Լուսինն անգամ քո լույսի դեմ համարվում է թույլ ճրագ:

Քո հռչակը տարածվել է Մայ քաղաքից մինչ Կանուջ,
Բյուզանդիոնը համարվում է սիրող սրտի մեծ կամուրջ:

Չես հասկանում պատիվ, ամոթ, ասա՛, ինչպե՞ս քեզ սիրենք,
Մի՞թե չունես չնչին հարգանք քո հարազատ հոր հանդեպ:

Ծնված օրից դուրս շպրտեց հայրը որդուն իր միակ,
Իսկ դու նրան փայփայում ես քո սիրավառ կրծքի տակ:

Հիշիր նրան, թե Սիմուրղը ինչպես սնեց իր բնում,
Մարդը նա է, ով ի ծնե իր մոր կաթով է սնվում:

Այս աշխարհում դեռ ոչ մի մայր չի ծնել ծեր պատանի,
Իր հայրական օջախը նա ինչպե՞ս պիտի պահպանի:

Դու գեղեցիկ շուրթեր ունես ու խոպոպներ համպարե,
Իսկ այդ Զալը ոչ թե ջահել, այլ ծեր մարդ է ի ծնե:

Ամեն մի քաջ քեզ է ուզում, ով որ սիրող սիրտ ունի,
Դեմքիդ փայլից շողշողում են դդյակները արքունի:

Քո էությամբ պատկերն ես դու գոյահրաշք Աստըծու,
Արևն անգամ երկիր կիջնի, որ քեզ տանի հարսնացու»:

Երբ մտերիմ նաժիշտներին ուշիմ լսեց Ռուդաբեն,
Մի պահ թվաց, որ հուզմունքից սիրտը հիմա կպայթեր:

Նա շտապիույթ տեղից ելավ՝ դիմեց նրանց խստադեմ,
Եվ թվում էր, թե աչքերը ակնաբնում պիտ պայթեն...

Խիստ հոնքերը հավաքեց նա, սուր խոսքերով զայրացած,
Իր սիրելի նաժիշտներին այսպես դիմեց ու ասաց.

«Բայց ապարդյուն անցան բոլոր ձեր ջանքերը քամու պես,
Արժանի չեմ համարում ես անգամ ականջ դնել ձեզ:

Ես չեմ կարող տարվել, սիրել գիշերաշող մահիկին,
Քանզի սիրտս նվիրել եմ արեգակին ու մեկին...

Աղյուս սիրող մարդը բնավ վարդի վրա չի նայի,
Թեկուզ վարդն է արժեքավոր... այդ է կարգը աշխարհի:

Եթե հիվանդ մարդուն միայն թթու քացախն է բուժում,
Երբ որ քաղցր մեղր ես տալիս՝ նա ավելի է տուժում:

Ոչ Կեսար եմ ձեզնից ուզում, ոչ Թիեն-Չու չինական,
Ոչ էլ անգամ մեծահամբավ շահնշահին իսկական:

Դեստան-Զալին եմ սիրում ես, թեկուզ հայրս հալածի...
Նա ամրապինդ բազուկ ունի և ուժ ու սիրտ առյուծի:

Ողջ Զաբուլը և Քաբուլը անվանում են Ծեր-Զալզեր,
Եթե աշխարհն ինձ նվիրեն՝ կասեմ՝ նրան եմ ընտրել:

Իմ սրտի մեջ նա՛ է միայն, ուրիշ մեկը տեղ չունի,
Ինձ մի՛ տվեք ուրիշ անուն, սերս ուրիշ սեր չունի:

Թեկուզ Զալին չեմ տեսել ես, սակայն սիրում եմ նրան,
Նա մշտավառ սիրո լույս է, երջանկության հենարան:

Ի՞նչ վնաս, թե գլխին ունի ճերմակ մազեր ի ծնե,
Մեկ հարվածով կարող է նա քաջի գլուխ թռցնել»:

Նաժիշտները ականջ դրին Ռուդաբեին վշտախոր,
Նոր հասկացան, թե ինչո՞ւ է հառաչում նա ամեն օր:

Մտածելով՝ գտան նրա համար հարմար պատասխան.
«Ո՛վ լուսնադեմ գեղեցկուհի, մենք քո ճորտն ենք ու ծառան:

Ինչ որ սիրտդ ցանկանում է՝ հրամայիր հիմա մեզ,
Քո պահանջը ժամանակին կկատարենք ճորտի պես»:

Իսկ մի նաժիշտ նրան ասաց. «Իմ Ռուդաբե ոսկեհեր,
Գաղտնիքներդ ուրիշ մարդկանց չտարածես երբևէ:

Թող բանական խելքը լինի քեզ մշտական առաջնորդ,
Մենք մեր կյանքը քեզ ենք տալիս արցունքներով մշտահորդ:

Հրամայիր՝ մենք կդառնանք հմայող կին ու կախարդ,
Որ թովչական մեր արվեստով նրան գցենք նեղ թակարդ:

Եվ մոգական թևեր առած՝ կթռչենք մենք շատ հեռու,
Արագավազ եղնիկի պես քեզ մոտ կգանք օգնելու:

Դեստան-Զալին լիալուսնի մոտ կբերենք անպայման,
Թող քո սրտի համար դառնա սիրո ամուր պատվանդան»:

Ու Ռուդաբեն սիրով նայեց նաժիշտներին իր խոնարհ,
Սուտակի պես շուրթեր ուներ, կարմիր այտեր՝ հանց գոհար:

Իր ծառային այսպես ասաց. «Գնա՛ հնար գտիր դու,
Այսօրվանից հողում տնկիր մի խոշոր ծառ բերքատու...

Այնպիսի ծառ, որ պտուղը լինի ոսկի ու սուտակ,
Որ խելոքը կարողանա այն հավաքել լուսնի տակ»:

ԶԱԼԻ ՃՈՐՏԸ ՀԱՆԴԻՊՈՒՄ Է ՌՈՒԴԱԲԵԻ ՆԱԺԻՇՏՆԵՐԻՆ

Նաժիշտները տեղից ելան ու գնացին կանանոց,
Որ միասին տիկնոջ համար գտնեն հարմար մի միջոց:

Անմիջապես բյուզանդական շորեր հագան ոսկեզարդ
Ու փայլեցին հանց մայիսյան բուրումնավետ կարմիր վարդ:

Եվ դիմեցին խմբով դեպի մոտիկ գետը անկամուրջ,
Սակայն խումբ չէր աղջիկների, այլ գունագեղ ծաղկեփունջ:

Գարնանամուտ ամիսն էր այդ, որ կոչվում է ֆերվերդին,
Զալը եկավ վրան խփեց ուղիղ գետի աջ ափին:

Գետի մյուս՝ կանաչ ափին շրջում էին հինգ նաժիշտ,
Խոսում էին Զալի մասին և ծաղիկներ փնջում միշտ:

Քաղում էին կարմիր վարդեր ծաղկատարած հովիտում,
Ամեն աղջիկ մի ծաղկեփունջ, մի վարդ ուներ իր ձեռքում:

Նրանք եկան մարգագետնով, վարդի փնջեր պինդ գրկած,
Ու կանգնեցին Դեստան-Զալի մեծ վրանի դեմ-դիմաց:

Դեստան-Զալը իր վրանից անմիջապես ելավ դուրս,
Ու հարցրեց. «Ովքե՞ր եք դուք, ո՛վ աղջիկներ վարդահյուս»:

Մեկը նրան պատասխանեց. «Ո՛վ քաջարի Դեստան-Զալ,
Վարդի համար մեզ ուղարկեց քաբուլուհին ոսկեծամ:

Մեհրաբ շահի ապարանքից հեռացել ենք և հլու
Մեր թագուհու համար ծաղիկ ու վարդեր ենք փնջելու»:

Զալը երբ որ լսեց նրա պատասխանը, հապշտապ
Համիարզի հետ ելավ իսկույն գնաց դեպի գետի ափ:

Գետի մյուս ափին տեսավ հինգ գեղեցիկ թրքուհի,
Զալը ճորտից մի նետ առավ, ապա պահեց գրկում իր:

Նա այդ պահին նկատել էր գետակի մեջ մի թռչուն,
Որ լողում էր անփութորեն ու մարդկանցից չէր փախչում:

Բարեժպիտ ծառան Զալին հանձնեց նորից նետ, նիզակ,
Իսկ Դեստանը քաշեց նետը և տարածեց աղաղակ:

Զալի ձայնից թռչունն իսկույն երկինք թռավ սարսափած,
Հենց այդ պահին Զալի նետը օդից նրան գցեց ցած:

Եվ կարմրեց գետի ջուրը թռչունի տաք արյունից,
Զալը ասաց. «Ծառա՛ս, գնա այդ թռչունը բեր տուր ինձ»:

Ծառան գետի մյուս ափը արագ անցավ նավակով,
Տեսավ այնտեղ հինգ աղջիկներ՝ ծաղկանկար դիպակով:

Պերճաբարբառ նաժիշտներից մեկը եկավ ընդառաջ,
Ասաց. «Տերդ երևում է լավ որսորդ է ու շատ քաջ:

Բայց դու ճիշտը խոստովանիր, փղամարմինն այդ հզոր
Ի՞նչ աշխարհի տիրակալ է, կամ ի՞նչ ազգի թագավոր...

Եթե այդպես նետեր է նա պրկաղեղից արձակում,
Նրա հանդեպ քաջ հանդուգնը չի ձեռնարկի հարձակում:

Մենք չենք տեսել մի այդպիսի շնորհաշուք ձիավոր,
Նրա նման կամ մեկ ուրիշ նիզակավոր, տեգավոր»:

Զալի ճորտը շուրթը կծեց, դարձավ նրան ու ասաց.
«Նման խոսքեր շահի մասին պետք չէ լսել, անկասկած:

Նա զավակն է հսկա Սամի, տիրակալը Սիստանի,
Քաջեր էին նրա պապը, ապուպապը անվանի:

Այս աշխարհում դու չես գտնի Զալի նման մարդ հարուստ,
Աստված նրան պարգևել է գեղեցկություն ի վերուստ»:

Իսկ աղջիկը ի պատասխան ճորտի խոսքին հուսալի,
Ասաց. «Մի բան լսե՞լ ես դու՝ լուսնի մասին Քաբուլի:

Մեհրաբ շահը իր դղյակում մի այնպիսի լույս ունի,
Որ ավելի բարձր է ու վեհ, քան քո տերը անվանի:

Փղոսկրե գույն ունի նա, հպարտ նոճու սեգ հասակ,
Համպարաբույր գլխին ունի արքայական ոսկե թագ:

Ունի սև-սև գիշերաչեր, բարակ հոնքեր՝ կորաթեք,
Արծաթագույն նրա քիթը կարծես լինի նուրբ եղեգ:

Վշտոտ մարդու սրտի նման բերան ունի անչափ նեղ,
Կախել է նա մինչ ոտքերը խոպոպները ոսկեգեղ:

Իսկ աչքերը թախծամած են, տխուր մտքեր են ասում,
Այտերը ալ կակաչներ են, չքնաղ կուրծքը մշկասուն:

Մեծ Քաբուլից վարդի համար եկանք հասանք մինչ գետափ
Ու Զաբուլի մեծ իշխանին լույս ցերեկով մենք գտանք:

Մեր փափագն է, որ միանան երկու շուրթերն իրար հետ,
Մեր արևն ու ձեր լուսինը երջանկանան առհավետ:

Թող որ նրանց միացումը լինի հաստատ ու վայել,
Քանզի Աստված այդ երկուսին մեծություն չի խնայել»:

ՃՈՐՏԸ ՊԱՏԳԱՄ Է ԲԵՐՈՒՄ ԴԵՍՏԱՆԻՆ

Գետի մյուս ափից եկավ Զալի ծառան ժպտադեմ,
Այնուհետև կանգնեց ուղիղ Դեստան-Զալին դեմ առ դեմ:

Զալը ասաց. «Ինչի՞ց է, որ ժպտում, հրճվում ես այդքան,
Երևում է, որ քո մտքում խորհրդավոր բաներ կան»:

Ծառան մեկ-մեկ պատմեց նրան ինչ տեսել էր ու լսել,
Զալի սիրտն ու հոգին լցրեց ուրախությամբ մի վսեմ:

Այնուհետև հարցուփորձեց. «Իմ լավ ծառա, իմ համհարզ,
Գնա Մեհրաբ շահի կանանց ասա՝ ո՛վ դուք ծաղկավարս,

Դարաստանում փոքր մի պահ կացեք, մինչև ձեզ մոտ գամ,
Որ ձեր գլխին ո՛չ թե վարդեր, այլ գոհարներ ես շաղ տամ:

Այդպես արագ մի հեռացեք Քաբուլի պերճ կույսի մոտ,
Քանզի գաղտնի խոսքեր պիտի նրան հղեմ սրտամոտ»:

Ապա Զալը իր ծառային տվեց արծաթ ու գոհար,
Բյուզանդական դիպակներ ու մետաքսեղեն ոսկեկար:

Նա պատվիրեց, որ երբ ծառան աղջիկների մոտ մեկնի,
Հայտնի նրանց, որ գաղտնիքը նրանք չասեն ոչ մեկի:

Ու շուտափույթ անցավ գետի մյուս ափը ժիր ծառան,
Ջերմ խոսքերից բացի, տարավ առատ ոսկի ու գոհար:

Ոսկեղենը տարավ հանձնեց մեծ Քաբուլի պերճ դստերց,
Ասաց. «Դեստան-Զալից նույնպես ձեզ ողջույններ մեծամեծ»:

Աղջիկներից մեկը դիմեց. «Թեկուզ տվիր դու մեզ փող,
Բայց գիտե՛ս, որ հայտնի խոսքը գաղտնի պահել չենք կարող:

Գաղտնիք չէ, երբ երկու հոգի գաղտնի պահեն մի գաղտնիք,
Իսկ երեք և չորս հոգու մեջ՝ այն կդառնա խաղալիք...

Գնա ասա քո տիրոջը՝ Զալին, թող գա տեսության,
Թող որ միայն ինձ վստահի, ինչ ցանկանա՝ կանեմ այն»:

Նաժիշտները իսկույն դարձան-փսփսացին իրարու,
Թե՝ «Թակարդի մեջ է ընկել մի ժիր առյուծ, մի արու»:

ԶԱԼԸ ԳՆՈՒՄ Է ՆԱԺԻՇՏՆԵՐԻ ՄՈՏ

Եկավ Զալի նվիրական խորհրդատուն՝ ժիր ծառան,
Հսկում էր նա Դեստան քաջին և գանձատան մեծ դռան:

Դեստան-Զալի ականջին նա խոսքեր ասաց կամացուկ,
Նաժիշտներից ինչ որ լսել ու տեսել էր նա ծածուկ:

Այնուհետև խիզախ Զալը աճապարեց դեպի դաշտ,
Տեսավ այնտեղ Քաբուլի պերճ նաժիշտներին վարդապաշտ:

Թարազայի կակաչաղեմ գեղեցկուհու պես չքնաղ
Նրանք եկան ու կանգնեցին Զալի առջև գլխակախ:

Դեստան-Զալը նաժիշտներին հարցուփորձեց ի սրտե,
Թե Քաբուլի լույս թագուհուց ամեն մեկը ինչ գիտե:

Եվ ուզում էր իմանալ, թե ինչպես է նա բարբառում,
Ի՞նչ խելք ունի, ի՞նչ շարժ ու ձև, կա՞ նմանը աշխարհում:

Ասաց. «Եթե համոզվեցի՝ ճշտախոս եք ու շիտակ,
Ձեզ կընծայեմ մետաքսեղեն, ոսկի, գոհար ու սուտակ:

Բայց հակառակ դեպքում, եթե անեք ծաղրը ու ծանակ –
Ձեզ կնետեմ իմ ծանրաքայլ ճերմակ փղի ոտքի տակ»:

Նաժիշտները ամաչելուց կարմրեցին վարդի պես,
Դեստան-Զալի ոտքի հողը համբուրեցին լուռ ու հեզ:

Այնուհետև նաժիշտների անունից մի սրամիտ
Ու դեռատի աղջիկ եկավ, թե՝ «Դիմում եմ ես քաջիդ:

Երբևիցե չի եղել մայր, որ արևի, լուսնի տակ
Աշխարհի բերեր Զալի նման մեծահամբավ մի զավակ:

Հրապուրիչ դեմք ունես դու, նոճու հասակ սլացիկ,
Հսկայի ուժ, գիտունի խելք, հոգի ազնիվ, գեղեցիկ...

Կտրիճ մարդու ունակություն և բազուկներ առյուծի,
Այն ամենը, որ կռվի մեջ քեզ հետ ոչ ոք չի մրցի:

Գեղեցկությամբ Ռուդաբեն է քեզ արժանի, հավասար,
Այսօրվանից հաստատապես երջանկության դու հասար:

Նա ոտքերից մինչև գլուխ վարդ է, շուշան ու հասմիկ,
Խավարի մեջ շողշողում է՝ հանց Եմենի լույս աստղիկ:

Մինչև ճերմակ կրունկները ունի կախած սև ծամեր,
Ծամեր չեն, այլ մուշկի թոկ են՝ լույս երկնքից քեզ նվեր:

Սև վարսերը օծանել է համպարով ու բուրկենով,
Հուրհրում է հակինթի պես վարդակարմիր այտերով:

Երբ որ տեսնես՝ կասես, իրոք, աղջիկ չէ նա, այլ մի կուռք,
Նման էակ դեռ չեն տեսել չինացի և հինդ ու թուրք»:

Ու խանդավառ Դեստան-Զալը դարձավ խոսող աղջկան,
Եվ ի սրտե նրան հղեց բարի խոսքեր քաղցրաձայն:

Այնուհետև հարցուփորձեց ինչպես գտնել ճիշտ ուղի,
Որ Քաբուլի գեղեցկուհու մոտ գնա նա շեշտուղիղ:

«Ռուդաբեի ճամփին եմ միշտ,– ասաց,– նայում անձկագին,
Ես այլ բաղձանք չունեմ այժմ, չեմ ցանկանում ուրիշ կին»:

Իսկ նաժիշտը պատասխանեց. «Քաջդ այստեղ թող մնա,
Հրամայիր՝ մենք կգնանք թագուհու մոտ հենց հիմա:

Դերճաբարբառ խոսքեր կասենք իշխանուհուն քո մասին,
Չար նպատակ չունենք քո դեմ, բնավ քեզ չենք վնասի:

Այնուհետև երբ կգտնես դու քեզ հարմար մի պարան,
Դղյակի կողմ գնա շտապ, գաղտնածածուկ, անվարան:

Դու պարանը օղակ արա՝ նետիր ժայռի պատն ի վեր,
Այն ժամանակ քեզ մոտ կիջնի աստվածային մի նվեր»:

ՆԱԺԻՇՏՆԵՐԸ ՎԵՐԱԴԱՌՆՈՒՄ ԵՆ ՊԱԼԱՏ

Դեստան-Զալը վերադարձավ ճոխ վրանը արքունի,
Բայց գիշերը նրան թվաց ամբողջական մի տարի:

Նաժիշտները Ռուդաբեի մոտ գնացին լուռ ու մունջ,
Ամեն մեկը ձեռքին ուներ մի գեղեցիկ ծաղկեփունջ:

Դռնապանը այդ նկատեց՝ աճապարեց վերնատուն,
Հանդիմանեց նաժիշտներին, որ հեռացել են թաքուն:

«Անժամանակ այս միջոցին ի՞նչ եք անում փողոցում,
Քանզի հսկող աչքեր ունեք արքայական ամրոցում»:

Նաժիշտները իսկույն տվին նրան կտրուկ պատասխան.
«Ո՜վ սրախոս, ո՛վ դու զգաստ արքունիքի դռնապան,

Նայի՛ր, որքան լավ գարուն է, բացվել են ալ ծաղիկներ,
Վարդաստանում չեն երևում մահասարսուռ, չար դևեր:

Վարդ ու ծաղիկ են հավաքում մարդիկ կանաչ պարտեզում,
Գարուն սիրող մարդկանց նման մենք էլ ծաղիկ ենք ուզում»:

Դռնապանը ասաց. «Պետք չէ խոսքեր ցրել շենշռայլ,
Ձեր արարքից իմ այսօրը եղավ նսեմ ու մռայլ:

Այսպիսի քայլ չէիք թույլ տա, եթե չգար Զալը քաջ,
Նա վրան է այժմ խփել գետակի մոտ օր առաջ:

Եվ ամեն օր լուսաբացին մեր շահն հեծած նժույգ-ձին՝
Գնում է քաջ Դեստանի մոտ, որ նրա հետ զրուցի:

Քաբուլի տերն ամբողջ օրը անց է կացնում Զալի մոտ,
Նրանք այժմ բարեկամ են և ավելի սրտամոտ:

Մի արասցե, որ ձեր ձեռքին ծաղիկ տեսնի մեր արքան,
Նա կարող է ձեզ գլխատել կամ թե նետել մութ զնդան:

Այսուհետև դուրս չգաք դուք կանանոցից մեկուսի,
Ձեզ տեսնողը, անտարակույս, բարի խոսքեր չի ասի»:

ՆԱԺԻՇՏՆԵՐԸ ԶԵԿՈՒՑՈՒՄ ԵՆ ՌՈՒԴԱԲԵԻՆ

Ռուդաբեի մոտ գնացին աղջիկները ծաղկազարդ,
Նրա առջև ծունկի եկան ստրուկի պես հնազանդ:

Աղջիկներից մեկը դիմեց. «Ո՛վ Ռուդաբե ոսկեթագ,
Չէի տեսել ջահել քաջի գլխին մազեր սպիտակ:

Ցերեկը նա ցույց է տալիս լույս դեմքը իր վարդաբույր,
Իսկ գիշերը՝ ցոլցլում են խոպոպները աստղաբույլ»:

Եվ Ռուդաբեն սիրո ցավից վառվեց ինչպես ատրուշան,
Հոգու խորքից խոր ախ քաշեց, որպես սիրո մեծ նշան:

Նաժիշտները նրան տվին բազում ոսկի ու գոհար,
Իսկ Ռուդաբեն գահի վրա այսպես խոսեց մեղմաբար.

«Բարի տիկնայք, ինձ ասացեք, ինչպե՞ս տեսաք Դեստանին,
Նկատեցի՞ք ուրիշ վատ բան, արժանի՞ է համբավի»:

Նույն միջոցին նաժիշտները առաջացան ժպտուրախ,
Գեղեցկուհի Ռուդաբեի մոտ կանգնեցին գլխակախ:

Սիրունատես մի թրքուհի այսպես ասաց թագուհուն.
«Ճիշտ են ասել, որ Դեստանը ունի քաջի մեծ անուն:

Մրցախաղում ճշմարտապես չկա նրան հավասար,
Պայքարի մեջ հսկա փիղ է և ծանրանիստ ժայռասար:

Ո՛չ մի խիզախ ու փահլևան չունի նրա պես շնորհք,
Ունի բազում աշխարհազոր, ընտիր քաջեր զենք ու զորք:

Արտաքինը նարգիզի պես կախարդիչ է, գեղեցիկ,
Սուտակի պես շուրթեր ունի, շուրթեր, ինչպես մեղեսիկ:

Սրամիտ է, պերճաբարբառ, ուժ ունի նա առյուծի,
Իսկ գիտությամբ ծեր մոբեթ է և ծագումով արիացի:

Ո՛վ Ռուդաբե, ափսոս միայն, որ մազերն են սպիտակ,
Նրա գլխի գանգուրները կարծես լինեն լուսնի թագ:

Այդպես տեսանք մենք այդ քաջին, ո՛վ ոսկեվարս թագուհի,
Ծիրանագույն հագուստներդ գնա փոխիր դու հիմի:

Մեզ շուտափույթ պատասխան տուր, թե՝ ի՞նչ անենք այսուհետ,
Հրամայես՝ ետ կգնանք Դեստանի մոտ ինչպես նետ»:

Իսկ Ռուդաբեն նրան ասաց. «Դու քաղցրախոս իմ նաժիշտ,
Սրտիս խորքում Զալի սիրուց բացի, չունեմ ուրիշ վիշտ:

Մի՞թե Զալի մասին չէր ձեր խրատները անիմաստ,
Չեմ մոռացել, ասում էիք՝ նա նսեմ է ու նվաստ:

Քանի անգամ ինձ հայտնել եք, որ նա չունի ծնող հայր,
Նրան սնել, պահպանել է Սիմուրղ հավքը իբրև մայր:

Ասում էիք, որ նա ունի ճերմակ մազեր ծերունու,
Օտարության մեջ մեծացած մարդուն ո՛վ է սիրելու»:

Մինչ նա իր թուրք նաժիշտների հետ խոսում էր, խրատում,
Նռան նման դեմքը կարծես հուրհրում էր, բոցկլտում:

Նորից դարձավ ծառաներին, այսպես ասաց Ռուդաբեն.
«Ինձնից ողջույն տարեք նրան, ասեք՝ ո՛վ մեծ սրտի տեր,

Քեզ Ռուդաբեն սպասում է իր դղյակում մեն-մենակ,
Ջուրը պատվար թող չլինի՝ անցիր իր մոտ դու արագ»:

Աղջիկները ի պատասխան. «Ո՛վ պերճախոս թագուհի,
Նորից նրա մոտ կգնանք, վերջը բարի թող լինի»:

ՌՈՒԴԱԲԵՆ ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ Է ՀԱՆԴԻՊՄԱՆ

Նաժիշտները երբ հեռացան, գեղեցկուհի Ռուդաբեն
Հրամայեց, որ պալատը է՛լ ավելի զարդարեն:

Նա գեղեցիկ պալատ ուներ, հանց ծաղկավետ մի գարուն,
Ամեն մի պատ իր վրա էր կրում քաջի մի անուն:

Եվ դղյակը զարդարեց նա չինական պերճ դիպակով,
Սենյակներում տեղավորեց սկուտեղներ՝ լի ոսկով:

Բերել տվեց ընտիր գինի, խառնեց համպար թանձրախիտ,
Գետնի վրա շաղ տվեց նա ոսկի, գոհար ու հակինթ:

Ճերմակաթերթ նարգիսներ կան՝ ամեն մեկը ատրուշան,
Ամենուրեք վառ հասմիկներ, մանիշակներ ու շուշան:

Բերեց նաև ոսկեզրած թաս-բաժակներ փիրուզե,
Իսկ բուրավետ ուտեստը ողջ վարդաջրում էր օծել:

Ռուդաբեի լուսավարար ապարանքը վարդագեղ,
Կարծես լիներ հեքիաթային դրախտայգի մի շքեղ:

ԶԱԼԸ ԳՆՈՒՄ Է ՌՈՒԴԱԲԵԻ ՄՈՏ

Երբ հրաբորբ արեգակը իջավ դեպի մայրամուտ,
Դադար առավ պալատների ամեն տեսակ ելումուտ:

Աղախինը արագ եկավ Զալին ասաց. «Շո՛ւտ արա,
Գեղեցկուհին սրտատրոփ սպասում է քեզ հիմա»:

Դեստան-Զալը իսկույն ընկավ սիրահարի իր ուղին,
Նա քայլում էր, բայց նմանվում ինչ-որ մի բան փնտրողի:

Տան կտուրի վրա կանգնեց վարդերեսը հանց լուսին,
Նոճուց բարձր հասակ ուներ, կրակի փայլ՝ երեսին:

Հեռվից արդեն երևացող Զալին տեսավ նա իսկույն,
Սիրո հույզից դեմքը դարձավ գեղեցիկ ու վարդագույն:

Նա շուրթերը հազիվ բացեց, ձայնեց. «Բարո՛վ դու եկար,
Ո՛վ քաջարի, թող Աստված քեզ երջանիկ կյանք տա երկար:

Թող հզորի շնորհները լինեն միայն քեզ պարգև,
Որ դու նրա կամարի տակ քայլես խրոխտ ու թեթև:

Իմ գործիմաց, լավ ծառայից ես կլինեմ մշտագոհ,
Զի քո մասին ինչ որ ասաց՝ ճշմարիտ է իրոք որ:

Հետիոտն եկար այստեղ, պերճ Զաբուլից հեռանիստ,
Գիտեմ, հոգնել են ոտքերդ, հարկավոր է քիչ հանգիստ»:

Դեստան-Զալը լսեց նրա քնքուշ ձայնը սիրահույզ,
Նայեց վերև՝ տեսավ չքնաղ Ռուդաբեին ոսկեհյուս:

Կարծես երկնից տան կտուրին ցոլում էր մի լուսաշող,
Որ մթան մեջ՝ հուր պատկերից՝ երևում էր քար ու հող:

Դեստան-Զալը պատասխանեց. «Ո՛վ գեղուհի լուսավարս,
Աստծո բարի շնորհները լինեն քեզնից անպակաս:

Մեծ չարչարանք եմ կրել ես, իսկ մտքումս՝ նախատինք,
Գիշեր-ցերեկ աղոթել եմ, ձեռքս մեկնած դեպ երկինք:

Աղաչել եմ, որ աշխարհի տերը գոնե մեկ անգամ
Ցույց տա չքնաղ պատկերը քո, այնուհետև քեզ մոտ գամ:

Երբ լսեցի անուշ ձայնդ՝ երջանկացա մշտապես,
Լիալուսին դեմքդ տեսա, շարժուձևդ քնքշահեզ:

Քեզ մոտ գալու համար այժմ գտիր հարմար մի միջոց,
Իմ դեմ ոչ թե պատ է կանգնած, այլ ժայռեղեն մի ամրոց»:

Ու Ռուդաբեն լսեց Զալի պատասխանը քաղցրաբառ,
Իր սևասուք գիսակները պատից իսկույն կախեց վար:

Գեղեցկուհու հաստ ծամերը նմանվում էր սև օձի,
Դեստան-Զալի համար կախեց, որ բարձրանալ նա փորձի:

Խուրձ-ծամերը կտուրից վար կախեց գետին հանց պարան,
Ապա դիմեց Զաբուլի քաջ զորապետին անվարան.

«Ո՛վ դու խիզախ, քաջածնունդ, մեծահամբավ Դեստան-Զալ,
Ուրախ եմ, որ իմ ցանկացած ժամանակին դու հասար:

Մեկնիր ամուր բազուկներդ, բաց լանջը քո առյուծի,
Թող ծամերս ծառայեն քեզ, վեր խոյացիր, ճապուկ ձի:

Բռնիր այժմ ոտքիդ առջև փռված ծամից ամրահյուս,
Քեզ համար եմ կախել չէ որ, վե՛ր բարձրացիր ի սիրույս»:

Խիզախ Զալը նայեց վերև, տեսավ լուսին աղջկան
Եվ համոզվեց, որ նրա պես գեղեցկուհի կին չկա:

Ռուդաբեի սև ծամերը համբուրեց նա ջերմաջերմ,
Երբ ականջին հասավ նրա սիրաթովիչ ձայնը մեղմ:

Դեստան-Զալը գեղեցկուհուն պատասխանեց հևասպառ.
«Արեգակը և լուսինը կխավարեն անպատճառ,

Երբ պարանի փոխարեն ես ծամդ քաշեմ իմ ձեռքով,
Բեկված նետի սուր սլաքով խոցեմ քնքուշ սիրտը քո»:

Եվ օգնական իր ծառայից առավ երկար մի պարան –
Օղակ արավ ու վեր նետեց, որ նրանով բարձրանար:

Այդ օղակը ուղիղ ընկավ տան կտուրի մի քարի,
Ու Դեստանը վեր բարձրացավ, ուր լուսինն էր Քաբուլի:

ԶԱԼԻ ԵՎ ՌՈՒԴԱԲԵԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

Զալը նստեց պատի վրա Քաբուլի պերճ կույսի մոտ,
Իսկ Ռուդաբեն ժպիտներով ջերմ ողջունեց սրտամոտ:

Այնուհետև գեղեցկուհին առավ ձեռքը Դեստանի,
Որ լռությամբ թաքստոցից նրան դեպի տուն տանի:

Սիրուց արբած՝ գինեհարի պես գնացին դեպ պալատ,
Դա պալատ չէր, այլ փառահեղ լուսապայծառ մի դրախտ:

Նաժիշտները խոնարհվեցին տիրուհու մոտ պերճիրան,
Հիացմունքով Դեստան-Զալը նայում, զննում էր նրան:

Լույս Ռուդաբեն ուներ ոսկե ապարանջան ու մանյակ,
Գարնան չքնաղ պարտեզի պես վարդալեցուն ապարանք:

Լիալուսնի մոտ էր բազմել Դեստան-Զալը մեծափառ,
Կողքին դաշույն ուներ կախած, գլխին՝ մի խույր ոսկեվառ:

Իսկ Քաբուլի գեղեցկուհին սև աչքերով գողունի,
Մերթ Դեստանի դեմքն էր զննում, մերթ հասակը վիթխարի:

Համոզվեց, որ Զալը ունի ամուր ձեռքեր, հանց բաջայր,
Մեկ հարվածով փշուր-փշուր կանի անգամ քար ու ժայռ:

Դեմքի փայլը ցույց էր տալիս, որ սիրտ ունի նա մաքուր,
Երջանիկ է այն կինը, որ Զալից կառնի ջերմ համբույր:

Զալն համոզվեց, որ գտել է մի կին իրեն հավասար,
Կյանքում չկա մի էգ առյուծ, որ առյուծին չըրսա:

Ապա Զալը Ռուդաբեին գրկեց, տվեց ջերմ համբույր,
Ասաց. «Ո՛վ իմ արծաթակուրծք, դալար նոճի մշկաբույր,

Մեր հանդիպման մասին եթե շահնշահը իմանա՝
Զայրույթից ինձ ու Քաբուլը կրակ կտա անխնա:

Քաբուլի մեծ զորավարը կզայրանա իր հերթին,
Որ անխոհեմ վարք ցույց տվեց օրենքի դեմ իր որդին:

Բայց իմ կյանքը արժեք չունի, քանզի գիտեմ առանց քեզ
Պիտի տանեմ դժոխային չարչարանքներ մշտապես:

Ո՛վ Ռուդաբե, երդվում եմ ես՝ ինչ էլ լինի բախտիս հետ,
Քեզնից բացի, ուրիշ աղջիկ կին չեմ առնի այսուհետ:

Գիշեր-ցերեկ Տիրոջ առջև կաղոթեմ ես ջերմեռանդ,
Մաղթանք կանեմ ինչպես ստրուկ, ինչպես նսեմ մի պատանդ,

Որպեսզի նա շահնշահի սրտից հանի ոխ ու քեն,
Որ Սամի հետ համակարծիք չպայքարեն միշտ իմ դեմ:

Աստված ականջ կանի, անշուշտ, աղոթքներիս սիրաշավ,
Ամուսնության մեր հանդեսին մարդիկ անհոգ կցնծան»:

Իսկ Ռուդաբեն Դեստան-Զալին ի պատասխան ասաց, թե՝
«Այժմ ուխտս կատարված է, դու կամք ունես երկաթե:

Աստված վկա է խոսքերիս, այս աշխարհում ծայրեծայր
Ես չեմ տեսնում քեզնից հզոր ու առավել մի քաջայր,

Որ լինի ինձ լավ ամուսին, բացի Զալից քաջատոհմ,
Որի փառքը տարածվել է Սիեստանից էլ այն կողմ»:

Ամբողջ գիշեր սիրո բոցը նրանց պահեց մշտարթուն,
Եվ ամեն մի խոսքից հետո Զալը քաղում էր համբույր:

Մինչ լուսաբաց իրար գրկած համբուրվեցին ջերմաջերմ,
Երբ արքունի թմբկահարը ազդարարեց՝ քնից վեր,

Զալը նորից գիրկը առավ ու հառաչեց սիրադող...
Ով էությամբ սիրեց մեկին՝ նա բաժանվել չի կարող:

Հառաչեց ու արցունք թափեց Դեստան-Զալի հարսնացուն,
Եվ ի բողոք, միաբերան, բարբառեցին Աստըծուն.

«Դու աշխարհի կենսատու լույս, աղաչում ենք քիչ կանգ առ,
Այդքան արագ մի տարածիր քո շողերը ոսկեվառ»:

Ապա Դեստան-Զալը պատից կախեց երկար մի պարան.
Հրաժեշտի համբույրներից հետո արագ իջավ վար:

ԶԱԼԸ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒՄ Է ՄՈԲԵԴՆԵՐԻ ՀԵՏ

Լուսաբացին արևն ելավ, ինչպես հրե մի վահան,
Արքայական զորագունդը շարքի կանգնեց անվարան:

Երիտասարդ Զալը եկավ բազմեց գահին փառահեղ,
Իսկ պահապան իր այրուձին խուզարկում էր ամեն տեղ:

Այնուհետև լուր ուղարկեց Դեստան-Զալը քաջորդի՝
Պատերազմում կոփված մարդիկ շտապ մեկնեն խորհրդի:

Կանչեց նաև աստղագուշակ մոբեդներին խորագետ,
Որ անորոշ բախտի մասին խորհրդակցի նրանց հետ:

Ամեն կողմից հավաքվեցին գիտուն մարդիկ ալեհեր,
Որ որոշեն, թե ի՛նչ աստղի տակ է արդյոք նա ծնվել:

Դեստան-Զալը գահաթոռից ելավ ծանր, ինքնագոհ,
Ու ողջույնի խոսքեր ասաց իշխաններին մեծարգո:

Բայց նախքան այդ, փառաբանեց ամենազոր Աստըծուն,
Զալի հանդեպ ամեն իշխան սեր ու հարգանք էր տածում:

«Մենք Աստըծո շնորհիվ է, որ ունենք բախտ ու հարգանք,
Աստված արդար դատավոր է և ամենքիս՝ սեր ու կյանք:

Նա է ծնել արև, լուսին և աստղերը բովանդակ,
Նրա հզոր ձեռքի տակ է ապրում ամեն մի էակ...

Դեռ շամանդաղ լուսաբացից մինչև մութը մենք անքուն,
Ջերմ մաղթանքներ ու գովքեր ենք հղում անտես Աստըծուն:

Նա է երկնում ու տարածում կենսալույսը աշխարհի,
Արդարության մեծ կամուրջը դրախտի և դժոխքի...

Նա է տալիս ոսկեդեղին տերևաթափ կամ աշուն,
Մենք բերքառատ այգիներից ընտիր գինի ենք քաշում:

Նա աշխարհը զարդարում է ծաղիկներով բուրավետ,
Մերթ ծաղկում է, մերթ ավերում մահատարած քամու հետ:

Նրա կամքից անկախ չկա և չի ապրում ոչ մի շունչ,
Աշխարհը մեկ լիացնում, մեկ դարձնում է ոչ ու փուչ:

Մահկանացու էակներին նա է բերել լույս աշխարհ,
Անլուծելի գաղտնիքներ է Աստված երկնել մեզ համար:

Միշտ այդպես են եղել Տիրոջ օրենքները հաստատուն,
Աշխարհը իր շրջապտույտ օղակից չի անջատվում:

Բայց առանց մարդ աշխարհին ամբողջ հավասար է զրոյի,
Մարդը միակ կատարյալն է Աստծու ձևի ու գույնի:

Ով որ ունի ազնիվ ծագում և տոհմ ու ցեղ պատվաբեր,
Դժբախտ մարդ է, եթե չունի մի կողակից կին ընկեր:

Ի՞նչ զորավար, կամ գիտուն մարդ, կամ հոգևոր առաջնորդ,
Եթե կյանքում չի թողնում նա մի երեխա, մի հետնորդ:

Աստվածատուր մահը թեկուզ կյանքից տանում է անվերջ,
Սակայն ամեն մարդ ապրում է իր զավակի արյան մեջ:

Ով որ կյանքում միայնակ չէ, նա կունենա լավ անուն,
Ինչպես Սամին մեծարելով մինչև երկինք են հանում:

Եթե որդին ժառանգում է օրինական թագ ու գահ,
Այդ հոր փառքի մեծությունն է նրան կարգում շահնշահ:

Ձեզ պատմեցի մի սրտամաշ ցավի մասին խորախոր,
Ծաղկանոցում նույն վարդն է ծաղկաթափում ամեն օր:

Անէացավ տրտմությունս, ճամփաս շեղվեց ուրիշ կողմ.
Նա օգնեց ինձ, որ ցավերս ամոքեմ ես աղիողորմ...

Մինչև այժմ լռել եմ ես միայն տկար իմ խելքից,
Բայց տանջում ու չարչարում է մշտախռով հոգիս ինձ:

Մեհրաբ շահի ապարանքը ինձ համար աստղ է լույսի,
Իսկ Քաբուլը՝ կյանքի կայան երազանքի ու հույսի:

Ես գերի եմ դարձել Մեհրաբ շահի չքնաղ աղջկան,
Հայրս եթե լսի, արդյոք, կտա՞ բարի պատասխան:

Մանուչեհր շահը նույնպես չի՞ վարվի չար ու դաժան,
Չի՞ անվանի ինձ մեղապարտ, ազնիվ տոհմիս անարժան:

Զահել թե ծեր, ով որ կյանքում սեր է փնտրում ի սրտե,
Շիտակ ճամփից, սուրբ հավատից բացի, այլ բան չգիտե:

Իմ խոսքերից այժմ ի՞նչ են մոբեթները կռահում,
Գիտուն մարդկանց լսում եմ ես, խորհուրդներին՝ վստահում»:

Համրի նման լռել էին ծառա, զինվոր ու մոբեթ,
Եվ ոչ մեկը սիրտ չէր անում բանավիճել նրա հետ:

Չի գիտեին, որ Մեհրաբը չար Զոհակից է սերում,
Այդ պատճառով Մանուչեհր շահը նրան չի սիրում:

Անցան պահեր, բայց պալատում տիրում էր դեռ լռություն,
Ո՞վ կարող էր քաղցր մեղրի հետ շաղախել դառը թույն...

Զալը տեսավ, որ ոչ մեկը սիրտ չի անում խոսելու,
Նորից դիմեց մոբեթներին ու քաջերին իր հլու.

«Ո՛վ գիտուններ, ձեզ հայտնեցի ցանկությունը իմ բարի,
Գուշակեցե՛ք, հայտնեցեք ինձ գաղտնիքները աշխարհի:

Ամեն մեկդ որոնում է ճշմարտության մի ուղի,
Վնասակար գործի հանդեպ պետք չէ լռել անտեղի:

Խառնաշփոթ ու խորդուբորդ ճամփաներում դժվարանց –
Օգնեցե՛ք ինձ, որ դուրս ելնեմ, ո՛վ մոբեթներ բանիմաց:

Ձեր դժվարին գործի համար կընծայեմ ես նվերներ,
Որպիսին որ՝ ոչ մի արքա չի պարգևել կյանքում դեռ:

Աղաչում եմ, օգնեցե՛ք ինձ, որ ցավերս ամոքեմ,
Դժբախտ աստղիս համար ասեք, ո՛ւմ դիմեմ ու բողոքեմ»:

Կարծես մեկից մոբեթների լեզվից հանեց նա կապանք,
Նրանք Զալին ցանկացան մեծ շնորհներ ու երկար կյանք.

«Թեկուզ այժմ ապրում ենք մենք կացության մեջ դժվարին,
Բայց հնազանդ քո ծառան ենք, ո՛վ մեծություն աշխարհի:

Դու բազմել ես քո ոսկեպերճ գահաթոռին, մեծազոր,
Կինը ի՞նչ է, որ խանգարի, քանզի թույլ է և անզոր:

Մեհրաբ շահը մեծահարուստ մի իշխան է անվանի,
Բազմատարած հողեր ունի, ճոխ դղյակներ վիթխարի:

Մարդիկ նրան անվանում են դևաշխարհի չար ծնունդ,
Չի Զոհակի ցեղից է նա կամ արաբի նոր սերունդ:

Պատրաստիր և արյուծ Սամին շտապ հղիր մի ուղերձ,
Ինչ որ ունես քո վեհ սրտում՝ գրիր շիտակ և անկեղծ:

Դու մեզանից գերազանց ես, գործով հմուտ ու խելոք,
Քո նամակը ինքդ պիտի գրես նրան, կամ՝ ոչ ոք...

Գուցե նա էլ տեղյակ պահի շահնշահին Իրանի,
Շահի միտքը երբ իմանա՝ մեզ մի խաբար նա կանի:

Իսկ երբ շահը համաձայնեց՝ նա չի վարվի քեզ հետ խիստ,
Այն ժամանակ դժվար գործդ կդառնա հեշտ ու հանգիստ»:

ԶԱԼԻ ՆԱՄԱԿԸ ՆԱՐԻՄԱՆԻ ՈՐԴԻ ՍԱՄԻՆ

Իշխանական գրագրին Զալը ասաց՝ «Ինձ մոտ եկ»,
Ապա ինչ որ սրտում ուներ՝ պատմեց նրան մեկ առ մեկ:

Հրամայեց Սամի համար գրել հմուտ մի նամակ,
Փառաբանեց ապուպապին ու շահերին ոսկեթագ:

Բայց նախքան այդ, Տիրոջ մասին գրեց սիրո ջերմ խոսքեր,
Նա, որ երկնեց հողաշխարհը և էակներ բազմասեռ.

«Նա է երկնել անթիվ աստղեր, արև, լուսին, տիեզերք,
Մարդկանց տվել խելքի կորով, իսկ ծառերին՝ առատ բերք:

Աստված տերն է կյանքի, մահու, տիեզերքի աստղազարդ,
Նա միակն է, իսկ մենք բազում ենթականեր հնազանդ:

Տերը թող որ երկար կյանք տա Նարիմանի քաջ որդուն,
Թող նա կրի փառավայել սաղավարտ և վերտ ու թուր:

Թշնամու դեմ հարձակվում է հանց ավերիչ, գոռ քամի,
Նրա թրի դիակույտը կեր է գայլի, ագռավի:

Նա՛ է մարում արեգակի բոցը շողերը երկնքում,
Շանթահարված սև ամպերը արյան շիթով է ներկում:

Նա՛ է տալիս շահնշահին արքայական թագ ու բախտ,
Ոսոխներից պաշտպանում է դղյակները մեր անխախտ:

Նա՛ է կոփել պատերազմի համար այրեր փորձառու,
Աստված թող որ չարությունից նրան պահե շատ հեռու:

Այսպիսին է Նարիմանի որդի Սամը ոսկեգահ,
Նա պարծանքն է իր բանակի, իսկ ոսոխին՝ ահ ու մահ:

Ցմահ պիտի նրան լինեմ ստրուկ-ծառա հնազանդ,
Սիրտս ու հոգիս կնվիրեմ ծնողին իմ հարազատ:

Հիշում է նա, թե ինչ կերպ է Տերը բերել ինձ աշխարհ,
Ինչ զրկանքներ եմ կրել ես և տանջանքներ չարաչար:

Հայրս ապրեց մետաքսի մեջ, օրորոցում իր քնքուշ,
Ես մեծացա թռչնի բնում, անկողինս՝ քար ու փուշ:

Սառը քամին սևացընում, մաշկս դարձնում էր կաշի,
Աչքերիս մեջ լցվում էր միշտ ավազահատիկ ու փոշի:

Թեկուզ Սամի որդի էին ինձ համարում ամեն տեղ,
Բայց մեծացա թռչնի բնում, Սամը՝ գահին իր շքեղ:

Ամենազոր Աստված ինձ հետ դաժան վարվեց ի ծնե,
Չի որոշեց ոչ թե կաթով, այլ արյունով ինձ սնել...

Տիրոջ կամքից անկախ ոչ ոք այլ բան անել չի կարող,
Ինչքան էլ որ վեր բարձրանաս՝ վերջը պիտի դառնաս հող:

Դժբախտ կյանքիս պատմությունը դու լավ գիտես, ո՛վ հայր իմ,
Մի՛ պատմիր այն քաջերի մոտ, ոչ էլ մարդկանց մտերիմ:

Հայրս դաժան մարդ է թեկուզ, վիշապում է, ամրակամ,
Բայց իր որդու թախանձանքը թող որ լսի այս անգամ:–

Ես սիրում եմ Մեհրաբ շահի գեղեցկադեմ աղջկան,
Սիրո ցավից իմ սրտի մեջ բազմաբազում վերքեր կան:

Գիշերները դարձրել եմ աստղերը ինձ խաղընկեր,
Հորդ արցունքից բարձիս վրա գոյացել են լճակներ:

Այսպես տանջվում, հրդեհվում եմ կրակի մեջ մշտաբորբ,
Տեսնողը ինձ կարեկցում է և անվանում խեղճ ու որբ:

Թեկուզ ծնված օրից, հայր իմ, կրել եմ վիշտ ու զրկանք,
Արդ սերմանել եմ ցանկանում քո հոգու մեջ կարեկցանք:

Ի՞նչ առաջարկ, արդյոք, ունի քաջ զինվորը Իրանի,
Վե՞րջ պիտի տա որդու ցավին, թե՞ դեպի մահ պիտ տանի:

Հայրս, անշուշտ, լավ է հիշում, թե մոբեդը ի՞նչ ասաց,
Ճիշտ է և այն, որ ամեն շահ իր շահերով է տարված:

Համաձա՞յն ես, որ ես խախտեմ պապենական կարգ, օրենք,
Ամուսնանամ Մեհրաբ շահի գիշերավարս դստեր հետ:

Չէ՞ որ հայրս երջանիկ էր, երբ որ գտավ իր որդուն,
Տիրոջ զորեղ կամքով նորից վերադարձա ես քո տուն:

[illegible] սարից հայր ու որդի վերադարձանք միասին,
Իշխանական երդում տվիր, որ ամեն մարդ լավ լսի...

Երդվեցիր, որ ցանկությունս դու չես մերժի ոչ մի կերպ,
Որ երջանիկ, ուրախ կապրեմ քո ձեռքի տակ այսուհետ»:

Զալը ընտրեց մի սուրհանդակ՝ նման անվախ առյուծի,
Նրան հանձնեց և՛ նամակը, և՛ ճեպընթաց երկու ձի:

Ասաց. «Եթե ճանապարհին մեկը հոգնի՝ չկանգնես,
Իսկույն նստիր մյուս ձիուն ու սլացիր քամու պես:

Գիշեր-ցերեկ կտրիր, անցիր դաշտ ու դուրան, անտառ, գետ,
Մինչև հասնես իմ հայրական ապարանքը քարակերտ»:

ՍԱՄԻ ԵՐԿՄՏԱՆՔԸ

Սուրհանդակը տեղից պոկեց երկու նժույգ քառատրոփ,
Գնաց, հասավ Քերկեսարայ, մինչև Սամի զորքի մոտ:

Սուրհանդակը տեսավ Սամին իր զորքի հետ միասին
Եվ հասկացավ, որ եկել էր նա քաջերի հետ որսի:

Սամը հեռվից նկատեց մի արագաճեպ ձիավոր,
Իսկույն դիմեց որսատեղի ընկերներին իր բոլոր.

«Ճանաչում եմ դեպ ինձ վազող ճապուկ ձիուն Զաբուլի,
Բայց նժույգը վարող մարդը սուրհանդակն է Քաբուլի:

Դեստան-Զալից բերում է մեզ նորություններ, անկասկած,
Հարցուփորձեմ ու կիմանամ, թե իմ որդին ի՛նչ ասաց:

Կհարցնեմ իրանշահի մասին նույնպես, առանձին,
Թե ինչպես է բանակ վարում իմ զավակը արիածին»:

Փոշեթաթախ սուրհանդակը եկավ կանգնեց Սամի մոտ,
Որ նա լուրեր ու ողջույններ հղի նրան սրտամոտ:

Անմիջապես ձիուց իջավ ու Սամի մոտ աղիողորմ
Փառաբանեց թե՛ Աստըծուն, թե՛ իշխանին քաջատոհմ:

Ի պատասխան Սամը նրան նույնպես հղեց ջերմ ողջույն,
Ու հարցրեց, թե ինչպե՛ս է ապրում որդին տաքարյուն:

Այնպես խոսեց, որ քաջերից ոչ ոք իրեն չլսի,
Այդ պատճառով նամակը նա կարդաց մեն ու մեկուսի:

Վատ բան կարդաց հսկա Սամը սպասումին հակառակ
Ու հուզմունքից մի պահ կանգնեց ու կարկամեց ծառի տակ:

Երբևիցե չէր սպասում մի այդպիսի մեծ հարված,
Ենթադրեց, որ իր որդին վատ բարք ունի անկասկած:

Ու քիչ հետո այսպես խոսեց. «Զարմանալու պետք չկա,
Ինչպես ծնվեց՝ այնպես էլ նա պիտի ապրի մինչև մահ:

Չէ՛ որ նրան Սիմուրղ հավքն է պահել, ոչ թե մայր-ծնող,
Այլ հատկություն նա ունենալ ամենևին չէր կարող»:

Հսկա Սամը որսատեղից մտամոլոր եկավ տուն,
Ճանապարհին մտքերի մեջ նախատելով իր որդուն:

Մտածում էր՝ եթե ասեմ՝ ո՛վ սիրելի իմ զավակ,
Թո՛ղ քո այդ սին երազները, եղիր խելոք ու շիտակ...

Այն ժամանակ մարդիկ պիտի ինձ անվանեն չարլեզու,
Կասեն, որ ես որդուս համար լավ ապագա չեմ ուզում:

Իսկ թե ասեմ՝ սիրտդ ինչ-որ ձգտում ունի, արա այն,
Իմ հարազատ որդու հանդեպ վատ բան կանեմ ես միայն:

Եթե թռչնի ձագը առնի վիշապազուն աղջկա–
Ծնված զարմը ի՞նչ կլինի՝ աղջիկ լինի, թե տղա:

Խանն մտքերից հսկա Սամը դարձել էր մի խելագար,
Քնեց, սակայն երազները տանջում էին անդադար:

Ստրուկ մարդու համար երբ որ բարդ խնդիր կա ծանրալուծ,
Օգնության մեծ հույս է խնդրում արդարադատ Աստծուց:

Սակայն ամեն մի ծանր գործ ունի սկիզբ և թե վերջ,
Քանզի Աստված և՛ երկնում է, և՛ կործանում անընդմեջ:

ՍԱՄԸ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒՄ Է ՄՈԲԵԴՆԵՐԻ ՀԵՏ

[illegible] Սամը քնից ելավ, իր մոտ կանչեց բանիմաց
Աստվածային գաղտնիքները կանխորոշող ծեր մարդկանց:

Հավաքվեցին խորախորհուրդ բազում մոգեր աստղագետ,
Սամը նրանց հարցուփորձեց. «Ի՞նչ կլինի այսուհետ.

Ով իմաստուն մագուպատներ, ասեք վախճանն այս գործի,
Իմ ապագան ամեն մեկդ մեկնաբանել թող փորձի,

Քանզի իմ ու Մեհրաբ շահի միջև չկա շղթա-օղ,
Այնպես, ինչպես կրակ ու ջուր իրար խառնել չենք կարող:

Գուշակեցեք՝ ի՞նչ կլինի, իմաստուններ աստղագետ,
Մեր երկիրը չի՞ կործանվի, չի՞ մոխրանա նա անհետ:

Ֆերիդուն մեծ շահը պիտի այն աշխարհում հաշիվն իր
Վերջացնի արյունարբու Զոհակի հետ ոխատադիր:

Գուշակեցեք աստվածագո մոլորակի նշանից,
Եվ ի վերուստ շնորհվածի պատասխանը տվեք ինձ»:

Ամեն մի մոգ խորասուզվեց էության մեջ երկնքի,
Եվ վերջապես երկու փայլուն աստղեր տեսան կողք-կողքի:

Խմբով եկան, որ լավ լուրը հայտնեն Սամին արիացեղ,
Բայց նրանցից մեկը խոսեց, մի ծեր մոբեթ հանճարեղ.

«Ուրախացիր, ո՛վ փահլևան ամրաբազուկ, անվանի,
Դեստանի ու Ռուդաբեի համար ընտրիր մատանի:

Անտարակույս, այդ երջանիկ միացումից անսովոր,
Աշխարհ կգա մի որդի և կդառնա նա փառավոր:

Սեգսարայից մինչև անգամ Մազանդարան հողը հին,
Իրենց ոտքում կջախջախի մեր թշնամի ցեղերին:

Մեր աշխարհից կվերանա ահ ու մահը մշտապես,
Եվ Թուրանում զորք չի թողնի, որ թալանի, տանի մեզ:

Նա Իրանին լույս կբերի, երջանկություն անվախճան,
Կխափանի պատերազմի և բռնության մութ ճամփան:

Պատերազմից հոգնած մարդիկ կապրեն խաղաղ,
հաստատուն,
Փառք ու պատիվ նա կբերի իրանշահին մեծանուն:

Նա կունենա հրասմբակ մի երիվար, մի ընկեր,
Եվ առյուծին ոտքերի տակ կդարձնի գայլի կեր:

Ինչ արքա էլ որ ունենա նրա նման մի ծառա,
Աշխարհին արար նրան ստրուկ ու հարկատու կդառնա:

Այսպես, նրան կճանաչեն Հինդուստան ու Բյուզանդիոն,
Եվ աշխարհում կտարածի խրախճանքի մի մեծ տոն»:

Իր երջանիկ բախտի համար ուրախացավ Սամը մեծ,
Աստղագետին բազում գանձեր, ոսկի, գոհար պարգևեց:

Այնուհետև դարձավ-դիմեց Դեստան-Զալի բանբերին,
Հարցափորձեց, թե ի՞նչ կերպ է ապրում խիզախ իր որդին:

Ասաց. «Գնա որդուս ասա՝ թող չտանջվի այսուհետ,
Անտարակույս կամուսնանա վիշապազուն դստեր հետ:

Նրա համար ես իմ կյանքում երդվել եմ դեռ մեկ անգամ,
Չեմ խաբի, երբ այցելության համար կրկին իր մոտ գամ:

Լուսաբացին ասպարեզին կմեկնեմ ես դեպ Իրան,
Շահնշահի մոտ կլինեմ ամուսնության պատվիրակ:

Երբ իմանամ իրանշահի ցանկությունը ճշտապես,
Եղելության մասին, անշուշտ, սուրհանդակը կասի քեզ»:

Սամը առատ փող նվիրեց սուրհանդակին իր անվախ,
Եվ պատվիրեց՝ վերադառնա Դեստանի մոտ անհապաղ:

Ապա զորքի հետ նա ընկավ վերադարձի մեծ ճամփան,
Զինվորների սիրտը լցվեց ուրախությամբ անսահման:

Քերկեսարայ բերդից տարավ գերիներ ու հանդերձանք,
Ե՛վ հետիոտն, և՛ այրուձի, և՛ ոսկեղեն անքանակ:

Հետադարձի ճամփան կարծես մի ռազմաերթ լիներ մեծ,
Իսկ ավազոտ անապատը կենդանությամբ աղմկեց:

Փողի կանչը հասավ մինչև դաշտ ու լեռներ հեռավոր,
Հսկա Սամը մտավ Իրան իր բանակով փառավոր:

Դեհեստանի հողով անցան բանակները Իրանի,
Սուրհանդակը աճապարեց, որ Դեստանին լուր տանի:

Ձիավորը Զալին հանձնեց Սամից հղված մի նամակ,
Զալի հոգին պայծառացավ Արուսյակի պես շիտակ:

Ուրախությամբ փառաբանեց նա Աստղծուն հանճարեղ,
Թե հաջողակ գործի և թե Սամի համար փառահեղ:

Զալի տված նվերները ոսկի, արծաթ էր միայն,
Գանձատունը նա շռայլեց աղքատներին ձեռնունայն:

Ոչ ցերեկն էր հանգստանում, ոչ գիշերը ուներ քուն,
Ոչ մասնակցեց խրախճանքի, ոչ էլ գինի խմեց թունդ:

Անմիջապես իր մոտ կանչեց իր հավանած լռանյակին,
Ռուդաբեից բացի Զալը չէր ակնարկում ոչ մեկին:

ՍԻՆԴՈՒԽՏԸ ԲՌՆՈՒՄ Է ԼՐՏԵՍ ԿՆՈՋԸ

Դաստան-Զալը ուներ չքնաղ ու գործունյա ծառա կին,
Հմայող էր ու գիտությամբ նա չէր զիջում ոչ մեկին:

Զալին նա էր տեղեկացնում՝ ինչ բաներ կան, ինչ լուրեր,
Քաբուլի պերճ գեղեցկուհուց նա էր տանում պատվերներ:

Զալը կանչեց նրան իր մոտ, ասաց. «Ո՛վ կին խորամանկ,
Սովորույթ ինչ-որ մի բան տանջում է ինձ շարունակ:

Այժմ գնա Ռուդաբեին խոսքս ասա անարգել –
Խառնախճիճ մեծ կծիկը քանդել է պետք թել առ թել:

Իմ հայր Սամը ուղարկել է ինձ շուտափույթ պատասխան,
Թե՝ մոգերը գուշակել են իմ բախտը և ապագան:

Ամբողջ օրը մաղթանքներով նայում եմ ես երկնքին,
Քանզի հայրս համաձայն է, որ դու լինես Զալին կին»:

Զալի միջնորդ կինը գնաց Ռուդաբեի մոտ՝ Քաբուլ,
Դեստան-Զալից տարավ նրան ջերմ ողջույններ ու համբույր:

Իսկ Ռուդաբեն նրան տվեց ճոխ նվերներ ու դիրհեմ,
Եվ, ի հարգանք, նստեցրեց նրան գահի դեմ առ դեմ:

Այնուհետև նրա համար բերեց շքեղ հանդերձանք
Եվ բազմազան արդ ու զարդեր, և՛ ակնեղեն, և՛ գլխարկ:

Ինչպես նաև մետաքսակար, ոսկեքսակ մի կապոց,
Թեզանիքը փողով լցրեց ու զարդերով ոսկեզօծ:

Այդ կնոջը տվեց նաև երկու փայլուն մատանի,
Հանց երկնքում փայլատակող, կախարդական Մոշտերի:

Բանբեր կինը Զալի համար տարավ բազում նվերներ,
Եվ դրա հետ մեկտեղ սիրո սրտագրավ ողջույններ:

Բայց Սինդուխտը տեսավ նրան, ասաց. «Ո՞վ ես, որտեղի՞ց...
Շուտ բաց արա փաթեթը քո, պատասխանիր հիմա ինձ:

Տե՛ս չխաբես, ճշմարտությամբ խոստովանիր, ո՛վ խարդախ,
Նկատել եմ՝ իմ պալատում թափառում ես շատ հաճախ:

Պատահում է ամբողջ օրը լուռ մտնում ես կանանոց,
Ինձ տեսնելիս թաքնվում ես, ո՞ւմ ես փնտրում և ի՞նչ գործ:

Քո շարժումից իմ մեջ հանկարծ առաջացավ մի կասկած...
Դրկաղե՞ղ ես, թե՞ թել, ասա՛, խոստովանիր դու սրտանց»:

Կինը վախից գունաթափվել, կարծես լիներ քարարձան,
Ապա ծնկի իջավ գետնին ու բարբառեց մեղմաձայն.

«Միայնակ ու աղքատ կին եմ, ո՛վ թագուհի գեղեցիկ,
Կարոտ եմ ես աշխատանքի, օրվա փողի ու հացի:

Թափառում եմ ամենուրեք, մտնում ամեն մարդու տուն,
Գոհարեղեն եմ վաճառում և ակնեղեն գույնզգույն:

Ռուդաբեն էլ նույնպես խնդրեց իրեն բերեմ ոսկեզարդ,
Շքեղաշուք ու թանկարժեք հագուստեղեն բազմաձալք:

Նրա համար գտել էի արքայական ծիրանի,
Եվ շողշողուն ու ակնապերճ ադամանդյա մատանի»:

Իսկ Սինդուխտը առաջարկեց. «Դիր բոլորը իմ առջև,
Ապացուցիր, որ քո հանդեպ իմ վարմունքը պատշաճ չէ»:

«Նվիրել եմ քո աղջկան,– ասաց կինը խորամանկ,–
Նորից խնդրեց, որ իր համար բերեմ ընտիր ակներ թանկ»:

Իսկ Սինդուխտը կրկին պնդեց. «Բա՛ց կապոցը, ցույց տուր ինձ,
Սոսկ դրանով կհամոզես և կազատվես կասկածից»:

Համառ կինը բացատրեց. «Քո աղջիկը ինձ ասաց –
Ստույգ գինը երբ իմանամ՝ կվճարեմ անկասկած»:

Բայց թագուհին չհավատաց. նա աղքատ չէր ու խեղճ կին,
Այդ պատճառով էլ որոշեց պատժել այդ չար փուկին:

Հասկացավ, որ արտաքուստ է ձևանում խեղճ, միամիտ,
Ուստի գտավ ստուգելու համար պատեհ և առիթ:

Ծոցից հանեց ճոխ հագուստներ, որ չէր տեսել նա երբեք,
Գլխարկի մեջ կային նաև փայլուն քարեր թանկարժեք:

Նա զայրույթով ամուր բռնեց գիսակներից կախարդի,
Խփեց գետին, որ փայտի պես ոտքերի տակ ջարդոտի:

Այնուհետև նրա ձեռք ու ոտքին դրեց ամուր կապ,
Ե՛վ բռունցքի հարված տվեց, և՛ տրորեց ոտքի տակ:

Իսկ քիչ հետո ամուր փակեց կանանոցի մուտք ու ելք,
Անտարակույս, պայծառ միտքը չէր կորցրել նա երբեք:

Նաժիշտներին հրամայեց՝ իր մոտ կանչեն աղջկան,
Ու շորերը պատառոտեց՝ տարածելով աղաղակ:

Վարդ այտերից ու վշտաբեկ, հեզ աչքերից սևաստր,
Անձրևի պես կաթկթում էր կարմիր արյուն ու արցունք:

ՌՈՒԴԱԲԵՆ ԽՈՍՏԱՆՈՒՄ Է ԻՐ ՍԻՐՈ ՄԱՍԻՆ

Ով աղջիկս,- ասաց մայրը,- քեզնով էի պարծենում,
Բայց ցանկացար քո հոր գահի հիմնահատակ կործանում:

Ի՞նչ գաղտնիք կա, ասա լսեմ, ի՞նչ խորհուրդ է տանջում քեզ,
Ողջն ասա, որ մարդկանց մոտ չլինեմ ես սևերես:

Ինչի՞ց դրդված չարություն ու գժտություն ես սերմանում,
Այդ ի՞նչ կին է, որ ամեն օր կանանոց է այցելում:

Ինչո՞ւ է նա այստեղ գալիս, ունի՞ քեզ հետ գաղտնի գործ,
Ի՞նչ ես արդյոք դու որոշել վհուկի հետ չարագործ:

Ինչի՞ մասին էիք խոսում, ո՞վ է մարդը այդ օտար,
Եվ ինչո՞ւ է ճոխ նվերներ ուղարկել նա քեզ համար:

Արաբական գահը չէ՞ որ հենակ է մեզ երկնատու,
Երբեմն նա օգտակար է, իսկ երբեմն՝ մահու թույն:

Մի՛ խորտակիր անունը քո, ո՛վ իմ դուստր սիրելի,
Այն աղջկա նման, որի կյանքը փուչ է, հանց քամի»:

Ամոթահար գեղեցկուհին կանգնել էր լուռ, գլխիկոր,
Մերթ նայում էր կրունկներին, մերթ՝ ոտքերին բարի մոր:

Մեծ հուզմունքից շողշողացին մեծ աչքերը սևորակ,
Արցունք թափեց կրծքի վրա ու գոյացավ մի լճակ:

Բայց ի վերջո պատասխանեց. «Իմ հարազատ, խելոք մայր,
Դատապարտված եմ հավիտյան սիրո վշտի մինչև մահ:

Լավ կլիներ չբերեիր ինձ՝ թշվառիս լույս աշխարհ,
Չէի տեսնի դժբախտություն և տանջանքներ անհամար:

Ահա Քաբուլ է ժամանել զորավարը Զաբուլի,
Սիրո անշեջ բոց է դրել իմ սրտի մեջ լիուլի:

Սիրո ցավն ու տանջանքս վկաներ են պերճախոս,
Որ աչքերիս աղի արցունք ես դու տեսնում մշտահոս:

Ինչ էլ լինի, պիտի հասնեմ իմ փափագին այսուհետ,
Ողջ աշխարհը ես չեմ փոխի նրա ճերմակ մազի հետ:

Մա՛յր, հասկացիր, տեսակցել ու զրուցել ենք մենք գաղտնի,
Սուրբ երդում ենք տվել միմյանց, որ մեր կապը չենք խախտվի:

Բայց կուսական իմ պատիվը նա չի պղծել, հավատա՛,
Թեկուզ իմ ու նրա միջև աստվածային կրակ կար:

Զալը գրեց Նարիմանի որդի Սամին փահլևան,
Եվ ժամ առ ժամ սպասում էր իր ծնողից պատասխան:

Բայց երբ Զալի սուրհանդակը հանդիպեց քաջ Սամի հետ,
Իսկույն պալատ հրավիրեց մոբեթներին աստղագետ...

Որովհետև նամակ-լուրը ընդունել էր դառնախիտ,
Պահանջեց նա մեկնաբանել՝ ի՞նչն է կեղծիք, ի՞նչը ճիշտ:

[illegible]ությունը երբ իմացավ, սուրհանդակին Դեստանի,
[illegible]ական նվեր հանձնեց, որ Զալզերի մոտ տանի:

Մայր իմ, միջնորդ այդ կնոջ հետ վարվեցիր դու շատ դաժան,
Նա Դեստանից լուր էր բերել և նվերներ պատվարժան»:

Թեպետ մայրը խիստ շփոթվեց այդ լուրերից անպատեհ,
Սակայն շոյվեց, որ աղջիկը Դեստանի հետ գործ ուներ:

«Ընտրությունդ վատ չէ,– ասաց,– ո՛վ իմ միակ զարմուհի,
Գիտեմ, Զալից լավ փեսացու հողաշխարհում չես գտնի:

Սամի որդին փահլևան է և զորավար անվանի,
Եվ խելոք է, և՛ փառավոր, և՛ սիրվելու արժանի:

Մեր դեմ եղած հին կարծիքը շահը երբեք չի փոխի,
[illegible] զայրույթից կհարձակվի, կդարձնի մեզ մոխիր:

Եվ կենդանի չի թողնի նա մեր ցեղից մի տղամարդ,
Որ իր ձեռքին աղեղ կրի, գլխին դնի սաղավարտ»:

Երբ Սինդուխտը հասկացավ, թե ո՛վ է կինը այդ միջնորդ,
Նրա դիմեց. «Այսուհետև գործիր զգույշ ու խելոք...

Ինչ որ գիտես՝ ծածուկ պահիր, դեռ կխոսենք իրար հետ,
Ամեն մարդու մոտ չբացես քո շուրթերը վարդաթերթ»:

Այնուհետև իր սենյակը գնաց չքնաղ Ռուդաբեն,
Որ չարլեզու մարդիկ իրեն չհանդիպեն, չխաբեն:

Իսկ Սինդուխտը առանձնացավ ու մեկուսի, օրնիբուն,
Արքայական ապարանքը նա դարձրեց սգատուն:

ՄԵՀՐԱԲԸ ՏԵՂԵԿԱՆՈՒՄ Է ԱՂՋԿԱ ՍԻՐՈ ՄԱՍԻՆ

Մեհրաբ շահը վերադարձավ իր դղյակը պերճաշուք,
Որ քաջերի հետ միասին անցկացընի գիշերքուք:

Բայց երբ տեսավ իր թագուհուն միայնակ ու անհանգիստ,
Գունաթափված ու թախծամած և աչքերով դառնախիստ,

Հարցուփորձեց. «Ի՞նչ է եղել... դու դժգույն ես ու տխուր,
Վարդի նման թառամել են այտերը քո մշկաբույր»:

Իսկ Քաբուլի պերճ թագուհին պատասխանեց Մեհրաբին.
«Մեծ տագնապն ու անհուն վիշտը քայքայում են իմ հոգին:

Անհիշատակ ժամանակից մինչ օրերը մեր ունայն,
Ինչ-որ պահել-պահպանել ենք, նորից պիտի քամուն տան:

Վախենում եմ արաբական նժույգները արշավեն –
Կործանեն մեր պարտեզները, դղյակները քարաշեն:

Վախենում եմ բարեկամի և ընկերոջ թանկ կյանքի,
Արքունական ծառաների ու գանձատան կահույքի,

Արևադեմ աղջիկների հոգեկործան ողբերգի –
Այն բոլորի համար, որ մենք չենք խնայել սիրտ-հոգի:

Գուցե իրոք այդ բոլորը դատապարտված են մահվան,
Իսկ այսօրվա գեղեցիկը հավատ չունի դեռ վաղվա:

Այդ բոլորը հարկադրված պիտի թողնենք թշնամուն,
Բազմադարյան մեր ջանքերը իզուր պիտի տանք քամուն:

Մահը պիտի մեզ երկարի իր ձեռքերը արյունոտ,
Մեր պտղատու ծառի բերքը գուցե դառն է ու թունոտ:

Մենք մեր ծառը աճեցրեցինք չարչարանքով, քրտինքով,
Այսօր ահա զարդարված է ոսկե գահով ու թագով:

Նրա ծայրը բարձրացել է մինչ կամարը երկնքի,
Ափսոս, մոխիր պիտի դառնա այդ բոլորը անհարկի:

Այդպես է մեր դառը կյանքի վերջալույսը մոտալուտ,
Որտե՞ղ պիտի հանգիստ առնեն սրտերը մեր սևասուգ»:

Իսկ Մեհրաբը, թե. «Քո միտքը նորի իմաստ, գին ունի,
Սակայն հնի էությունը նորի մեջ է կենդանի:

Այդ հինավուրց հողաշխարհի կարգ-կանոնն է միշտ այդպես,
Մեկը ծնվում է բանիմաց, մեկը՝ տխաս, կարճատես:

Մեկն ապրում է մինչ ծերություն, մեկին մահն է կործանում,
Մենք բոլորս խաղալիք ենք բախտախաղի հորձանքում:

Հիվանդ սրտին սպեղանին օգուտ չի տա ոչ մի կերպ,
Բողոքելը արժեք չունի, մի վիճիր դու Աստծու հետ»:

Սինդուխտը, թե. «Դու ասացիր մի հինավուրց, պարզ առած,
Բայց խորիմաստ միտք եմ տեսնում ես նրա մեջ անկասկած:

Մի՞թե քեզնից կարող եմ ես գաղտնիք պահել, ո՛վ իմ տեր,
Երբ օրեցօր պատերազմի ենք սպասում անհամբեր:

Ծառի մասին առածը քո գուշակում է մեծ վտանգ,
Բայց մրքեթն է ապացուցել մեր ապագան ոսկեփառք:

Անտարակույս, արժեք ունի ամեն առած և ասույթ,
Բայց չգիտեմ, թե բախտը մեզ ե՛րբ կուղարկի մեծ հասույթ:

Սամի որդին գրավել է աղջկաս սիրտը նրբակերտ,
Կեսգիշերին գաղտագողի հանդիպել են իրար հետ:

Նա իմ դստեր սիրտն ու հոգին գրավել է, հավատա,
Այժմ ոչ մի միջոց չկա, որ ինձ համար օգուտ տա:

Նա ականջ չի դնում նույնիսկ աղաչանքիս մայրական,
Սիրո ցավից դարձել է չոր, աշնան տերև խսկական»:

Մեհրաբ շահը լսեց կնոջ պատմությունը հոգեցունց,
Մռնչալով տեղից ցատկեց, հանց կատաղած մի առյուծ:

Սաստիկ ցավից ալեկոծվեց նրա սիրտը վշտախայթ,
Ե՛վ գոռգոռաց, և՛ գունատվեց, և՛ դողդողաց բարկացայտ.

«Ես հենց հիմա ձեռքս կառնեմ իմ սուսերը ամրակուռ,
Դաժանորեն կգլխատեմ իմ աղջկան անամոթ»:

Իսկ Սինդուխտը սարսափահար տեղից ելավ և ապա
Ձեռք ու ոտքով դուռը փակեց, որ Մեհրաբը դուրս չգա:

Ասաց. «Մի պահ լսիր ճորտիս, ո՛վ Քաբուլի նախարար,
Այնուհետև կամքդ ինչ որ թելադրեց՝ այն արա:

Երկնապտույտ բախտանիվը թեև գործում է անվերջ,
Բայց մենք բնավ բաժին չունենք երջանկության ծովի մեջ»:

Մեհրաբ շահը թափով բռնեց՝ գետին նետեց թագուհուն
Ու կատաղած փղի նման գոռգոռաց իր դղյակում.

«Այն ժամանակ,– ասաց,– երբ որ աղջիկ բերիր լույս աշխարհ,
Ծնված պահին վիզը պիտի կտրեի ես անպատճառ:

Այնպես չարի, ինչպես վարվեց Ջոհակ պապը դստեր հետ,
Նա աղջիկ չէ, այլ թշնամի, թշնամուց էլ չարաղետ:

Ով իր տոհմի շիտակ ճամփից խոտորվում է ինքնակամ –
Կմոռանա հայրենիքը, հարազատ հորն էլ անգամ»:

Այսպես խոսեց թագուհու հետ կորյունը ժիր առյուծի,
Եղունգները սրեց, որ իր ոտխներին հարվածի:

«Հայրս ու պապս տվել են ինձ զինվորի քաջ հատկություն,
Անհավասար պատերազմում ես կթափեմ ծով-արյուն:

Որդին պետք է նախորդների պես ունենա մեծ հոգի,
Խելքով պիտի գերազանցի, իսկ քաջությամբ՝ կրկնակի:

Իմ Քաբուլին և իմ փառքին սպառնում է մեծ վտանգ,
Դու չես թողնում, որ աղջկադ անեմ այսօր շանսատակ:

Իրանշահը երբ որ լսի առաջարկը կնության –
Քաջ Սամի հետ կխարձակվի, ինչպես ահեղ մի օվկիան'

Ու երկիրս մոխիր կանի, իսկ Քաբուլը' տնավեր,
Էլ չեմ տեսնի գարուն, ամառ, ոչ աշուն և ոչ ձմեռ»:

Իսկ Սինդուխտը պատասխանեց. «Ո՛վ քաջարի իմ Մեհրաբ,
Չարությունն է պղտորում քո միտքն ու հոգին շարունակ:

Միանգամից դուրս վռնդիր քո մտքերից քեն ու վախ,
Գործի հիմքը լավ են դրել Սամն ու որդին իր խիզախ:

Ամուսնության լուրը երբ որ լսեց Սամը իր որդուց,
Քերկեսարայ բերդը թողեց ու հեռացավ թշնամուց»:

Մեհրաբ շահը այսպես ասաց. «Իմ թագուհի գեղեցիկ,
Մի շեղիր ինձ ճանապարհից խոսքերով քո ազդեցիկ:

Քամին գալիս և անցնում է- փառք ենք տալիս Աստըծուն,
Հողը պատռել չի կարող այն, քանզի վերից է անցնում:

Ինչքան էլ որ վախենամ թե՛ վատ օրեր են գալու դեռ,
Եղելության մեծ վնասը չեմ դարձնի ծանր բեռ:

Հայտնի բան է՛ չեմ գտնի ես Դեստանի պես փեսացու,
Համոզված եմ՛ մրցախաղում ոչ ոք հետը չի մրցում...

Եվ որ Սամի հետ հաստատի խնամություն անվնաս-
Նրա փառքը կտարածվի Կանդահարից մինչ Աիվազ:

Իսկ Սինդուխտը բացատրեց. «Լսի՛ր, ո՛վ դու փահլավան,
Երբևիցե սուտ չեմ խոսի, թեկուզ ոսկե թագ ինձ տան»:

Քո տանջանքը իմ տանջանքն է, որից միշտ էլ տխուր եմ,
Իմ սրտի մեջ բույն է դրել մեծ կասկածը, գի թույլ եմ:

Խորախորհուրդ ու ճշմարիտ քո խոսքերից հոգեցունց՝
Հազիվհազ եմ շնչում, ապրում, այն էլ միայն քո սիրուց:

Տագնապահար տեսար դու ինձ, իմ աչքերում՝ արցունքներ,
Բայց անորոշ մեր ապագան թող չմաշի սիրտը մեր:

Տերիդունը շատ էր հարգում մեծ իշխանին Եմենի,
Զալը շինեց փլած բոլոր կամուրջները երբեմնի:

Փոշին դեպի օդն է ձգտում, ջուրը անշուշտ կրակին,
Տգեղ մարդը միշտ ուզում է, որ ունենա սիրուն կին:

Դեստան-Զալը Սամին հղեց արագաճեպ մի բանբեր,
Թող քո հոգին երջանկությամբ լուսավորվի, ո՛վ իմ տեր:

Օտարացեղ մարդուն եթե ընդունեցիր հարկիդ տակ,
Հաստատապես հետնորդը քո պետք է լինի վատավարք»:

Մեհրաբ շահը լավ ըմբռնեց կնոջ միտքը խորիմաստ,
Սակայն սիրտը ոխ ու քենից տրոփում էր դառնաասատ:

Անմիջապես հրամայեց. «Որ այդպես է՝ գնա բեր,
Կամ թե կանչիր՝ թող շտապով ինձ մոտ վազի Ռուդաբեն»:

Բայց Սինդուխտը խիստ սարսափեց, թե իշխանը Քաբուլի
Իր աղջկա գլխին արդյոք մի նոր աղետ չի՞ բերի...

Այդ պատճառով նրան ասաց. «Արքա՛, երդվիր նախօրոք,
Որ քո մոտից ետ կուղարկես նրան առոք ու փառոք:

Որ չի զրկվի քո պատճառով մեր Քաբուլը ծաղկազարդ
Իր կենարար վարդի բույրից – գեղեցկուհուց իր դժբախտ»:

Շահը նրան երդում տվեց և համոզեց, որ, իրոք,
Դստեր գլխին չի երկնճի մահու թուրը անողոք:

Իսկ Սինդուխտը ծնկի իջավ Մեհրաբի մոտ գլխահակ,
Փայլփլեցին սև ծամերը, հանց աստղաշող մի լուսայգ:

Այնուհետև արագ գնաց և աղջկան ասաց, թե.
«Գնա, հայրդ ցանկանում է խոսել քեզ հետ ի սրտե:

Հանգիստ եղիր, չվախենաս, նա երդում է տվել, որ
Քո դեմ վատ բան չի ձեռնարկի, թեկուզ դու ես մեղավոր:

Այժմ հանիր զարդերը քո ու պսակդ դեն նետիր,
Գնա հորդ ոտն ու ձեռքը աղերսանքով համբուրիր»:

Իսկ աղջիկը, թե. «Զարդերս ինչո՞ւ նետեմ, ո՛վ իմ մայր,
Աղքատ ու խեղճ մարդու նման չեմ խորտակվի գլխիվար:

Խիզախ Սամի որդին չէ՞ որ իմ սիրտըն է, իմ հոգին,
Հայտնի բանը չեմ թաքցնի, չեմ խաբի ես ոչ մեկին»:

ՌՈՒԴԱԲԵՆ ԳՆՈՒՄ Է ՄԵՀՐԱԲԻ ՄՈՏ

Մեհրաբ շահին ներկայացավ գեղեցկուհի Ռուդաբեն,
Ինչպես արփին լուսածագի, ինչպես հրաշք մի եդեմ:

Ճաճանչափայլ դեմք ուներ նա ու պերճ կեցվածք շենշռայլ,
Այնքան գերող, ինչպես գարնան արեգակը ոսկեփայլ:

Մեհրաբ շահը տեսավ նրան՝ մի պահ մնաց զարմացած,
Ապա ինքը իրեն ասաց. «Փառքդ մեծ է, ո՛վ Աստված»:

Կրկին դարձավ Ռուդաբեին. «Անպատվեցիր թագ ու գահ,
Չէի ուզում, որ թշնամիս կին առներ իմ աղջկան:

Գեղեցիկը Ահրիմանին ընկեր լինել չի կարող,
Ես կորցրի քեզ ու գահս և երկիրս ոսկեհող:

Կահտանական օձ որսողը երբ որ ձգտեց դառնալ մոգ,
Թունավորիր, որ չխաբվի, չհմայվի էլ ոչ ոք»:

Գեղեցկուհին ուշիմ լսեց, թե ինչ ասաց հայրն իրեն,
Սրտից ասես արյուն կաթեց, դեմքը դեղնեց հանց տերև:

Փայլում էին միայն նրա թարթիչները սևաթույր,
Ոչ շարժվում էր և ոչ խոսում՝ կուռքի նման քար էր, լուռ:

Մեհրաբ շահը անզուսպ ցավից տեղից հանկարծ ելավ վեր,
Քիչ էր մնում վագրի նման իր աղջկան պատռոտեր:

Պատահարի դժբախտ պահը այդպես գտավ շարժառիթ,
Ռուդաբեի սև աչքերից արցունք կաթեց շիթ առ շիթ:

Մայր ու աղջիկ որոշեցին պատասխանի տեղ լռել
Եվ Աստղծուն սրտանվեր մաղթանքներով աղոթել:

ՄԱՆՈՒՉԵՀՐ ՇԱՀԸ ՏԵՂԵԿԱՆՈՒՄ Է ԶԱԼԻ ԵՎ ՌՈՒԴԱԲԵԻ ՍԻՐՈ ՄԱՍԻՆ

Մանուչեհր շահին նույնպես սուրհանդակը տարավ լուր –
Մեհրաբի ու Զալի միջև սիրո կապեր կան ամուր...

Թե քաջատոհմ Դեստան-Զալի սրտում սերն է դրել բույն,
Վիշապազուն Ռուդաբեի արյան մեջ կա օձի թույն:

Շահնշահը անմիջապես հրավիրեց հավաքույթ,
Աստղագուշակ մոբեթները պալատ եկան շտապույթ:

Մանուչեհր շահը դիմեց բախտագուշակ մոգ մարդկանց.
Այդ կնության համար Աստված մեզ կպատժի անկասկած:

Ֆերիդունը մեր երկրից արաբներին քշեց դուրս,
Բայց Մեհրաբը մեր դեմ ունի հաղթանակի դեռ մեծ հույս:

Վախենում եմ անսեր լինի կնությունը Դեստանի,
Նրա ծառը մեր երկրում նորից դառը շիվ հանի:

Եթե Զալը կին վերցնի Մեհրաբ շահի աղջկան –
Ծնված զարմը պիտի լինի մեր թշնամին իսկական:

Երկու ցեղի միացումը կտա քենի նոր մի ծառ,
Հիվանդ սրտի վրա պիտի ավելանա նոր մի ցավ:

Ռուդաբեն երբ ծնող դառավ, դաստիարակը իր որդու,
Զար մտքերով պիտի սնի իր զավակին օրնիբուն:

Մի պայծառ օր կճգտի նա շահի թագի ու գահի,
Նա չի կարող հանգիստ ապրել, առանց ահի ու մահի:

Ի՞նչ պատասխան կարող եք տալ հավատարիմ իմ մոգեր,
Սպասում եմ ձեր իմաստուն խորհուրդներին անհամբեր»:

Մոբեթները մեծարեցին փառքը հզոր Իրանի,
Ազնիվ ցեղը, թագն ու գահը Մանուչեհր մեծ շահի:

«Ո՜վ շահնշահ, դու մեզանից խորագետ ես գիտությամբ,
Լինելության գաղտնիքներ ես մեկնաբանում հեշտությամբ:

Շարժվիր այնպես, ինչպես որ քո միտքն է տեսնում ապագան,
Քանզի գիտենք՝ քո խոսքերից հմայվում է օձն անգամ»:

Այնուհետև շահը խորհեց՝ պետք է գտնել միջոց նոր,
Որ էական վճիռ հանի, իր մեծության համազոր:

Ապա ավագ որդուն կանչեց, որ շուտափույթ գա իր մոտ,
Նովզար որդին համարվում էր Շահնշահի քաջ հետնորդ:

Ասաց. «Որդիս, շտապ մեկնիր Դեստան-Զալի մոտ ուղիղ
Եվ իմացիր՝ ինձ մո՞տ կգա, թե՞ կգտնի այլ ուղի...

Ասա՝ թող որ կռվի պատրաստ բանակներով ինձ մոտ գա,
Նա լիովին խոստանում է մեծ հույսեր ու ապագա»:

Մանուչեհր շահը որդուն տվեց կտրուկ հրաման,
Զալի համար նույնպես հղեց արքայական պատվիրան:

Սուրհանդակը մի օր առաջ վազեց խիզախ Սամի մոտ,
Դիմավորման համար Սամը առաջացավ հետիոտն:

Սամը իր հետ տարավ բազում հետևակ ու այրուձի,
Պատերազմում կոփված փղեր ու սպաներ արիածին:

Նովզարը և Սամը եկան հանդիպեցին իրարու,
Մեկը-մեկից մեծահամբավ, գեղեցկադեմ, ամրակուռ:

Արքայորդին հայտնեց իսկույն հրամանը մեծ շահի,
Իսկ քաջ Սամը ողջույններով ընդառաջեց Նովզարին:

Գետնի վրա փռել էին բազում գորգեր ծաղկազարդ,
Ամեն զինվոր ձեռքին ուներ գինով լեցուն մի գավաթ:

Շահի պատվի համար ամեն մեկը խմեց կենաց թաս,
Մեծարեցին Նովզարին ու հսկա Սամին ալեվարս:

Աղմկարար խրախճանքը տևեց մինչև արշալույս,
Արեգակը երբ որ երկրին ազդարարեց բարի լույս–

Արքայական ճոխ վրանից լսվեց ձայնը թմբուկի,
Զինվորները շարքի ելան նորից առանց աղմուկի:

Սուրհանդակը եկավ հայտնեց շահնշահին ուրախ լուր –
Թե քաջ Սամը վերադարձավ իր գնդերով բազմաբյուր:

Շահնշահը ուրախացավ, հրամայեց, որ տիկնայք
Լուսավորեն իր դղյակը, ինչպես գարնան արեգակ:

Սար ու Ամոլ քաղաքներում բարձրացավ մեծ աղաղակ,
Ծովի նման ալեկոծվեց դաշտ ու անտառ, անապատ:

Հսկա Զալի հեծելազոր բանակները ծանրաքեռ
Եկան ճապուկ ձիեր հեծած, հետևակի հետ մեկտեղ:

Անապատից մինչ սարերը ու ժայռերը քար ու թուփ
Շողշողացին զրահները ծովի նման ալեծուփ:

Շահնշահը թմբուկների ամենաձայն աղմուկով
Եկավ ձիեր, փղեր թամբած, զարդեղենով ու ոսկով:

Արքայական շքախումբը նույնպես եկավ շահի հետ,
Որ հյուրերին դիմավորեն քաջավայել, սիրավետ:

ՍԱՄԸ ՆԵՐԿԱՅԱՆՈՒՄ Է ՄԱՆՈՒՉԵՀՐ ՇԱՀԻՆ

Հզոր Սամը իր բանակով երբ որ հասավ արքունիք,
Արքայական շքախմբի ձայնը հասավ մինչ երկինք:

Սամը տեսավ Մանուչեհր շահին հպարտ և ուրախ,
Մինչև գետին ծնկի իջավ ու խոնարհվեց գլխահակ:

Շահնշահը գլխին ուներ լիալուսնի նման թագ,
Ու փայլում էր դեմքը նրա, ինչպես գարնան արեգակ:

Նա քաջ Սամին նստեցրեց գահաթոռին, իր կողքին,
Փահլևանը արժանացավ իրանշահի մեծ գովքին:

Քերկեսարայ բերդի մասին Սամը խոսեց դառնավիշտ,
Մազանդարան հողը նույնպես դևաբնակ որջ էր միշտ:

Ով տիրակալ,– ասաց Սամը,– Աստված թող քեզ պաշտպանի,
Քո նետի դեմ թույլ է, իրոք, մեր ամեն մի թշնամին:

Դաբնակ ամրոցների դեմ գնացի սրարշավ,
Սակայն այնտեղ ամեն մի բերդ ունի ռազմի մեծ պաշար:

Ճարպիկ վագրի նման նրանք մարտ են մղում շեշտակի,
Ունեն անթիվ ճապուկ ձիեր, վազքով նման կայծակի:

Եվ դևերի տագնապահար հարձակումից, ո՛վ իմ տեր,
Շփոթվեցի ու կարծեցի, թե դևեր չեն, այլ վագրեր:

Մարտակոչի թմբուկներից իմ բանակը առավ ուժ,
Ու ոսոխս սարսափահար փախավ կռվից մահագույժ:

Բերդ-քաղաքը անմիջապես դարձավ դատարկ մենախուց,
Նրանք փախան ու լուռ մտան ժայռերի մեջ հինավուրց:

Երբ արևի դեմքին իջավ իրիկնային վարագույր,
Նորից կռվի ելան մեր դեմ այդ դևերը բազմաբյուր:

Իմ բանակի հոծ շարքերում տարածվեց ահ ու սարսափ,
Քիչ էր մնում դժվար պահին առաջանար մեծ խուճապ...

Բայց անվարան մտրակեցի իմ մարտական ահեղ ձին,
Հարձակվեցի ոսոխի դեմ, նման անվախ առյուծի:

Երբ շարժեցի ծանրակշիռ իմ բազուկը աջ ու ձախ՝
Խուճապահար ետ նահանջեց դևաշխարհը մշտավախ:

Բայց նրանց մեջ Սելմի թոռից կար անվանի մի քաջազն,
Մենամարտի ելավ իմ դեմ, հանց հոշոտող մի հովազ:

Կերկույ էին ասում նրան, որ վարում էր պատերազմ:
Հրապուրիչ պատկեր ուներ, նոճու հասակ՝ ամրակազմ:

Բայց մոր կողմից սերում էր նա դևի տոհմից Զոհակի,
Նա կռվազան փահլևան էր և առաջնորդ բանակի:

Նորից բազում զորքեր բերեց Կերկույը չար ու անհաշտ,
Կարծես կռվի ասպարեզ չէր, այլ մորեխի մրցադաշտ:

Լցվել էին դաշտ ու դուրան, ձորեր, գետեր ափեափ,
Նժույգների տրոփյունից բարձրացել էր փոշու ամպ:

Արեգակի դեմքին իջավ մի մառախուղ սևասուգ,
Ամբողջապես փոշեծածկ էր զինվորների աչք ու ունք:

Հենց այդ պահին իմ բանակով ջարդոտեցի թշնամուն,
Անապատում տարածելով դիակներ ու հորդ արյուն:

Ու բանակներս սրարշավեց հրամանիս համաձայն,
Որոտացի ինչպես ծանր ջաղացքարի ահեղ ձայն:

Իսկույն նետեց նա պարանը, որ ինձ մեկից օղակի,
Որ նժույգիս թամբից պոկի ու գերեզման ուղարկի:

Բայց հասկացա միտքը նրա ու ցատկեցի ես մի կողմ,
Հարձակվեցի Կերկույի դեմ հանց խորտակող, ահեղ հողմ:

Իմ աղեղից արձակեցի սուրսայր նետեր երկաթե–
Որ Կերկուի սաղավարտը և գլուխը ծակծկե:

Համոզվեցի, որ նետերով տապալեցի սեգսարցուն,
Չի գիտեմ, որ մենամարտում ինձ հետ ոչ ոք չի մրցում:

Սակայն հեռվից փոշեթաթախ իմ դեմ ելավ նա հաստատ,
Ձեռքին ուներ թուր հնդկական – սրախողի միշտ պատրաստ:

Նա մռնչաց փղի նման, իսկ ես կանգնել՝ ժպտադեմ
Հարմար առիթ էի գտնում, որ ոտքերիս տակ ջարդեմ:

Նա դևի պես հարձակվեց ու ցանկացավ ինձ թրատել,
Բայց բռնեցի նրա գոտուց՝ բարձրացրի գլխից վեր –

Ուժեղ թափով շպրտեցի գետնի վրա գլխիվայր,
Այնպես արագ փչեց շունչը, որ չկանչեց՝ վույ ու վայ:

Առաջնորդի մահից հետո զորքը փախավ դես ու դեն,
Անապատում էլ չերևաց կռիվ մղող զորք ու դև:

Նրա զորքի մնացորդը անհայտացավ կիրճերում,
Թփուտներում, խոր ձորերում, գազանների որջերում:

Պատերազմում թշնամու դեմ մենք տարանք մեծ հաղթանակ,
Դաշտում նրանք թողել էին դիակույտեր անքանակ:

Եվ բացի այդ, կոտորվեցին աշխարհազոր շատ գնդեր,
Ամբողջապես երեք հարյուր հազար զինվոր էր փռվել»:

Շահնշահը տեսավ Սամի հաղթանակը քառակի,
Վեր խոյացավ արքայական մեծությունը իր փառքի:

Նա քաջերի հետ միասին կազմակերպեց խրախճանք,
Որ մոռանան, թե աշխարհում կա հոգս ու ցավ ու տանջանք:

Ամբողջ գիշեր կոնծում էին արբեցուցիչ, թունդ գինի,
Եվ գովերգում հերոսներին անվանապես մի առ մի:

Ցայգալույսը երբ գիշերվա վարագույրը քաշեց ետ,
Մայրամուտը դանդաղ փակեց դռներն իր հետզհետ:

Շահնշահին ներկայացավ հսկա Սամը քաջատոհմ,
Մեծահամբավ փահլևան էր, կռիվներում միշտ հաղթող:

Մանուչեհր շահը եկավ, կանգնեց նրան դեմ առ դեմ,
Ու զրուցեց այլ հարցերի մասին կտրուկ, խստադեմ.

«Իսկույն գնա ու ժողովիր բանակները քո խիզախ,
Եվ Քաբուլը կրակների մեջ դարձրու մեծ օջախ:

Փոշի արա Մեհրաբ շահի ամրոցները քարակերտ,
Այնպես արա, որ քո ձեռքից նա չփախչի ոչ մի կերպ:

Պատեհ ժամին անտարակույս կապստամբի նա մեր դեմ,
Չէ՞ որ օձի ծագում ունի, խարդախ է նա ու չար դև:

Այդ իշխանը ժողովրդիս երբեք չի տա քուն, հանգիստ,
Վտանգավոր բարեկամին պատժել է պետք դառնախիստ:

Քաբուլում դեռ բնակվում են բազմացեղեր այլլեզու,
Ենթակա են շահնշահին և նրան են հարկատու:

Այժմ գնա այդ բոլորին սրի քաշիր անխնա,
Այնպես արա, որ Քաբուլում կենդանի մարդ չմնա»:

Սամը տեսավ, որ Իրանի շահը լցված է քենով,
Երեսնիվայր գետին ընկավ ու դողդոջուն ձեռքերով

Բռնեց նրա մատանեզարդ աջը ամուր համբուրեց,
Ապա դիմեց ջերմ խոսքերով Մանուչեհր շահին մեծ.

«Կկատարեմ ցանկությունը աշխարհակալ իմ տիրոջ,
Հրամանով քո թույլ կտամ իմ բանակին մարտակոչ»:

Սամը թամբեց ճապուկ իր ձին և արշավեց հապշտապ,
Ամբակների դոփդոփյունից բարձրացավ մեծ փոշու ամպ:

ՍԱՄԸ ՊԱՏԵՐԱԶՄ Է ԳՆՈՒՄ ՄԵՀՐԱԲԻ ԴԵՄ

Շահնշահի ատելության լուրը տարան մինչ Քաբուլ,
Մինչև Մեհրաբ արքային ու մինչև Զալին ամրակուռ:

Վատահամբավ լուրը ցնցեց գյուղ ու քաղաք ու ամրոց,
Արքայական ապարանքում նորից լսվեց լաց ու կոծ:

Եվ Սինդուխտը, և՛ Ռուդաբեն, և՛ Մեհրաբը միշտ արթուն
Համոզվեցին, որ թշնամուց չունեն ոչ մի փրկություն:

Զալը իսկույն ասպանդակեց մի ճեպընթաց երիվար,
Ու Քաբուլից մինչև Զաբուլ ճամփան արեց վեր ու վար:

Ճանապարհին նա մտածեց. «Սամը կգա հանց վիշապ –
Փոշի կանի ողջ Քաբուլը իր գնդերով բազմաշատ:

Ամենից շատ, հաստատապես Քաբուլը նա կքանդի,
Բայց չեմ թողնի, որ նա բռնի և գլուխը իմ հատի»:

Վարգում էր նա արագաձեպ երիվարն իր հոգնատանջ,
Որ փահլևան հսկա Սամին ներկայանա օր առաջ:

Քաջավազիկ սուրհանդակը Սամին տարավ մի նոր բոթ,
Թե՛ աշխարհի ձագը հիմա կգա ծնող իր հոր մոտ:

Կայազորը ոտքի ելավ բանակներով շարեշար,
Ծածանվեցին Ֆերիդունի դրոշները ոսկեփայլ:

Դիմավորման համար հնչեց ռազմական փող ու շեփոր,
Այդ տոնական շքաերթ չէր, այլ հանդեսի մեծ թափոր:

Ու ծանրաքայլ փղերի հետ գնաց Սամը անվանի,
Խայտաբղետ դրոշները կարծես լիներ հովանի:

Դեստան-Զալը նայեց հեռուն՝ Սամին տեսավ զորքի մեջ,
Ձիուց իջավ, գնաց ոտքով, կարոտներով սիրատենչ:

Երկու կողմի շքախմբերն իրար ընդհուպ մոտեցան,
Խոնարհվեցին ավանդական սովորության համաձայն:

Զալը չոքեց ու համբուրեց հոր ոտքերի հող փոշին,
Չէ՞ որ առանց մի պատճառի այսքան զրկանք չէր քաշի:

Զալը տեսավ, որ իր հայրը մտախոհ է, լուռ է դեռ,
Հեծավ իր ձին, ոչ թե ձի էր, այլ ամեհի մի մեծ լեռ:

Դեստանի մոտ ամեն կողմից հավաքվեց մի հոծ ամբոխ,
Ու ծնկաչոք ողջունելով համբուրեցին քար ու հող:

Եվ դիմեցին. «Հորդ հանդեպ վարվեցիր դու անվայել,
Մի՛ համառիր, ներում խնդրիր, հարկավոր չէ քեն պահել»:

«Չեմ սարսափում,– ասաց Զալը,– նեղություն ես չեմ քաշի,
Քանզի գիտեմ, որ իմ վերջը հող է, մոխիր ու փոշի:

Նարիմանի որդի Սամը խելոք մարդ է մեծափառք,
Իր կարծիքը չի փոխի նա, թեկուզ տանի չարչարանք:

Իմ դեմ թող նա դաժան վարվի, ես նրանից չունեմ վախ,
Կփոշմանի և ամոթով կշրջի միշտ գլխակախ»:

Սամը արագ իջավ ձիուց, ճապուկ ձիուց ոսկեթամբ,
Կանգնեց Դեստան-Զալի դիմաց՝ փահլևանի մեծությամբ:

Դեստան-Զալը ուշքի եկավ ու երբ տեսավ գոռ փղին-
Ձիուց իջավ մաղթանքներով, շուրթը դրեց մայր հողին:

Եվ ի սրտե ծնող հորը փառաբանեց Զալ հսկան,
Արցունք թափեց և անիծեց իր անցյալն ու ապագան:

Ասաց. «Հա՛յր իմ, թող քո կյանքը միշտ էլ լինի փառավոր,
Ճշմարտության ձգտում ունես, համոզվեցի իրոք որ:

Քարաժայռ է փշուր-փշուր անում թուրդ ամրակոփ,
Հաղթանակդ փառաբանում ու տոնում են շահի մոտ:

Ուր էլ լինես, ուր էլ քշես քո ճեպընթաց, հրաշք ձին,
Թշնամուն իր որջն ես քշում, սարսափ տալիս առյուծին:

Քո նետերը ամպ են ծակում, հասնում երկինքն աստղացոլք,
Իսկ քաջությամբ մինչև հիմա քեզ չի մրցել դեռ ոչ ոք:

Իմաստության համբավը քո տարածվել է ամեն կողմ,
Քո գործերով հպարտ է միշտ ժողովուրդս արիատոհմ:

Բնությունը օժտել է ինձ ճշմարտությամբ իմ հոր պես,
Թեկուզ Սիմուրղն է սնել ինձ Էլբորզ սարում բարձրավես:

Այս աշխարհում ոչ մեկի դեմ չեմ նյութել ես թշնամանք,
Մեղքեր չունեմ, բայց կրում եմ բազմաբազում չարչարանք:

Մեղքս այն է, որ զավակն եմ հռչակավոր, քաջ Սամի,
Մեծ պատիվ է հայր ունենալ, բայց չունենալ թշնամի:

Ծնված օրից դաժան հայրս ինձ դեն նետեց իր ձեռքով,
Թռչնի բնի մեջ մեծացա տանջանքներով, արցունքով:

Ես չեմ տեսել մայրական սեր, ոչ էլ փափուկ օրորոց,
Ոչ գուրգուրանք և ոչ հանգիստ նեղ օրերիս վշտակոծ:

Բայց անբախտիս Աստված պահեց ու ետ բերեց կրկին տուն,
Ինձ պարգևեց հսկայի ուժ ու զինվորի հատկություն:

Քաբուլի մեծ տերը եղավ ինձ բարեկամ և ընկեր,
Քանզի թագ ու գահ ունի նա և այրուձի բանակներ:

Քո ցանկությամբ ես մեկնեցի Քաբուլ բերդը ամրակերտ,
Եվ ուղեցույց ճանապարհից չշեղվեցի ես երբեք:

Դու երդվեցիր. «Իմ զավակս, տանջանքներդ վերջացան,
Սիրով տնկած քո նոր շիվը կդարձնեմ հսկա ծառ»:

Մազանդարան երկիրն, աաա՛, ի՞նչ օգուտ է տվել ինձ,
Ինչու՞ հեծյալ քո բանակը ետ բերեցիր Սեգսարից...

Որ ավերե՛ս իմ օջախը, հավասարե՛ս դու հողին...
Ահա ու՞ր է արդարության քո հետամուտ ճիշտ ուղին:

Տե՛ս, զինաթափ կանգնել եմ քո դեմ ու դիմաց, կախիր ինձ,
Մահից բնավ չեմ սարսափում, կապիր թոկը իմ վզից:

Հրամայիր, որ մարմինս գամ՝ սղոցեն մաս առ մաս,
Միայն թե ես պերճ Քաբուլը տեսնեմ կանգուն, անվնաս:

Վարվիր ինձ հետ առաջվա պես անողոք ու խստադատ,
Անզոր եմ ես Քաբուլի պես և ավելի քան դժբախտ»:

Հզոր Սամը լսեց որդուն և ամոթից գլխահակ
Որդուն ասաց. «Ճշմարտախոս ու խելամիտ իմ զավակ.

Ինչ որ այժմ խոստացար ինձ՝ համարում եմ խսկություն,
Գուրգուրանքի փոխարեն քեզ պատճառել եմ դառնություն:

Չարությամբ և թշնամությամբ էր հագեցել իմ հոգին,
Բայց հիմա դու պարգևեցիր բաղձալի օր թանկագին:

Իմ զավակս, չեմ ցանկանում տեսնել քեզ միշտ բարկացայտ,
Այնպես կանեմ, որ այսուհետ չկրես վիշտ ու տանջանք...

Կպատվիրեմ՝ գրագիրս կգրի մի լավ նամակ,
Անձամբ ինքդ կտանես ու կտաս շահին ոսկեթագ:

Նա կտեսնի և քո մասին կմտածի անպայման,
Քեզ օգնության ձեռք կմեկնի Մանուչեհր մեծ արքան:

Աշխարհակալ շահնշահին կպատմես դու ամեն ինչ,
Գուցե դարձի գա քեզ համար ու դառնա քեզ մեծ փրկիչ:

Ամենագութ Աստված գուցե օգնության ձեռք մեկնի մեզ,
Մեր կոր մեջքը թեթևանա ծանր բեռից բարձրաղեզ:

Առյուծը երբ հարձակվում է որսի վրա շեշտակի,
Որսը նրա ճանկն է ընկնում, վագր լինի կամ թե փիղ»:

Դեստան-Զալը իր հոր առջև ծունր իջավ մինչ գետին,
Գովեց նրա մեծությունը ու ռազմական մեծ գործին:

ԶԱԼԸ ՄԵԿՆՈՒՄ Է ՄԱՆՈՒՉԵՀՐ ՇԱՀԻ ՄՈՏ

Սամի խելոք գրագիրը Շահին գրեց մի նամակ,
Եվ նամակը հորինելիս՝ թափեց բազում ճիգ ու ջանք:

Փառաբանեց նախ Աստծուն սովորության համաձայն.
«Մեզնից առաջ Աստված եղել, կա, կլինի հավիտյան:

Նա է տերը և գոյության, մենք ստրուկ ենք և անզոր,
Մենք բազում ենք, իսկ նա միակ, ամենատես ու հզոր:

Նա է տալիս արեգակին և աստղերին ճառագայթ,
Շահնշահին հղում եմ ես ջերմ մաղթանքներ սիրառատ:

Ով շահնշահ, խրախճանքի պահին լուսնին ես նման,
Պատերազմում՝ հույս ես, հավատ, հաղթանակի պատվիրան:

Քո զրահով կործանում ես արեգակներ ռազմական,
Պաշտպանում ես ժողովրդին ոսոխներից չարակամ:

Մարտադաշտում ծածանում ես ֆերիդունյան դրոշակ,
Մեր թշնամու աչքերի դեմ ունես սուրսայր վագրի ճանկ:

Գուրզը ձեռքիդ, երբ ոսոխի հողում հպարտ ոտ կոխիր,
Քո նժույգի սմբակի տակ աշխարհն արիր դու մոխիր:

Հովանավոր քո ձեռքի տակ մենք ապրում ենք երջանիկ,
Մի բնում են հաշտ ու խաղաղ ապրում առյուծ ու եղնիկ:

Շահնշահի շուքի ներքո ծառայել եմ ամբողջ դար,
Հարյուր քսան տարեկան եմ, բայց կռվում եմ անդադար:

Ձերմակել են ողջ մազերս ու փայլում են ձյունի պես,
Աստված գլխիս ծերունական թագ է դրել լուսագես:

Եղել եմ միշտ ստրուկը քո, բայց կռվել եմ քաջաբար,
Մենամարտել վիշապի հետ, դևերի դեմ խելագար:

Ոչ մի արքա չի ունեցել ինձ պես հզոր փահլևան,
Չի ունեցել ինձ պես ծանր գուրզ ու կոպալ, երիվար:

Ինձ տեսնելիս դևաշխարհում տարածվում էր մեծ սարսափ,
Երբ վրնջում, ծառս էր լինում իմ նժույգը ոսկեթամբ:

Ռոսխներին սրբում էի պատերազմում, ո՛վ մեծ շահ,
Այնպես էի ես ավերում հանց Հերիրուդ ու Գիշաֆ:

Դրանք երկու լեռների մեջ նմանվում են լայն դաշտի,
Իսկ քաղաքի միջնամասում՝ ինչպես ճամփան Բեհեշտի:

Միշտ իմ խելքի մասին էին խոսում մարդիկ ամեն տեղ,
Չէ՞ որ փղի ուժ ունեի և անվրեպ պրկաղեղ:

Գլխիս վերև երբևիցե դեռ չի անցել մի թռչուն,
Անտառներում հանգիստ չուներ ոչ ընձառյուծ, ոչ մրջյուն:

Եվ իմ ահից չէին ճախրում ոչ մի ագռավ ու արծիվ,
Ես հմտությամբ կրակ էի ու ծագումով արիածին:

Մարդիկ փախան և իրենց հետ տարան գանձ ու անասուն,
Նույնիսկ կռվի չելավ իմ դեմ մի անվանի քաջազուն:

Դատարկվել էր մեր ռոսխի քաղաքները մարդաշատ,
Միայն քենի համար իմ դեմ կանգնել էր մի գեր վիշապ:

Ես օգնության ուժ խնդրեցի ամենազոր Աստծուց,
Մահկանացուս նրա հանդեպ հույս ու հավատ եմ տածում:

Ձեռքս առա նետ ու աղեղ, առա զրահ ու կոպալ,
Վրեժառու սիրտս լեցուն ընկա քենի ճանապարհ:

Սարսափելին թեկուզ հուրն է, բայց պողպատն է դիմացկուն,
Ով որ իմ դեմ կռվի ելավ՝ նա էլ մտավ մահվան քուն:

Այս անգամ էլ իմ դեմ ելավ մի մեծ վիշապ գազազած,
Ամբողջապես մազերի մեջ փաթաթվել էր, ինչպես ցանց:

Քարայրի պես բաց էր արել մեծ երախը մարդակուլ,
Ամեն մի աչք կարծես լիներ արյունակունք մի աղբյուր:

Երբ ինձ տեսավ՝ մահասարսուռ դևի ձայներ հանեց նա,
Կրծքիս կարծես կրակ թափեց, սարսափեցի, ո՛վ իմ շահ:

Այնուհետև նա երախից փչեց սև ամպ թանձրախիտ,
Աչքիս առաջ կարծես ծով էր ալեկոծվում անհանգիստ:

Նրա ուժգին, ահեղ ձայնից դղրդացին սար ու ձոր,
Աշխարհն այնպես ալեկոծվեց, կարծես լիներ չինաց ծով:

Առյուծի պես ձեռքս առա մի մեծ նիզակ սրածայր,
Հարձակվեցի վիշապի դեմ, ինչպես անվախ մի քաջայր:

Ես ջոկեցի ալմաստածայր մի ամուր նետ ոսկեզօծ,
Որ տապալեմ միանգամից այդ վիշապին չարագործ:

Արձակեցի ամուր նետս վիշապի դեմ շեշտուղիղ,
Եվ կարծես թե նետս նրա լեզուն կարեց սև հողին:

Այնուհետև հարվածեցի գուրզ-կոպալով իմ զորեղ,
Եվ վիշապի մեծ երախից արյուն հոսեց ոնց հեղեղ:

Իմ դեմ նորից հարձակման էր ձգտում օձը արնախում,
Բայց շեշտակի նետեր էի շարում նրա երախում:

Իսկ քիչ հետո իմ նժույգը խթանեցի նրա մոտ,
Որոտացի, հարձակվեցի, ինչպես ուժգին մի ամպրոպ:

Երբ ջարդեցի գանգն ու մեջքը, արյուն ելավ մշտահոս,
Գլխից թույն էր արտավիժում, հանց ալեկոծ մի Նեղոս,

Հանց Հերիրուդ ու հորդառատ Գեշաֆ գետը արնագույն,
Երկրի վրա նորից տիրեց խաղաղություն, հանգիստ քուն…

Անմիջապես թաքստոցի պահված մարդիկ ելան դուրս,
Քանզի նրանք հասկացան, որ կա ապրելու դեռ մեծ հույս:

Ժողովուրդը փառաբանեց հաղթանակս մեծարժեք,
Ծաղկեփնջեր նվիրելով՝ բարբառեցին. «Շա՛տ ապրեք»:

Քաջատեղյակ աշխարհն ամբողջ ինձ անվանեց հարվածող,
Ջի մեկ զարկով ապառաժը դարձնում էի փոշի, հող:

Նժույգիս հետ կռվից հետո վերադարձա հոգնած, թույլ,
Տեսա գուրզիս ու շորերիս վրա թափած օձի թույն:

Ես հաղթեցի այդ վիշապին, սակայն երկար ժամանակ
Թույնը իր չար գործն էր տեսնում իմ արյան մեջ շարունակ:

Այն ավերեց ծառ ու ծաղիկ, արոտներ ու խոտ ու հասկ,
Հովիտներում մնացել էր փուշ ու խռիվ ու տատասկ:

Այս և բազում կռիվներում շատ եմ ջարդել թշնամուն,
Մեծ ամրոցներ եմ հրդեհել, փոշին տվել եմ քամուն:

Որ կողմ էլ որ ծառս էր լինում իմ նժույգը շանթաբոց–
Լեղապատառ առյուծն անգամ մտնում էր խոր թաքստոց:

Ձիուս թամբը ծառայում էր գահ, հենարան ինձ համար,
Իսկ նժույգս՝ ոտքերիս տակ՝ նպատակի ճանապարհ:

Մազանդարան աշխարհն ամբողջ ու Սեկսարը մշտապես
Ո՛վ շահնշահ, ծանր գուրզիս հաղթանակով տվի քեզ:

Անտարակույս չէի հիշի տուն, հայրենիք, շահ ու թագ,
Առանց հոգսի կապրեի ես քո հաղթական ձեռքի տակ:

Սակայն հիմա ուժ չմնաց երակներում իմ բազկի,
Կռացել է ամուր մեջքս, հանց կորաթեք մի բարդի:

Բախտս այդպես ժամանակից շատ շուտ ձգեց ինձ գետին.
Իմ զավակի հերթն է հիմա կրել ռազմի պինդ գոտի:

Դեստան-Զալին այսօրվանից ես պիտի տամ տեղ ու գուրզ,
Որ մեծարի անունը քո և գահը քո երկնալույս:

Նա տանջվում է մի ցանկությամբ, աղերսում է ծնկաչոք,
Այս աշխարհում Զալից բացի, գիտես, չունեմ ես ոչ ոք:

Անպատվություն չէ ուզածը, ունի բարի ցանկություն,
Աստված նույնպես չի դժգոհի, կօգնի միակ իմ որդուն:

Ցանկանում ենք մեծախորհուրդ առաջարկը ձեր լսել,
Մեզ պատշաճ չէ գոռոզանալ, քանզի ստրուկ ենք նսեմ:

Իմ զավակին հանդիսավոր կերպով տվի սուրբ երդում,
Երբ նրա հետ Էլբորզ սարից վերադարձա ես Զաբուլ:

Սուրբ երդումով խոստացա ես, որ իմ միակ զավակի
Սրտի ուզած ցանկությունը կկատարեմ կրկնակի:

Այսօր բացեց նա իր սիրտը, սիրո սիրտը սևասուգ,
Ողջ մարմնով դողդողում էր, թափում արյուն արտասուք:

Ասաց. «Թող ինձ կախված տեսնի մեծ Ամոլը, ո՛վ նոճի,
Միայն, հայր իմ, պերճ Քաբուլի վրա նիզակ մի՛ ճոճի»:

Շահը գիտի, որ իմ որդին մեծացել է ինչպես որբ,
Չի տեսել նա մարդու երես խուլ այրերում քարակոփ:

Բայց նրա մոտ եկավ հանկարծ գեղեցկուհին Քաբուլի,
Գրավեց ու պոկեց, տարավ իմ ծաղիկը Զաբուլի:

Մի՛ զարմանա, որ զավակս այժմ թվում է անխելք,
Նրա արած սխալ քայլը մի՛ համարիր ծանր մեղք:

Երբ նրա սիրտն ու հոգին քայքայում է շարունակ,
Նրան տեսնող մարդը կասի և՛ դժբախտ է, և՛ տնանկ:

Ծնված օրից գիտես, որ նա կրել է մեծ տառապանք,
Չեմ ցանկանում այսուհետև նորից տանի չարչարանք:

Աղերսագին ուղարկում եմ ես իմ միակ զավակին,
Երբ որ քեզ մոտ կգա, ո՛վ շահ, աղոթելու կչոքի –

Այնպե՛ս վարվիր, որ շահության գահաթոռը մեծարենք,
Ինձ պատշաճ չէ իրանշահին ուսուցանել կարգ, օրենք...

Չէ՞ որ որդիս հույս-հավատն է ծերունական իմ կյանքի,
Ծնված օրից չի նյութել նա դժբախտություն ոչ ոքի:

Աշխարհակալ շահնշահին ու քաջերին իր բոլոր –
Նարիմանի որդի Սամից՝ ջերմ ողջույններ խորախոր»:

Այսպես Սամը Զալին հանձնեց մեծարանքի մի նամակ,
Որ նա արագ տանի ու տա շահնշահին ոսկեթագ:

Երբ որ հնչեց փողի ձայնը՝ Դեստան-Զալը քաջորդի
Ասպանդակեց իր նժույգը, որ շուտափույթ ճամփորդի:

Նա Քաբուլից իր հետ տարավ հեծելազոր, հետևակ,
Սամը մնաց Գոլեստանի իշխանական հարկի տակ:

ՄԵՀՐԱԲԸ ՆԱԽԱՏՈՒՄ Է ԻՐ ԿՆՈՋԸ

Սամի երթը ու հարձակման լուրը հասավ մինչ Քաբուլ,
Մեհրաբ շահը ասաց. «Գահս պիտի մնա միշտ թափուր»:

Եվ Սինդուխտին իր մոտ կանչեց, որ զրուցի առանձին,
Բայց թագուհու դեմ լարեց նա իր բարկության հսկա ձին:

Ասաց. «Աստված ուժ չի տվել, ինչպես ծովել, այնպես կամ,
Ես չեմ կարող պատերազմել բանակներով իմ սակավ:

Այժմ ուրիշ հնարք չունեմ, մնում է, որ իմ դստեր
Ամբոխի մոտ քեզ հետ մեկտեղ սուր դանակով կտրատել:

Գուցե այդպես հանգստանա Մանուչեհր շահը մեծ
Ու խաղաղվի աշխարհին արար պատերազմից մահածեծ:

Իմ քաջերից ո՞վ կարող է կռվել հսկա Սամի դեմ,
Ո՞վ կարող է նրան ձիու թամբից պոկել, նետել դեն...»:

Սինդուխտը նոր հասկացավ, որ սպասվում է մեծ վտանգ,
Գնաց խորհեց, որ ազատման համար գտնի մի հնարք:

Նա խելոք էր ու հեռատես, գուշակության մեջ հմուտ,
Կին չկար, որ նրա նման ունենար սիրտ բարեգութ:

Նա փազեվազ եկավ Մեհրաբ իշխանի մոտ, ծնկաչոք,
Ասաց. «Տե՛ր իմ, քեզնից բացի, գիտես, չունեմ ես ոչ ոք:

Աղաչում եմ, ականջ արա իմ խոսքերին, ո՛վ մարզպան,
Այնուհետև ինչպես կուզես, թող ինձ դաժան պատիժ տան:

Թե ուզում ես գործին օգնել՝ բա՛ց դռները պահեստի,
Մի՛ թող գիշերն իր թևերով մահ ու ոճիր պատրաստի:

Ցայգալույսը շուտով կգա, էլ սև ամպեր չեն լինի,
Ու կտեսնես Բադաշխանից ծագող արևն արքենի:

Իսկ իշխանը պատասխանեց. «Հին խոսքեր ես ասում դու,
Չեմ խոնարհվի, թեկուզ շահին ենթակա եմ, հարկատու:

Ազատության միջոց գտիր քեզ օգտավետ ու հարմար,
Քո արյունը շուտով պիտի պատանք լինի քեզ համար»:

Իսկ կինը թե. «Ես իմ տիրոջ ընդդեմ ունեմ մեծ հավատ,
Չեմ կարծում, որ պետք գա նրան իմ արյունը անարատ:

Հարկավ, կյանքիս մասին պիտի ինքս խորհեմ այսուհետ,
Հիմա Սամի մոտ կգնամ, հանց աղեղից թռած նետ:

Կյանքս թանկ չէ, բայց շուտափույթ մի հանիր ինձ կախաղան,
Եթե օգնել ես ցանկանում՝ տուր բանալին գանձատան:

Հարստության համար երբեք չի տխրել ո՛չ մի իշխան,
Ուստի տուր ինձ մեծ նվերներ, քո պահեստում ինչքան կան»:

Իսկ Մեհրաբը կրկին դիմեց. «Ա՛ռ բանալին պահեստի,
Սամի համար գանձատանս նվերներ կան պատրաստի:

Փորձիր փրկել իմ Քաբուլը, քեզնից այլ բան չեմ ուզում.
Գուցե խամրած վարդը նորից աճի իմ հին պարտզում:

Ես իմ կյանքի մասին բնավ չեմ մտածում, ո՛վ իմ կին,
Միայն փրկիր իմ Քաբուլը և աղջկաս թանկագին...

– Ով քաջերի հպարտություն, կյանքը թանկ է չափազանց,
Բայց ավելի լավ է ցրել հարստություն, գահ ու գանձ:

Երբ որ մեկնեմ Զաբուլիստան, դու չտանջես աղջկաս,
Իմ փափագն է՝ վերադարձին նրան տեսնել անվնաս:

Իմ տանջանքը աղջիկն է իմ, մահից բնավ չեմ սոսկում,
Բայց ուզում եմ, որ իմ տերը տա հավատի սուրբ երդում:-

Մեհրաբն երդվեց՝ չի վնասի իր դստերը դեռատի,
Սինդուխտը նոր առանձնացավ, որ նվերներ պատրաստի:

ՍԻՆԴՈՒԽՏԸ ՄԵԿՆՈՒՄ Է ՍԱՄԻ ՄՈՏ

Պատրաստեցին արքայական նվերներ ճոխ և առատ,
Եվ Սինդուխտը գլխին դրեց պողպատակուռ սաղավարտ:

Ապա հեծավ բյուզանդական մի ոսկեթամբ երիվար,
Այնպես սուրաց, կարծես լիներ մարտում կոփված հզոր այր:

Իր հետ տարավ վաթսուն նաժիշտ, գեղեցկուհի, երգասեր,
Մատովակի համար նույնպես ոսկի, գոհար ու թասեր...

Թասեր, որոնց մեջ լցուն էր մուշկ ու ամբրոս ու համպար,
Ճաճանչափայլ ու թանկագին Բադաշխանի սուտակ քար:

Տարավ երեք հարյուր շեկ ուղտ ու ջորիներ դիմացկուն,
Ե՛վ հնդկական ճերմակ փղեր, և՛ խալիներ երկնագույն:

Վերջապես նա հասավ Սամի ապարանքը հոյակերտ,
Պահապանին ով լինելը չհայտնեց նա ոչ մի կերպ:

Այնուհետև այսպես ասաց. «Ո՛վ մշտարթուն պահապան,
Հայտնիր Սամին, որ Քաբուլից լուր է բերել մի գուժկան»:

Պահապանը իսկույն վազեց շնչակտուր, սրտաբեկ,
Ինչ որ լսեց սուրհանդակից՝ պատմեց Սամին մեկ առ մեկ:

Հյուրամեծար մարդիկ իսկույն սուրհանդակին տարան ներս,
Այնտեղ տեսավ ամրաբազուկ փահլևանին ժպտերես:

Փառածնունդ իրանշահին գովքեր արեց պերճախոս,
Ինչպես նաև Սամին, որպես անմրցակից մի հերոս:

Իշխանուհին նրան հանձնեց ստրուկ այրեր ու կանանց,
Արաբական երիվարներ, արքայական գահ ու գանձ:

Նարիմանյան Սամը մի պահ կանգնել էր լուռ, գլխահակ,
Քանզի առատ նվերները պատճառեցին մեծ զարմանք:

Արտասովոր դեպքի մասին մտածում էր շարունակ,
Որ հասկանա գաղտնի՞ք է այդ, թե՞ ինչ-որ մի նպատակ:

Չէ՞ որ բաներ կին է եկել, ոչ թե քաջն տղամարդ,
Կին, որ խիզախ զինվորի պես գլխին ուներ սաղավարտ:

Նա մտածեց. «Ինչպե՞ս վարվեմ այս կնոջ հետ գեղատես,
Շահնշահը երբ իմանա, կզայրանա վագրի պես:

Եթե մերժեմ՝ որդիս խռով պիտի գնա ժայռաբուն,
Մարդիկ նորից կբամբասեն, թե լքել եմ իմ որդուն:

Այնուհետև արժանավոր հենարան ինձ չեմ ճարի,
Վատահամբավ անուն կտան ինձ մարդիկ չար ու բարի»:

Մտածելուց հետո Սամը դարձավ նրան և ասաց.
«Թե՛ փղերը, թե՛ գանձերը և թե՛ չքնաղ այս կանանց

Տարեք, հանձնեք Դստան-Զալի գանձատանը: Իմ կողմից
Ասեք նրան, որ բոլորը ուղարկել են Քաբուլից»:

Պայծառացավ իշխանուհու դեմքը վարդի պես գերող
Ու մտածեց, որ քաջ Սամը իրոք մերժել չի կարող:

Այս հանդիպման արժանիքը հարգանքից նա հասկացավ,
Չեկուզ ուրախ պահից առաջ ուներ ծանր հոգս ու ցավ:

ՍԱՄԻ ԵՎ ՍԻՆԴՈՒԽՏԻ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Իշխանուհին իր հետ բերեց գեղեցկուհի երեք կույս,
Նռենու նման վերսլացիկ, մետաքսի պես նրբահյուս:

Ամեն մեկը ձեռքին ուներ ոսկեճաճանչ մի գավաթ,
Գավաթներում կար մարգարիտ, հակինթ քարեր ու արծաթ:

Խոնարհվելով նրանք գետին թափեցին գանձ ու դիրհեմ,
Ամեն մեկի կուրծքը կարծես լիներ չքնաղ մի եդեմ...

Իշխանուհին դարձավ Սամին, ասաց. «Ո՛վ դու մեծափառք,
Աստված, իրոք, շնորհել է քեզ բանական միտք ու կամք:

Քո շնորհիվ ուսում առան քաջ այրերը Իրանի,
Նրանց մտքի փայլից պիտի աշխարհը մեզ արևի...

Գլխատեցիր դու վիշապին, որ աշխարհը խաղաղվի,
Հզոր մարդկանց ցույց տվեցիր ճշմարտության լույս ուղի:

Հանցավոր ես թե որոնում, Մեհրաբ շահն է մեղապարտ,
Ուստի պիտի նրա հանդեպ լարես քենի մի թակարդ:

Ի՞նչ մեղք ունի քեզ հարկատու ժողովուրդը Քաբուլի,
Ինչու՞ համար և ի՞նչ մեղքով ոչնչանա անտեղի:

Մեր երկիրը քե՛զ է գովում, փառաբանում, ո՛վ իշխան,
Քո ծառան ենք, ուժիդ հանդեպ՝ խեղճ ենք, ինչպես երեխան:

Գութ ունեցիր ու սարսափիր արարողից աստղերի,
Եվ իմացիր՝ Աստված երբեք վատ արարքներ չի ների:

Չի կործանի մեր Քաբուլը, Աստված մեծ է ու զորեղ,
Չի կոտորի անօգնական էակներին իր անմեղ»:

Սամը նրան պատասխանեց.»Ո՛վ պերճախոս թագուհի,
Եղելության մասին խոսիր, գաղտնիքներդ մի՛ պահիր:

Դու Մեհրաբի կինն ես, գիտեմ, ուստի խոսիր այն մասին,
Թե ինչպես են քո աղջիկը և Դեստանը միասին,

Գաղտագողի կամ թե այլ կերպ սիրաբանել իրար հետ,
Քանզի գիտեմ ոչ թռչուն են, ոչ աղեղից թռած նետ:

Կամ ինչպե՞ս է նա գրավել Զալի սիրտը այդպես հեշտ,
Խոստովանի՛ր, քո աղջիկը գեղեցի՞կ է ու պարկեշտ:

Խոսիր նրա ունակության, խելքի, բարքի մասին դու,
Որ կասկածը սև ամպի պես չշղարշե իմ հոգուն»:

Իշխանուհին ի պատասխան նրան ասաց. «Ո՛վ պատվար,
Դու քաջերի կարողամիտ, մեծահամբավ զորավար:

Երդվել է պետք: Դու նախքան այդ՝ մի խոստում տուր այնպիսի,
Որ ցնծության աղմուկ հանի, երբ Քաբուլը այն լսի:

Երդվիր՝ ինձ հետ չես վարվի բիրտ, խստաբարո ու դաժան,
Եվ այն մարդկանց, որոնց դու միշտն անվանում ես անարժան:

Ես Քաբուլում ունեմ դղյակ ու բազմահարկ գանձատուն.
Ունեմ խիզախ ցեղակիցներ, մեծատոհմիկ, իմաստուն:

Քո հարցերին, անտարակույս, կտամ շիտակ պատասխան,
Ինձանից գոհ կլինես դու, ո՛վ Զաբուլի մեծ իշխան:

Ամբողջապես կդատարկեմ գանձատունը Քաբուլի
Ու կլցնեմ ամբարները Սամի, Զալի, Զաբուլի»:

Եվ հաշտության համար Սամը ձեռք երկարեց թագուհուն,
Որ թանկագին հյուրին ցույց տա իր երդումը հաստատուն:

Իշխանուհին այդ երդումից հրճվեց խինդով մի անբավ,
Քանզի հսկա Սամը ուներ ճշտախոսի մեծ համբավ:

Այնուհետև Սինդուխտն ելավ– երեսնիվար ընկավ ցած,
Եվ ի սրտե փահլևանին մեծարանքի խոսք ասաց.

«Իշխանական տոհմից եմ ես, բայց Զոհակից եմ ծագում,
Մեհրաբ շահի թագուհին եմ, հոգով, սրտով իմ մաքուր:

Ռուդաբեն իմ զարմուհին է, զարդարանքը Քաբուլի,
Զալը պիտի ուրախությամբ սիրտը նրան նվիրի:

Առավոտից մինչ իրիկուն քո գովքն ենք անում մենք,
Աստված վկա, ամբողջ կյանքում սուտ չեմ խոսել ես երբեք:

Շահնշահին ենք մեծարում, փառաբանում քեզ նույնպես,
Ես եկել եմ, որ մեր բախտը ապավինեմ միայն քեզ:

Թեկուզ դու մեզ չես համարում բարեկամ, բայց գիտեմ, որ
Ինչ էլ լինի, ինչ էլ անենք՝ պիտի կոչեն հանցավոր:

Արժանի չենք արքայական թագ ու գահի ոսկեզարդ,
Քո ծառան եմ, կամ կախկախիր կամ արձակիր ինձ ազատ:

Աղաչում եմ՝ իմ Քաբուլի ժողովրդին ձեռք մի տուր,
Մի դարձրու մեզ բոլորիս օր-ցերեկով աչքը կույր»:

Սամը ուշիմ ականջ արեց իշխանուհուն պերճախոս,
Կին, որ ուներ շիտակ հոգի և խոպոպներ, հանց ամբրոս:

Նարգիսի պես դեմք ուներ նուրբ, հասակը վեհ մի բարդի,
Միրամարգի պես չքնաղ էր, մեջքին ուներ պերճ գոտի:

Սամը հայտնեց. «Սուրբ երդումս բոլորովին չեմ խախտի
Եվ Քաբուլը չեմ թողնի ես առանց թագի ու թախտի:

Խաղաղություն եմ ցանկանում քեզ և բոլոր քո մարդկանց,
Թող այսուհետ ամեն մեկը ապրի կյանքի լավ ժամանց:

Իմ երդումը հաստատապես կպահեմ ես սրբությամբ,
Համաձայն եմ քո աղջկա և իմ Զալի կնության:

Մենք ծագումով ու հավատով տարբեր մարդ ենք, տարբեր ազգ,
Խաղաղ ապրեք ձեր աշխարհում, ես չեմ մղի պատերազմ:

Ամուսնության այս գործի մեջ ես չեմ տեսնում ամոթ բան,
Զի աշխարհում հաստատուն կարգ և անսխալ մարդ չկա:

Մենք բոլորս հող ենք եղել, հող կդառնանք այսուհետ,
Ուստի պետք է ապրել ուրախ, վատ չվարվել մարդկանց հետ:

Քո տանջանքը չեմ դարձնի կրկնապատիկ, սրտակեր,
Քաբուլի դեմ այսուհետև չեմ ունենա ոխ ու քեն:

Շահնշահին ուղարկել եմ մի արծվաթև սուրհանդակ,
Թռչեց, ինչպես ազատ հավքը թողած կապանք ու վանդակ:

Գիշեր-ցերեկ գնում է նա, որքան ճամփան կտանի,
Գետնի վրա ոտք չի դնում ոսկեպայտ ձին գումկանի:

Շահը զիջող ու բարի է, լավ կվարվի Զալի հետ,
Նա գիտի, որ որդուս սիրտը վիրավոր է, դառնաղետ:

Ուժեղ սերը Դաստան-Զալին պատճառել է վիշտ ու ցավ,
Վիշապացեղ քո աղջկա փառքը սիրով մեծացավ:

Գուցե նրա արտաքինը հավանում եմ ի սրտե,
Երբ ծերուկիս ականջի մեջ հնչի ձայնը քո դստեր»:

«Եթե քաջն զորավարդ բարեհաճի գալ Քաբուլ,
Քո մեծության մասին գովքեր կտարածեն դռնեդուռ:

Կբարձրանա պատիվը մեր՝ մինչև աստղեր լուսառաք,
Ուրախության տոն կլինի և փառահեղ խրախճանք:

Այսուհետև Զաբուլի դեմ էլ չենք մղի կռիվներ,
Մանուչեհր շահին կտանք նվիրատու սիրտը մեր»:

Իշխանուհու պատասխանից ժպտաց Սամը ռազմազեն,
Նոր Սինդուխտը հասկացավ, որ նրա սրտում չկա քեն:

Սամը նրան հայտարարեց. «Արդ՝ հրճվի թող թագուհին,
Կատարված է բաղձանքը քո և Մեհրաբի ցավը հին»:

Եվ Սինդուխտը օրհնեց նրան, ձեռք կարկառեց դեպ երկինք,
Մեծ հրճվանքից դեմքը դարձավ հրակարմիր մի հակինթ:

ՍԻՆԴՈՒԽՏԸ ՆՎԵՐՆԵՐՈՎ ԳԱԼԻՍ Է ՔԱԲՈՒԼ

Իշխանուհին դեպի Քաբուլ ուղարկեց մի սուրհանդակ,
Որ Մեհրաբին Սամից տանի ուրախության մի նամակ:

Գրեց. «Արի, դիմավորիր, ո՛վ Քաբուլի տիրակալ,
Նվերներով կգամ քեզ մոտ, հանց գիշերվա լուսընկա,

Արթնացրու ողջ Քաբուլը, լուր տարածիր ամենուր,
Մեզ համար էլ փայլեց բախտի արեգակը ոսկեհուր»:

Գեղեցկուհու դեմքին իջավ ուրախության լույսի փայլ,
Երբ որ Սամի դղյակին էր մոտենում նա քայլ առ քայլ:

Ապարանքում նորից լսվեց ողջույնների աղաղակ,
Մեծարեցին Քաբուլի պերճ գեղեցկուհուն ոսկեթագ:

Հսկա Սամին գլուխ տվեց հեզությամբ իր կանացի
Ու նրա հետ նստեց երկար, խորախորհուրդ զրույցի:

Իշխանուհին Սամից խնդրեց թույլտվություն՝ մեկնելու,
Չէ՛ որ Սամը մեծ իշխան է, իսկ նա հյուր, հարկատու:

Ցանկանում էր նա օր առաջ գնալ Մեհրաբ շահի մոտ,
Որ գեղեցիկ իր զարմուհուց առներ և՛ սեր, և՛ կարոտ,

Որ ցնծությամբ դիմավորի Մեհրաբ շահը ամրակամ,
Քանզի բոլոր խոստումները կատարել է ճշտությամբ:

«Եվ սակայն,-ասաց Սամը,-գեղեցկուհի Քաբուլի,
Մեհրաբ շահին Սամի կողմից ջերմ ողջույններ սիրալիր»:

Ապա Սամի հրամանով ընտրեցին մի քարավան,
Որ Դեստանի համար տանի ճոխ նվերներ զանազան...

Ինչպես նաև Մեհրաբ շահին ու Սինդուխտին արժանի,
Եվ Քաբուլի գեղեցկուհի՝ Ռուդաբեին անվանի...

Այգիներից Սամը բերեց նաև մրգեր քաղցրահամ,
Եվ պահեստից բազմատեսակ մետաքսեղեն չինական:

Այդ բոլորը ընծայեց նա Քաբուլի պերճ թագուհուն,
Ամուր սեղմեց ձեռքը նրա, բարեմաղթեց դեպի տուն:

Հսկա Սամը երդվեց հանուն երկու երկրի դաշինքի,
Որ խոստումը իր չի դրժի ու Դեստանին չի լքի:

Ասաց. «Ուրախ սրտով մեկնիր իմ Քաբուլի բարեկամ,
Մեծ դաշինքով Աստված կապեց ձեռքերը մեր ամրագամ»:

Եվ Ռուդաբեն իսկույն նստեց երկսապատյա շեկ ուղտին,
Երջանկության ճանապարհը կարճ է թվում ճամփորդին:

ԶԱԼԸ ՄԱՆՈՒՉԵՀՐ ՇԱՀԻ ՄՈՏ

Ես կպատմեմ Դեստան-Զալի մասին մի հին պատմություն,–
Ինչպես եղավ, որ նա շահի մոտ սլացավ հանց թռչուն:

Սուրհանդակը լուրը տարավ շահնշահին փառապանծ,
Թե գալիս է Սամի որդին՝ հեծած ձին իր ոսկեսանձ:

Արքունիքի մարդիկ իսկույն հավաքվեցին խորհրդի,
Թե ով պիտի դիմավորի Դեստան-Զալին քաջորդի:

Մանուչեհր շահը իսկույն ճանապարհեց մի քանիեր,
Որ Դեստանին առաջնորդի մինչև պալատն իր շքեղ:

Դեստան-Զալը ձիուց իջավ, ծնկի եկավ նա մի պահ,
Պերճախոսեց ու մեծարեց իրանշահին ոսկեգահ:

Երեսնիվար՝ գետնի վրա պառկեց Զալը քիչ երկար,
Իրանշահը շոյեց նրան, քանզի սրտում քեն չկար:

Շահը ասաց. «Մաքրիր փոշիդ, մի չարչարվիր դու իզուր,
Ձերմակ վարսդ մուշկով օծիր, դեմքիդ ցանիր վարդաջուր»:

Երիտասարդ Զալի վրա ցանեցին մուշկ ու բուրկեն,
Այնուհետև նա հարգանքով կանգնեց շահի դեմ առ դեմ:

«Սամի որդին,– ասաց շահը,– կրել է մեծ չարչարանք,
Տեսել է նա փոշու միջով, որ ցույց տա ինձ մեծ հարգանք»:

Ի պատասխան Զալը դիմեց. «Փառքդ մեծ է, ո՛վ հզոր,
Շատ կյանք եմ ապրել թեկուզ, բայց չեմ տխրել ոչ մի օր»:

Երբ շահը Զալից առավ Սամի նամակն ու կարդաց,
Դեմքը դարձավ գարնանային, ուրախ պարտեզ մի ծաղկանց:

«Երիտասարդ Զալը կյանքում կրել է վիշտ ու տանջանք,
Բայց հիմա էլ բախտի ձեռքում քաշում է մեծ չարչարանք:

Մեր տաքարյուն փահլևանը ուղարկել է մի նամակ,
Նա իր որդի Զալի համար վիշտ է ապրում շարունակ:

Տաջնապահար եղա, սակայն վատ արարքներ չեմ փորձի,
Կասկածներս դեն կնետեմ, էլ չեմ թամբի քենի ձի:

Հյուրընկալիր այժմ ինձ մոտ, թեկուզ օրեր մի քանի,
Ես քո մասին կմտածեմ, դա կհասնես մի բանի»:

Մանուչեհր շահը Զալի պատվին տվեց մեծ խնջույք,
Նա անվանի քաջերի հետ վայելեց սեր ու հաճույք:

Ճոխ ուտեստ կար ու թունդ գինի սեղաններին ոսկեպերճ,
Փառավայել հերոսները կոնծում էին անընդմեջ:

Արքայական ճոխ խնջույքը երբ վերջացավ, նորից-նոր
Նրանք ուրիշ ապարանքում ուրախացան... Ու երբ որ

Դատարկեցին կարասները, Դաստան-Զալը փառապանծ
Տեղից ելավ, գնաց թամբեց մի երիվար ոսկեանձ –

Արագաձեպ գնաց դեպի իր վրանը դիմացի,
Նա մտածեց շահի մասին և քաջերի՝ արիաձին:

ՄՈԲԵԴՆԵՐԸ ԳՈՒՇԱԿՈՒՄ ԵՆ ԶԱԼԻ ԱՊԱԳԱՆ

Առավոտյան Զալը եկավ, մեջքին կապեց պինդ գոտի,
Գեղեցկությամբ նման էր նա հզոր Սամին քաջորդի:

Շահնշահը շոյող խոսքեր ասաց նրան ի սրտե,
Քանզի ուներ նոճու հասակ և բազուկներ երկաթե:

Այնուհետև հրամայեց՝ մոբեթները պալատ գան,
Որ գուշակեն աստղացույցով իր բախտը և ապագան:

Ամեն մի մոգ ընտրեց հարմար իր հեշտացույց լուսատուն,
Մեկը լուսին, մեկը արև, երրորդը՝ մի աստղաբույլ:

Այսպես, երեք օր ու գիշեր աստղագուշակ ամեն մոգ,
Ցանկանում էր ինքը գտնել Զալի բախտը նախօրոք:

Ամեն մոբեթ ուներ հինդու աստղատախտակ իր ձեռքին,
Այն օգնում էր հասկանալու գաղտնիքները երկնքի:

Գուշակումից հետո եկան Մանուչեհր շահի մոտ,
Թե. «Դժվար է միշտ վեր նայել մայրամուտից առավոտ:

Երկնապտույտ ճախարակից ցանկությունը այս է, որ
Երևույթի հեղեղը դեպ մեզ է գալիս օրեցօր...

Դաստան-Զալը անշուշտ կառնի Մեհրաբ շահի աղջկան,
Եվ երկուսի միացումից կծնվի նոր փահլևան...

Երկար կապրի նա աշխարհում, որպես մի այր մեծագործ,
Մեզ կբերի շատ բարիքներ՝ կռիվներով բազմափորձ:

Սրախողխող կանի բոլոր ոսոխներին չարախինդ,
Ընձառյուծի գլխին կիջնի ձեռքը նրա ամրապինդ:

Նրա գլխի վրա՝ օդում արծիվն անգամ չի թռչի,
Ահեղ ձայնից ընձառյուծը որսատեղից կփախչի:

Հանգստության պահին երբ որ զգա քաղցի մեծ պահանջ՝
Տափաստանում վայրի էշեր կթրատի օր առաջ:

Մանուչեհր շահի համար կդառնա մեծ զորապետ,
Իսկ բանակի համար՝ հենակ ու փահլևան խորագետ»:

Շահը երբ որ լսեց նրանց հայտնությունը հոգեցունց,
Ասաց. «Գաղտնի պահեք նույնիսկ ամենատես Աստղծուց»:

ՄՈԲԵԴՆԵՐԸ ՀԱՐՑԱՔՆՆՈՒՄ ԵՆ ԶԱԼԻՆ

Մանուչեհր շահը Զալին իր մոտ կանչեց զրույցի,
Ասաց, որ նա հավաքույթում գա մոգերի հետ մրցի:

Շահի շուրջը հավաքվեցին բազում մոգեր աստղագետ,
Զալը բազմեց պատվո տեղում, որ զրուցի նրանց հետ:

Պատրաստ էր նա ամեն մեկի հարցերին տալ պատասխան,
Լուծել խրթին հանելուկներ, առանց մոգի օգնության:

Քննության այս ձևը բնավ դյուրին բան մի կարծեք դուք,
Քանզի ամեն մի մոգ գիտեր մի դժվարին հանելուկ:

Մոբեդներից առաջինը խորամանկ էր, բանիմաց,
Նայեց Զալին և այսպիսի մի դժվարին հարց ասաց.

«Միշտ տեսնում եմ տասն երկու վերսլացիկ, կանաչ ծառ,
Ամեն ծառի վրա երսուն դալար ճյուղ կա անպատճառ:

Պահլավական թվարկումով եթե հաշվես՝ ճիշտ է միշտ,
Նրանց թիվը չի փոփոխվել ու չի փոխվի մեկընդմիշտ»:

Իսկ երկրորդը առաջարկեց. «Ո՛վ անվանի պահլավցի,
Միշտ առաջ են համընթանում արագաձեպ երկու ձի.

Մեկը ձյութի սև գույն ունի, ագռավից էլ սևաթույր,
Իսկ երկրորդը լուսավոր է, երկնքի պես աստղաբույլ:

Սլանում են առանց դադար, հանց աղեղից թռած նետ,
Բայց երկուստեք երբևիցե չեն հանդիպում իրար հետ»:

Իսկ երրորդը թե. «Շահի մոտ կա երեսուն ձիավոր,
Նրանք հավերժ սլանում են ամեն տարի, ամեն օր.

Բայց նրանցից մեկը հաճախ չքանում է հավքի պես,
Սակայն շահը երբ հաշվում է՝ երեսուն է մշտապես»:

Չորրորդը թե. «Աշխարհում կա մի գեղեցիկ, կանաչ մարգ,
Նրա շուրջը ծաղիկներ կան և աղբյուրներ սառնորակ:

Ամեն անգամ մի արարած ձեռքը առած մի մանգաղ,
Գալիս քաղում է խոտերը, որպես վերջին ծաղկաքաղ»:

Հինգերորդը թե. «Գետի մոտ կա եղեգե երկու ծառ,
Նրա վրա բույն են հյուսել երկու թռչուն մշտաթառ.

Մեկը բույն է գալիս, երբ որ մոտենում է երեկոն,
Երկրորդ հավքը ծառից թռչում հեռանում է ցերեկով:

Առաջինը երբ թռչում է՝ չորանում է ծառը ողջ,
Իսկ երկրորդը թառ նստելիս՝ ծառը տալիս է բողբոջ»:

Վեցերորդը Զալին ասաց. «Լեռների մեջ ահարկու
Կա մարդաhոծ մի մեծ քաղաք, այգիներով բերքատու:

Այդ քաղաքից մարդիկ ելան ու գնացին անապատ,
Որտեղ հողը անպտուղ էր, միայն տատասկ կար առատ:

Անապատում կառուցեցին քաղաք, այգի, բերդ ու գյուղ,
Տեր ու ծառա ապրում էին միշտ խաղաղ, միշտ աներկյուղ:

Բայց քաղաքի խոր հատակում հանկարծ բացվեց խորխորատ,
Խորտակվեցին հոյակառույց ամրոցները քարապատ:

Մարդիկ հետո ափսոսացին քաղաքը հին, հայրենի,
Բայց ի՞նչ օգուտ, երբ անցածը հետագայում գին ունի...

Ամեն մեկս առաջարկեց մի դժվարին հանելուկ,
Չեք կարծում, որ այդքան դժվար հանելուկներ լուծեք դուք:

Ամեն մեկիս հանելուկին եթե տաք ճիշտ պատասխան,
Գետնից, անշուշտ, մուշկ կբուրի, ո՛վ Զաբուլի քաջ իշխան»:

ԶԱԼԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ ԱՍՏՂԱԳԵՏՆԵՐԻՆ

Դեստան-Զալը խորասուզվեց մտքերի մեջ ծանրախոհ,
Ապա գիտուն մոբեթներին պատասխանեց ինքնագոհ.

«Կասեմ ինչ է նշանակում տասն երկու կանաչ ծառ,
Որոնց վրա կան երեսուն դալար ճյուղեր ծաղկավառ...

Տասն երկու ամիս ունի ամեն տարի մշտապես,
Ամեն ամիս մի շահի պես անցողիկ է քամու պես:

Ամեն ամիս ունի ուղիղ երեսուն օր ու գիշեր,
Ժամանակը իր ընթացքից դեռ ոչ մի բան չի շեղել:

Կասեմ նույնպես նժույգների մասին սև ու սպիտակ,
Որ հետամուտ սլանում են Աստծո հզոր աչքի տակ:–

Ճերմակաձին լույս է բերում, արևաշերմ հրապույր,
Գիշերաբեր սև նժույգը փռում է սև վարագույր:

Ժամանակը պահպանում է անցումի խիստ կարգ, օրենք,
Հավերժական պտույտներում և՛ գիշեր կա, և՛ ցերեկ:

Հաջորդական վազքը նրանց նմանվում է որսի շան,
Չեն հանդիպում նրանք իրար, թեկուզ ունեն ճիշտ նշան:

Իսկ երեսուն ձիավորից, որ կորչում է մեկը միշտ,
Շահնշահին չի պատճառում կորստաբեր ցավ ու վիշտ:

Լիալուսնի փոփոխումով կիսալուսինն է գալիս,
Նրանց թիվը հավասար չէ, բայց հաշվում ենք նոր ամիս:

Հավերժական այդ պտույտը անփոփոխ է միշտ մնում,
Որովհետև ամեն պտույտ Տիրոջ կամքով է լինում:

Երկու ծառի, երկու թռչնի մասին ասեմ, լսեք դուք,
Վես լուսատուն չէ լույս տալիս, այլ լուսացայտ աստղը Զուկ:

Երկու ծառը ուղիղ երկու մաս բաժինն է երկնքի
Մեկը բախտն է, իսկ երկրորդը՝ հենակետը տանջանքի:

Իսկ թռչունը արեգակն է, ձմեռ լինի, թե ամառ,
Սեր ու կյանք է բերում, սակայն, տաք գարունը ծաղկավառ:

Այն քաղաքը, որ ասացիք՝ լեռների մեջ բարձրադիր,
Երկրային մի չքնաղ տեղ է, գետեր ունի և այգի:

Անապատը աշխարհին է այս– մի հինավուրց ավերակ,
Որտեղ տխուր, ուրախ կյանքը հաջորդում են շարունակ:

Կյանքի ամեն ժամն ու րոպեն որոշված է ի վերուստ,
Ինչ որ մարդուն պարգևում է, բերում է և մեծ կորուստ:

Երկրաշարժի պահին՝ վերից փայլում է շանթ ու կայծակ,
Այս ավերակ հողաշխարհում տարածելով աղաղակ...

Անապատումն է կորչում մեր աշխատանքը քրտնաթոր,
Ուստի մարդիկ փախչում են միշտ ու որոնում սար ու ձոր:

Ով գողանա աշխատանքի բերք-պտուղը մեր համայն,
Նա էլ պետք է մահու ուժով թողնի աշխարհն այս ունայն:

Ի՞նչ կարող է մարդ էակը թողնել կյանքում մնայուն,
Մշտահավերժ օրենքները անփոփոխ են ու կայուն:

Ամեն մի մարդ մահից հետո պետք է թողնի լավ անուն,
Անմահության ճանապարհին մեծ գործերն են միշտ մնում:

Ինչքան էլ մենք քեն ու ոխով լինենք իրար թշնամի,
Վերջը մեկ է – մահը հանգիստ պիտի գա և մեզ տանի:

Մի՛ ձգտիր պերճ դղյակների, մի՛ եղիր դու մարդ ագահ,
Քանզի մահից հետո պիտի կրես պատան ու դագաղ:

Անհաղթ մարդը երբ մանգաղը ձեռքին մտնում է պարտեզ,
Փուշ ու ծաղիկ չի ջոկզըկում, այլ հնձում է խոտի պես:

Մենք բոլորս խոտաբույս ենք, ժամանակը՝ մեծ հնձվոր,
Խոտ ու ծաղիկ իրար խառնած՝ մանգաղում է ամեն օր:

Նույն ձևով է մահը գալիս կյանքից տանում ծեր, ջահել,
Ամեն մի նոր ծնված էակ պիտի դառնա որդի կեր:

Երբ որ մեկը տուն է մտնում, մեկը պիտի հեռանա,
Ժամանակի դաժան ձեռքում անմահ էակ չի մնա»:

ԶԱԼԻ ՀԱՂԹԱՆԱԿՆԵՐԸ ՄԱՆՈՒՉԵՀՐ ՇԱՀԻ ՄՈՏ

Դաստան-Զալը շահնշահին խոսքեր ասաց իմաստուն,
Ուրախության պատճառելով քաջ այրերին մեծանուն:

Մանուչեհր շահը նրան գովեց, արեց մեծ մաղթանք,
Ապա Զալի պատվի համար առաջարկեց խրախճանք:

Արքայական ապարանքը շողշողում էր լուսնի պես,
Կարծես պատվի խրախճանք չէր, այլ տոնական մեծ հանդես:

Առավոտից մինչ իրիկուն մատուցվում էր թունդ գինի,
Արբեցումից անտարակույս մարդուն վնաս չի լինի:

Խրախճանքի լույսը հանգավ, մարդիկ ելան մութ փողոց,
Գոմից լսվեց արաբական նժույգների վրնջոց:

Հարբած մարդիկ տուն գնացին արած իրար թևանցուկ,
Մերթ կանգնելով, մերթ քայլելով, մտամոլոր, կամացուկ:

Լուսաբացին արեգակը երկրին մաղթեց բարի լույս,
Զալը ելավ ծանր քնից, կապեց գոտին ոսկեհյուս,

Գնաց շահի առջև կանգնեց, հանց ամեհի մի առյուծ,
Նրան հայտնեց, որ քաջ Սամին կարոտել է շատ վաղուց:

Ուստի խնդրեց հրանշահից թույլտվություն՝ մեկնելու,
Որովհետև նա Սամի հետ գործեր ուներ անելու...

Ասաց. «Ո՛վ դու աշխարհակալ Մանուչեհր թագավոր,
Քեզ հետ մեկտեղ անցկացրի խնջույքի մի ամբողջ օր:

Զրուցեցի, զվարճացա, համբուրեցի գահդ մեծ,
Որի շուքը միշտ կմնա նվիրական հոգուս մեջ»:

Շահը նրան պատասխանեց. «Մեկ օր էլ կաց, ո՛վ Դեստան,
Քեզ չի քաշում ո՛չ Զաբուլը, ո՛չ հոգսերը քո հոր տան...

Համոզված եմ, որ դու այստեղ երկար մնալ չես կարող,
Քո սիրեցյալ աղջկա համար պիտի գնաս օտար հող»:

Շահնշահի հրամանով հնչեց փողը մարտական,
Աղաղակեց և՛ ամբոխը, և՛ թմբուկը հնդկական:

Ձիախաղի համար եկան բազում այրեր անվանի,
Ամեն մեկը ուներ ճապուկ մի երիվար, մի քամի:

Ամեն մի քաջ նշան բռնեց մրցախաղի մի կետի,
Ամեն մեկը պատրաստ էր, որ իրեն կռվի մեջ նետի:

Ամեն մեկը ձգտում էր, որ կռվում հաղթող երևա,
Ցույց տա շահին, որ ուժ ունի ու ճեպընթաց երիվար:

Շահը բազմեց գահաթոռին, փառաբանեց քաջ մարդկանց,
Բայց չէր տեսնում այդ խաղի մեջ այնպիսի ուժ գերազանց,

Որ գա, մրցի Դեստանի հետ... Կամ ձի քշի նրա պես,
Ցեկուզ խաղի այդ տեսակը շատ վաղուց է հայտնի մեզ:

Այնուհետև Զալը առավ մի ամեհի պրկաղեղ,
Այնպես թռչեց, կարծես նժույգ չէր թամբել նա, այլ հեղեղ:

«Դեստա՛ն»,– կանչեց և արձակեց պրկաղեղից մի մեծ նետ,
Կփսեց ծառը, կարծես վերից շանթ էր խփել նետի հետ:

Ամեն մի քաջ ձեռքն առավ մի սուր նիզակ և մի տեգ
Ու կանգնեցին Դեստանի դեմ ինչպես պատնեշ ամրակերտ:

Իսկ Դեստանը պինդ խթանեց երիվարը ճեպընթաց,
Ձիու թամբից նիզակավոր փահլևանին գցեց ցած:

Անապատում աճած ծառի գլխին տեղում է կարկուտ,
Բայց նա միշտ էլ բերքատու է, հաստաբեստ ու դիմացկուն:

Զալը խաղի իր արվեստով զարմացրեց ամբոխին,
Մանուչեհր շահը նույնպես մաղթանք արեց հաղթողին:

Անմիջապես Զալը ծակեց երեք վահան երկաթե,
Որից հետո շահնշահը այր քաջերին ասաց, թե.

«Դեստանի դեմ ո՛վ կարող է այժմ վարել մենամարտ,
Ձեզնից ոչ ոք չունի նրա նման վերտ ու սաղավարտ:

Ով խիզախ է, հնարամիտ, թող հանդես գա ասպարեզ,
Զվարճության այս լավ պահին ջերմ մաղթանքներ կանեմ ձեզ»:

Ամոթանքից խաղն այդ նրանք համարեցին լուրջ կատակ,
Նրանք, որոնք մենամարտում հաղթում էին շարունակ:

Նրանք, որոնց նժույգները սլանում են շանթի պես,
Նրանք, որոնք մարտ մղելը համարում են փուչ արհեստ:

Ամեն մեկը առաջ եկավ, որպես անհաղթ փախլևան,
Որ շահի մոտ ձիախաղով մենամարտով երևա:

Դեստան-Զալը ձիուց իջավ, եկավ ուղիղ ասպարեզ,
Ու հարձակվեց ամենաքաջ մարդու վրա, վագրի պես:

Իսկ քաջայրը ցատկեց մի կողմ, քաշեց սանձը նժույգի,
Խուսափեց նա մենամարտից և արձակեց պինդ գոտին:

Բայց Դեստանը ճանկեց նրան, առյուծի պես մռնչաց,
Թամբից պոկեց, այնպես զարկեց, որ գետինը դղրդաց:

Ժողովուրդը ամենուրեք տարածեց մեծ աղաղակ,
Քանզի Զալի քաջությունը պատճառել էր մեծ զարմանք:

Դեստան-Զալի հաղթանակը համարեցին գերազանց,
Չկար նրա նման քաջայր իր ծագումով փառապանծ:

Շահը խոսեց. «Դու վարեցիր հրաշալի մենամարտ,
Քանզի գլխիդ ունես ամուր և ոսկեկուռ սաղավարտ:

Ով որ քեզ հետ մենամարտի՝ նա չի տեսնի լավ օրեր,
Որդեկորույս մայրը պիտի հագնի սգո սև շորեր:

Առյուծն անգամ դեռ չի ծնել այս աշխարհում քեզ պես ձագ,
Վիշապից էլ հսկա ես դու, ո՛վ Իրանի մեծ պարծանք:

Նարիմանյան Սամը տվեց երջանկության ու մեծ բախտ,
Պատերազմի ամուր նեցուկ ու հաստատուն թագ ու թախտ»:

Հաղթանակից հետո շահը նրան տարավ խնջույքի,
Արքայական խրախճանքը չէր արգելում ոչ ոքի:

Առատաձեռն շահնշահը բացեց դուռը գանձատան,
Բաղաշխանի քարեր կային և ակնեղեն հնդկական:

Դեստան-Զալին նվիրեց նա գահաթոռ ու մատանի,
Ապարանջան, ոսկեգոտի, որ քաջ Սամի մոտ տանի:

Տվեց նաև սկուտեղներ, ոսկի, արծաթ ու գոհար,
Ե՛վ նժույգներ, և՛ ստրուկներ, որպես կողի մեծ ավար:

Երախտապարտ Զալը չոքեց շահնշահի գահի մոտ
Ե՛վ համբուրեց ոտքի փոշին, և՛ աթոռը ոսկեոտ:

ՄԱՆՈՒՉԵՀՐ ՇԱՀԻ ՆԱՄԱԿԸ ՍԱՄԻՆ

Շահը Սամի մոտ ուղարկեց արագաճեպ մի բանբեր,
Եվ նամակում նրան հղեց ջերմ ողջույններ ու գովքեր:

«Ո՛վ անվանի, փղամարմին դու փահլևան ու քաջ այր,
Հողաշխարհում չկա քեզ պես, քեզնից խելոք զորավար,

Դու գեղեցիկ հասակ ունես և բանական միտք ու խելք,
Քո ոտքի տակ չի դիմանում ոչ ամրություն, ոչ արգելք:

Զալը հզոր ուժի տեր է՝ երիտասարդ, քաջանուն,
Վագրի նման աննահանջ է, կիաղթի նա թշնամուն:

Նա հերոս է, ունի վահան, սաղավարտ ու երիվար,
Նրա փառքը ողջ աշխարհում կմեծարվի դարեդար:

Զալը եկավ և հայտնեց ինձ անկարելի մի բաղձանք,
Բայց նա գտավ հույսի հենակ, ո՛վ Իրանի մեծ պարծանք:

Ուրախությամբ ունկն դրի նրա ամեն մի խոսքին,
Առատաձեռն ընծայեցի բազում գոհար ու ոսկի:

Ես նրա հետ անցկացրի ճոխ հանդեսներ, խրախճանք,
Այդպես մարդը կյանքում երբեք չի տեսնի ցավ ու տանջանք:

Ուրախ սրտով Զալին նորից ուղարկում եմ, ո՛վ առյուծ,
Աստված նրան թող պահպանի քինախնդիր թշնամուց»:

Զալը շահին մեծարելով, եկավ չոքեց նրա մոտ,
Այնտեղ կային բազում քաջեր, Զալին, Սամին սրտամոտ:

Ամիջապես Զալը Սամի մոտ ուղարկեց սուրհանդակ,
Թե. «Բերում եմ շահի մոտից քեզ նվերներ անքանակ:

Հագուստեղեն ու ոսկեղեն, ու կերպասներ նորանոր,
Մանուչեհր շահնշահը ինձ դարձրեց բախտավոր»:

ՄԵՀՐԱԲԸ ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ Է ՏՈՆԻ

Ուրախ լուրը նույնպես հասավ հսկա Սամին քաջարի,
Ջահելացավ, թեկուզ ապրեց հարյուր քսան ծիգ տարի:

Անմիջապես դեպի Քաբուլ ուղարկեց նա մի բանբեր,
Որ Մեհրաբին ուրախության ու բախտավոր լուր տաներ:

Գրեց. «Շահը Դեստան-Զալին մեծարել է բոլորից
Ու պարգևել երջանկություն թե՛ Մեհրաբին, և թե՛ ինձ»:

Մեծ Քաբուլի տիրակալը ուրախացավ անսահման
Ու հնազանդ ծառաներին տվեց կտրուկ հրաման,

Որ հավաքեն բանասացներ, երաժիշտներ անվանի,
Որ դղյակում արքայաճոխ կերուխումի տոն անի:

Մեհրաբ շահը անմիջապես լուր ուղարկեց Սինդուխտին,
Ջերմ ողջույններ հղեց նրան և նամակը Դեստանի:

«Ո՛վ իմաստուն իմ թագուհի,– այսպես հայտնեց Սինդուխտին,–
Քո պատճառով արժանացա շահի թագին ու թախտին:

Ցրի՛ր խպառ քո լուսավոր մտքի ամպը սևասուգ,
Զի մեզ մոտ է գալիս Սամը նվերներով պերճաշուք:

Այս անգամ դու հասար նույնիսկ մտքի փայլուն հանճարի,
Քանզի դժվար գործքը տարար մինչև բարի վախճանի:

Այնպես վարվիր, ինչպես ազատ քո կամքըն է ցանկանում,
Գանձատունս, թագս ու գահս, ողջը քեզ են պատկանում»:

Եվ իր հերթին իշխանուհին լուր ուղարկեց աղջկան.
«Շուտով Զալը քեզ մոտ կգա, իմ Քաբուլի լուսընկա...

Եթե մաքուր աղջիկ եղար՝ պետք է ասեմ քեզ ի դեպ–
Բամբասանքը չի կեղտոտի քո պատիվը ոչ մի կերպ:

Ով որ կյանքում ձգտում ունի՝ չի թողնի նա անկատար,
Իմ աղջիկս, երջանկության ճանապարհդ լավ գտար»:

Իսկ Ռուդաբեն ուրախությամբ պատասխանեց թագուհուն.
«Քաբուլի մեծ իշխանուհի, իմ բարի մայր, մեծանուն,

Ոտքիդ հողը կդարձնեմ ես աչքերիս սև սուրմա,
Միայն թե դու վիշտ չտեսնես և զրկանքներ անխնա»:

Մայր ու աղջիկ ավարտեցին հանդիպումը կարճատև,
Ապա շահի ապարանքը զարդարեցին հանց եդեմ:

Արևի պես շողշողացին բաժակները ոսկեհուռ,
Ապարանքում տարածվել էր համպարի և վարդի բույր:

Լայն հատակին տարածեցին Բադաշխանի մեծ խալի,
Ամենուրեք ծաղիկներ կար հրամանով իշխանի:

Ռուդաբեի գլխին դրին ոսկեճաճանչ մի պսակ,
Նա եզակի գեղուհի էր աստղատարած երկնի տակ:

Արքայական շորերի մեջ փայլում էր նա լուսնի պես,
Ո՛չ խնջույք էր, ո՛չ հարսանիք, ո՛չ շքաերթ, ո՛չ հանդես:

Եվ մարտական բազում փղեր եկան անցան շարեշար,
Ամեն մեկի մեջքի վրա բյուզանդական դիպակ կար:

Եվ բացի այդ, կար նվագող և արքունի մեներգիչ,
Մեծապատիվ հյուրի համար պատրաստեցին ամեն ինչ:

Մեհրաբ շահի հրամանով նույնպես եկան հարճ կանայք
Ու բերեցին քարավանով հարսանեկան կահ ու կայք:

Պատրաստ էին ամեն հյուրի գլխին փողեր անձրևել,
Վարդափնջեր, թարմ ծաղիկներ և անքանակ ոսկեղեն:

ԶԱԼԸ ՎԵՐԱԴԱՌՆՈՒՄ Է ԶԱԲՈՒԼԻՍՏԱՆ

Օդում չվող հավքի նման, ինչպես լողող մի նավակ–
Դեստան-Զալը եկավ Զաբուլ, նվերներով անքանակ:

Ուրախության աղաղակից թնդաց Զաբուլն ամրաբերդ,
Ուր կայազոր բանակները կազմել էին մեծ շքերթ:

Զալը եկավ ու հոր առջև կանգնեց ինչպես նոճու ծառ,
Սամը գրկեց ու համբուրեց միակ որդուն իր պայծառ:

Զալը պատմեց ինչ որ լսել ու տեսել էր իր աչքով,
Հայրը անչափ ուրախացավ որդու խելքով ու վարքով:

Այնուհետև Սամը բազմեց գահաթոռին ոսկեհուռ,
Որդուն պատմեց, թե Սինդուխտը ինչպես ընկավ դռնեդուռ:

Ասաց. «Որդիս, ինձ մոտ եկավ քաբուլցի մի սուրհանդակ,
Թեկուզ այր չէր, բայց ռազմագեն հեծվոր կին էր, համարձակ:

«Սինդուխտ»,– ասաց անունը իր ու պահանջեց օգնություն,
Ես բռնություն չգործեցի, պատվով տարա նրան տուն:

Նա ընկնելով ոտքերիս տակ աղաչում էր, հեկեկում,
Այդպես նրա հետ խոսեցի առավոտից իրիկուն:

Որոշեցինք, թե ինչ ձևով կազմակերպենք հարսանիք,
Համոզվեցինք, որ երկուսով դուք կլինեք երջանիկ:

Եվ խոսեցինք այն մասին, թե ինչպես պիտի հյուր գնանք,
Ինչպես պիտի դիմավորեն մեզ Քաբուլի երկնի տակ:

Բայց հենց այսօր ինձ մոտ եկավ մի սուրհանդակ, ասաց որ՝
«Արդ մեկնելու ժամանակն է, ո՛վ փահլևան փառավոր»:

Մտածում եմ՝ Մեհրաբ շահին ի՛նչ պատասխան տամ հիմա,
Մի այնպիսի նամակ է պետք, որ կարդալով հիանա»:

Զալի դեմքը փայլատակեց, հանց ճաճանչող մարգարիտ,
Սիրտ բացելու համար գտավ նա իսկական շարժառիթ:

Ասաց. «Միտքդ անչափ խորն է, ո՛վ զորավար մեծարժան,
Քաբուլը մեզ սպասում է օրեցօր և ժամ առ ժամ»:

Նարիմանյան Սամը նայեց պարթևատեսք իր որդուն,
Հասկացավ, որ խոսքը նրա՝ մաքուր սրտից է հորդում,

Քանզի նրա մտքում միայն, առավոտից իրիկուն,
Ռուդաբեն է... այդ պատճառով չուներ հանգիստ, չուներ քուն:

ՔԱԲՈՒԼԸ ՈՂՋՈՒՆՈՒՄ Է ՀՅՈՒՐԵՐԻՆ

Հզոր Սամի հրամանով թմբուկները ազդարար
Վեր հանեցին բանակներին դեպի երթի ճանապարհ:

Արագաճեպ սուրհանդակը Քաբուլ գնաց հայտնելու,
Որ Նայրեմի որդի Սամը շուտով ձեզ հյուր է գալու:

«Նա գալիս է Դեստանի հետ իր փղերով ծանրաբեռ,
Նրանց պետք է դիմավորել ամրոցից դուրս, ո՛վ իմ տեր»:

Մեհրաբ շահը ուրախացավ և պահապան խմբի հետ
Թմբկահարի մոտ գնաց, որ ազդարարի մեծ շքերթ:

Ու հեռականչ թմբուկների ձայնից թնդաց սար ու դաշտ,
Հեծելազոր ու հետևակ գնդերն եկան վաշտ առ վաշտ:

Ժողովուրդը ուրախացավ, փառաբանեց թագ ու թախտ,
Իսկ Քաբուլը կարծես լիներ ծաղկատարած մի դրախտ:

Ամեն դղյակ իր տանիքին կախած ուներ մի դրոշ,
Մեկը կարմիր, մեկը դեղին, մեկը կանաչ, մեկը գորշ:

Աղաղակից չհասկացան՝ դատի օ՞ր է, թե՞ խնջույք,
Զորահանդե՞ս է շքերթի, թե՞ հարսանիք պերճաշուք:

Մեհրաբ շահը հեռվից տեսավ մոտենում է Սամը քաջ,
Ձիուց իջավ և վազեվազ գնաց նրան ընդառաջ:

Նարիմանյան Սամը գրկեց ու համբուրեց քաբուլցուն,
Իսկ Մեհրաբը մաղթանք արեց թե՛ Սամին, թե՛ Աստըծուն:

Այնուհետև նստեց ճապուկ իր նժույգին ոսկեբաշ,
Թամբի վրա կարծես այր չէր, այլ ապառաժ՝ ծանրաքաշ:

Մեհրաբ շահը Դեստան-Զալին ընծայեց մի ոսկե թագ,
Կարծես թագ չէր, այլ սուտակե մի շողշողուն արեգակ:

Վերադարձին վերհիշեցին հին օրերը հեքիաթե,
Մինչ մոտեցան Քաբուլի մեծ դարպասներին երկաթե:

Հենց այդ պահին միջնաբերդից լսվեց աղմուկ-աղաղակ,
Այնուհետև խմբերգի հետ զրնգացին վին ու չանգ:

Աղաղակից դողդողում էր բերդ-ամրոցը քարակերտ,
Փողոցներում տոն էր կարծես ու մրցության մեծ շքերթ:

Իշխանուհին իր դղյակից անմիջապես ելավ դուրս,
Ու նրա հետ երեք հարյուր ստրուկ կանայք ոսկեհյուս:

Գեղեցկուհուն շրջափակած փողոց ելան նրա հետ,
Ամեն մի կին գարնանային մի ծաղիկ էր նրբաթերթ:

Ամեն մի կին ձեռքին ուներ մանիշակ ու ծաղկեփունջ,
Որ հյուրերին դիմավորեն փառավայել, սրտառուչ:

Ողջ Քաբուլում խրախճանք էր, իշխանական փառատոն,
Ամեն մարդու սիրով եղավ կերուխումի երեկոն:

Նարիմանի որդին ասաց Քաբուլի պերճ թագուհուն.
«Բարեհաճեք այժմ ցույց տալ՝ որտեղ է իմ հարսնացուն»:

Սինդուխտը թե. «Դեստան-Զալը նվեր բերեց անքանակ,
Փոխարենը մենք ցույց կտանք ճաճանչափայլ արեգակ»:

Սամը նորից հարցուփորձեց. «Ի՞նչ է ուզում սիրտը քո–
Ոսկե թա՞գ, թե՞ արքայական ճոխ գանձատուն լի ոսկով...

Առաջարկիր, չեմ մերժի քեզ, ո՛վ Քաբուլի թագուհի,
Այսօրվանից բարեկամ ես, ո՛չ թե օտար թրքուհի»:

Կերուխումից հետո երբ որ դուրս եկան ճոխ խնջույքից,
Սամը ասաց. «Հիմա պետք է հարսնացուին ցույց տաք ինձ»:

Բայց երբ տեսավ Ռուդաբեին՝ զարմանքից նա քարացավ,
Գեղեցկություն տեսնելիս է մարդ մոռանում վիշտ ու ցավ...

Նա չիմացավ, թե ինչ լեզվով փառաբանի աղջկան,
Որովհետև մտածում էր՝ է՞ր է նա իսկական:

ԶԱԼԻ ԵՎ ՌՈՒԴԱԲԵԻ ԱՄՈՒՍՆՈՒԹՅՈՒՆԸ

Սամը կնքեց Մեհրաբի հետ ամուսնության մի պայման,
Մարդկանց մոտ այդ հին օրենքը ավանդվում էր դարեդար:

Դեստան-Զալը և Ռուդաբեն նստեցին կիպ կողք-կողքի,
Հանց լուսինն ու արեգակը գահաթոռին երկնքի:

Ոտքերի տակ շաղ էր տրված ոսկի, արծաթ ու գոհար,
Ամեն մեկի գլխին լուսե ու ոսկեհուռ մի թագ կար:

Ապարանքը շողշողում էր պերճանքներով թանկագին,
Ամեն քաջի մոտ կար կանգնած մի մատռվակ, ստրուկ կին:

Շահի ծառան բերեց շքեղ նվերների մի ցուցակ,
Զալի համար՝ ակնեղեններ, Ռուդաբեին՝ հանդերձանք:

Բազմաքանակ նվերներից զարմացել էր Սամ հսկան,
Որովհետև ոչ ոք նրան չէր նվիրել փող այդքան:

Ասաց. «Սիրող զույգի համար այժմ բացվեց ճանապարհ,
Նոր արշալույս պիտի լինի իմ Զաբուլում ծաղկավառ:

Առավոտից մինչ կեսգիշեր կնստենք մենք խնջույքի,
Քանզի կյանքը դատարկ բան է՝ առանց գինու հաճույքի:

Իմ Զաբուլից մինչև Քաբուլ թող երգ լսվի խանդակաթ,
Անհնարին բան է, որ ես խնջույք չանեմ մի շաբաթ:

ՀԱՐՍԱՆՔԱՎՈՐՆԵՐԸ ՎԵՐԱԴԱՌՆՈՒՄ ԵՆ ԶԱԲՈՒԼԻՍՏԱՆ

Պահնորդ մարդիկ երբ կանգնեցին շքամուտքին միաշարք,
Դեստանի և Սամի համար բերեցին մի ձիակառք:

Ամեն քաջի մատի վրա կար մատանի վառվռուն,
Ամեն մեկի երակներում քենի արյուն էր եռում…

Նարիմանի որդի Սամը, Դեստանը և Ռուդաբեն,
Թե՛ Մեհրաբը, թե՛ Սինդուխտը գնացին, որ ձի թամբեն:

Երկսապատյա ուղտի մեջքին պատրաստեցին պատգարակ.
Զաբուլի նոր իշխանուհին բազմեց, ինչպես արեգակ:

Նրանք տարան նվերների մի ծանրաբեռ քարավան,
Հրաժեշտին՝ ճամփորդ մարդիկ ուրախացան անսահման:

Ամեն ճամփորդ շահի մասին գովերգում էր ու սրտում
Նրա գահի պահպանության համար տալիս սուրբ երդում:

Շուտով երկրի վրա իջավ սգավերմակ երեկոն,
Բայց Զաբուլի փողոցներում աղաղակ էր, ուրախ տոն:

Հսկա Սամը քաջերի հետ կոնծում էր դեռ թունդ գինի,
Մեծապատիվ հյուրերի հետ ձանձրալի օր չի լինի:

Երեք օր ու երեք գիշեր Սամը արեց խրախճանք,
Որ հարկատու մարդիկ մի պահ մոռանան վիշտ ու տանջանք:

Իսկ Մեհրաբը այնտեղ թողեց աղջկան ու Սինդուխտին,
Վերադարձի համար նորից ամուր նստեց շեկ ուղտին:

Նարիմանի որդի Սամը նույնպես ուներ հոգս ու ցավ,
Այդ պատճառով գահաթոռը հանձնեց որդուն, հեռացավ—

Դեպի բերդը Քերկեսարայ, Սիեստանից արևմուտք,
Զալին ասաց. «Ինձնից հետո դու հավաքիր զորք ու տուրք:

Իմ ձեռքի տակ ազգեր ունեմ, բազում մարզեր արգավանդ,
Բայց չեմ կարծում քեզ ծառայեն հավատարիմ, հնազանդ:

Մանուչեհր շահը թեկուզ պայմանով էր հանձնել ինձ,
Բայց զգույշ եմ եղել ընդմիշտ Մազանդարան դևերից:

Ես մի աշխարհ վաստակեցի շահնշահից սիրաբար,
Ավանդական ժամանակից կոչվել է այն դևաշխարհ:

Քեզ եմ հանձնում և՛ դղյակս, և՛ Զաբուլը, իմ Դեստա՛ն,
Աչքիդ լույսի պես պահպանիր, մինչև նորից ես տուն գամ»:

Սամը տարավ իր բանակը հետիոտն, թե ձիավոր,
Իսկ Դեստանը տանը մնաց՝ գեղեցկուհի կնոջ մոտ:

Նա կնոջը զարդարեց ու նստեցրեց իր գահին,
Եվ իր ձեռքով նրա գլխին դրեց մի թագ երկնային:

ՌՈՒԴԱԲԵԻ ԵՐԿՈՒՆՔԸ

Ամուսնության տարին անցավ մշտախաղաղ, աներկյուղ,
Ամենագութ Աստված նրանց պարգևեց մի նոր պտուղ:

Նորահարսը թառամում էր գարնանագեղ ծաղկի պես,
Պտղավորման ծանր ցավը չարչարում է միշտ այդպես:

Բայց օրեցօր որովայնը մեծանում էր, ծանրանում,
Դեղնում էին շրթունքները և այտերը վարդագույն:

Սինդուխտը երբ տեսավ նրան, ասաց. «Դուստր իմ միակ,
Ինչո՞ւ ես դու այդպես խամրել, իմ գիշերվա լույս ճրագ»:

Իսկ աղջիկը թե. «Բարի մայր, ոչ քուն ունեմ, ոչ դադար,
Հոգի մաշող տանջանքներից դարձել եմ խենթ-խելագար:

Թվում է, թե մահը հիմա պիտի գա և ինձ տանի,
Թեկուզ ապրում, շնչում եմ դեռ, բայց մեռած եմ կենդանի:

Ժամանակը արդեն պիտի հասած լինի ազատման,
Ծանր ցավից ինչքան պիտի չարչարվեմ ես, հեկեկամ:

Կարծում եմ, թե իմ արգանդում քարե բեկոր կա հաստատ,
Կամ գուցե թե կա պարզապես ծանրակշիռ մի երկաթ»:

Քաբուլի պերճ իշխանուհին անհանգիստ էր, իրոք որ,
Ռուդաբեի ցավը կիսել՝ արտասվում էր ամեն օր:

Երբ ազատման ժամը եկավ՝ նա վայր ընկավ ուշաթափ,
Պալատական կանայք իսկույն տարածեցին աղաղակ:

Աղաղակի լուրը հասավ և Սինդուխտին վշտահեծ,
Փետեց կուրծքը ու մազերը ու երեսը ճանկռոտեց:

Անմիջապես Դեստան-Զալի մոտ ընթացավ մի գուժկան,
Թե Ռուդաբեն մահանում է, բայց ազատման հույս չկա:

Զալը եկավ, ծնկի իջավ Ռուդաբեի մահճի մոտ,
Սիրտն ու հոգին տագնապով լի, իսկ աչքերը՝ արցունքոտ:

Պատառոտեց ճոխ շորերը, քանդեց ծամը նրբահյուս,
Ապա հողը գլխին տվեց, աղաղակեց նա անհույս:

Իսկ երբ տեսավ մահվան ձեռքում չարչարվում է Ռուդաբեն,
Մռնչալով հարբած փղի նման ընկավ դես ու դեն:

Կանանոցի ստրկուհիք նույնպես եղան վշտակոծ,
Պատռոտեցին և՛ վարագույր, և՛ ծիրանի, և՛ ծածկոց:

Դեստան-Զալը մտածում էր փրկության նոր ելք, հնարք,
Սակայն մտքի իր կույր ուղին լուսավորեց մի ճրագ…

Նա վերհիշեց նվիրատու փետուրը հավք-Սիմուրղի,
Իսկույն վազեց, բերեց հանձնեց գեղեցկուհի Սինդուխտին:

Այնուհետև մեծ օջախում վառեց կրակ մի անշեջ,
Ու Սիմուրղի փետուրը նա նետեց բոցեղ հրի մեջ:

Օրը մթնեց: Երկրի վրա իջավ թավիշ մառախուղ,
Սև ամպի հետ, դղյակի մոտ, պատին թառեց մի սիմուրղ:

Նա շանթի պես իջավ գետին, կարծես լիներ կարմիր բուստ,
Կարծես Աստված փրկություն էր իջեցրել ի վերուստ…

Դեստան-Զալը ծնկի իջավ նրա հզոր թևի տակ–
Փառաբանեց Աստծու հավքին, նրան հղեց ջերմ մաղթանք:

Սիմուրղ հավքը ազդարարեց. «Ինչի՞ց ես դու սարսափում,
Առյուծ մարդը դժվար պահին աղի արցունք չի թափում:

Արծաթակուրծք քո Ռուդաբեն թեկուզ թույլ է ու դալուկ,
Սակայն շուտով նա կբերի մի նոր կորյուն, մի մանուկ:

Քո զավակի ոտքի հետքը կհամբուրի վագրն անգամ,
Նա կդառնա հռչակավոր մի փահլևան հաղթանդամ:

Նրա ձայնից՝ սարսափահար վագրի կաշին կպայթի,
Ամրոցները փոշի կանի, երբ նժույգը իր պայտի:

Ով որ տեսնի գուրզը նրա՝ ահից պիտի դողդողա,
Ով նրա հետ մենամարտի՝ իր կյանքի հետ կխաղա:

Ասպարեզում ով որ նրա դեմ աղեղից նետ քաշի–
Ձեռքի ահեղ մի շարժումով կդարձնի նա փոշի:

Մենամարտում նա կվարի ժիր առյուծի պես պայքար,
Չի կթամբի Սամի նման, անխոցելի, ինչպես քար:

Փղի հզոր ուժ կունենա, իսկ հասակով՝ վեհ նոճի,
Այնքան ուժեղ, որ մի ձեռքով ժայռաբեկոր կճռճի:

Ոսոխների հանդեպ միշտ էլ կլինի նա անողոք,
Տերը նրան պարգևել է անգերազանց շէն-շնորհք:

Այժմ պետք է մի սուր դանակ և մի մոբեթ քաջառողջ,
Որ դյութելու կարողությամբ պատռի կողը քո կնոջ:

Բայց նախքան այդ, գեղեցկուհուն տուր թունդ գինի, որ հարբի,
Քանզի դանակ երբ տեսնի նա՝ մահից պիտի սարսափի...

Գիտուն մոգը նրա կյանքի հետ տակավին չի խաղա,
Սակայն նրա ամուր կողից կազատի մի երեխա:

Սուր դանակով կոնքակողը կպատռի նա այնպես ճիշտ,
Որ վիրահատ տեղը նույնիսկ չի պատճառի ցավ ու վիշտ:

Նա այնտեղից դուրս կբերի ժիր առյուծի մի կորյուն,
Բայց քո կնոջ վերքից գետի պես կհոսի հորդ արյուն:

Այնուհետև ապաքինման դեղ կդնի և պինդ կար,
Դեն կնետես վախ ու կասկած, ինչ որ քո վեհ սրտում կար:

Իսկ այն դեղը, որ քեզ կտամ՝ խառնիր կաթի, մուշկի հետ,
Այդ խառնուրդը չորացրու ու պահպանիր մի չոր տեղ:

Հետո վերքի վրա ցանիր սպեղանի մշկահոտ,
Եվ Ռուդաբեն կյանքի կգա, հանց մայիսյան առավոտ:

Իսկ քիչ հետո իմ փետուրը նրա վերքին քսիր դու,
Եվ քո կինը որդուդ համար կդառնա մայր կաթնատու:

Այնուհետև զորավորին փառաբանիր կրկնակի,
Քանզի նա մի ծառ նվիրեց, որ ողջ տարին պիտ ծաղկի:

Ուրախացի՛ր, մի՛ վշտանա, ո՛վ քաջարի դու Զալզեր,
Չէ՞ որ ծառը բողբոջելով դառնում է միշտ պտղաբեր»:

Ասաց և իր թևից հանեց մի մեծ փետուր՝ գցեց ցած,
Այնուհետև թռավ դեպի Էլբորզ սարը ամպամած:

ՌՈՍՏԱՄԻ ԾՆՈՒՆԴԸ

Զալը գետնից փետուրն առավ, ինչպես Սիմուրղ հավքն ասաց,
Ուրախություն պատճառելով թե՛ մոբեթին, թե՛ մարդկանց:

Մարդիկ թեկուզ այդ բուժումը համարեցին անտեղի,
Սակայն ամեն ոք ցանկացավ տեսնել փետուրն սիմուրղի:

Բայց Սինդուխտը ահից կանգնել՝ հորդ արցունքներ էր թափում,
Չի աղջիկը պառկած էր դեռ զորեղ մահի սև ափում...

Զալը բերեց ճարտարաձեռ ու խորագետ մի մոբեթ,
Ռուդաբեին նա թունդ գինով հարբեցըրեց, այնուհետ

Ճղեց կողը գեղեցկուհու, առանց ահ ու երկյուղի,
Ապա պտղին տվեց հարմար, աշխարհ գալու հեշտ ուղի:

Այդ արվեստով երեխային նա դուրս բերեց անվտանգ[1],
Ոչ մի էակ դեռ չի տեսել մի այդպիսի մեծ հրաշք:

Այդպես, դժվար աշխարհ եկավ առյուծի ժիր մի կորյուն,
Պարթևական հասակ ուներ իր ծագումով զտարյուն:

Խոպոպները հրաշեկ էր, դեմքը՝ վարդի պես կարմիր,
Շողշողում էր արևի պես, առյուծ էր նա փոքր ու ժիր:

1. Այստեղ Ֆիրդուսին ակնարկում է կեսարյան հատման վիրաբուժական մեթոդը, որը հայտնի էր դեռ հին Հռոմում և Հունաստանում:

Երկու ձեռքի մեջ արյուն կար, երբ որ եկավ լուսաշխարհ.
Այդպիսի բան դեռ չի եղել հողաշխարհում դարեդար...

Գեղեցկուհին հարբածի պես հանգիստ քնել էր գինուց,
Միտը կարծես բաժանված էր թե՛ մարմնից, թե՛ հոգուց:

Ռուդաբեի վերքի վրա դրին բուժիչ բալասան,
Երբ արթնացավ՝ բազմախռիվ կին, տղամարդ նա տեսավ:

Բոլոր մարդիկ մեծարեցին ամենազոր տիրոջը,
Չի ազատվեց նորածինը, ու ողջ տեսան կնոջը:

Ծառաները մորը բերին որդուն ի ցույց-աչքալույս,
Ռուդաբեին աշխարհն թվաց մի ոսկեղեն արշալույս:

Տղան թեկուզ օրական էր, կարծես լիներ տարեկան,
Շողշողում էր հակինթի պես և կակաչի էր նման:

Երբևիցե չէր տեսել դեռ մի այդպիսի ցնծություն,
Քանզի որդու մեջ տեսավ նա քեյանական հատկություն:

Ասաց. «Ռոստա՛մ– ազատվեցի», և այդ խոսքից սրբազան,
Բոլոր մարդիկ միաբերան անվանեցին Ռոստամ-Զալ:

Ուրախացավ Դեստան-Զալը և տատիկը իր Սինդուխտ,
Ու նորածին մանկան համար պատրաստեցին ճոխ հագուստ:

Գլխին սամույր մազեր աճեց, մազեր՝ խարտյաշ ու գանգուր.
Լուսնի նման պայծառ դեմքից տարածվում էր խնկի բույր:

ԻՐԱՆԸ ՏՈՆՈՒՄ Է ՌՈՍՏԱՄԻ ԾՆՈՒՆԴԸ

Սուրհանդակը Սամին հայտնեց. «Արդեն ծնվեց արու թոռ.
Դու ունեցար քաջ հետնորդի հաստատահիմք գահաթոռ»:

Ուրախության արցունք թափեց Նարիմանի քաջ որդին,
Ասաց. «Տերը օգնեց, որ ես տեսնեմ տոհմիս հաջորդին»:

Ապա Սամը խրախճանեց առավոտից իրիկուն,
Եկան նաև հաճոյախոս ծեր գուսաններ ասերգու:

Բոլոր մարդիկ հավաքվեցին Սամի չքնաղ ծաղկոցում,
Որտեղ Սամը նվագի տակ միշտ թունդ գինի էր կոնծում:

Եվ մարզպանը մեծ Քաբուլի ուրախացավ անսահման,
Աղքատներին տվեց բազում հագուստեղեն և դրամ:

Քաղաքներում և գյուղերում խրախճանք էր օրնիբուն,
Ողջ Զաբուլը կարծես լիներ գուսանների մրցատուն:

Տեր ու ծառա խառնվել էին, ո՛չ աղքատ կար, ո՛չ հարուստ,
Ո՛չ ենթակա էր տարբերվում, ո՛չ պաշտոնյա, ո՛չ հագուստ:

Հսկա Սամին ի ցույց բերին պատկերը ժիր Ռոստամի,
Պապը թոռան գեղեցկությամբ զարմացել էր ավելի:

«Ամբողջապես ինձ նման է,– ասաց Սամը փահլան,–
Քաջությամբ նա կհանճարվի հանց Քերիման, Նարիման:

Թոռս եթե նույնիսկ լինի այս նկարի կեսն անգամ,
Մի օր լուսնին նետով պիտի անի երկնի կարկատան»:

Այնուհետև սուրհանդակին, որ չոքել էր գլխահակ,
Աչքալույսի համար տվեց ոսկի, արծաթ և սուտակ:

Պերճ Զաբուլում ամենուրեք խրախճանք էր, տոնախումբ,
Ոչ ոք կյանքում դեռ չէր տեսել մի այդպիսի կերուխում:

Սամի չքեղ ապարանքում նորից հնչեց չանգի ձայն,
Նա դղյակը և Զաբուլը զարդարել էր ծայրեծայր:

Մազանդարան հողից մինչև Քերկեսարայ, Սեկսարան–
Նա դարձրեց խրախճանքի, մրցախաղի տեսարան:

Երգ ու պարի հետ միասին թունդ կերուխում էր միայն,
Սամը ոսկով լիացրեց աղքատներին ձեռնունայն:

Խրախճանքից յոթ օր հետո նամակ գրեց իր որդուն,
Նախ նամակում փառաբանեց ամենազոր Աստծուն:

Չէ՛ որ Աստված իրեն տվեց երջանկություն մշտատև,
Իսկ Դեստանին ապավինեց Սիմուրղ հավքի հզոր թև...

Ապա գրեց Զալի մասին, փառաբանեց զավակին,
Ջի Իրանի քաջերի մեջ անուն ուներ թանկագին:

«Մաղթել էի,– գրեց Սամը,– ամենատես արարչին,
Այդ առաջին մաղթանքս չէր, ոչ էլ ուխտը իմ վերջին:

Որ քանի դեռ լույս կա այժմ իմ ծերության աչքերում,
Տեսնել նեցուկ իմ թոռանը, իմ հետնորդին քաջանուն:

Արդ՝ կատարվեց իմ փափագը,– ես ունեցա մեծ թիկունք,
Ողջություն եմ ցանկանում քեզ, իսկ թոռանս՝ նոր կնունք»:

Հոր նամակով Դեստան-Զալը ուրախացավ անսահման.
Երջանկության ճանապարհը արդեն բաց էր իր համար:

Աստծու կամքը այդպես է միշտ, տեր է կյանքի ու մահի,
Խորհրդավոր ոչ մի գաղտնիք բնավ ծածուկ չի պահի:

ՊԱՏԱՆԻ ՌՈՍՏԱՄԸ

Ռոստամ-Զալին խնամում էր տասը ծառա օրնիբուն,
Սակայն քաղցած էր մնում նա, հանց առյուծի ժիր կորյուն:

Եվ մայրական կաթից բացի տվին նրան որսի ճաշ,
Օրըստօրե մեծանալով դառնում էր նա ծանրաքաշ:

Նա օրական հինգ-վեց մորթած կենդանի էր ճաշակում,
Բայց տակավին չէր կշտանում, ախորժակը չէր փակվում:

Իսկ երբ շուտով հասակ առավ՝ դառավ յոթ-ութ տարեկան,
Կարծես լիներ վերսլացիկ մի սեգ նոճի իսկական:

Վիշապաուժ ձեռքեր ուներ և ամուր մեջք առյուծի,
Եվ մի օր էլ ծանր գուրզով ասպանդակեց նժույգ-ձի:

Նա մի ձեռքով բռնեց նիզակ, իսկ մյուսով՝ պրկաղեղ,
Ահ ու սարսափ էր տարածել Իրանում և ամեն տեղ:

Նա շողշողուն աչքեր ուներ, արևի պես հրացայտ,
Ժամանակն էր, որ նա թամբեր ռազմական ձի ոսկեպայտ:

ՍԱՄԸ ԳԱԼԻՍ Է ՌՈՍՏԱՄԻՆ ՏԵՍՆԵԼՈՒ

Նարիմանի որդի Սամը երջանիկ էր, բախտավոր,
Երբ որ հայտնի եղավ, որ նա ունեցել է աղյուծ թոռ:

Սուրհանդակից նամակն առավ, Սամին հանձնեց ժիր ծառան,
Նա որոշեց ժամանակից շուտ գալ, տեսնել իր թոռան:

Նշանակեց փոխարինող մի անվանի զորապետ,
Զաբուլիստան տանող ճամփան նա դարձրեց մեծ շքերթ:

Անհուն սերը և կարոտը դեպի որդին էր ձգտում,
Զաբուլիստան տանող ճամփան նրան պահեց մշտարթուն:

Նորից լսվեց թմբկահարի բամբ ու բամբյուն, երգ ու ծափ,
Սմբակների տրոփյուն ու ոտքերի զարկ համաչափ:

Դիմավորման համար եկան Մեհրաբը և Զալը մեծ,
Եվ Ռոստամին տարան նույնպես իր դյլակից երկնամերձ:

Շքախումբը մարտաձեն էր, ինչպես ամուր մի պողպատ,
Վահանների միաշարքից առաջացավ ամուր պատ:

Թե՛ փղերի բղբղոց էր, թե՛ ձիերի վրնջոց,
Թե՛ ամբոխի տագնապահար, շփոթահար գոռգոռոց:

Շքաերթի առջևից մի փիղ էր քայլում մարտական,
Նրա մեջքին արքայական մի ոսկեծուփ աթոռ կար:

Դիմավորման համար նրանք տանում էին Ռոստամին,
Գեղեցկությամբ ու հասակով նման էր նա Դեստանին:

Նա կապել էր ոսկե գոտի, գլխին դրել սաղավարտ,
Ձեռքին ուներ թուր ու վահան, փահլևանի պես անպարտ:

Հզոր Սամը երբ որ տեսավ Դեստան-Զալին ու թոռան–
Անջատվեց իր զորաշարքից, արագ նրանց մոտ թռավ:

Եվ Մեհրաբը վազեց այնտեղ, և՛ Դեստանը անվեհեր,
Ե՛վ բանակի ուրիշ այրեր ճերմակամազ ու ջահել:

Բոլոր մարդիկ Սամի առջև խոնարհվեցին մինչ գետին,
Մեծարեցին նրա տոհմը ու մարտական պինդ գոտին:

Սամի դեմքը շողշողում էր, ինչպես գարնան լուսաբաց,
Երբ որ փղի վրա տեսավ իր թոռանը լանջաբաց:

Փիղը քանի մոտենում էր, հուզվում էր նա կրկնակի,
Սիրտը այնպես էր տրոփում, կարծես, ահա, պիտ պայթի:

Նա Ռոստամին ամուր գրկեց ու համբուրեց ջերմաջերմ.
«Քեզ տեսնելուց հետո,- ասաց,- ուրիշ ցավեր ես չունեմ»:

Իսկ Ռոստամը պապի առջև ծնկի իջավ և ասաց.
«Փառքդ մեծ է, ո՛վ Իրանի ամուր նոճի վերսլաց:

«Ոչ մի քաջից ես վախ չունեմ, ով ուզում է, թող մոտ գա,
Ի՞նչ է Սամը, կամ թե Զալը և թե շահը ոսկեգահ:

Ես թուր ունեմ և երիվար, նմանվում է նա շանթի,
Ինձ՝ Ռոստամից բացի, ոչ ոք մենամարտում չի հաղթի:

Նա աշխարհը քամուն կտա ու հավատը Զոհակի,
Նրան կօգնի իր նժույգը, որ Իրանը ազատի:

Այս խոսքերը ասացի ես խրախճանքի թեժ պահին,
Քեյ-Կոբադի հզոր թուրը տալիս եմ քաջ Ռոստամին»:

Հարբած մարդու խոսքեր էր այդ, որ խնջույքում նա ասաց,
Ծիծաղեցին Զալն ու Սամը և Ռոստամը լանջաբաց:

ՍԱՄԸ ԽՐԱՏՈՒՄ Է ՈՐԴՈՒՆ ԵՎ ԹՈՌԱՆԸ

Մեհր ամսում Մազանդարան գնաց Սամը բանակով,
Նրան Զալը և Ռոստամը ճամփա դրին արցունքով:

Ու Զաբուլի զորավարը Զալին ասաց. «Իմ զավակ,
Ինձնից հետո երկիրը քո ղեկավարիր համարձակ:

Ինչ էլ անես՝ արդարացի ու բարեսիրտ եղիր դու,
Մի՛ կուտակիր հարստություն, այլ սովորիր գիտություն:

Հոգով-սրտով նվիրիր քեզ շահնշահին մեծափառ,
Եվ քո գլխին նա կդնի զորավարի սաղավարտ:

Վատ արարքներ թույլ չտաս քեզ հանդեսում թե խնջույքում,
Բայց գանձատան բանալին միշտ ազատ պահիր քո ձեռքում:

Բարի եղիր, հոգով, սրտով, ինչպես դեմքդ է ցույց տալիս,
Հոր խրատից իր հարազատ որդուն վնաս չի գալիս:

Ծերությունը շուտով պիտի ինձ ուղարկի պաղ շիրիմ,
Լավ օրերի հույս չունեմ ես, վերջացել է կյանքը իմ»:

Ապա գրկեց զավակներին ու ջերմորեն համբուրեց,
Ավանդական սովորությամբ նա Աստըծուն գովերգեց:

Շքաներթի պահին ինչեց հնդկական փող ու թմբուկ,
Նարիմանի խիզախ որդին նորից գնաց արևմուտք:

Նրա շիտակ խրատները ընդունեցին սրտացավ,
Թոռ ու որդի հեկեկացին, երբ որ Սամը հեռացավ:

Երբ Սիեստան մեկնեց Սամը՝ փահլևանը Իրանի,
Գոլեստանամ մնաց Զալը և Ռոստամը անվանի:

Արքունիքում հայր ու որդի առավոտից իրիկուն
Կոնծում էին վարդագինի ու վայելում հանգիստ քուն:

ՄԱՆՈՒՉԵՀՐ ՇԱՀԻ ՊԱՏԳԱՄՆԵՐԸ ՈՐԴՈՒՆ

Մանուչեհր շահը ապրեց հարյուր քսան ծիգ տարի,
Ու հասկացավ, որ իր կյանքը հասել է արդ վախճանի:

Նա շուտափույթ իր մոտ կանչեց մոբեթներին աստղագետ,
Որ գուշակեն՝ քանի տարի պիտի ապրի այսուհետ...

Ամենագետ մոբեթները գուշակեցին ու գտան,
Որ Իրանի շահը շուտով պիտի իջնի գերեզման:

«Ուրիշ կյանք է քեզ սպասում, ո՛վ տիրակալ շահնշահ,
Պիտի իջնես մի խորխորատ ու լեռնային մթաշխարհ:

Միափսոսա, քանզի կյանքը փուչ քամի է ու կատակ,
Ամենազոր Աստված պիտի քեզ թաքցնի հողի տակ»:

Շահը գիտեր, որ վախճանից հետո պիտի դառնա հող,
Ուստի անչափ ափսոսաց նա խնջույքները բազմածոխ:

Ջահելության տարիներն էր հիշում, քննում իր մտքում,
Մահվան պահին ցանկանում էր խոսել ինչ որ կար սրտում...

Եվ Նովզարին՝ ավագ որդուն, նույնպես կանչեց խորհրդի,
Նրան հայտնեց գաղտնիքները, թե այս և թե այն կյանքի.

«Ի՞նչ է շահի հզոր գահը՝ ունայնություն մշտապես,
Խաբուսիկ է նաև թագը աչք կուրացնող ոսկու պես:

Հարյուր քսան տարի եղա ողջ Իրանի թագավոր,
Դժվարագույն գործից երբեք չեմ նահանջել ոչ մի օր:

Պատերազմում ես էի միշտ բանակ վարող առաջնորդ,
Ինձ օգնում էր Ֆերիդունի ոսկե թասը լուսահորդ:

Կյանքի բոլոր չարիքները փոխեցի ես բարության,
Սելմ ու Թուրին սպանեցի ու վերջ տվի բռնության:

Մեր նախահայր Իրի հոգին հանգստացավ դարեդար,
Որովհետև սահմանեցի մարդկանց համար կյանք արդար:

Ես կերտեցի հոյակառույց ապարանքներ պերճաշուք,
Բայց ի՞նչ օգուտ, երբ որ մահը սպառնում է այսքան շուտ:

Անցած կյանքի հաշիվներս մոռացումը խառնեց ինձ,
Դառնապտուղ ծառը միշտ էլ չորանում է արմատից:

Քեզ եմ հանձնում Ֆերիդունի գինու թասը լուսատու,
Ինչ բարիքներ որ սերմանես՝ դատարկ պիտի մնաս դու:

Ինչ էլ անես, միևնույն է, մահը պիտի գա տանի,
Դու այնպիսի սերմ ցանիր, որ հնձես ամեն մի տարի:

Սերունդները կմեծարեն քո գործերը լուսափայլ,
Ազնիվ հոգի ունեցողը քեզ կպաշտի հանց քաջայր:

Փոփոխության դար ենք ապրում, կործանումի, պայքարի,
Շուտով աշխարհ կգա մի մեծ ու լուսավոր մարգարե:

Արևելքից կառաջնորդի ու կհասնի մինչ Իրան,
Բայց նրա դեմ զորք չտանես, կհետևես միշտ նրան:

Նա լուսավոր ուսմունք ունի, քեզ կլինի ուղեցույց,
Մարդկությունը այդ ուսմունքին սպասում է դեռ վաղուց:

Բայց իմացիր՝ թուրանացին կրակ կտա հողը մեր,
Դու չես տեսնի խրախճանքի ու ցնծության լավ օրեր:

Մի օր տեսար գայլ կլինես, իսկ մի օր էլ՝ թույլ ոչխար,
Փաշանակի որդին քո դեմ դավ կնյութե անդադար:

Աշխարհը մեկ նեղ կթվա, իսկ երբեմն էլ լուսավոր,
Ժամանակն է, որ, զավակս, զորք հավաքես նորանոր:

Դեստան-Զալից և քաջ Սամից դու պահանջիր օգնություն,
Քաջ տոհմից է Զալը ծնվել, փահլևան է մեծանուն:

Նա քինախանդ ոսոխներին սարսափ կտա ավելի,
Եվ նժույգի սմբակի տակ ողջ Թուրանը կավերի...»:

Այսպես խոսեց, այնուհետև լռեց լեզուն հավիտյան,
Սակայն նրա մասին մարդիկ դեռ կխոսեն դարեդար:

ՌՈՍՏԱՄ ԵՎ ՍՈՀՐԱԲ

ՆԱԽԵՐԳ

Ականջ արա ավանդական այս վիպերգին հինավուրց,
Հոր և որդու կռվի մասին քեզ կպատմեմ մի զրույց:

Ոչ մի էակ այս վիպերգի անհուն ցավը չի տանի,
Ով որ լսի՝ կնախատի արարքը քաջ Ռոստամի:

Եթե ահեղ քամին փչի ու կործանի ամեն ինչ,
Կամ թե ծառից հանկարծակի ցած գցի մի խակ նարինջ,

Արդարադատ և կորովի՞ ասենք դաժան այդ քամուն,
Թե՞ անիրավ մենք անվանենք, երբ աշխարհ է կործանում:

Եթե մահը ճիշտ օրենք է՝ էլ ինչու ենք մենք ողբում
Կամ ինչու ենք այսքան ցավեր մեր սրտի մեջ հավաքում:

Այս խորհուրդի ճանապարհով դեռ գնում ենք անդադար,
Բայց չգիտենք վարագույրի հետևում ի՞նչ կա արդար:

Շատ մարդիկ են փորձել լուծել հանգույցը այդ գաղտնիքի,
Սակայն մահվան այդ գաղտնիքը հայտնի չէ դեռ ոչ մեկին:

Գուցե մահը համարես դու կյանքի միակ բարություն,
Քանզի գիտես այն աշխարհում պիտի գտնես հանգիստ քուն:

Կործանարար մահին եթե հնար լիներ գեթ զսպել,
Չէր իմացվի, թե աշխարհում ով է ջահել ու ով՝ ծեր:

Եթե հանկարծ ինչ-որ մի տեղ բռնկվում է մեծ հրդեհ,
Բոցը խկույն լափլիզելով պիտի դարձնի մոխրատեղ:

Կրակը և մահը ունեն կործանողի հատկություն,
Մի՛ զարմանա՝ ծաղիկները մերթ բալզամ են, և մերթ թույն:

Ջահել մարդիկ երջանիկ են հողաշխարհում այս ունայն,
Չէ՞ որ մահվան պատճառը լոկ ծերությունը չէ միայն:

Մահվան առաջ ամեն մեկը խոնարհվում է ծնկաչոք,
Նրա դաժան հարվածներից չի ազատվել դեռ ոչ ոք:

Մահը կա և պետք է լինի, այդ օրենքն է աշխարհի,
Մի՛ որոնիր որն է ուղին անարդարի, արդարի:

Եթե մաքուր հավատ ունես և կեղտոտ չէ քո հոգին,
Ե՛կ, խոնարհվիր ամենազոր Աստծու առաջ ու չոքիր:

Երկրպագիր և աղոթիր ու մոռացիր անձը քո,
Որ դու հանգիստ հրաժեշտ տաս այս աշխարհին մշտագո:

Այնպես արա, որ աշխարհում թողնես միայն լավ անուն,
Դևի հոգի ունեցողին Աստված դրախտ չի տանում:

Հոր և որդու կռվի մասին հիմա ես ձեզ կպատմեմ,
Ինչպես եղավ, որ ոսոխի նման ելան իրար դեմ:

ՌՈՍՏԱՄԻ ՌԱԽՇ ՁԻՆ

Ավանդական այս վիպերգը ինձ պատմել է մի դեհկան,
Շատ եմ լսել այսպիսի հին ասք ու զրույց պատմական:

Մի առավոտ Ռոստամ-Զալը քնից զարթնեց, բայց տխուր,
Անհնազանդ սիրտը նրան դեպի որսի էր մղում:

Հագավ, կապեց ամուր գոտին, առավ և նետ, և կապարճ,
Թամբեց իր Ռախշ երիվարը ու սլացավ դեպի դաշտ:

Որս որոնող առյուծի պես արագավազ նրա ձին
Տեղից պոկվեց, դեպի Թուրան թռավ, ինչպես հողմածին:

Մեծահամբավ Ռոստամ-Զալը շուտով հասավ Սեմենգան,
Տեսավ դաշտում բազմաքանակ եղնիկներ ու ցիռեր կան:

Քաջ Ռոստամը ուրախացավ, դեմքը փայլեց վարդի պես.
Քշեց իր ձին, դաշտը դառավ առատ որսի ասպարեզ:

Զարկեց գուրզով, պարան նետեց, ապա լարեց պրկաղեղ,
Ու ցիռերի երամակներ ջարդեց, փռեց ամեն տեղ:

Ապա բերեց փուշ ու խռիվ, ոստ ու տերև ու չոր ցախ,
Եվ այդ կույտը նա դարձրեց խորովածի մեջ օջախ:

Ու երբ շուտով ծուխը անցավ ու կրակը թեժացավ՝
Խորովածի համար գտավ շամփուրացու մի մեծ ծառ:

Երկար ծառը նրա ձեռքին կարծես լիներ մի շամփուր,
Հսկայական ցիռն էլ, իրոք, ոչ թե ցիռ էր, այլ՝ փետուր:

Նա խորովում ու խժռում էր, բայց դեռ մնում էր անկուշտ,
Թեև կողքին հավաքվել էր ոսկորների հսկա կույտ:

Երբ կշտացավ, տեղից ելավ, գնաց հասավ մոտ առուն,
Այնքան խմեց, որ ոտքերը հազիվհազ էր երերում:

Իր Ռախշ ձիուն արձակեց, որ մարգագետնում արածի,
Այնուհետև պառկեց քնեց Ռոստամ-Զալը արիածին:

Այդ ժամանակ որտեղից որ սեմենգանցի յոթ հեծվոր
Եկան այդ նույն դաշտը, քանզի նրանց որս էր հարկավոր:

Մարգագետնում նրանք տեսան ձիու հետքեր և իսկույն
Գաղտագողի եկան անցան, գտան բարակ այն առուն,

Ուր որ Ռախշը առանց թամբի արածում էր մեկուսի,
Մեկը իսկույն պարանն առավ, որ օղակի ու որսի:

Երբ պարանը Ռախշը տեսավ՝ նրա միտքը հասկացավ,
Ու կատաղած առյուծի պես հարձակվեց աջ և թե ձախ:

Մեկին բռնեց, ատամներով վիզը պոկեց, նետեց դեն,
Քացիներով նա սկսեց մի քանիսին ջարդոտել:

Մի քանի թուրք Ռախշի վիզը իսկույն թոկի մեջ առան,
Օղակեցին ու բռնեցին, ապա իրենց հետ տարան:

Ճանապարհին նրանք ուրախ բաց արին խոսք ու զրույց,
Չի ամեն թուրք իր գողության բաժինն ուներ այդ ձիուց:

Ռախշին տարան այն արոտը, որտեղ որ կար շատ մատակ,
Որ խառնածին այդ նժույգից ծնվի նման մի քուռակ:

Լսել եմ, որ այդ քառասուն մատակներից մի մտրուկ
Ծնվեց, այն էլ մեծ ցավերով, Ռախշի նման մի նժույգ:

Ռոստամը երբ քնից զարթնեց, տեղից դանդաղ ելավ վեր,
Իսկույն Ռախշը միտը ընկավ, ուզում էր նա, որ թամբեր,

Բայց նժույգը չէր երևում, ինչքան նայեց դեսուդեն,
Ու զարմանքից չգիտեր թե՝ կորած իր ձին ո՞նց գտներ:

Տխրեց, երբ որ ձին չգտավ, Ռոստամ-Զալը հաղթաքայլ
Սաստիկ հուզված վճռեց գնալ դեպի մոտիկ Սեմենգան:

Բայց վարանեց, այսպես ասաց. «Ոտքով ինչպե՞ս գնամ ես,
Մարդիկ երբ որ տեսնեն, կասեն՝ Ռոստամ, ամոթ-ամոթ քեզ:

Ինչպե՞ս տանեմ ծանր գուրզը ու կապարճը իմ մեջքին,
Սաղավարտս, հսկա թուրս, այս ծանրաբեռ վագրենին:

Հիմա ոտքով ինչպե՞ս անցնեմ անապատը այս դժվար,
Թուրքը որ գա՝ ինչպե՞ս կռվեմ, երբ որ չունեմ երիվար:

Թուրանացիք չէ՞ որ կասեն. «Քնա՞ծ էր սա, թե մեռած,
Ինչպե՞ս եղավ, որ կորցրեց իր նժույգը ոսկեսանձ»:

Բայց ի՞նչ արած, ելք չկա այս նեղ վիճակից դուրս գալու,
Ուստի պետք է տխուր սիրտս դարձնեմ վշտիս միշտ հլու:

Պետք է կապեմ զենք-զրահս, գնամ փնտրեմ իմ ձիուն,
Գուցե գտնեմ ոտնահետքը, իզուր եմ ժամ կորցնում»:

Եվ անվանի քաջը իսկույն շալակն առավ թամբ ու սանձ,
Ճամփա ընկավ, ինքը իրեն այսպես խոսեց դառնացած.

«Այս աշխարհի կարգն է այսպես, վերջ չկա մեր տանջանքին,
Մի օր մենք ենք թամբի վրա, մի օր թամբը՝ մեր մեջքին»:

Ռոստամ-Զալը բռնեց Ռախշի ոտնահետքը ու գնաց,
Ծանր էր նրա ամեն քայլը, քանզի ցավով էր տարված:

ՌՈՍՏԱՄԸ ԳԱԼԻՍ Է ՍԵՄԵՆԳԱՆ

Այսպես, երբ որ Ռոստամ-Զալը գնաց հասավ Սեմենգան,
Նրա մասին տեղեկացավ Սեմենգանի մեծ արքան:

«Ոտքո՞վ եկավ քաջ Ռոստամը,- ամեն կողմից գոռացին,-
Որովհետև որսատեղում նա կորցրել է իր Ռախշ ձին»:

Վզրուկները առաջ եկան ու կանգնեցին շարեշար,
Ամեն մեկը սաղավարտի վրա ուներ մի նշան:

«Սա փահլևան Ռոստամ-Զա՞լն է,- միաբերան ասացին,-
Թե՞ երկնքից հենց նոր իջած արեգակ է ամպացիր»:

Շահը նույնպես ձիուց իջավ, ոտքով գնաց քաջի մոտ,
Տեսավ նրա շուրջը խմբված բազմաբազում զենք ու զորք:

Շահը նրան հարցուփորձեց. «Ի՞նչ է եղել, քաջ Ռոստամ,
Ո՞վ է քո դեմ դաժան վարվել, ասա, նրան պատիժ տամ:

Մեր քաղաքում բոլորը քեզ բարեկամ են հարազատ,
Սիրտդ ինչ որ ցանկանում է, իմ պահեստում կա առատ:

Քեզ ենք հանձնում մեծատարած Սեմենգանը ծաղկազարդ,
Քեզ մոտ կգան, կխոնարհվեն քաջերը մեր հնազանդ»:

Քաջ Ռոստամը ուշիմ լսեց և համոզվեց, որ արքան
Սրտում ոչ մի կեղծիք չունի, բարեկամ է իսկական:

Այնուհետև շահին ասաց. «Ինչպե՛ս եղավ, չգիտեմ,
Սակայն անթամբ իմ նժույգը անհետացավ աչքիս դեմ:

Որտեղ շամբ ու եղեգնուտն է, այնտեղ բարակ առու կա,
Առվի ափից ձիու հետքը բերում է մինչ Սեմենգան:

Թող որ շահը եղելության մասին հղի հրաման,
Ձեր բարության փոխարեն ես կհատուցեմ անպայման:

Բայց եթե իմ ձին չգտնեք, ո՛վ իշխաններ Թուրանի,
Դուք կենդանի չեք մնա երբ՝ Ռոստամ-Զալը թուր հանի»:

Շահը իսկույն պատասխանեց. «Ո՛վ փահլևան բազմափորձ,
Ո՛վ սիրտ կանի քո դեմ նյութել այդպիսի մի խարդախ գործ:

Դա այսօրվա մեր թանկ հյուրն ես, այդքան իզուր ես հուզվում,
Ցանկությունդ կկատարենք, ինչպես դու ես այդ ուզում:

Բարկությունը մարդու գլխին բերում է մեծ ցավ ու վիշտ,
Քաղցր խոսքը թունոտ օձին բնից դուրս է բերում միշտ:

Ո՛վ կարող է թաքուն պահել աշխարհահայտ քո ձիուն,
Երբ գիտեն, որ հսկա սուրդ գլուխներ է թռցնում:

Եկ միասին խնջույք անենք, զվարճանանք այս գիշեր,
Թող մեր հոգին առժամանակ վիշտ ու տանջանք չհիշե:

Անհոգ եղիր, քո նժույգը նորից քեզ մոտ է գալու,
Դրա համար մարդիկ ունեմ, հնարամիտ, փորձառու»:

Ռոստամ-Զալը ուրախացավ շահի խոսքից ջերմագին,
Թեթևացավ ու խաղաղվեց միշտ ալեկոծ իր հոգին:

Համաձայնեց գնալ շահի ապարանքը որպես հյուր,
Նրա պատվին մեծ իշխանը պատրաստել էր կերակուր:

Ռոստամ-Զալը մտածում էր, որ Սեմենգան քաղաքի
Տերը երբ որ գտնի Ռախշին, կարժանանա մեծ փառքի:

Շահը տվեց Ռոստամ-Զալին հարմարավետ օթևան
Ու անընդհատ վազվզելով հյուրասիրում էր նրան:

Այնուհետև Սեմենգանից մարդիկ բերեց անվանի,
Որ նրանցից ամեն մեկը Ռոստամի հետ քեֆ անի:

Հրամայեց իր խոհարար ծառաներին, որ նրանք
Խրախճանքի համար բերեն ուտեստ, գինի անքանակ:

Նրանք իսկույն պատրաստեցին կերուխումի երեկո,
Որ խնջույքին ներկա մարդիկ լինեն ուրախ, լինեն գոհ:

Ապա բերին մատռվակներ, երգիչ, բամբիռ ու թմբուկ,
Ամեն մեկը հագել էր մի ընտիր դիպակ, պերճաշուք:

Սեղանի մոտ հավաքվեցին երգիչ, պարող, ծառա, տեր,
Որ Ռոստամի դեմքին հանկարծ տխրության ամպ չնստեր:

Ռոստամ-Զալը կերավ, խմեց, նրան իսկույն դուրս տարան,
Հարբած էր նա ու քայլերը ուղղեց դեպի ննջարան:

Շահը հյուրի համար արդեն պատրաստել էր անկողին,
Մուշկի հոտը արբեցում ու քուն է բերում պառկողին:

Ճանապարհի հոգնությունից, թե խնջույքի թունդ գինուց,
Ռոստամ-Զալը հենց որ պառկեց՝ քնեց ինչպես կուշտ առյուծ:

ՌՈՍՏԱՄԻ ԵՎ ԹԵՀՄԻՆԵԻ ԱՄՈՒՍՆՈՒԹՅՈՒՆԸ

Արեգակը դանդաղ սահեց, անցավ դեպի մայրամուտ,
Աստված երկրի վրա փռեց գիշերային քողը մութ...

Դրսում լսվեց խորհրդավոր ինչ-որ մի ձայն թե շշուկ,
Ու Ռոստամի ննջարանի դուռը բացվեց կամացուկ՝

Ներս մտավ մի ստրուկ աղջիկ՝ ձեռքին բռնած մի ճրագ,
Եկավ կանգնեց Ռոստամ-Զալի անկողնու մոտ գլխահակ:

Լուսնի նման ճերմակադեմ մի կույս եկավ նրա հետ,
Արեգակի պես հրեղեն, վարդի նման բուրավետ:

Աղեղաձև հոնքեր ուներ ու գիսակներ թոկի պես,
Ուներ նոճու նման հասակ, դեմքը պայծառ, լուսագես:

Սլացիկ էր նոճու նման, հմայիչ էր, նրբիրան,
Ու Եմենի սուտակի պես պատկեր ուներ հուրհրան:

Հոգով, մարմնով մաքուր էր շատ, երկնային էր ու խելոք,
Եվ աշխարհիկ կյանքի մանրիկ չուներ իր մեջ նա իրոք:

Առյուծասիրտ Ռոստամ-Զալը հիացել էր չափազանց,
Թե ինչպես է Աստված կերտել այդպիսի կին արարած:

Ապա դարձավ նրան ասաց. «Ինչպե՛ս են քեզ անվանում,
Կես գիշերին ի՞նչ է եղել, ի՞նչ ես փնտրում դու անքուն»:

Իսկ աղջիկը պատասխանեց. «Իմ անունն է Թեհմինե,
Հոգիս մաշող տրտմությունը վշտածին ու շատ հին է:

Սեմենգանի թագավորի լույս աղջիկ են ինձ ասում,
Բոլորը մեզ հովազների ցեղախմբին են դասում:

Մինչև այժմ դեռ չեմ գտել ինձ հավասար զուգընկեր,
Տիեզերքը դեռ ինձ համար բախտի աստղ չի ղրկել:

Ոչ մի էակ մինչև այժմ չի տեսել ինձ բացերես,
Չեն լսել իմ ձայնը անգամ, ինչ գույնի են վարսերս:

Ես շատերից շատ անգամ եմ գովքեր լսել քո մասին,
Որ կռվի մեջ, ո՛վ փահլևան, հաղթում ես դու հովազին:

Ասում են, թե՝ սարսափում են քեզնից վագր ու առյուծ,
Զորավարի քո բազուկը կարծես լինի ծանր լուծ...

Դու Թուրանի հողն ես գնում հաճախ մենակ ու թաքուն,
Գիշերները դեգերում ես հետախույզի պես անքուն:

Եվ ասում են, որ խորովում, ուտում ես դու մի մեծ ցիռ,
Թրիդ զարկից նույնիսկ հողմը քիչ է մնում, որ լացի:

Սարսափում են, երբ տեսնում են ահեղ գուրզը քո ձեռքում,
Քո գոռոցից ասում են, թե՝ վագրի կաշին է ճաքում:

Թրիդ փայլը արծիվն անգամ ճանաչում է երկնքում,
Մագիլներից որսը գցում՝ կուչ է գալիս իր բնում:

Գոռ առյուծը նետած փոկիդ հետքից շեղում է ուղին,
Ամպը արյուն է անձրևում տեգիդ զարկից չեչտուղիղ:

Ամեն անգամ, երբ քո մասին պատմում են ինձ, ես անքուն
Զարմանքից թե մեծ կարոտից շրթունքներս եմ կրծոտում:

Ուզում էի տեսնել լանջդ, բազուկներդ առնական,
Մինչև որ դու եկար հասար մեր քաղաքը հյուրընկալ:

Քեզ համար եմ, ինձ փայփայիր փահլևանի քո գրկում,
Չի տեսել ինձ ձուկը ջրում, ոչ էլ հավքը ցամաքում:

Քո պատճառով չեմ հասկանամ ինչ եմ անում ես հիմա,
Ինձ թվում է, որ քամին է խելքս տարել անխնա:

Եվ երկրորդը՝ Աստված գուցե քեզնից ինձ տա մի որդի,
Որ Թուրանի գահին բազմի և իր հորը հաջորդի:

Գուցե որդիս հոգով, սրտով լինի քեզ պես տղամարդ,
Երկնքից մեծ գահ ստանա, արևից սեր՝ շողառատ:

Երրորդը, որ Սեմենգանը կխառնեմ ես, իմացի՛ր,
Գետնի տակ էլ, թե որ լինի՝ ես կգտնեմ քո Ռախշ ձին»:

Եվ Թեհմինեն այդպես խոսեց, թեթևացավ իր հոգին,
Քանզի քաջը ականջ դրեց նրա ամեն մի խոսքին:

Ռուստամ-Զալը հիացել էր Թեհմինեի լավ տեսքով,
Գեղեցկությամբ, շեն-շնորհքով, բայց առավել և խելքով:

Երբ իմացավ, որ կգտնի իր նժույգը, չափազանց
Ուրախացավ, նրա դեմքը արևի պես շողշողաց:

Անմիջապես իր մոտ կանչեց արքունիքի մի միջնորդ,
Եվ նա խունջիկ-մունջիկ գալով իսկույն եկավ քաջի մոտ:

Հրամայեց, որ նա գնա բերի գիտուն մի մոբեդ,
Որ իշխանին բարեխոսի, ամուսնանա դստեր հետ:

Շահին երբ որ հայտնի դառավ ցանկությունը կտրիճի,
Ուրախացավ, վեր սլացավ, ինչպես հպարտ մի նոճի:

Շահը իսկույն իր աղջկան տվեց քաջին անվանի,
Ամուսնության ձևն այդ, սակայն, հին օրենքն էր Թուրանի:

Շահի սիրտը ուրախությամբ բաբախեց ծեր կրծքի տակ,
Զի Ռուստամի հետ միացավ չքնաղ դուստրն իր միակ:

Երբ որ հայրը իր աղջկան տվեց քաջն Ռուստամին՝
Սեմենգանում ուրախացան բոլոր մարդիկ՝ այր, թե կին:

Ուրախության մատաղ արին, փող ցրեցին ամեն կողմ,
Կանչեցին ու գոռգոռացին. «Կեցցե՛ Ռուստամն արիատոհմ:

Ո՛վ փահլևան, երջանկանաս քո գեղեցիկ լուսնի հետ,
Թող թշնամուդ գլխին իջնի աստվածային մեծ աղետ»:

Նորապսակ զույգը մտավ ամուսնության առագաստ,
Նրանց համար շքեղաշուք մի ննջարան կար պատրաստ:

Երբ բացվեցին գիշերային թերթիկները կոկոնի՝
Աստված ճերմակ մարգարիտներ ցանեց՝ քաջը որ տոնի:

Այդպես, երբ որ սև սաթի մեջ առաջացավ մի սուտակ՝
Ռուստամ-Զալը և Թեհմինեն երջանկացան լուսնի տակ:

Ռուստամ-Զալը ձեռքի վրա ուներ մի թանկ եղնգքար,
Այդ գեղեցիկ քարի մասին ավանդական զրույց կար:

Բազկից հանեց քարը, տվեց Թեհմինեին և ասաց.
«Եթե բախտը առաջնեկը աղջիկ տվեց մեզ հանկարծ,

Ամրացրու սև գիսակին, որ չար ուժին նա հաղթի,
Որ արևի պես շողշողա բարի աստղն իր բախտի:

Իսկ թե բախտը հանկարծակի մեզ պարգևի մի տղա՝
Հոր նշանը կապիր բազկին, որ աշխարհը դղրդա:

Նարիմանյան Սամի նման կլինի նա միշտ անհաղթ,
Ու փահլևան Քերիմանի պես կունենա թագ ու թախտ:

Մեկ հարվածով ցած կգցի գոռ արծիվին լեռնանիստ,
Ինչքան էլ որ անհաշտ աչքով արևն այրի նրան խիստ:

Նա առյուծի կռիվն անգամ կհամարի հիմար խաղ,
Պատերազմի մեջ կգնա հսկա փղի պես անվախ»:

Թեհմինեի հետ զրուցեց առավոտից իրիկուն,
Գիշերն անցավ, սակայն նրանք նստել էին դեռ անքուն:

Լուսաբացին արևն ելավ, ինչպես հրե մի վահան,
Եվ աշխարհի վրա փռեց բորբ շողերը հուրհրան:

Ռուստամ-Զալը հրաժեշտի պահին գրկեց գեղուհուն
Եվ համբուրեց աչքն ու ունքը՝ կարոտներով մի անհուն:

Բաժանումի ցավից լացեց լիալուսին Թեհմինեն,
Քաջի սիրտը քիչ էր մնում, որ վանդակից դուրս ելներ:

Այդ ժամանակ Ռուստամի մոտ եկավ շահը ծանրախոհ,
Հարցուփորձեց՝ թե Իրանի քաջը գո՞հ է, թե դժգոհ:

Այնուհետև հայտնեց նրան, որ գտել է իր Ռախշ ձին,
Ռուստամ-Զալի վառ աչքերը երջանկությամբ փայլեցին:

Գնաց թամբեց իր նժույգը Սեմենգանից որ տանի,
Ուրախությամբ գնաց, քանզի գոհ էր շահից Թուրանի:

Հողմի նման թուրանական հողից հասավ Սիեստան,
Թեհմինեին նա իր մտքից չհանեց ոչ մի անգամ:

Ապա եկավ Զաբուլիստան, թեթևացավ իր հոգին,
Ինչ որ տեսել ու լսել էր՝ նա չպատմեց ոչ մեկին:

ՍՈՀՐԱԲԻ ԾՆՈՒՆԴԸ

Շահի դստեր գլխին շրջեց ուղիղ ինը լուսընկա,
Լույսի նման աշխարհ բերեց լուսնանման մի տղա:

Նա կարծես թե Ռուստամ-Զալն էր, հորը նման էր այնքան,
Կամ թե առյուծ Սամն էր, կամ թե Նարիմանը հաղթաքայլ:

Մայրը նրա դեմքին տեսավ ուրախ ծիծաղ, երբ ծնվեց,
Կայտառության համար էր, որ նրան Սոհրաբ անվանեց:

Մեկ ամսական հասակում նա կարծես լիներ տարեկան,
Փղի նման վիթխարի էր, Ռուստամ-Զալն էր իսկական:

Երբ լրացավ երեք տարին՝ նիզակն առավ, որ մրցի,
Հինգ տարեկան հասակում նա նմանվում էր առյուծի:

Երբ լրացավ տասը տարին՝ Սեմենգանում չկար մարդ,
Որ նրա հետ ասպարեզում գնար մղեր ձիամարտ:

Փղի հսկա մարմին ուներ, իսկ երեսը՝ ալ գույնի,
Նրա ամեն մի բազուկը նմանվում էր մի սյունի:

Երբեմն նա տանից փախչում, դեպի դաշտերն էր վազում,
Նրա սիրած վագրախաղը միայն իրեն էր սազում:

Իսկ երբեմն վազում էր նա պոչը բռնում ձիերի,
Կանգնեցընում արագ վազքից ու զարմացնում քաջերին:

Եվ մի օր էլ տուն վազելով մորը հարցրեց նա այսպես.
«Մի հարցով եմ քեզ դիմելու, բայց պետք է դու ճիշտն ասես:

Ի՞նչ տոհմից եմ սերում, մայ՛ր իմ, ունե՞մ պապեր փառապանծ,
Հորս մասին երբ հարցնեն՝ ի՞նչ պատասխան տամ մարդկանց:

Եթե ինձնից այդ թաքցնես՝ քեզ հայտնում եմ մեկընդմիշտ,
Կամ կենդանի չես գտնի ինձ, կամ քեզ կտամ ցավ ու վիշտ»:

Իր զավակի հարցուփորձից խիստ սարսափեց Թեհմինեն,
Եթե չասի՝ իրեն համար դաժան օրեր պիտ լինեն:

Անմիջապես պատասխանեց. «Այժմ լսիր, իմ որդի,
Ուրախ պահիր ջահել սիրտդ, մի՛ նեղանա, մի՛ տրտմիր:

Դու զավակն ես հաղթաբազուկ ու քաջարի Ռոստամի,
Նարիմանյան Սամի թոռն ես, Զալզերի կամ Դեստանի:

Նրա նման հասակը քո ձգտում է միշտ լուսնի կողմ,
Որովհետև ապուպապդ ունեն միայն ազնիվ տոհմ:

Աստվածակերտ այս աշխարհը հաստատուն է քանի դեռ,
Դու չես գտնի Ռոստամի պես քաջ փահլևան ոչ մի տեղ:

Առյուծի քաջ սիրտ ունի նա, հսկա մարմին փղի չափ,
Նրա ահից սարսափում են կոկորդիլոս ու վիշապ:

Այս աշխարհը դեռ չի տեսել Սամի նման մի հսկա,
Աստված նույնիսկ սարսափում է՝ նրան չնչին վնաս տա»:

Պատմեց որդուն, այնուհետև բերեց թաքուն մի նամակ,
Ու նամակի հետ հայրական ճոխ նվերներ անքանակ:

Բերեց նաև երեք փաթեթ ոսկի, գոհար ու հակինթ,
Այդ բոլորը նրա հայրը ուղարկել էր Իրանից:

«Նայի՛ր, Սոհրաբ,– ասաց մայրը,– երբ ծնվեցիր լուսնի տակ,
Հայրդ սրանք ուղարկեց քեզ, որպես նվեր-հիշատակ:

Նայիր բոլոր ընծաներին ու նամակին ծնողիդ,
Ռոստամն, անշուշտ, այնպես արավ, որ լույս լինի նոր ուղիդ:

Արժանավոր հիշատակդ պահիր աչքի լույսի պես,
Գիտցի՛ր, որդիս, հորդ ընծան գուցե մի օր պետք գա քեզ:

Եթե հայրդ իմանա, որ իր նշանի անվան տակ
Դու անքանակ զորք ես կազմել՝ այրուձի և հետևակ,

Քեզ կկանչի իսկույն իր մոտ կամ սուրհանդակ կուղարկի,
Մայրդ նույնպես կուրախանա, որ ունի քեզ պես որդի:

Սակայն զգույշ, թող չիմանա Աֆրասյաբը չարակամ,
Զի Ռոստամի թշնամին է, նենգամիտ է նա անգամ:

Աֆրասյաբի կրնկի տակ ողջ Թուրանն է սարսափում,
Նա կարող է հորդ քենի համար պահել քեզ բանտում»:

Իսկ Սոհրաբը պատասխանեց. «Հիմա չկա մի էակ,
Որ քո հայտնած խորը միտքը ծածուկ պահի կրծքի տակ:

Մինչև հիմա ինչո՞ւ ես դու գաղտնի պահել, մայր բարի,
Օրինավոր իմ ծնունդը և տոհմը իմ քաջարի:

Ավանդական զրույցների և քաջամարտ այրերի
Մասին երբ որ խոսք է լինում՝ փովերգում են Ռոստամին:

Երբ այդպիսի փահլևանի որդին եմ ես, չգիտեմ,
Ինչո՞ւ ինձնից ծածուկ պահել, խստությո՞ւն չէ իմ հանդեպ:

Կհավաքեմ իմ ձեռքի տակ այրուձի և հետևակ,
Թուրանացի զինվորներից կկազմեմ մի մեծ բանակ՝

Կարշավեմ ես դեպի Իրան ու կավերեմ անխնա,
Որ վրեժի թանձր փոշին մինչև լուսին բարձրանա:

Արքայական գահաթոռից ցած կնետեմ Քաուսին,
Ողջ Իրանում մարդ չեմ թողնի ազգուտոհմից մեծ Թուսի:

Գուդերզին և գոռ Բահրամին, հսկա Գիվին թրքաբեն
Արքայազուն Գոսթեհեմի հետ միասին կջարդեմ:

Ապա Ռոստամ-Զալին կտամ գահ ու գանձը Իրանի,
Եվ Քաուսի գահաթոռը, որին հայրս է արժանի:

Այնուհետև իմ զորքերով կգամ նորից ես Թուրան,
Աֆրասյաբի դեմ կկանգնեմ իմ բանակով անվարան:

Թուրանշահի գահը պիտի լոկ իմ ձեռքով մոխրանա,
Որ իմ տեգի ծայրը նույնիսկ արևից վեր բարձրանա:

Կդարձնեմ քեզ թագուհի, դու կփայլես հանց արփի,
Ես կկռվեմ առյուծի պես, որ ոսոխը սարսափի:

Ռոստամի պես հայր ունեմ ես, նա էլ ինձ պես քաջորդի
Արքայական թագ ու գահը չեմ հանդուրժի ոչ ոքի:

Եվ քանի դեռ տիեզերքում կա լուսին և արեգակ,
Ինչո՞ւ պիտի աստղը գլխին դնի շահի ոսկե թագ»:

ՍՈՀՐԱԲԻ ՍԱՄԱՆԴ ՁԻՆ

Ահա մի օր Սոհրաբն եկավ, մոր հետ խոսեց և ասաց.
«Իմ գործերը հետզհետե լավանում են անկասկած:

Ժամանակն է, որ հիմա ես շտապ մեկնեմ դեպ Իրան,
Իմ աչքերով տեսնեմ հորս՝ Ռոստամ-Զալին փահլևան:

Բայց լավ նժույգ է հարկավոր, որ արշավեմ հանց քաջայր,
Որ իմ ձիու սմբակի տակ չդիմանան քար ու ժայռ:

Որ փղի պես ուժեղ լինի, արծվի նման սրաթև,
Որ ձկան պես լողա ջրում, լինի վիթի պես թեթև:

Մա՛յր իմ, գտիր ամրասմբակ մի երիվար ոսկեբաշ,
Որ իմ հսկա գուրզը տանի ու մարմինս ծանրաքաշ:

Վայել չէ, որ թշնամու դեմ գնամ մեն ու միայնակ,
Ինչպե՛ս գցեմ ծանր գուրզս, ինչպե՛ս նետեմ ես նիզակ»:

Մայրը լսեց իր զավակին, տեղից ելավ և ապա,
Անմիջապես կանչեց ճարպիկ իր ծառային ձիապան,

Որ նա իսկույն դաշտից բերի երամակներ անհամար,
Եվ իր որդու համար ջոկի մի ցեղական երիվար:

Որ Սոհրաբը ինչ նժույգ էլ երբ համարի պիտանի՝
Թամբի կամ թե կռվի գնա, կամ թե իր հոր մոտ տանի:

Դաշտավայրում կային ընտիր երամակներ բազմացեղ,
Ով փնտրում էր՝ նա կարող էր նժույգ գտնել ամեն տեղ:

Այդ բոլորին քաղաք բերին, ու Սոհրաբը հանց կորյուն
Մեծ պարանը ձեռքը առավ, որ օղակի իր ձիուն...

Այդքան բազում երիվարներ դեռ չէր տեսել նա երբեք,
Կաշվե փոկով բռնեց նրանց, ապա փորձեց մեկ առ մեկ:

Փորձի ժամին նժույգների մեջքեր կոտրեց քաջը մեր,
Բայց ոչ մեկին չհավանեց ու չգիտեր ինչ աներ:

Եվ Սոհրաբը սաստիկ տխրեց իր փորձերից անօգուտ,
Երբ նրա մոտ զորագնդից մի մարդ եկավ շուտափույթ:

Նրան ասաց. «Ես ունեմ մի ռախշազքուռակ տոհմիկ ձի,
Նրա վազքը նետի պես է, իսկ թռիչքը՝ շանթաձին:

Երբ վազում է՝ սմբակներից հանում է կայծ ու կրակ,
Նրա նման ձի չես տեսել այս աշխարհում բովանդակ:

Աքացի է տալիս ծովի ձիացուլի պես ահեղ,
Որոտում է շանթի նման, նա հսկա է, ինչպես լեռ:

Ժայռի նման անսասան է, բայց երբ մի ձեռք է կպչում՝
Անցնում է նա ծով ու ցամաք, հանց սրաթև մի թռչուն:

Ագռավաքայլ ռստյուններով թռչկոտում է սարեսար,
Ծովում լողում է համաչափ՝ ձկների հետ հավասար:

Սլանում է դաշտում ինչպես պրկաղեղից թռած նետ,
Ամրոցներ է նա կործանում, կարծես լինի գարնան գետ»:

Սոհրաբը շատ ուրախացավ, երբ որ լսեց գովքը այդ,
Հրճվանքից ու մեծ հուզմունքից՝ դեմքը դառավ կարմիր վարդ:

Այնուհետև կարմրաբաշ, գեղեցկագույն մի քուռակ
Իսկույն բերին Սոհրաբի մոտ: Տեղից ելավ և արագ

Ձեռքը դրեց, ամուր սեղմեց մեջքը ընտիր քուռակի,
Բայց աներեր կանգնեց տեղում, հենված ամուր սմբակին:

Շոյեց ձիուն, անմիջապես թամբեց նրան ու հեծավ,
Սեգ Սոհրաբը ընտրելագույն իր նժույգով պարծեցավ:

Թամբի վրա հսկա ժայռ էր, կարծես լեռն էր Բիսիթուն,
Ձեռքին բռնած մեծ նիզակը թվում էր մի հսկա սյուն:

Եվ նա ասաց. «Այժմ ունեմ ես օգնական մի նժույգ,
Աստված լսեց իմ բաղձանքը ու պատճառեց մեծ հաճույք:

Պետք է այժմ ես հավաքեմ բազմաբազում զորք ու զենք,
Որ Քաուսի գահը անեմ հող ու ցեխին համարժեք»:

Մտադրվեց Սոհրաբը և վերադարձավ տուն մենակ,
Որ պատրաստի Իրանի դեմ պատերազմող մեծ բանակ:

Ապա գնաց ներկայացավ Դեստան պապին ռազմագետ,
Որ նրանից խորհուրդ լսի՝ ինչպես վարվի զորքի հետ:

Սեմենգանի արքան լսեց նպատակը իր թոռան,
Նրան տվեց հագուստեղեն, ընտիր գնդեր կռվազան:

Եվ նվիրեց արքայական ոսկե գոտի, սաղավարտ,
Ձիեր, ուղտեր, մարգարիտներ, մատանիներ ոսկեզարդ:

Դողպատակուռ թրեր, զենքեր և պերճանքներ բազմանուն,
Սակայն պապը զարմանում էր, երբ նայում էր պատանուն:

Առատաձեռն նվերները հին օրենքի համաձայն
Դրեց թոռան ոտքերի տակ, այնուհետև հեռացավ:

ՀՈՒՄԱՆԸ ԵՎ ԲԱՐՄԱՆԸ ՍՈՀՐԱԲԻ ՄՈՏ

Աֆրասյաբին հասավ նույնպես համբավը քաջ Սոհրաբի,
Երբ նա նավը ջուրն է գցել՝ Իրանը պիտ սարսափի:

Նա հավաքեց բազմաքանակ ասպատակներ նետաձիգ,
Հպարտ նոճու պես գլուխը բարձրացրեց մինչ երկինք:

Թեպետ նրա բերնից հիմա գալիս է դեռ կաթի հոտ,
Բայց տվել է ուշքն ու միտքը պատերազմին աղմկոտ:

Աշխարհին արար նա կխեղդի նախճիրի տաք արյան մեջ,
Եվ Քավուսի դեմ կտանի փահլևաններ ռազմատենչ:

Վստահ է նա իր բանակի և իր ուժին մահագդու,
Աշխարհում նա չի ճանաչում իրենից վեր այլ մարդու:

Հարկավոր չէ երկար խոսել, ինչ էլ լինի չլինի,
Իր տարիքի համեմատ նա մեծացել է ավելի:

Ով որ ունի արիածին, խիզախ մարդու նոր սերունդ,
Նրա տոհմից աշխարհ չի գա անգամ ստոր մի ծնունդ:

Աֆրասյաբը լավ հասկացավ՝ ո՞վ է քաջը վագրասիրտ,
Ու հրճվանքից նրա դեմքին փայլեց ուրախ մի ժպիտ:

Նա Թուրանի զորքից ընտրեց երկու զինվոր լայնալանջ,
Ծանրակշիռ գուրզեր շարժող, պատերազմում աննահանջ:

Քաջ Բարմանին և Հումանին՝ երկու անվախ հերոսի,
Որ հետամուտ առյուծի պես արագ վազեն դեպ որսի:

Տասն երկու հազար խիզախ հանձնեց նրանց կռվելու,
Որոնք պետք է սեգ Սոհրաբին ծառայեն հեզ ու հլու:

Այնուհետև Աֆրասյաբը նրանց դիմեց դառնախիստ.
«Այս գաղտնիքը չտանեք դուրս՝ իմ քաղաքից գահանիստ:

Աշխատեցեք օգուտ քաղել, հնար գտեք այսուհետ,
Որ անծանոթ մնան ընդմիշտ հայր ու որդի իրար հետ:

Ռոստամ-Զալի որդին պետք չէ, որ իմանա հայր ունի,
Ոչ էլ հորը տեղյակ պահեք նոր ծնունդը իր տոհմի:

Սեգ Սոհրաբին ես օժանդակ զորքեր կտամ կռվելու,
Քանզի գիտեմ, որ Իրանում նա երկար է մնալու:

Ռոստամ-Զալը և Սոհրաբը երբ կկռվեն իրար դեմ,
Ոչ զավակը կճանաչի, ոչ էլ հայրը թրքաբեն:

Այսպես, գուցե ոչնչանա Ռոստամ-Զալը փահլևան,
Որդիական սերը սրտում թողնի աշխարհին այս ունայն:

Առանց Ռոստամ մենք Իրանը կնվաճենք այնուհետ,
Քավուս շահը կընկնի գահից, հանց աղեղից թռած նետ:

Իսկ Սոհրաբի համար երկար ճանապարհի կա լուսնի տակ,
Երբ որ քնի՝ այնպես կանենք, որ աչքերը մնան փակ:

Իսկ եթե նա կյանքից զրկվի իր հարազատ հոր ձեռքով,
Թող հոր սրտում կրակ վառվի, աչքը լցվի արցունքով»:

Աֆրասյաբը բաց Հումանին ու Բարմանին փորձառու
Սեգ Սոհրաբի մոտ ուղարկեց՝ կռվում նրան օգնելու:

Նրանց հանձնեց տասը նժույգ, նաև ուղտեր, որ տանեն,
Ամեն մեկի թամբի վրա կար անքանակ ոսկեղեն.–

Փղոսկրե մի գահ տվեց՝ պատվանդանը փիրուզե,
Եվ սուտակե մի թագ, որ նա դնի գլխին իր լուսե:

Ապա շահը սեգ Սոհրաբին հղեց քսու մի նամակ,
Եվ նամակում շողոքորթեց, բայց իր սրտին հակառակ.

«Եթե Քավուս շահից խլես թագն ու գահը Իրանի,
Աշխարհին արար քո հռչակը մինչև երկինք կհանի:

Արդարության սերմ կցանես, ո՛վ իմ ջահել իշխանիկ,
Պատերազմից հոգնած մարդիկ կապրեն խաղաղ, երջանիկ:

Այնքան երկար ճանապարհի չէ Սեմենգանից մինչ Իրան,
Իրանը և իմ Թուրանը սահմանակից են իրար:

Ուղարկում եմ ես այնքան զորք, որքան որ քեզ պետք կգա,
Իշխանական թագ դիր գլխիդ, ինչպես արքա բարձրագահ:

Հումանի և Բարմանի պես բազմահմուտ, ռազմակիրթ
Մարդ չես գտնի, որ կարենա պատառոտել վագրի սիրտ:

Եվ չինական Չեզաթ-խանը իր բանակը քաջարի
Հանձնում է քեզ, որ դու տանես Իրանի դեմ պայքարի:

Այս բոլորը տալիս եմ քեզ, առաջնորդիր քո խելքով,
Հյուրասիրիր, մինչև գտնես պատերազմի տեղը քո:

Քո բանակի հարձակումից ճրագներ են հանգչելու,
Բայց թշնամին ողջ աշխարհում տեղ չի գտնի փախչելու»:

Աշխարհակալ Աֆրասյաբի և՛ նամակը, և՛ ընծան,
Երբ ծանրաբեռ ձիերի հետ Սեմենգանին մոտեցան՝

Համբավաբեր սուրհանդակը իսկույն հայտնեց Սոհրաբին,
Իսկ նա պապի հետ ձի նստեց, կապեց ամուր իր գոտին՝

Քամու նման արագընթաց գնաց մոտը Հումանի,
Ուրախացավ, երբ որ տեսավ բանակները Թուրանի:

Իսկ Հումանը երբ որ նայեց նրա ուս ու ձեռքերին՝
Ապշած կանգնեց մի պահ տեղում՝ չհավատաց աչքերին:

Թուրանշահի փակ նամակը հանձնեց նրան և իսկույն,
Բեռնաթափեց ընծաները, ասաց. «Ո՛վ դու քաջ կորյուն,

Կարդա՛ գիրը Աֆրասյաբի, ուրախացիր անսահման,
Այնուհետև դու պիտի տաս մեզ անհապաղ հրաման»:

Սեգ Սոհրաբին զեկուցեցին թե՛ սպա, թե՛ զորապետ,
Աֆրասյաբը ինչ որ ասել՝ ուղարկել է նրանց հետ:

ՍՈՀՐԱԲԻ ԵՎ ՀԵՋԻՐԻ ՄԵՆԱՄԱՐՏԸ

Սոհրաբը երբ կարդաց շահի նամակը խիստ ու անհաշտ,
Ոտքի հանեց իր զորքերը, տարավ դեպի ռազմադաշտ:

Աֆրասյաբի բանակները ճամփա ընկան գունդ առ գունդ,
Ամեն մի զորք իշխանական մի տոհմից էր, մի ծնունդ:

Թմբուկների մարտակոչից ելավ զորքը Սոհրաբի,
Ճամփա ընկավ աղաղակով, որ Իրանը սարսափի:

Ոչ ոք սիրտ չէր անում լարել Սոհրաբի դեմ պրկաղեղ,
Թեկուզ լիներ կոկորդիլոս, լիներ առյուծ մի ահեղ:

Նա համարձակ զորքը տարավ մինչ սահմանը Իրանի,
Ճանապարհին՝ գյուղ ու քաղաք նա դարձրեց ամայի,

Մինչև հասավ նա մոտակա քարաբերդը սպիտակ.
Այն Իրանի ապավենն էր ողջ Թուրանի աչքի տակ:

Բերդապահը քաջ Հեջիրն էր, մի փորձառու զորապետ,
Որ կռվելիս ճարպկորեն գործ էր ածում գուրզ ու նետ:

Այդ բերդում էր ապրում նույնպես Գոսթեհեմը անճոռնի,
Կարճ էր, խիզախ, ձգտում էր նա իշխանական աթոռի:

Գոսթեհեմը աղջիկ ուներ, ձիավոր էր մի անվախ,
Քաջ էր, սակայն գոռոզամիտ, չարակամ էր ու խարդախ:

Երբ Սոհրաբը իր բանակով հասավ բերդը ամրակերտ,
Քաջ Հեջիրը իսկույն ելավ՝ ձեռքը առավ գուրզ ու վերտ,

Ու շուտափույթ թամբեց իր ձին, հաղթանակի հույսով լի
Իջավ մոտիկ ռազմադաշտը, ուր կանգնել էր թշնամին:

Նա բարձրաձայն դիմեց դեպի զորագունդը թուրքական,
Բայց իր ձայնից երևում էր, որ կտրիճ էր իսկական:

«Հապա՛, թուրքե՛ր, ո՞վ է ձեր մեջ այն խիզախը վագրասիրտ,
Թող ինձ մոտ գա, որ ես գետնեմ նրա մեջքը ամրապինդ»:

Ոչ ոք նրա դեմ սիրտ չարեց դուրս գալ կռվի ասպարեզ,
Որովհետև հաղթանդամ էր ու ճարպիկ էր վագրի պես:

Սոհրաբը երբ տեսավ զորքի մեջ սկսվեց նոր խուճապ,
Թուրը քաշեց իր պատյանից, քանզի հուզված էր անչափ:

Նա դուրս թռավ զորքի միջից, վազքը արագ էր քամուց,
Ու Հեջիրի կողմը նետվեց ինչպես հարբած մի առյուծ:

«Ո՛վ ես,- ասաց,- որ սիրտ արիր, ելար իմ դեմ կռվելու,
Երբ չգիտես, թե այս կռվում վերջդ ինչ է լինելու:

Ի՞նչ մարդ ես դու, որտեղի՞ց ես, ո՞ւմ որդին ես, ի՞նչ ազգի,
Մայրդ այսօր քո դիակի վրա պիտի լաց երգի»:

Իսկ Հեջիրը պատասխանեց, «Կամքից թույլ չեմ, ուժից զուրկ,
Որ սարսափեմ իմ թշնամուց: Ինձ ահ չի տա ոչ մի թուրք:

Շատ կտրիճներ եմ տապալել, դու էլ շուտով կթաղվես,
Ինձ մոտ հզոր առյուծն անգամ դառնում է խեղճ մի աղվես:

Քաջ Հեջիր են անվանում ինձ, կռվում երբեք չեմ թեքի,
Քո գլուխը կթռցնեմ մեկ հարվածով իմ տեգի:

Քո մարմինը ես կուղարկեմ Քաուս շահին ահարկու,
Որ դիակը քո դարձնի անգղների կերակուր»:

Իսկ Սոհրաբի ծիծաղն եկավ, մեծախոսը երբ լռեց,
Նա բարկությամբ քշեց իր ձին դեպի կռվի ասպարեզ:

Մենամարտը խիստ սաստկացավ այնքան արագ, շեշտակի,
Որ չէր ջոկվում, թե նիզակը որ կողմից էր, որ մեկի:

Եվ կատաղած փղի նման քաջ Սոհրաբը քշեց ձին,
Որ Հեջիրին մեկ հարվածով անի փոշի հողմացիր:

Եվ Հեջիրը սուր նիզակով զարկեց մեջքին Սոհրաբի,
Բայց ամուր էր մեջքակալը, ոչ մի նիզակ չէր ծակի:

Սեգ Սոհրաբը իր նիզակը ճոճեց ինչպես ահեղ փիղ,
Ու Հեջիրի մեջքին զարկեց ամբողջ թափով շեշտուղիղ:

Նրան թամբից այնպես պոկեց, կարծես հողմ էր կործանող,
Մտքում անգամ չէր կասկածում, թե տապալել չէր կարող:

Այնպես գետնեց, կարծես լիներ ժայռից պոկված մի բեկոր,
Քիչ էր մնում հոգին փչեր, երբ տապալվեց գլխիկոր:

Ու Սոհրաբը ցատկեց ձիուց, չոքեց կրծքին, որ խեղդի,
Կամ գլուխը մարմնից պոկի, այնուհետև դեն նետի:

Բայց Հեջիրը ճարպկորեն իսկույն թեքվեց աջ կողքի,
Եվ աղերսեց, որ Սոհրաբը սիրտը թրով չճեղքի:

Քաջ Սոհրաբը լսեց նրան, սուրը թողեց պատյանում,
Միշտ օգտակար խրատները հաղթանակի են տանում:

Կապեց նրա ձեռքն ու ոտքը, որ չծլկի, չխաբի,
Այդ առաջին հաղթանակի մեծ նվերն էր Սոհրաբի:

Եվ ուղարկեց Հումանի մոտ որպես պատանդ կամ գերի,
Իսկ Հումանը զարմացել էր, չէր հավատում աչքերին:

ՍՈՀՐԱԲԻ ԵՎ ԳՈՐԴԱՖԵՐԻԴԻ ՁԻԱՄԱՐՏԸ

Բերդում իսկույն լուր տարածվեց, որ Հեջիրին գերեվար
Տարան Թուրան և նրա հետ՝ պատերազմի մեծ ավար:

Բոլոր մարդիկ աղմկեցին, սկսեցին ախ-ախել,
Քանզի նրան Աֆրասյաբը մտադրվել էր կախել:

Աղաղակի ձայնը հասավ Գոսթեհեմի աղջկան,
Նա լավ գիտեր, որ Հեջիրը զորավար էր իսկական:

Այդպիսի մեծ հարված բնավ ոչ մի էակ չէր տանի,
Ուստի սրտից հոգոց հանեց, ինչպես սառը մի քամի:

Նա ձիավոր քաջ աղջիկ էր, և՛ գուրզ ուներ, և՛ աղեղ,
Մեծ անուն էր հռչակել նա պատերազմում արնահեղ:

Գորդաֆերիդ էին ասում Գոսթեհեմի աղջկան,
Ողջ Իրանում նրա նման մենամարտող կին չկար:

Երբ Հեջիրի դժբախտության լուրը հասավ ականջին,
Դեմքից իսկույն անհետացավ կարմիր գույնը կակաչի:

Եվ քանի որ սուրհանդակը բերել էր լոկ մահագույժ,
Ամաչելուց դեղնել էր նա մեմփածաղկի պես քնքուշ:

Ձիավորի զրահ հագավ և արշավեց կատաղի,
Գործի համար նա ժամանակ չուներ, որ էլ հապաղի:

Զրահի տակ իսկույն ծածկեց գիսակները սևաթույր,
Այնուհետև գլխին դրեց մի սաղավարտ երկնագույն:

Հսկա բերդից իսկույն թռավ նման անհաղթ առյուծի,
Սանձել էր նա մենամարտի համար ահեղ հողմածի:

Քամու նման սլացավ ու եկավ զորքի մոտ թուրքի,
Կանչեց, ասես ձայնը հիմա ամպրոպի պես պիտ պայթի:

«Ո՞վ է ձեր մեջ զորապետը, կամ թե ունե՞ք մի քաջ մարդ,
Որ վիշապի ուժ ունենա իմ դեմ մղի մենամարտ»:

Բայց ոչ մի թուրք սիրտ չարեց իր ուժը չափի նրա հետ,
Ինչքան էլ նա կրկնում էր առաջարկն այդ չարաղետ:

Առյուծասիրտ Սոհրաբը երբ տեսավ մի նոր ախոյան,
Շուրթը կծեց ու ծիծաղեց, մտքում կշռեց նա նրան:

«Ահա եկավ մի ցիռ,– ասաց,– գնամ նրան որսալու,
Թեկուզ գուրզ ու սրի տեր է, բայց իմ ձեռքն է ընկնելու»:

Հագավ ամուր զենք ու զրահ քաջ զինվորի պես հպարտ,
Գլխին դրեց չինական մի երկաթակուռ սաղավարտ:

Եկավ կանգնեց թշնամու դեմ ու մռնչաց զայրագին,
Իսկ զինավարժ աղջիկը երբ տեսավ խիզախ Սոհրաբին՝

Առավ տեգը և աղեղը, և նիզակը սրածայր,
Այդ նետերով արծվին անգամ նա կգցեր լուսնից վար:

Նա Սոհրաբի վրա տեղաց սուր նետերի հորդ տարափ,
Մենամարտի դաշտում արագ տարածեց ահ ու սարսափ:

Բայց Սոհրաբը այդ արարքը համարեց շատ անխոհեմ,
Ու բարկացած թամբեց իր ձին ու սլացավ նրա դեմ:

Գորդաֆերիդն երբ որ տեսավ սեգ Սոհրաբը համարձակ
Արշավում է ուղիղ իր դեմ, ինչպես բոցեղ մի կրակ՝

Ուսին գցեց լայն աղեղը, քաշեց սանձը նժույգի,
Ապա կանգնեց ձիու մեջքին, ձին ծառս եղավ շեշտակի:

Նա նիզակի ծայրը ուղղեց Սոհրաբի դեմ՝ հարվածի,
Ամբողջ թափ ու ուժը տալով սուր նիզակին ու սանձին...

Սոհրաբը երբ տեսավ նրան՝ դառավ կարծես շանթաբոց,
Ջի ոսոխը հնարել էր մենամարտի նոր միջոց:

Անմիջապես քաշեց ձիու սանձափոկը ամրակապ
Ու սլացավ ինչպես Սերոշ-Ազերգեշասպ հրեշտակ:

Ժանիքաբաց առյուծի պես գտել էր մի որսացու,
Եվ թշնամու դեմ լարեց նա իր նետերը մահացու:

Մի ձեռքով նա սուր էր բռնել, իսկ մյուսով՝ ամուր տեգ,
Մեջքին ուներ երկաթե գուրզ, ուսին՝ աղեղ կորաթեք:

Թափով զարկեց ձիավորի երկաթ-գոտուն ամրակար,
Ու ոսոխը զենք-զրահով ձիու թամբից ընկավ վար:

Ու Սոհրաբը փորձեց նրան գցել ձիու ոտքի տակ,
Ինչ ճոկանի մեկ հարվածով ցած են գցում մի գնդակ:

Բայց աղջիկը չվարանեց խելք ու վարքով կանացի,
Թուրը քաշեց իր պատյանից, որ ոսոխին հարվածի:

Նա Սոհրաբի տեգին զարկեց՝ տեգը եղավ երկու կես,
Նորից նստեց թամբի վրա, նորից ելավ ասպարեզ:

Սոհրաբի դեմ մենամարտը երբ որ գտավ անհնար՝
Շրջեց դեմքը, որ փախչելու համար գտներ ճանապարհ:

Սեգ Սոհրաբը մենամարտում իր նժույգն էր թռցնում,
Նա բարկության պահին նույնիսկ արեգակ էր հանգցնում:

Գոռգոռալով քշեց իր ձին ինչպես ահեղ աժդահա,
Խփեց գլխին, մի կողմ նետեց սաղավարտը աղջկա:

Եվ զրահի տակից իսկույն թափվեց հերքը սևաթույր,
Փայլատակեց նրա դեմքը արևի պես ոսկեհուր:

Սոհրաբը նոր հասկացավ, որ աղջիկ էր նա մի ծպտյալ,
Որ ծածկել էր գլխարկի տակ իր ծամերը սևափայլ:

Նա զարմացած ասաց. «Եթե Իրանը մեզ ծանակում
Մենամարտի համար մեր դեմ աղջիկներ է ուղարկում,

Ապա քաջայր մարդիկ եթե վաղը մեր դեմ ուղարկի,
Մեր մոխիրը կբարձրանա և աստղերը կողակի»:

Ասաց, շտապ թամբից հանեց գալարահյուս մի պարան,
Ապա գցեց և օղակեց այդ աղջկան նրբիրան:

Աղջիկը ճիգ ու ջանք թափեց, որ ազատվի անարգել,
Բայց իզուր էր, զի պարանը նրա մեջքն էր օղակել:

«Իմ ձեռքից դու չես ազատվի,- Սոհրաբն ասաց աղջկան,–
Կինը ի՞նչ է, որ ձի նստի ու զենք կրի մարտական:

Քեզ պես մի որս դեռ չի ընկել իմ ցանցի մեջ առայսօր,
Պղտոր ջրում ձուկ ցանկացար՝ ընկար ձեռքը իմ հզոր»:

Ուրիշ հնարք երբ չգտավ՝ դեմքը շրջեց և ի ցույց
Ասաց. «Գործով խիզախ ես դու, ո՛վ քաջերի քաջ առյուծ.

Մեր երկուսի զորքը կանգնել՝ նայում է մեզ ակնդետ,
Թե ինչպես ենք ասպարեզում մենամարտում իրար հետ:

Նրանք տեսան և իմ դեմքը, և գլուխս վարսաթափ,
Լավ իմացիր, որ քո մասին կբամբասեն անկասկած,

Թե. «Նայեցեք, մի կնոջ հետ կռվեց մի քաջ տղամարդ,
Ասպարեզի փոշին ելավ մինչև երկինքն աստղազարդ:

Նայեք նրա արած գործին, ճիգ ու ջանքին, հասակին,
Ամոթ բան է, երբ քաջի դեմ դուրս է գալիս մի թույլ կին:

Պետք չէ հուզել ժողովրդին ու գրգռել բանավեճ,
Երկու կողմի բանակները խեղդել արյան ծովի մեջ:

Արի հաշտվենք մենք իրար հետ, դա խելոք է ավելի,
Ով որ բարի գործ չի անում, նա էլ աշխարհի կավերի:

Իմ պատճառով մի վշտանա, գցիր թուրը քո հատու,
Մենք կարող ենք լուռ հաշտությամբ ծառեր տնկել բերքատու:

Քեզ ենք տալիս մեր սպիտակ բերդը, որպես մեծ ավար,
Երբ այցելես՝ թող այն դառնա քեզ համար միշտ նստավայր»:

Ասաց, ապա սեգ Սոհրաբին ցույց տվեց իր դեմքը հուր,
Եվ գեղեցիկ շրթունքները բացեց ինչպես ճաքած նուռ:

Դրախտայգի կարծես լիներ այդ աղջիկը նրբիրան,
Դեռ չի տնկել նման մի ծառ ոչ մի հմուտ այգեպան:

Եղնիկի պես աչքեր ուներ և կեռ հոնքեր՝ հանց աղեղ,
Գլխից մինչև ոտքի ծայրը մի պարտեզ էր ծաղկագեղ:

Իսկ Սոհրաբը կախարդական նրա տեսքից քարացել
Ու դյութանքից խելքը կորցրած խենթ սիրահար էր դարձել:

Նա հիացած այսպես դիմեց. «Խոստումը քո չդրժես,
Քի աչքերով տեսար ինչպես մտա կռվի ասպարեզ:

Հույս չդնես, որ աշխարհում բարձր է բերդը ձեր միայն,
Եվ չկարծես, թե Արարչի կամարից էլ վեհ է այն:

Հիմնահատակ կքանդեմ այն հարվածներով իմ տեգի,
Ոչ մի հերոս սիրտ չի անի ամուր մեջքը իմ թեքի»:

Գորդաֆերիդն իր նժույգի երասանը քաշեց ետ,
Եվ Սոհրաբն էլ իր նժույգի սանձը թեքեց հետզհետ:

Ու երկուստեք ետ գնացին շանթի նման լուսաբեր,
Գոսթեհեմը բերդի դռան սպասում էր անհամբեր:

Բերդի դուռը բաց արեցին, և աղջիկը մտավ ներս,
Առանց ծպտյալ դիմակի և առանց տեգի, բացերես:

Դարպասները պինդ փակեցին: Բոլոր մարդիկ անհանգիստ
Արտասվեցին, զի իրենց հետ բախտը վարվեց անչափ խիստ:

ԳՈՐԴԱՖԵՐԻԴԸ ԽԱԲՈՒՄ Է ՍՈՀՐԱԲԻՆ

Երբ իմացան, որ Հեջիրը թուրքին գերի է ընկել,
Հեկեկացին բոլոր մարդիկ, երիտասարդ և թե ծեր:

Գոսթեհեմը եկավ, տեսավ իր աղջկան գեղանի,
Բերեց իր հետ իշխանազուն հսկաներին Իրանի.

«Ո՛վ իմ դուստր,- ասաց,- իրոք, առյուծ ես դու, ոչ թե կին,
Աստված քեզ պես աղջնակ չի պարգևել դեռ ոչ մեկին:

Դա կռվեցիր ու խաբեցիր մեր ոխերիմ թշնամուն,
Որ Իրանը այսուհետև էլ չկրի վատ անուն:

Աստծու ձեռքը թող մեր գլխից ընդմիշտ լինի անպակաս,
Նա թշնամուց փրկեց կյանքդ, վերադարձար անվնաս»:

Գորդաֆերիդն այդ խոսքերից ուրախացավ ու ժպտաց,
Ապա գնաց ու պարսպի վրա կանգնեց՝ նայեց ցած:

Տեսավ թամբին հպարտ նստած սեգ Սոհրաբին առնացի,
Հեռվից նրան այսպես ասաց. «Ո՛վ քաջարի թուրանցի.

Այստեղ գալով տարար ծանր չարչարանք ու նեղություն,
Ձեռք քաշիր այս պատերազմից, վերադարձիր նորից տուն»:

Իսկ Սոհրաբը պատասխանեց, «Ով աղջիկ դու լուսնահեզ,
Արեգակով, թագով, գահով երդվում եմ եսահա քեզ,

Որ այս բերդը պիտի քանդեմ, անեմ հողին հավասար,
Ես այնպիսի բաներ կանեմ, ինչ որ այստեղ չտեսար:

Քեզ կբռնեմ ու ծամերդ օղակ կանեմ իմ ձեռքում,
Որ չծաղրես ու ծանակես այսուհետև ոչ ոքու...

Այն ժամանակ երբ փոշմանես, ո՛վ խորամանկ իրանցի՝
Բախտը գլխիդ սաղավարտը պիտի առնի ցած գցի:

Ո՛ւր է, ասա, այն խոստումը, հանդիպումից մի քիչ անց.
Հավատացի քո երդումին ու ներեցի քեզ սրտանց»:

Իսկ աղջիկը ի պատասխան՝ բարձր խնդաց անհողդողդ,
Թե. «Իրանցին թուրքին երբեք ընկեր լինել չի կարող:

Թեկուզ ինձ մոտ դու չունեցար հաջողություն կամ օգուտ,
Բայց մի՛ տանջվիր, քանզի վիշտը ցավ կբերի քո հոգուն:

Թուրք չես, ոչ էլ թուրքի տոհմից, ես այդպես եմ քեզ կարծում,
Արիածի՞ն ես, կամ թե ունե՞ս իշխանական մեծ ծագում:

Որովհետև կռվի դաշտում չեմ հանդիպել մի քաջի,
Որ ունենա հասակը քո, անհաղթ ուժը քո աջի:

Բայց երբ հիմա սուրհանդակը շահնշահին լուր տանի,
Որ մեր բերդը պաշարել է ինչ-որ մի թուրք պատանի՝

Քաուս շահը և Ռոստամը կբերեն քաջ այրուձի,
Ձեզնից ոչ ոք չի դիմանա Ռոստամ-Զալի հարվածին:

Ու կենդանի մարդ չի մնա ձեր բանակից ոչ մի թուրք,
Աֆրասյաբի երկիրն ամբողջ կդառնա լոկ մոխրակույտ:

Հազար ափսոս քո գեղեցիկ կերպարանքին, ո՛վ անբախտ,
Որ քո ուժը առյուծներից պիտի մնա միշտ անհայտ:

Հույս մի դնիր ոչ քո ուժին, ոչ բանակին քո հլու,
Գերեզմանիդ խոտը չէ՞ որ կռվի կեր է լինելու:

Ուստի արագ տուր զորքերիդ վերադարձի հրաման,
Քո երեսը շուռ տուր կռվից ու սլացիր դու Թուրան»:

Սեգ Սոհրաբը այդ խոսքերը թեկուզ տվեց փուչ քամուն,
Բայց ափսոսաց, որ խաբվելով՝ բերդը թողեց թշնամուն:

Բայց Սոհրաբը իր բանակով սրարշավեց համարձակ,
Մոխիր արեց գյուղ ու քաղաք, ինչ որ ընկավ ձեռքի տակ:

Ամբողջ օրը քաջ Սոհրաբը խորտակում էր այս ու այն,
Ապա կռվից վերադարձավ հոգնաբեկ ու ձեռնունայն:

Ասաց. «Գնամ, թող բանակս կռվից հետո շունչ քաշի,
Վաղը կգամ և այս բերդը կանեմ մոխիր ու փոշի»:

Ասաց, ապա վերադարձավ իր բանակի մոտ, սակայն
Որոշեց, որ առավոտյան կհարձակվի անպայման:

ԳՈՍԹԵՀԵՄԻ ՆԱՄԱԿԸ ՔԱՈՒՍԻՆ

Սոհրաբը երբ հեծավ իր ձին, թողեց դաշտը ընդարձակ,
Գոսթեհեմը իր դպիրին ասաց՝ գրիր մի նամակ:

Նա Իրանի շահին գրեց սրտագրավ, ջերմ խոսքեր,
Իր մոտ կանչեց արագընթաց ու խորամանկ մի բանբեր:

Մաղթանք արեց երկրակալին, որին մեծ սեր էր տածում,
Եվ հարափոխ կյանքի մասին նա գանգատվեց Աստըծուն:

Գրեց, թե. «Մեզ վրա եկան բազմաբազում թուրանցի,
Կռվարար ու կտրիճ մարդիկ, հետևակ ու այրուձի:

Եվ թե նրանց զորավարն է մի պատանի փահլևան,
Որ հազիվհազ լինի հիմա տասն և չորս տարեկան:

Առյուծի պես ուժեղ է նա, ունի նոճու վեհ հասակ,
Շողշողում է դեմքը նրա, ինչպես գարնան արեգակ:

Ողջ Իրանում դու չես գտնի նրա նման բարձր լեռ,
Նա խորտակող հարված ունի, գուրզ ու վահան ծանրաբեռ:

Երբ հնդկական թուրը ձեռքին դուրս է գալիս ասպարեզ,
Չի ճանաչում ծով ու ցամաք, սլանում է քամու պես:

Իրանում և ողջ Թուրանում չկա նման մի քաջ մարդ,
Որ գա մրցի կամ թե նրա դեմ մղի գոռ մենամարտ:

Նրա ձայնը նմանվում է կործանարար ամպրոպի,
Թուրը երբ որ ձեռքն է առնում, ասես պիտի նա պայթի:

Նրան Սոհրաբ են անվանում, առյուծասիրտ այդ մարդուն,
Փղից բնավ չի տարբերվում, կարծես վիշապ է արթուն:

Ով որ տեսնի՝ կմտածի, որ Ռոստամն է հաղթանդամ,
Կամ սերում է Նարիմանի ազնիվ տոհմից այդ հսկան:

Երբ նա այստեղ հասավ զորքով, ու Հեջիրը փառապանծ
Գնաց թամբեց իր նժույգը ու սլացավ սրընթաց:

Եկավ-կանգնեց Սոհրաբի դեմ, որ տապալի պատանուն,
Բայց Սոհրաբը մեր հսկայի դեմքին անգամ չէր նայում:

Ակնթարթում անհետանում ու գալիս էր պայքարի,
Հեջիրն անգամ չէր հասցնում նետ-աղեղը իր լարի:

Բայց Հեջիրին թամբից պոկեց, ապա նետեց նա մի կողմ,
Մենք ապշեցինք, քանզի կռվում ավերում էր ինչպես հողմ:

Կենդանի է Հեջիրը, բայց ափսո՜ս ընկավ նա գերի,
Տանջվող հոգին ու մարմինը գրավ տվեց թուրքերին:

Ես իմ կյանքում շատ եմ տեսել թուրք ձիավոր քաջարի,
Բայց չեմ տեսել այնպիսի մարդ, որ նրա պես ձի վարի:

Նրա նման պատերազմող այր չես գտնի աշխարհում,
Պետք է տեսնել թամբի վրա ինչպես է նա գուրզ խաղում:

Ողջ Իրանում դու չես գտնի նրա նման ռազմագետ,
Գուցե Ռոստամ-Զալը մրցի այդ պատանի քաջի հետ:

Վա՜յ այն քաջին, ով որ ընկնի նրա ամուր ճանկի մեջ,
Պատառ-պատառ կանի նրան հովազի պես արնատենչ:

Չեմ ցանկանա, որ նրա դեմ մենամարտի մի քաջայր,
Ախոյանը թեկուզ լինի մի ծանրանիստ քարաժայռ:

Նա բոլորին կջարդոտի, դեն կնետի մեկ առ մեկ,
Երբ ցասումի պահին քշի իր նժույգը հողմաբեկ:

Եթե շահը հապաղի և թույլ տա նրան դարանի,
Կամ թե բանակ չվարի և պատերազմից վարանի՝

Անցած պիտի համարենք մենք մեծությունը Իրանի,
Քանզի նրա հարվածները ոչ մի հսկա չի տանի:

Ով նրա դեմ մենամարտի՝ կհամոզվի, իրոք, որ
Ոչ մի հսկա նրա հանդեպ նիզակ ճոճել չի կարող:

Չի ծնվել դեռ նման հսկա թե՛ հիմա և թե՛ առաջ,
Կարծես ինքը վերածնված նարիմանյան Սամն է քաջ:

Չենք դիմանամ մենք Սոհրաբի ահեղ գուրզի հարվածին,
Սմբակներից կայծ է հանում ամպրոպածին նրա ձին:

Ով շահնշահ, մեզ համարիր հիմա մեռած կամ կորած,
Մեր ոսոխի կարողության մասին գիտե և Աստված:

Հենց այս գիշեր մենք բոլորս թողնելու ենք գյուղ ու բերդ,
Խուճապահար պիտի ելնենք նահանջ տանող ռազմաերթ:

Թեկուզ հիմա համբերենք և տոկանք մի առ ժամանակ,
Անօգուտ է, քանզի պիտի թափենք իզուր ճիգ ու ջանք:

Նրա առջև ոչ մի ամրոց չի մնա վեհ, անսասան,
Նա արգելքներ է կործանում, ինչպես անհաղթ մի գազան»:

Երբ նամակը վերջացրեց՝ Գոսթեհեմը բարկացած
Կես գիշերին սուրհանդակին իր մոտ կանչեց և ասաց.

«Լուսաբացին դու ամրոցից այնպես պիտի ելնես դուրս,
Որ չտեսնի մեր թշնամու ոչ մի զինվոր հետախույզ»:

Երբ նամակը հանձնեց նրան, Գոսթեհեմը շտապույթ
Տեղից ելավ ու ստուգեց բերդի ամեն ելք ու մուտք:

Ամրոցի տակ մի ճամփա կար, պետք էր անցնել չոքեչոք,
Գոսթեհեմը միայն գիտեր գաղտնի ուղին. էլ ոչ ոք:

Գաղտագողի նա ներս մտավ, բերդում թողեց գահ ու գանձ,
Մութ ճամփեքով իր ետևից տարավ զորքին ու կանանց:

ՍՈՀՐԱԲԸ ԳՐԱՎՈՒՄ Է ՍՊԻՏԱԿ ԲԵՐԴԸ

Արևը երբ լեռան վրա կանգնեց ինչպես գեղուհի,
Թուրանական բանակները իսկույն ելան գրոհի:

Սեգ Սոհրաբը ձեռքին ուներ երկար նիզակ ծանրաքաշ,
Նա թամբել էր արագընթաց իր Սամանդ ձին ոսկեբաշ:

Նա արշավեց, որ սպիտակ բերդը անի քարուքանդ,
Որ ոչխարի նման մարդկանց քշի, տանի սար ու հանդ:

Կանչեց, սակայն ձայն չլսեց, բերդը դատարկ էր վաղուց,
Բարկությունից նա մռնչաց, ինչպես ահեղ մի առյուծ:

Կես գիշերին փախել էին Գոսթեհեմի հետ, սակայն
Ամենուրեք լռություն էր, դատարկություն մեն միայն:

Իսկ Սոհրաբը որոնում էր իր սիրելի աղջկան,
Երբ չգտավ, սաստիկ տխրեց, որ չի տեսնի էլ նրան:

«Ավա՜ղ-ափսոս, հազար ափսոս,– ախ-ախում էր նա անվերջ,–
Իմ լուսինը ամպի տակ է, իսկ իմ ճամփան՝ մթան մեջ:

Կարծես աչքիս զարմանալի հարված իջավ՝ կուրացա,
Երբ այդպիսի չքնաղ որսը իմ թակարդից հեռացավ:

Եղնիկն եկավ ընկավ ցանցս, ես փառք տվի Աստծուն,
Թեկուզ փախավ, բայց խճճեց ինձ իր սիրո մեծ ցանցում:

Փերի՞ էր նա, ես չգիտեմ, երբ որ աչքիս երևաց՝
Խելքս գլխից հանեց, տարավ, սիրտս արավ խորոված:

Աներևույթ կորավ հանկարծ այդ աղջիկը լուսնահեզ,
Սերը դրեց իմ սրտի մեջ, տանջվում եմ ես մշտապես:

Չհասցրի գեթ մի վայրկյան նայեմ, խոսեմ նրա հետ,
Նրա սերը հոգիս մաշեց, աչքս դառավ արյան գետ:

Միայն սիրո մի կաթ ցողաց իմ արյան մեջ վշտահոս,
Մոլորվեցի, երբ նրանից լսեցի ես քաղցր խոսք:

Չգիտեմ, թե այդ կախարդը ի՜նչ արեց ինձ գաղտնաբար,
Ես կորցրի իմ հանգիստը, չեմ գտնում նոր ճանապարհ:

Այսուհետև ես չեմ տեսնի մի այդպիսի գեղուհի,
Որ ունենա քաղցր լեզու ու վառ պատկեր արևի:

Ամեն անգամ, երբ հիշում եմ խոսքը նրա մեղմանուշ,
Կարծես մեկից սրտիս վերքի մեջ են խրում հսկա փուշ:

Ա՛խ, ինձ վրա շատ թանկ նստեց փախուստը այդ աղջկա,
Ու չգիտեմ, թե ո՞վ էր նա, սպասում եմ՝ հույս չկա»:

Տխրությունից հալումաշ էր լինում քաջը անդադար,
Բայց չէր հայտնում սրտի վիշտը, սիրուց դարձած ցավագար:

Բայց մարդկանցից սերը ծածուկ չի մնացել աշխարհում,
Խորհրդավոր գաղտնիքը միշտ աչքից արցունք է քամում:

Ինչքան էլ այն գաղտնի պահես, պետք է հանի հոգու ձայն,
Սիրահարը թեկուզ լինի քեզ համար լուռ մի արձան...

Նրա սիրո կրակն այնքան բորբոքվել էր իր հոգում,
Որ դեղնել էր, կարծես լիներ աշնան տերև ու քրքում:

Բայց այդ մասին տեղեկություն չուներ Հումանն աչալուրջ,
Թե Սոհրաբը ինչո՞ւ է միշտ տխրադալուկ, այդքան լուրջ:

Բայց բնազդով նա նկատեց, որ Սոհրաբի հոգու մեջ
Խորհրդավոր ինչ-որ մի միտք նրան տանջում է անվերջ:

Նա ձեռքերով պաշտպանում է հողն ու ջուրը գոռ թուրքի,
Իսկ ոտքերով խճճվել է հյուսքերի մեջ մի կուռքի:

Բայց չի հայտնում սրտի վերքը, այնտեղ կրակ կա անշեջ,
Քայլում է չոր գետնի վրա, բայց ոտքերը ցեխի մեջ:

Եվ Հումանը գտավ հարմար հարցուփորձի շարժառիթ,
Ասաց. «Կռվում անհաղթ ես դու, քանզի ունես վագրի սիրտ:

Մեր պապերի մոտ այսպիսի սովորություն կար մի հին–
Նրանք իրենց խիզախությամբ հայտնի էին աշխարհին:

Ամրոցներ են ավերել ու ջարդել բազում վերտ ու տեգ,
Սակայն սիրո խենթ բաժակով չհարբեցին, օ՛, երբեք:

Հարյուրավոր եղնիկներ են նրանք բռնել, ազատել,
Բայց ոչ մեկին ոչ սիրել են, ոչ էլ խաբել կամ ատել:

Միշտ խաբուսիկ հրապույրից իրենց պահել են հեռու,
Որովհետև խելոք էին, չէին տարվում թշնամուն:

Նա է դառնում հռչակավոր փահլևան ու զորապետ,
Ով իր եսն ու միակ սերը կապում է լոկ Աստծո հետ:

Չէ՞ որ ունես խորտակող ուժ, առյուծասիրտ իմ Սոհրաբ,
Ո՞ւմ սիրով ես դու մոլորվել ու շղթայվել ամրակապ:

Վայել չէ քեզ, երբ սիրտը քո դարձրել ես սգատուն,
Մի գեղեցիկ աղջկա համար քեզ տանջում ես օրնիբուն:

Աֆրասյաբը իր որդին է քեզ անվանում առայսօր,
Քանզի ծովում ու ցամաքում միայն դու ես զորավոր:

Պատերազմի համար էր, որ մենք Թուրանից հեռացանք,
Ու թշնամու ծով արյան մեջ մենք բոլորս լողացանք:

Իրանացոց դու նեղեցիր քո սաստկությամբ, ո՛վ առյուծ,
Եվ հեշտությամբ մեր ձեռքն ընկավ այս ամրոցը հինավուրց:

Ինչքան էլ որ մեզ հաջողվեց շահել մարտը առաջին,
Բայց վերահաս վտանգներ կան, հույս ենք դրել քո աջին:

Անշուշտ, կգա Քեյ-Քաուսը քաջ Թուսի հետ արիածին,
Ու կբերի Ռոստամ-Զալին, որ նա ծաղրի առյուծին:

Կգան Բահրամն ու Գիվը գոռ, և Գուդերզն ու Միլադը,
Ֆարամազն ու մեծ Գուրգինը, և Գորազն ու Ֆարհադը:

Կգան ուրիշ մեծամեծներ՝ պողպատաձեռք ու անահաղթ,
Քինատենչիկ զինված բազում քաջեր կգան դեռ անհայտ:

Նրանք կգան և կմղեն մեր դեմ ահեղ պատերազմ,
Մենք առանց քեզ չենք դիմանա բանակներով անպատրաստ:

Ասպարեզի անպարտելի ախոյանը դու ես, կա՛ս,
Այդ աղջիկը մեր Թուրանին կպատճառի մեծ վնաս:

Դու ինքդ քո քաջ մղումով, ո՛վ պատանի տղամարդ,
Ձեռնարկեցիր մի դժվար գործ, որ խորտակվի ապագադ:

Եթե լինես հաստատամիտ՝ կամքդ պիտի կատարվի,
Իսկ եթե քո միտքը քամու նման այդպես տատանվի՝

Դու չես կարող ոչինչ անել, գործն է մնում հարատև,
Բարի գործը վախկոտ մարդուն միշտ դարձնում է սրաթև:

Նոր սկսած գործից այժմ դա գլուխ չես հանել դեռ,
Բայց մեկ ուրիշ գործ ես բռնել քո ուժերից առավել:

Շատ երկրներ կգրավես զինվորի պես դու անահ,
Դու շահերից պիտի խլես իշխանական թագ ու գահ:

Իշխանական այն մարզերը երբ ենթարկես քո գահին,
Ամեն մեկը քեզ կուղարկի մի ոսկեվարս նվեր կին:

Նա՛ է միայն գեղեցկուհու սիրուց խոցվում՝ սիրտը կույր,
Ով որ զուրկ է ոսկուց, գանձից՝ ստրուկ է և կամքից թույլ:

Ով աշխարհում անուն ունի և դղյակներ պերճ ու ճոխ,
Նրա շիտակ ու ձախ գործը ընթանում է միշտ հաջող»:

Երբ Հումանի այս խրատը քնից հանեց Սոհրաբին,
Ամբողջ հոգով նա նվիրվեց պատերազմի մեծ գործին:

Ասաց. «Ո՛վ դու երևելի ու բանիմաց քաջ Հուման,
Հիմա գիտեմ, որ աշխարհում մեծ մարդ չկա քեզ նման:

Քո խրատը խոցված սրտիս համար եղավ դեղ-դարման,
Ես քեզ հետ եմ կնքում կռվի ու հաշտության նոր պայման:

Անծայրածիր աշխարհին ամբողջ լինի թե՛ ծով, թե՛ ցամաք,
Ես կդնեմ Աֆրասյաբի արքայական ոտքի տակ»:

ՔԱՈՒՍ ՇԱՀԸ ՀՐԱՎԻՐՈՒՄ Է ԺՈՂՈՎ

Գուդեհեմի լուրը հասավ քարաբերդը գահանիստ,
Շահը կարդաց փակ նամակը, ափսոսաց ու տխրեց խիստ:

Ապա կանչեց ծանրակշիռ քաջ այրերին փորձառու,
Որ նրանց հետ զրուցի, թե վերջը ի՞նչ է լինելու:

Եկավ Թուսը, Քոշուվադը, Գուդերզը և Գիվը քաջ,
Թե՛ Գուրգինը, թե՛ Ֆարիադը, թե՛ Բահրամը հաղթալանջ:

Քաուս շահը բոլորի մոտ հայտնեց լուրը սրտառուչ,
Եվ Սոհրաբի մասին ասաց, որ քաջ այր է, ռազմաշունչ:

Ավագանու հետ զրուցեց, այնուհետև նա ասաց.
«Այս նոր գործը երկար պիտի մեզ չարչարի անկասկած:

Գուդեհեմը այս նամակում տալիս է մեզ մի խորհուրդ՝
Երբևիցե չտատանվել, զորք հավաքել շուտափույթ:

Ի՞նչ եք հիմա առաջարկում, ես լսում եմ ձեզ միայն,
Մենք Իրանում ունե՞նք արդյոք Սոհրաբի դեմ ախոյան»:

Եվ վճռեցին, որ քաջ Գիվը արագ գնա Սիեստան,
Ուր ապրում է Իրանի մեծ փահլևանը հաղթանդամ:

Ռոստամ-Զալին անտարակույս հայտնել է պետք լուրը այդ,
Որ վտանգի տակ է հիմա մեր երկիրը հնավանդ...

Ուստի թող որ այստեղ բերի բանակները թրքաբեն,
Քանզի գիտենք նեղ օրերին նա է միայն ապավեն:

Շահնշահը իր դպիրին թելադրեց մի նամակ,
Թե ինչու է նենգ թուրքերից սպասում նա մեծ վտանգ:

ՔԱՈՒՍԻ ՆԱՄԱԿԸ ՌՈՍՏԱՄԻՆ

Շահը գրեց Ռոստամ-Զալին, ինչ որ ուներ իր սրտում,
Թե. «Դու խելքով պայծառամիտ, հոգով մաքուր և արթուն...

Ողջ Իրանում դու ես միայն զորավարը մեծանուն,
Նեղ օրերին հենարան ես ու մեզ համար ամուր սյուն:

Թուրանացի մի փահլևան զորք է բերել անքանակ
Եվ Իրանի սահմանամերձ բերդը գցել ոտքի տակ:

Մեր Սպիտակ բերդի զորքը նահանջել է անհապաղ,
Պաշարված է ողջ ամրոցը, չկա ոչ մի ճանապարհ:

Թուրանացոց զորապետը կորովի է, ամրաջիղ,
Սրտով խիզախ առյուծ է մի, իսկ մարմնով՝ հսկա փիղ:

Ողջ Իրանում դու ես միակ այն զինվորը քաջարի,
Որ կարող է թուրք ոսոխի սև երեսը սև անի:

Քաջ զավակն ես ողջ Իրանի, ուժի տեր ես երկնատու,
Ոսոխների սիրտը խոցող սուսեր ունես դու հատու:

Դու գերագույն զորապետն ես մեր պանծալի բանակի,
Աստված խելք ու ուժ է տվել՝ քեզ վեհություն կրկնակի:

Էլ ո՞ւմ կոչեմ փղամարմին կամ խորագետ փահլևան,
Երբ Իրանի պարծանքն ես դու, ամուր սյունը շահի տան:

Ողջ Իրանի հսկաների հսկան ես դու, ո՛վ անպարտ,
Քանզի ունես առյուծի սիրտ և ոսկեկուռ սաղավարտ:

Մազանդարան նվաճեցիր մեկ հարվածով քո թրի,
Խորտակեցիր կապանքները Համավերան երկրի:

Գուրզիդ ահից արեգակը թափում է հորդ արտասուք,
Գարնան ամպը հրդեհվում է թրի զարկից քո դիպուկ:

Քո ճեպընթաց Ռաշխի նման նժույգ չկա աշխարհում,
Չկա քեզ պես ախոյան փիղ Իրանում թե Թուրանում:

Վագրը քեզնից վախենում է, քանզի քաջ ես եզակի,
Ժայռի կրծքին փոս է բացում սուր հարվածը նիզակիդ:

Նեղ օրերին դու ես միայն մեծ լուսատուն Իրանի,
Քեզնով եմ ես հպարտանում ու քաջերն իմ անվանի:

Թող երկնային զորությունից քեզ միշտ լինի օգնություն,
Գերշասպի պես ձիավոր ես, Սամի նման հսկա սյուն:

Երջանիկ ենք, երբ որ ունենք ազնվածին տոհմացեղ,
Դո՛ւ առյուծի հրաշք ծնունդ, դո՛ւ զորավար հանճարեղ:

Մենք բոլորս ցանկանում ենք տեսնել քեզ միշտ ողջանդամ,
Դու Նայրեմի ազնիվ զավակ, հռչակավոր իմ Ռոստամ:

Եվ քանի որ այս վտանգից առաջ եկավ մի նոր բան,
Սիրտս ու հոգիս ծանր հոգսից կարծես հանգավ հավիտյան:

Այդ պատճառով գումարեցի համաժողով ռազմական,
Գոսթեհեմի նամակից մենք իմացանք, թե ինչեր կան:

Ի դեպ՝ գտանք ու վճռեցինք մենք բոլորս միաձայն,
Որ քաջ Գիվը մեկնի Զաբուլ, քեզ որոնի անպայման:

Եվ քեզ հանձնի այս նամակը զորավարի իր ձեռքով,
Որ երբ կարդաս՝ խեկությունը հասկանաս դու քո խելքով:

Այս նամակը երբ կկարդաս՝ ճամփա ընկիր անհապաղ,
Եթե սրտի խոսք կունենաս՝ Գիվին չասես ոչ մի բառ:

Չհոտոտես, եթե ձեռքիդ ծաղիկ լինի բուրավետ,
Աչքս հիմա քո ճամփին է, եկ, որ խոսեմ ես քեզ հետ:

Եթե պառկած լինես՝ խսկույն վեր կաց, Ռախշը քո թամբիր,
Իսկ թե ոտքի վրա լինես՝ բանակներդ շուտ ճամփիր:

Երբ Զաբուլից կհեռանաս քո գնդերով հրազեն,
Թող բոլորը աղաղակեն, թող թուրքերի դեմ վազեն:

Գոսթեհեմը մեզ հայտնել է ուժի մասին այդ թուրքի,
Բայց նրա դեմ քեզնից բացի չենք վստահում ոչ ոքի:

Երբ կկարդաս իմ նամակը, արագ մեկնիր ռազմադաշտ,
Զարդիր այնտեղ Աֆրասյաբի զինվորներին կռապաշտ»:

Շահը կնքեց փակ նամակը, հանձնեց Գիվին և ասաց.
«Աճապարիր Զաբուլիստան հողմի նման սրընթաց:

Հանգիստ չտաս երիվարիդ, մաշիր սանձը քո ձեռքում,
Մինչև գտնես քաջ Ռոստամին, քնած լինի, թե արթուն:

Թե գիշերը հասնես այնտեղ, ցերեկն իսկույն ետ դարձիր,
Ասա կռվի պահը մոտ է, թող արշավի այրուձին:

Մենք առանց քեզ այս չարամիտ թուրքին հաղթել չենք կարող,
Անհարմար է մեր բանակը կռվի հանել գողեգող»:

Ապա Գիվը Քաուս շահից նամակն առավ և իսկույն
Հողմի նման թռավ, գնաց, առանց դադար, առանց քուն:

Գիշեր-ցերեկ ընթանում էր, փոշեպատ ու հոգնաբեկ,
Հացի, ջրի մասին, իրոք, չէր մտածում նա երբեք:

ՌՈՍՏԱՄԸ ՍՏԱՆՈՒՄ Է ՇԱՀԻ ՆԱՄԱԿԸ

Այսպես, Գիվը շահնշահի մոտից եկավ մինչ Զաբուլ,
Դահապանը Ռոստամ-Զալին ազդարարեց մի նոր լուր,

Թե Իրանից հիմա եկավ արագավազ մի բանբեր,
Նա սանձել է փրփրաբաշ մի ձի, ինչպես հսկա լեռ:

Ռոստամ-Զալը խնդույն ելավ սուրհանդակին ընդառաջ,
Եվ նրա հետ հեծելազոր բազում քաջեր լայնալանջ:

Գիվը արագ իջավ ձիուց, ինչպես խորունկ ռազմագետ,
Այնուհետև ոտքով գնաց, որ զրուցի նրանց հետ:

Իսկ քիչ հետո ձիուց իջավ Ռոստամ-Զալը անվանի,
Հարցուփորձեց շահի մասին ու վիճակից Իրանի:

Նրանք եկան Ռոստամ-Զալի ապարանքը հոյաշեն,
Որ քաջերի հետ միասին հանգստանան, շունչ քաշեն:

Սուրհանդակը հանձնեց քաջին ու հաղորդեց ջերմ խոսքեր
Ու Սոհրաբի մասին պատմեց, ինչ որ լսել էր արդեն:

Ռոստամը երբ այդ նամակը կարդաց՝ խնդաց իր մտքում,
Բայց զարմացավ, թե ինչ գաղտնիք ու խորհուրդ կա երկնքում:

Ասաց. «Սամից եթե ծնվի մի պատանի հանճարեղ,
Չեմ զարմանա, որովհետև Սամը ունի ազնիվ ցեղ:

Չեմ հասկանում, թե ինչ գաղտնիք ունի Աստված այս գործում,
Բայց ծագումով թե թուրք լինի՝ խելքին մոտ բան չեմ կարծում:

Չկա մեկը, որ հայտնի ինձ խնկությունը այդ մարդու,
Արիացի՞ է, թե՞ թուրանցի, դեռ հայտնի չէ ոչ ոքու:

Սեմենգանի շահի դուստրը ինձ պարգևեց մի որդի,
Բայց տարիքով շատ փոքր է նա, դեռ կարոտ է մոր կաթի:

Իմ պատանի որդին այժմ կռիվ անել չգիտե,
Ինչպե՞ս պիտի նժույգ վարի, նիզակ ճոճի երկաթե:

Սուրհանդակին ես հանձնեցի ոսկի, գոհար անհաշիվ,
Որ նա ձեռքով հանձնի մորը, որ հոգսերը իր քաշի:

Սուրհանդակը ինձ լուր բերեց, թե խելացի իմ որդին
Շատ չի անցնի կմեծանա, ինչպես հսկա մի բարդի:

Բայց հարազատ իմ զավակը, եթե նույնիսկ ուզենա՝
Զորք ջարդելու ընդունակ չէ, փախչելան չէ քանզի նա:

Իսկ երբ կգա ժամանակը՝ ոչ մի անվախ թուրանցի
Չի դիմանա իմ կորյունի անգամ մի թույլ հարվածին:

Այնքան գինի պիտի խմի շրթունքներով կաթնահոտ,
Որ բարձրանա նոճու նման, դառնա մի փիղ ամրատ:

Հիմա գնանք Դեստան-Զալի հովանոցը՝ վերնատուն,
Երկար ճամփից հետո այնտեղ որ վայելես հանգիստ քուն:

Հետո հանգիստ կմտածենք և կիմանանք վերջապես,
Թե ո՞վ է այդ անհայտ թուրքը, որ սարսափ է պատել մեզ»:

ԳԻՎԸ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒՄ Է ՌՈՍՏԱՄԻ ՀԵՏ

Հսկա Գիվը հաղթաքաջով Ռոստամի հետ կամացով
Վեր բարձրացավ Դեստան-Զալի դաստակերտը պերճաշուք:

Այնուհետև նրանք մտան ապարանքը Նայրեմի,
Որ խնջույքի մեջ մոռանան այս աշխարհը վաղեմի:

Գիվը դարձյալ նրան ասաց. «Ո՛վ Իրանի միակ հույս,
Արքայական թագ ու գահին դու ես տալիս առատ լույս:

Ուստի արքան խիստ պատվիրեց, որ վազեվազ քեզ մոտ գամ,
Գիշեր լինի կամ թե ցերեկ՝ քուն չունենամ ես անգամ:

Ուստի պետք է, մենք շտապենք, ո՛վ փահլևան կորովի,
Որ թշնամին մեր օջախում չգա եղնիկ խորովի»:

Իսկ Ռոստամը պատասխանեց. «Ես չգիտեմ ահ ու մահ,
Վերջը մի բուռ հող ենք, քանզի մենք ապրում ենք լոկ մի պահ:

Ուստի արի մենք այս գիշեր նստենք մի լավ խնջույքի,
Ե՛կ մոռանանք շահնշահին ու չհիշենք ոչ ոքի:

Ե՛կ մեկ օր էլ մնա այստեղ, որ մի ազատ շունչ քաշենք,
Որ ցամաքած մեր շուրթերը գինու թասի մեջ թրջենք:

Այնուհետև շահնշահին ներկայանալ կփութամ,
Ես Իրանի բանակներին կռվի ճամփա ցույց կտամ,

Քանզի բախտը ժամանակի պահել է մեզ դեռ արթուն,
Մեկ հարվածով ես կմարեմ կյանքի լույսը այդ մարդու:

Երբ որ տեղից վեր խոյանա անհուն ծովը ալեկոծ՝
Նրա առաջ չի դիմանա ոչ մի կրակ մշտաբոց:

Իսկ եթե նա հեռվից տեսնի իմ դրոշը շողշողուն,
Կամ թե լսի փողիս ձայնը՝ կքարանա իր տեղում:

Եթե լիներ ինձ պես հսկա կամ թե լիներ գուրզի տեր,
Կամ ունենար մենամարտի համար նիզակ ու նետեր,

Կամ թե լիներ քաջատոհմիկ Սամի նման վիթխարի,
Լիներ ուժիմ մի փահլևան՝ նման ծանր մի քարի՝

Չէր կարենա այդպես արագ մտնել կռվի ասպարեզ...
Այս դիպվածը ուստի պետք չէ, որ ընդունենք ճշտապես»:

Այսպես, նրանք անցկացրին գինեխումի երեկոն,
Ու խմեցին շատ կենացներ արարչի հետ երեքով:

Հաջորդ օրը Ռոստամ-Զալը սիրտը տված հաճույքի,
Մտավ պալատ, որ Գիվի հետ նորից նստի խնջույքի:

Շատ կոնծեցին, բայց քաջերի աչքը գինով էր ագահ,
Ուստի նրանք մոռացության տվին շահի թագ ու գահ:

Կերուխումը երբ վերջացավ՝ բերին երգող ու պարող,
Առանց երգի ոչ մի հսկա գինի խմել չի կարող:

Եվ այդ օրն էլ այդպես անցավ, ու քաջերը փառահեղ
Խնջույք արին հրաբորբոք արեգակից էլ շքեղ:

Խրախճանքի երեք օրը անցկացրին միասին,
Ո՛չ հիշեցին ցավն աշխարհի, ո՛չ պատվերը Քաուսի:

Չորրորդ օրը Ռոստամի մոտ եկավ Գիվը քաջորդի,
Որ երկուստեք հսկայի հետ նստեն գաղտնի խորհրդի:

«Քաուս շահը,- ասաց Գիվը,- խստասիրտ է, տաքարյուն,
Ցասման պահին չի ցանկանում անգամ լսել թուրք անուն:

Անհանգիստ է, տխուր-տրտում, առավոտից իրիկուն,
Ո՛չ ուտում է և ո՛չ խմում, ո՛չ էլ ունի հանգիստ քուն:

Եթե այսպես մենք Զաբուլում շարժվենք դանդաղ, անհարկի,
Քեյ-Քաուսի բարկությունը կգրգռենք կրկնակի...

Անտարակույս կզայրանա, ինչպես ահեղ մի քամի,
Որպես թե մեր միտքը ծուռ է, կդառնա մեր թշնամին:

Բազում անգամ ինձ պատվիրեց, որ ես փութամ ավելի,
Օրհասական հենց այս պահին թուրքը չգա ավերի»:

Ռոստամն ասաց. «Մեր ոտքի տակ քանի ունենք ամուր հող՝
Այս աշխարհում ոչ ոք մեզ հետ պատերազմել չի կարող»:

Եվ չուշացան, հենց նույն օրը պատրաստեցին ռազմաերթ,
Հոգու ցավը փարատեցին հրաժեշտի գինու հետ:

Ռոստամ-Զալը հրամայեց թամբել Ռախշը շանթաձին,
Հնչեցրնեն աղմկարար շեփորները պղնձի...

Ծառան բերեց քաջի ձիուն, ասպանդակը ոսկեզօծ,
Արծաթակուռ թամբի վրա կար մետաքսե վառ ծածկոց:

Երբ Ռոստամի հրամանը լսեց խիզախ այրուձին՝
Մեծ Զաբուլից ճամփա ընկավ շանթի նման հողմացիր:

Սպայական զորագունդը վարում էր քաջ Զևարան,
Նա եղբայրն էր Ռոստամ-Զալի, անվանի էր, փահլևան:

ՔԱՈՒՍ ՇԱՀԸ ԲԱՐԿԱՆՈՒՄ Է ՌՈՍՏԱՄԻ ՎՐԱ

Դեռ մեկ օրվա ճանապարհի կար, բայց Ռոստամը անհանգիստ
Ժամանակից շուտ էր ուզում հասնել բերդը գահանիստ:

Քոշուվադի Գուդերզ որդին և թե Թուսը քաջավազ,
Ձիուց իջան՝ Ռոստամ-Զալին ողջունեցին հոտնկայս:

Ձիուց իջավ և Ռոստամը ու ողջունեց սիրաջերմ,
Ամեն մեկի հոգու խորքում ցանել էր նա սիրո սերմ:

Այնուհետև եկան շահի ապարանքը բարձրադուռ,
Ամեն մեկի դեմքի վրա կար խնդության հրապույր:

Ներկայացան Քաուս շահին, բարևեցին գլխահակ,
Սակայն ոչ մի խոսք չասաց նա հսկաներին ոսկեթագ:

Շահը գոռաց Գիվի վրա ու նախատեց նա կրկին,
Ոչ ամոթ կար աչքերի մեջ, ոչ պատկառանք կար դեմքին:

«Ռոստամ-Զալը ի՞նչ մարդ է, որ մնամ միակ իր հույսին,
Կամ ո՞վ է նա, որ մերժում է հրամանը Քաուսի...»:

Ասաց շահը, այնուհետև Գիվին դիմեց դառնաճիչ,–
«Ես ոտքի տակ կտամ նրան, ինչպես չնչին մի նարինջ:

Բռնիր սրան, աչքիս առաջ հանիր շուտով կախաղան,
Որ արքայի պատվի հետ նա այսուհետև չխաղա...»:

Շահի դաժան այդ խոսքերից Գիվը դառավ կոտրած նետ,
Նա չէր կարող այդպես վայրագ վարվել Ռոստամ-Զալի հետ:

Քաուս շահի բարկությունը կրկնապատկվեց այս անգամ,
Նա հոշոտող վագրի պես էր, փղի նման հաղթանդամ:

Ռոստամի և Գիվի վրա նա գոռգոռաց անվայել,
Շահի ցասման պահին նրանք սիրտ չարեցին բարբառել:

Իշխանները քարացել ու կանգնել էին շենշիվար,
Լուռ էր նաև հսկա Գիվը առաջարկից այդ դժվար:

Այդ ժամանակ Քաուս շահը հրամայեց քաջ Թուսին,
Ասաց. «Հիմա կախաղանի սյունին գամիր երկուսին»:

Ապա շահը գահաթոռից իսկույն ցատկեց վշտաբեկ,
Կարծես լիներ սաստիկ շանթից բոցավառված մի եղեգ:

Թուսը ելավ, անմիջապես բռնեց ձեռքը Ռոստամի,
Բայց քաջերը զարմացան, թե՝ ինչպե՞ս պիտի դուրս տանի:

Քաջ Ռոստամի սիրտը թնդաց, տեղից ելավ նա ցասկոտ,
Այնպես գոռաց, կարծես լիներ կարկտաբեր մի որոտ:

Թուսի ձեռքին զարկեց թափով ու գլորեց նրան ցած,
Ապա գնաց մի կողմ կանգնեց փահլևանը հաղթապանծ:

Այնուհետև դիմեց շահին ու նախատեց կատաղի,
«Այդքան սաստիկ քո կրքերը մի՛ բորբոքիր անտեղի:

Վատ են բոլոր գործերը քո, երկիր վարել չես կարող,
Քեզ վայել չէ աշխարհատեր շահնշահի գահաթոռ:

Ես Դեստանի որդին եմ քաջ, տեր՝ նիզակի ու տեգի,
Քեզ պես ոչ մի շահի առաջ իմ գլուխը չեմ թեքի:

Թե ուժ ունես՝ դու այն թուրքին բարձրացրու կախաղան,
Նրա ահից քո քաջերը դաշտը թողին ու փախան:

Հունաստանից մինչև չինաց հողը, մինչև Եգիպտոս,
Սեգսարից մինչ Համավերան՝ ջարդում էի, ինչպես որս:

Այս բոլորը իմ նիզակի և իմ Ռախշի ոտքի տակ,
Ստրուկի և ծառայի պես խոնարհվել են շարունակ:

Իմ շնորհիվ դու էլ նույնպես մնացել ես կենդանի,
Բայց քո քինոտ սիրտը հիմա ուզում է ինձ սպանի:

Քաուս շահը ո՞վ է, երբ որ ավերում եմ հանց քամի,
Կամ թե ո՞վ է Թուսը, երբ որ ձեռք է մեկնում Ռոստամին:

Քաուս շահի բարկությունից ինչո՞ւ պիտի ես սոսկամ,
Չէ՞ որ շահ ու մի բուռ հողը համարում եմ լոկ մի բան:

Իմ ողջ ուժն ու հաղթանակը պարգևել է ինձ Աստված,
Ո՛չ զորքից եմ այն ժառանգել, ո՛չ էլ շահից է տրված:

Իմ աթոռը երիվարս է, աշխարհը ինձ հպատակ,
Մատանին իմ ծանր գուրզն է, սաղավարտը՝ գլխիս թագ:

Երբ բոցեղեն թուրս շարժեմ՝ գիշերները լույս կտամ,
Ռազմադաշտը մոխիր կանեմ իմ ձեռքերով առնական:

Իմ օգնական ընկերներն են նիզակս ու գուրզս մեծ,
Բազուկներս ու վեհ հոգիս շահնշահ են երկնամերձ:

Վիշտ չեմ տվել Քաուս շահին, որ կախաղան է ցուցում,
Ես ոչ մեկի ստրուկը չեմ, ես ծառան եմ Աստըծու:

Գիտուն մարդիկ ցանկացան ինձ կարգել երկրի շահնշահ,
Որ ես դնեմ արքայի թագ, բայց դրանից ինձ ի՞նչ շահ:

Չեմ ցանկացել ես ունենալ արքայական թագ ու թախտ,
Ավանդական օրենքները ես պահեցի միշտ անխախտ:

Իսկ եթե ես ցանկանայի հարստություն, շահություն,
Քեյ-Քաուսը չէր ունենա արքայական մեծություն:

Ինչ որ այժմ ինձ ասացիր՝ արժանի եմ հատուցման,
Իմ լավության փոխարեն դու ցույց տվիր ինձ կախաղան:

Քեյ-Կոբադին ես եմ կարգել գահի վրա Իրանի,
Քաուս շահի բարկությունը համարում եմ սին քամի:

Քեյ-Կոբադի համար եթե չգնայի ես Էլբորզ,
Նա կմնար մի վայրենի, կաներ միայն ցիռի որս:

Եթե նրան չազատեի, չբերեի ես Իրան,
Ռոխներին չչարդեի ու չտայի սուր նրան...

Եվ եթե ես Մազանդարան չգնայի քեզ համար
Եվ որտեղ որ ամենակուլ դևեր կային անհամար,

Չհանեի աչքն ու սիրտը ամենակուլ հրեշի–
Շահի համար ոչ մի էակ այդքան զրկանք չէր քաշի.

Այժմ չէիր ունենա դու իշխանություն ու կնիք,
Ու Դեստանի որդու վրա չէիր թափի նախատինք»:

Ռոստամ-Զալը Քաուս շահին խոսքեր ասաց այսպիսի,
Ու թույլ տվեց, որ ամեն քաջ իր ուզածի պես խոսի:

Ապա դիմեց իրանացոց. «Սոհրաբ քաջը երբ կգա՝
Չի խնայի մեծ ու փոքր, կգլխատի անխնա...

Ձեզնից ամեն մեկը հիմա թող իր գլխին անի ճար,
Ով որ գլուխ ու խելք ունի, չի սխալվի անպատճառ:

Դուք չեք տեսնի, որ Ռոստամը կռվի համար վազվզե,
Իրանը ձեզ, մնաք բարով, ես կթռչեմ հանց բազե»:

Ասաց քաջը ու խթանեց իր նժույգը, հեռացավ,
Կաշին կարծես տրաքվում էր ու պատճառում սրտին ցավ:

ԶՈՐԱՎԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Լուռ նստեցին իշխանները կես գիշերից մինչև տիվ,
Չէ՞ որ իրենք ոչխար էին, իսկ Ռոստամը՝ մեծ հովիվ:

Ծեր Գուդերզին նրանք ասին. «Ո՛վ փահլևան անվանի,
Դու պետք է, որ վերականգնես կոտրած սիրտը Ռոստամի:

Ռոստամ-Զալը քեզնից բացի չի լսի ոչ մի մարդու,
Նորից կգա, երբ որ լսի ջերմ խոսքերը քո ազդու:

Աշխարհակալ շահի մոտ դու ունես պատիվ ու հարգանք,
Քո խոսքերը նրա սրտում կգտնեն լավ արձագանք:

Ուստի գնա այդ տաքարյուն ու դիվահար շահի մոտ,
Չնայած նա չի հասկանում ոչ պատկառանք, ոչ ամոթ,

Ասա, որ ես Ռոստամ-Զալին մեծարում եմ քանի կամ,
Գուցե կորած բախտը ժպտա գահաթոռիդ այս անգամ»:

Այդ ասելով, նրանք նորից եկան մեկտեղ խորհրդի,
Մեծատոհմիկ իշխանները, ռազմիկները քաջորդի:

Եկավ Գիվը և՛ Գուդերզը, և՛ Բահրամը արիաթոռ,
Քաջ Գուրգինը և նրա հետ Ռահհամ հսկան շանթագոռ:

Եվ ասացին. «Քաուս շահը թեկուզ ունի պինդ գոտի,
Ոչ քաջերի սիրտն է շահում, ոչ օգուտը իր գիտի:

Ռուստամ-Զալը մեծ գործերով հայտնի է ողջ աշխարհին,
Նա Քաուսին կյանք պարգևեց ու փառք բերեց Իրանին:

Նա նեղության ժամին հասավ և ազատեց Քաուսին,
Ռուստամ-Զալն էր, որ ծանր բեռ դրեց միայն իր ուսին:

Մազանդարան գնաց շահը, սակայն ընկավ նա գերի,
Ծանր կապանք դրին թե՛ մեր և թե՛ շահի ձեռքերին:

Դրա համար քաջ Ռուստամը կրեց վիշտ ու նեղություն,
Մինչև դևի գանգը ջարդեց ու բերանից թափեց թույն:

Այնուհետև արքայական գահը տվեց Քաուսին,
Եվ մեծարեց նրա փառքը հողաշխարհից մինչ լուսին:

Նույնը եղավ Համավերան հողում, երբ որ ամրակուռ
Շղթան ջարդեց, այնուհետև նրան նորից բերեց տուն:

Շահի համար քաջ Ռուստամը գլուխներ էր թռցնում,
Բայց երբևէ իր թիկունքը ցույց չի տվել թշնամուն:

Շահին փրկեց, որ նա կրկին ստանա նոր գահաթոռ,
Այնուհետև եկավ նրա մոտ ծառայեց գլխիկոր:

Այդ բոլորի համար շահը հրամայեց կախաղան,
Լավ է երեւս թեքենք շահից ու հեռանանք հավիտյան:

Սակայն հիմա նեղն ենք ընկել, ուրիշ ճամփա մենք ընկանք,
Ռուստամ-Զալի մեծ կարիքը այժմ պետք է որ զգանք:

Պետք չէ հիմա զորքին թողնել փատության, վշտի մեջ,
Քանզի գիտեն, որ մենք այստեղ մղում ենք տաք բանակեճ:

Ռուստամ-Զալը երբ հեռացավ՝ պիտի ընկնենք դռնեդուռ,
Նա իր մեջքը ցույց տվեց մեզ, իսկ երեսը՝ դեպ Զաբուլ:

Ինչպե՞ս պիտի կռվենք առանց սպարապետ Ռուստամի,
Երբ չկա նա, մեր կռիվը դու համարիր լոկ քամի:

Մեկնումեկս թող որ գնա ու շուտ հասնի այդ փղին,
Նորից նրան համոզի, որ կրկին փոխի իր ուղին»:

ԳՈՒԴԵՐԶԸ ՀԱՄՈԶՈՒՄ Է ՔԱՈՒՍԻՆ

Քոշուվադի որդի Գուդերզն իսկույն գնաց շահի մոտ,
Ռոստամ-Զալի փառքի մասին խոսքեր ասաց սրտամոտ:

«Ռոստամ-Զալի մեղքն ի՞նչ է, որ քշեցիր Իրանից,
Երբ որ մեր դեմ զորք է եկել քինախնդիր Թուրանից:

Ապա հիշիր Համավերան դաշխարհը աղծապիղծ,
Դու մոռացար Ռոստամ-Զալին, որ քեզ փրկեց շղթայից:

Արդ բոլորի փոխարեն, շա՛հ, ցույց տվիր դու մահու սյուն,
Արդարության խոսքը միայն շահի բերնից են լսում:

Ա՛յդ է միթե հատուցումը քո՝ լավության փոխարեն,
Երբ ցանկացար նրա համար կախաղանի փող հարեն:

Նա հեռացավ, իսկ ոսոխը մոտենում է քայլ առ քայլ,
Թուրանական զորքը հիմա վարում է մի սոված գայլ:

Ունե՞ս, արդյոք, այնպիսի քաջ՝ Ռոստամից վեհ ու կարող,
Որ թշնամու գլխին թափի կործանումի քար ու հող:

Ռոստամի պես փահլևանին ով իր երկրից վռնդի՝
Անխելք պիտի լինի կամ թե տհաս մարդու փուչ որդի:

Շահը պետք է խելոք լինի և հեռատես ղեկավար,
Բռնությանը ե՞րբ է եղել մարդու համար օգտակար»:

Քաուս շահը ուշիմ լսեց, բայց նրան չէր համառում,
Եվ հասկացավ, որ Գուդերզը, իրոք, ճիշտ է բարբառում:

Փոշմանեց, որ Ռոստամ-Զալի հետ վարվեց նա խստասիրտ,
Պետք չէր նրան վատաբանել, այդքան դաժան, այդքան բիրտ:

Ասաց. «Գուդերզ, խելոք միտքդ պարզ է, ինչպես լուսատուն,
Խրատները քո բերանից աղբյուրի պես են հորդում:

Այո՛, շահը պետք է լինի զուսպ ու անկիրք, հետամուտ,
Փորձով տեսա, որ ցասումից չստացանք մենք մի օգուտ:

Այժմ պետք է աճապարես դա Ռոստամի հետևից,
Շահիր սիրտը քաղցր խոսքով ու շուտափույթ լուր տուր ինձ:

Նրա սրտից հանիր բոլոր վերքերը իմ պատճառած,
Ցույց տուր նրան արդար ուղի, իսկ իմ կողմից՝ առատ գանձ:

Հասիր նրան, ետ բեր ինձ մոտ այդ առյուծի ժիր ձագին,
Որ իմ խավար հոգում նորից արեգակի լույս ծագի»:

ՌՈՍՏԱՄԻ ՎԵՐԱԴԱՐՁԸ ՇԱՀԻ ՄՈՏ

Ծեր Գուդերզը շահի մոտից իշխանների հետ մեկտեղ,
Իսկույն գնաց, որ համոզի Ռոստամ-Զալին հանճարեղ:

Երբ որ նրանք հեռվից տեսան փահլևանին հաղթանդամ՝
Հավաքվեցին նրա շուրջը, որ հերոսին մաղթանք տան:

Աղաչեցին-պաղատեցին փղամարմին առյուծին.
«Հավերժ մնա քո կյանքը թող և քո հոգին լուսածին:

Աշխարհն արար թող որ լինի քո նժույգի ոտքի տակ,
Նստած տեղդ միշտ գահ լինի, ո՛վ Իրանի մեծ պարծանք:

Դու լավ գիտես, որ Քաուսի գլխում խելք չէ, այլ քամի,
Ցասման պահին փչում է նա, որ կողմից որ պատահի:

Ասում է նա ու փոշմանում՝ խելք չունեցող մարդու պես,
Ժողովուրդը ի՞նչ մեղք ունի, երբ որ շահը խայթեց քեզ:

Եթե սիրտդ վշտացած է, նեղացիր դու Քաուսից,
Իսկ ինչո՞ւ ես լքում դու մեզ, նետում տեգը քո ուսից:

Մի խռովիր դու մեզանից, մի՛ թող այսպես մեն-մենակ,
Շահը հիմա փոշմանել է, կուրծք է ծեծում շարունակ»:

Այնուհետև պատասխանեց Ռոստամ-Զալը փահլևան.
«Ես Քաուսից պահանջ չունեմ, չեմ ենթարկվի միշտ նրան:

Ձիուս թամբը իմ գահըն է, սաղավարտս՝ գլխիս թագ,
Լայն թիկնոցս զրահն է իմ, աշխարհը ինձ հպատակ:

Ինձ պես մարդուն խոսքեր ասաց անվայել ու անարժան,
Իր զինվորի հանդեպ շահը խստասիրտ է ու դաժան:

Երկու անգամ ազատեցի շղթաներից ամրակուռ,
Նրան տվի արքայական թագն ու գահը ոսկեհուռ:

Ազատեցի Մազանդարան դևաշխարհից մահահեծ,
Համավերան շահին նույնպես ես արեցի գահընկեց:

Քաուս շահին ազատեցի գերությունից մեկընդմիշտ,
Երբ որ տեսա կապանքներում տառապում էր դառնավիշտ:

Բայց Քաուսի դատարկ գլխում չկա նույնիսկ չնչին խելք,
Դաժան է նա իր բնությամբ, չունի շահի հզոր ձեռք:

Ամեն բանից սիրտս ու հոգիս լիացել է դեռ մանկուց,
Ես ոչ մեկից չեմ վախենում՝ բացի հզոր Աստըծուց»:

Երբ ավարտեց ասելիքը ու շունչ քաշեց նա թեթև,
Այնուհետև փահլևանին՝ ծեր Գուդերզը ասաց թե՝

«Շահնշահը և Իրանի իշխանները անպայման
Այս դիպվածին ուրիշ կարծիք ու մեկնություն պիտի տան:

Կասեն՝ Ռոստամ-Զալը ինչո՞ւ թողեց թուրքին, հեռացավ,
Բոլոր մարդիկ կբամբասեն, թե՝ իրավ որ վախեցավ:

Գոսթեհեմի լուրը եթե մենք խսկություն համարենք՝
Պետք է թողնենք երկիրը մեր ու հեռանանք վշտաբեկ:

Կասեն՝ եթե քաջ Ռոստամը պատերազմել չի կարող,
Թուրքի հանդեպ մենք բոլորս կամ մոխիր ենք, կամ թե հող:

Իսկ թե ինչ էր քո և շահի բուն պատճառը գժտության,
Մենք լավ գիտենք, թեկուզ դրան մարդիկ ուրիշ անուն տան:

Որքան էլ որ սեգ Սոհրաբի մասին խոսեն սարսափով,
Մեր երկրից, ո՛վ փահլևան, մի հեռացիր դու խռով:

Ողջ աշխարհում քաջ Ռոստամի անունն է լոկ հռչակված,
Ուստի պետք չէ այս առիթով փառքի գահից իջնես ցած:

Գիտես հիմա ինչ նեղության մեջ է զորքը մեր ամբողջ,
Դու Իրանի շահի գահը մի դարձրու դատարկ որջ:

Ամոթ է մեզ, որ թուրքերի դեմ չգնանք ռազմադաշտ,
Այդ գործում էլ կնախատի մեզ ամեն մի բարեպաշտ»:

Այդ խոսքերը նրան ասաց ծեր Գուդերզը բանիմաց,
Իսկ Ռոստամը երբ որ լսեց՝ մի պահ մնաց զարմացած:

Այնուհետև նրան ասաց փահլևանը մեր քաջայր.
«Աշխարհին արար իմ նժույգով պտտվել եմ ծայրեծայր,

Եթե բանը այն է, որ ես վախենում եմ այս անգամ,
Ապա կգամ և իմ կյանքը ես կզոհեմ ինքնակամ:

Գիտես, որ իմ սիրտն ու հոգին նվիրել եմ Իրանին,
Սակայն Քաուս շահը վատ է ճանաչում իր զինվորին...»:

Գործի ներկա հանգամանքը պահանջում էր այլ բնույթ,
Նորից պիտի շահի մոտ գար, քանզի գործեր կային մութ:

Ուստի մտքից հանեց դաժան նախատինքը Քաուսի,
Վերադարձավ, որ Քաուսը ինչ որ ասի՝ լուռ լսի:

ՔԱՈՒՍ ՇԱՀԸ ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ՌՈՍՏԱՄԻՆ

Շահը հեռվից տեսավ քաջին, իսկույն ելավ իր գահից,
Ներողության խնդրեց անցած դեպքի համար Ռոստամից:

«Բարկությունը իմ բնույթն է և խառնվածքը,- նա ասաց,–
Այնպես եմ ես ծլարձակել, ինչպես տնկել է Աստված:

Երբ հայտնեցին թուրանացոց հարձակումը չարաղետ,
Այդ վերահաս վտանգից իմ սիրտը մարեց հետզհետ:

Դու ինձ և իմ զորքի համար թև-թիկունք ես, հենարան,
Իսկ Իրանի գահի համար՝ անպարտելի փահլևան:

Առավոտյան քո կենացն եմ խմում, մաղթում կյանքը քո,
Փառքիդ համար աղոթում եմ ես ամեն մի երեկո:

Իմ շահության մեծությունը տածել է քեզ մեծ հավատ,
Արի խմենք Ջամշիդ շահի լուսաճաճանչ մի գավաթ:

Ողջ Իրանամ դու ես միայն շահնշահի զորավիգ,
Կարոտ եմ ես քո օգնության, ի՛մ անվանի նետաձիգ:

Այս նեղ ժամին հարկավոր է քո բազուկը ամրապինդ,
Երբ ուշացար, ես զայրացա ու վարվեցի շատ կոպիտ:

Սակայն երբ որ վշտանալով դու հեռացար, ո՛վ Ռոստամ,
Փոշմանեցի, երբ հիշեցի իմ խոսքերը դառնահամ»:

Իսկ Ռոստամը պատասխանեց. «Ողջ Իրանը քոնն է, շահ,
Ես ծառա եմ, իսկ դու՝ իշխան, ես գիշեր եմ, իսկ դու՝ ջահ:

Ես այլոց պես, ինչպես ծառա, կանգնել եմ արդ քո դռան,
Եթե, իրավ, արժանի եմ, տուր ինձ հիմա հրաման:

Պատրաստ եմ քո վերջին խոսքին, բանակներով իմ զինված
Այնքան պիտի պատերազմեմ, ինչքան կյանք տա ինձ Աստված»:

Քաուս շահը Ռոստամ-Զալին տվեց կտրուկ պատասխան.
«Թող լուսավոր լինի հոգիդ, իսկ մարմինդ ողջանդամ:

Այսօր գնանք խրախճանքի քաջերի հետ հաղթակազմ,
Վաղը զորքի հետ միասին կվարենք նոր պատերազմ»:

Ասաց շահը ու պատրաստեց արքայական խրախճանք,
Այնքան շքեղ, որ դղյակը դառավ գարնան ճոխ պերճանք:

Խրախճանքի եկան բոլոր իշխանները Իրանի,
Նրանց հագին կային շքեղ արդուզարդ ու ծիրանի:

Խնջույքի մեջ երգում էին կին ու աղջիկ, տղամարդ,
Ծառաները շահի առջև կանգնել էին, ինչպես վարդ:

Արևադեմ քաջերն այնտեղ փայլում էին, շողշողում,
Այդպիսի պերճ զարդարանքներ չէին տեսել մեր հողում:

Ամենուրեք լսվում էր նուրբ ձայնը չանգի ու վինի,
Կոնծում էին կարմիր կրակ, դեղին ճրագ թունդ գինի:

Դատարկեցին ուրախության կենացներ մինչ կես գիշեր,
Որ անցյալի վիշտ ու ցավը ներկայի հետ չհիշեն:

Խրախճանքը այնքան տևեց, մինչև մութը իջավ ցած՝
Վարագուրեց թե՛ աշխարհը, թե՛ աչքերը քաջ մարդկանց:

Եվ թմբիրից հետո նրանք ելան դեպի իրենց տուն,
Կեսգիշեր էր արել արդեն ճախարակը մշտարթուն:

ՔԱՈՒՍ ՇԱՀԸ ՀԱՐՁԱԿՎՈՒՄ Է ՍՈՀՐԱԲԻ ՎՐԱ

Արեգակը իր երեսից քաշեց քողը սևաթույր,
Ողջ աշխարհը ողողելով ճաճանչներով ոսկեգույն:

Շահնշահը հրամայեց հսկա Գիվին ու Թուսին՝
Թմբուկ զարկեն, որ գոռ ձայնը գնա հասնի մինչ լուսին:

Ապա բացեց փակ պահեստը ու բաժանեց փող ու գանձ,
Այնուհետև նա ժողովեց իշխանազուն քաջ մարդկանց:

Նա հավաքեց հարյուր հազար հեծելազոր հրազեն,
Ու ռազմադաշտ տարավ նրանց, որ թշնամու հետ մրցեն:

Դաշտում նույնիսկ տեղ չմնաց, այնքան բանակ գոյացավ,
Իսկ ձիերի ոտքի փոշուց ողջ երկինքը սևացավ:

Օդը դառավ կապույտ լեղակ, իսկ գետինը՝ եբենոս,
Դաշտը դողաց, երբ որ հնչեց մարտակոչի դափ ու գոս:

Բանակները առաջ անցան իջևանից իջևան,
Պայծառ օրը իսկույն դառավ մթաշխարհի օթևան:

Փայլում էին նիզակները, շողում ամեն մի աշտե,
Ասպարեզը թվում էր, թե սաղավարտե մեծ դաշտ էր:

Ձենք-զրահը հուրհրատում, առկայծում էր ամեն տեղ,
Կարծես երկրի վրա հանկարծ բռնկել էր մեծ հրդեհ:

Կար անքանակ վերտ ու վահան ու դրոշներ գույնզգույն,
Ե՛վ ոսկեզօծ տեգ ու ասպար, և՛ նժույգներ սևաթույր:

Թվում էր, թե վերից իջավ եբենոսե մի մեծ ամպ,
Ու սաթի պես ջնարակեց դեղին դաշտը ծաղկաթափ:

Մարդկանց աչքին կարծես խառնվեց օր ու գիշեր մեկմեկու,
Ոչ երկինք կար, և ոչ աստղ, մարդը մարդուն չէր ջոկում:

Զորքը առաջ գնաց հասավ մինչև հսկա բերդի մոտ,
Ի՞նչ էր նրանց ոտքերի տակ երկար ճամփան քարքարոտ:

Երկու մղոն երկարությամբ վրան զարկին և թե դեռք,
Ամենուրեք երևում էր նժույգի և փղի հետք:

Հանկարծ բերդի դիտարանից բարձրացավ մի աղաղակ,
Թե թշնամին մեր ամրոցի մոտ է բերել մեծ բանակ:

Սուրհանդակը երբ որ լուրը բերեց հսկա Սոհրաբին,
Նա բարձրացավ աշտարակը, ապա նայեց բանակին:

Նա Հումանին ցույց տվեց հոծ վրանները ամենուր,
Ե՛վ հետևակ բանակները, և՛ այրուձին թշնամու...

Հումանը երբ հեռվից տեսավ անթիվ զորքը Իրանի,
Մեծ սարսափից քիչ էր մնում սիրտն ու հոգին որ մարի:

Բայց Սոհրաբը քաջալերեց՝ նա ստացավ մի նոր ուժ,
Ասաց. «Ինչո՞ւ գունատվեցիր, երբ լսեցիր մահվան գույժ:

Բոլորովին դեն նետիր քո սրտից ամեն ահ ու վախ,
Դու ոսոխի բանակի մեջ չես գտնի գեթ մի խիզախ,

Որ գա իմ դեմ մենամարտի, կամ թե լարի աղեղ-նետ,
Թեկուզ լինի մրցակիցը արեգակի, լուսնի հետ:

Այնտեղ կային բազում գնդեր և անքանակ վերտ, վահան,
Բայց չտեսա մի անվանի ու կռվազան փահլևան:

Աֆրասյաբի բախտը վկա, որ իմ թրի հարվածով
Այս դաշտերը ես կշինեմ մի անհատակ արյան ծով»:

Բայց Սոհրաբը երկյուղ չուներ, զի հսկա էր, տղամարդ,
Նա ամրոցից ներքև իջավ, սիրտը ուրախ ու զվարթ:

Մատռվակից նա պահանջեց գինով լեցուն մի գավաթ,
Չէր վախենում մենամարտից, քանզի ուներ մեծ հավատ:

Այնուհետև իր վրանում հավաքեց նա մի մեծ խումբ,
Ամբողջ օրը քաջերի հետ անցկացրեց կերուխում:

Բայց ամրոցի մյուս կողմում՝ տափարակի հենց վրա
Զարկել էին Քաուս շահի համար հսկա մի վրան:

Ամենուրեք գնդեր կային ու վրաններ բազմաշար,
Ուր էլ գնաս՝ տափաստանում ոտ գցելու տեղ չկար:

ՌՈՍՏԱՄԸ ՍՊԱՆՈՒՄ Է ԺԱՆԴԱՌԱԶՄԻՆ

Արևը երբ հրաժեշտի շողերն առավ, մտավ քուն,
Մութը երկրի վրա փռեց սևասքող վարագույր:

Քաջ Ռոստամը երբ որ մտավ արքայական ճոխ սրահ,
Քաուս շահը տեսավ, որ նա կապել է զենք ու զրահ,

Ասաց. «Ո՛վ դու աշխարհակալ իմ շահնշահ մեծափառք,
Թույլ տուր, որ ես թշնամու մոտ գնամ թաքուն, անգլխարկ,

Որ ես տեսնեմ ո՛վ է թուրքի զորավարը նորահայտ,
Ովքե՞ր են իր ռազմիկները, ունե՞ն քաջի սաղավարտ»:

Իսկ Քաուսը պատասխանեց. «Փղամարմին իմ Ռոստամ,
Հոգով լինես պայծառամիտ, իսկ մարմնով՝ ողջանդամ:

Քեզ համար թող Աստված լինի մշտահաստատ պահապան
Ու կատարի սրտիդ կամքը, էլ ի՞նչ խորհուրդ ես քեզ տամ»:

Այնուհետև քաջ Ռոստամը հագավ թուրքի նոր հագուստ,
Գաղտնի մտավ ամրոցի մեջ, թուրք էր, հրոք, արտաքուստ:

Երբ որ մտավ միջնաբերդը, այնտեղ կանգնեց համարձակ,
Իր ականջին անմիջապես հասավ աղմուկ, աղաղակ:

Առյուծասիրտ հսկան գնաց կանգնեց բերդի այն մասում,
Այնպես, ինչպես ժիր առյուծը դեպի եղնիկն է վազում:

Այնտեղ տեսավ թուրանական քաջ այրերին ամրահաղթ,
Ուրախացավ, դեմքը շիկնեց, ինչպես գարնան կարմիր վարդ:

Տեսավ գահի վրա բազմած հաղթամարմին Սոհրաբին,
Որի կողքին մեկնվել էր Ժանդառազմը ահագին:

Մյուս կողքին քաջ Հումանն էր, պատերազմում հռչակված,
Իսկ մի կողմում՝ Բարման հսկան, անվանի ու փառապանծ:

Սեգ Սոհրաբը գահի վրա բազմել էր հանց վեհ նոճի,
Նա կեցվածքով նմանվում էր անհաղթելի գոռ քաջի:

Ուղտի ազդրեր էին կարծես բազուկները Սոհրաբի,
Առյուծի լանջ ուներ հսկան, դեմքը նման էր վարդի:

Եվ շարեշար կանգնած էին հարյուր կտրիճ պատանի,
Ամեն մեկը մի զորապետ, պատերազմի պիտանի:

Եվ շարեշար կանգնած էին հիսուն ծառա, որ պարեն,
Որ Թուրանի զորապետի հրամանը կատարեն:

Ամեն մեկը գովերգում էր մեծահամբավ Սոհրաբին,
Իշխանական վեհությունը ու մատանին թանկագին:

Ռոստամ-Զալը թաքստոցից նայում էր լուռ, ակնդետ,
Հեռվից ջոկում թուրանական հսկաներին թիկնավետ:

Ժանդառազմը մի կարևոր գործի համար ելավ դուրս,
Հանկարծ տեսավ նոճու նման մի հսկայի բարձր ուս:

Նա Թուրանում չէր հանդիպել նման մարդու վեհատես,
Ուստի արագ մոտեցավ և հարցուփորձեց հենց այսպես.

«Ի՞նչ մարդ ես դու, ո՞վ ես, ի՞նչ ես, խոստովանիր ինձ շիտակ,
Մոտ եկ և քո դեմքը ցույց տուր իմ ճրագի լույսի տակ»:

Բայց Ռոստամը նրա վզին իջեցրեց մի հարված
Ու տապալեց, ինչպես չնչին մի թուլակազմ արարած:

Ժանդառազմը հոգին փչեց, ընկավ ինչպես անշունչ փայտ,
Ու վերջացավ նրա քենը, խնջույքները հանրահայտ:

Ժանդառազմը Սեմենգանի շահի որդին էր միակ,
Նա Սոհրաբի մորեղբայրն էր, ուներ քաջի մեծ հռչակ:

Սեզ Սոհրաբը մտադրվեց զորքը տանել դեպ Իրան,
Սակայն դժվար ճամփաները ծանոթ չէին դեռ նրան...

Ժանդառազմը Ռոստամ-Զալին հանդիպել էր խնջույքում,
Ոչ ոք նրան չէր ճանաչում և Սեմենգան քաղաքում...

Ժանդը գնաց իր քրոջ մոտ, որ նա իրեն պետ կարգի,
Եվ Սոհրաբի հետ միասին դեպի Իրան ուղարկի,

Որ նա այնտեղ որդուն ցույց տա՝ ահա, Սոհրաբ, հորդ տես,
Երբ Իրանի շահի զորքը կգա կովի ասպարեզ:

Ժանդառազմին քույրը ասաց. «Գնա՛ դու էլ որդուս հետ,
Ե՛վ օգնական եղիր նրան, և՛ ուսուցիչ խորագետ:

Երբ որ երկու բանակները դուրս գան կովի ասպարեզ,
Իմ զավակին դու ցույց կտաս Ռոստամ-Զալին հաղթավես»:

Ուրախանում էր Սոհրաբը խրախճանքում իր շքեղ,
Բայց չէր գալիս Ժանդառազմը, չէր երևում ոչ մի տեղ:

Ներկաներին նա հարցրեց. «Ասեք, որտե՞ղ է քեռիս,
Աչքս թափուր տեղին է միշտ, գինու թասը աջ ձեռիս»:

Մարդիկ երբ որ դուրս գնացին, Ժանդառազմի մոտ հասան,
Տեսան անշունչ պառկել էր նա՝ մեռելներին հավասար:

Նրա մահվան լուրը իսկույն հասավ հսկա Սոհրաբին,
Որ իր քեռի Ժանդը հիմա մեռած ընկել է ճամփին:

«Դեռ չկռված՝ հանգստացավ»,– ասաց Սոհրաբն իր մտքում,
Ու ծխի պես արագ ելավ, մոռանալով կեր ու խում:

Ճրագավոր ծառաների և ողբասաց մարդկանց հետ
Տեսավ քեռուն մեռած, ինչպես դաշտում ընկած կոտրած նետ:

Սաստիկ սարսեց ու շվարեց, տեղում մնաց քարացած,
Այնուհետև իր ընկերներ կտրիճներին նա ասաց.

«Այս գիշեր դուք պետք չէ քնեք, եղեք ուշիմ և արթուն,
Ամբողջ գիշեր նիզակ սրեք, հսկեք ամեն մի մարդու:

Մեր հոտի մեջ գաղտագողի մտել է մի սոված գայլ,
Քանզի շունը և հովիվը մրափել են գինեհար...

Այսպիսով նա մեր փարախից փախցրել է մի ոչխար,
Խայտառակել թե՛ բանակին, թե՛ պետերին մեր թշվառ:

Եթե Աստված ինձ օգնության ձեռք երկարի այս անգամ,
Եվ ձիս պատռի չոր գետինը սմբակներով ոսկեգամ,

Քենի համար ես կնետեմ իմ պարանը հանգույցով,
Եվ իրանցոց կոտորելով դաշտը կանեմ արյան ծով»:

Ժանդառազմի մահվան համար բարձրացավ մեծ աղաղակ,
Մարդիկ իսկույն հավաքվեցին, արտասվեցին գլխահակ:

Այնուհետև գոռգոռացին. «Ժանդառազմ, օ՛, Ժանդառազմ,
Քենի համար այս խնջույքից գնանք դեպի պատերազմ»:

Բայց Սոհրաբը քաջավայել նորից բազմեց իր գահին,
Իր մոտ կանչեց ավագներին ու ռազմագետ քաջերին:

Ասաց. «Թեպետ Ժանդառազմը մեզնից գնաց, ո՛վ քաջեր,
Բայց իմ սիրտը չի հագեցել կերուխումից այս գիշեր»:

Ապա դիմեց նա Հումանին. «Կյանքը ի՞նչ է՝ խրախճանք,
Զինվորներին գինի տուր, որ մխիթարենք և ուժ տանք»:

ՌՈՍՏԱՄԸ ՋԵԿՈՒՑՈՒՄ Է ՇԱՀԻՆ

Կես գիշերին Ռոստամ-Զալը վերադարձավ շահի մոտ,
Պահապան էր նշանակված Գիվը մինչև առավոտ:

Գիվը տեսավ փահլևանին, նրան կարծեց թշնամի,
Սուրը քաշեց իր պատյանից, որ առյուծին սպանի:

Նա մռնչաց, ինչպես ահեղ ու կատաղած հսկա փիղ,
Գլխին պահեց մեծ վահանը, սուրը քաշեց շեշտուղիղ:

Իսկ Ռոստամը անշուշտ գիտեր, որ պահակ էր Գիվը քաջ,
Համոզված էր, որ հսկային պիտի տեսներ ժամ առաջ,

Ուստի քահ-քահ ծիծաղեց և փահլևանին նա ձայնեց,
Գիշերադետ Գիվը իսկույն Ռոստամ-Զալին ճանաչեց:

Անմիջապես ձիուց իջավ, դիմեց նրան. «Փահլևա՛ն,
Որտե՞ղ էիր կես գիշերին, ի՞նչ ես անում մեն-միայն»:

Իսկ Ռոստամը եղելության մասին պատմեց շատ հակիրճ,
Թե ինչպես է սպանել նա Ժանդի նման մի կտրիճ:

Ապա Գիվը Ռոստամ-Զալին բարեմաղթեց ողջություն.
«Միշտ քո ձիու վրա լինես, ձեռքիդ լինի գուրզ ու թուր»:

Եվ շահի մոտ աճապարեց Ռոստամ-Զալը սրտաբեկ,
Խրախճանքի ու Սոհրաբի մասին պատմեց մեկ առ մեկ:

Պատմեց շահին, որ Սոհրաբը բարձրավեն է հանց նոճի,
Այնքան ուժեղ, որ մեծ ժայռը կպոկի և կճոճի...

«Ողջ Թուրանում դեռ չի ծնվել մի այդպիսի խիզախ թուրք,
Նա հսկայի ոտքեր ունի, փահլևանի լանջ ու կուրծք:

Նրա նման հսկա չկա Իրանում, թե Թուրանում,
Կարծես նորից կենդանացած հսկա Սամն է մեծանում»:

Ապա պատմեց, թե ինչպես է վարվել հզոր Ժանդի հետ,
Թե՝ խնջույքներ ու կռիվներ նա չի տեսնի այսուհետ:

Ապա քաջը խրախճանեց Քաուսի հետ բարձրագահ,
Ու երկուստեք որոշեցին անելիքը հետագա...

ՍՈՀՐԱԲԸ ՀԵՋԻՐԻՑ ՀԱՐՑՆՈՒՄ Է ԻՐԱՆԻ ԶՈՐԱՎԱՐՆԵՐԻ ՆՇԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Արեգակը երբ բարձրացավ, ինչպես ոսկե մի վահան՝
Կապույտ քողի տակից հանեց իր գլուխը հուրհրան.

Եվ երկնքից հուր պարաններ կախեց երկրին բովանդակ,
Ու հրեղեն քուլաներով ամպեր դիզեց սպիտակ...

Սեգ Սոհրաբը խիկոյն ելավ՝ առավ զենքը վառվռուն,
Ապա թամբեց իր վիթխարի և ճապուկ ձին կապտագույն:

Կողքին կախեց հնդկական թուր՝ կոթի վրա ոսկեթել,
Գլխին դրեց իշխանական մի սաղավարտ երկաթե:

Վաթսուն օղակ պարան կապեց թամբի կեղին օժանդակ,
Աչք ու ունքը խոժոռել էր, հայացքը խիստ, դժնդակ:

Եկավ կանգնեց բարձր մի տեղ, որ այդտեղից լավ հսկեր
Իր թշնամու ամեն քայլը, որ նրանից առներ քեն:

Եվ Հեջիրին բերեց դաշտը, որտեղ պիտի նա կռվի,
Ասաց. «Գիտե՞ս, լավ արձակած նետը պետք է չծռվի:

Ամեն գործում պետք է բռնել շեշտակի ու ճիշտ նշան,
Թե ուզում ես կյանքում չանել նույնիսկ վնաս աննշան:

Ինչ որ քեզնից կհարցնեմ՝ տեղեկության կտաս ճիշտ,
Մտքովդ անգամ թող չանցնի, թե կխաբես ինձ այդքան հեշտ:

Եթե ինձնից ցանկանում ես փրկություն և ոչ թե բանտ,
Թե ուզում ես պատվով ապրել, կամ թե լինել ազատ մարդ,

Ես Իրանի մասին ինչ որ հարցեր կտամ՝ ճիշտ կասես,
Ճշմարտության ճանապարհից մտքիդ ուղին չշեղես:

Քո լավության փոխարեն ես կնվիրեմ ի սրտե
Ոսկի, արծաթ, գոհարեղեն, նետ ու նիզակ և աշտե:

Իսկ երբ տեսնեմ միտքդ ծուռ է, նենգամիտ ես, խաբեբա,
Շղթայակապ բանտ կնետեմ, մինչև կյանքիդ վերջը տամ»:

Իսկ Հեջիրը պատասխանեց. «Ո՛վ Թուրանի զորավար,
Ինչ որ սիրտդ ցանկանում է, ես պատրաստ եմ քեզ համար:

Խոստանում եմ անկեղծ խոսել, ինչ որ գիտեմ քաջերից,
Սուտ խոսելը օգուտ չի տա, գիտեմ, պիտի պատժես ինձ:

Ինձնից միայն դու կլսես ճշմարտություն, ոչ այլ բան.
Դու հավատա, ես իմ կյանքում սուտ չեմ խոսել մեկ անգամ:

Իմ սրտում ոչ նենգություն կա, ոչ էլ չնչին քեն ու դավ,
Ով որ ստեց՝ նա էլ պիտի ունենա միշտ վատ համբավ»:

Սոհրաբն ասաց. «Հիմա ես քեզ հարցեր կտամ մի քանի,
Պատմիր շահի զորքի մասին և անվանի իշխանի...

Ինչպե՞ս են մեծ Թուսն ու Գիվը, ծեր Գուդերզը հեզավարք,
Քաջ Բահրամը, Գոսթեհեմը, Ռոստամ-Զալը մեծափառք:

Այլ քաջերի մասին նույնպես երբ հարցնեմ՝ ինձ ցույց տուր՝
Ի՞նչ կարգ ունեն և ի՞նչ նշան, ի՞նչ դրոշակ և ի՞նչ գույն:

Ո՞ւմն է արդյոք այն դիպակե առագաստը երփներանգ,
Որի մեջ կա ընձառյուծի մորթուց կարած մի տնակ:

Մուտքի առջև շղթայակապ հարյուր փիղ կա բեռնապահ,
Ներսում՝ կապույտ լեղակի պես փիրուզազարդ հսկա գահ:

Դեղին դրոշ է ծփծփում, այնտեղ ամեն փղի մոտ,
Ծայրին ունեն ոսկելուսին դրոշները կապտակոթ:

Զորամիջի այդ վրանը, ասա՛, ո՞ւմ է պատկանում,
Ո՞ր հսկան է ապրում այնտեղ, ի՞նչ են նրան անվանում»:

«Այդ շահինն է,– Հեջիրն ասաց,– ծանր մարտեր պիտ մղի,
Պատերազմել չի կարող նա առանց ձիու ու փղի»:

Իսկ Սոհրաբը թե. «Նրանից այն կողմ կա մի այրուձի,
Ինչպես նաև բազում փղեր և գումակներ առանձին:

Այնտեղ հսկա մի վրան կա, մի առագաստ սևաթույր,
Հավաքվել են նրա շուրջը զորք ու սպա բազմաբյուր:

Այնուհետև օղակաձև վրաններ են երևում,
Իսկ դրան մոտ շեկ առյուծներ և սև փղեր՝ ետևում:

Այդ վրանի մեծ դրոշի վրա փիղ է նկարած,
Նրա շուրջը՝ մուճակավոր ձիավորներ ոսկեսանձ:

Պատասխանիր, ի՛նչ հսկա է տերը այդ սև վրանի,
Կամ ինչպե՛ս են նրան կոչում, ո՛ր հսկան է Իրանի»:

Հեջիրն ասաց. «Այդ Նովզարի որդի Թուսն է ամեհի,
Փղանման դրոշակը մեծ նշանն է իր տոհմի...

Արքայական ծագում ունի սպարապետ Թուսը մեծ,
Ողջ բանակի զորավարն է, քինախնդիր, հողմահեծ:

Առյուծն անգամ չի դիմանում նրա զարկին մահացու,
Մեծերը միշտ նրան ոսկե քսակներ են մատուցում»:

«Ապա ո՛ւմն է այն վրանը բոսորագույն, ոսկեզօդ,-
Ասաց Սոհրաբն,- որի առջև և՛ բանակ կա, և՛ ամբոխ:

Կապույտ դրոշ է երևում, նրա վրա՝ մի առյուծ,
Եվ շողշողուն գոհար ունի, շրջագիծը լոկ ոսկուց:

Առջևում և թե ետևում զորք է կանգնել զիգուզագ,
Ամեն մեկի հագին զրահ, իսկ ձեռքերին՝ նետ, նիզակ:

Ո՛վ է, ասա, այդ հերոսը, ի՛նչ գործի մեջ է հմուտ,
Պատասխանիր և չփորձես ինձ մոտ դուրս տալ սուտ ու մուտ»:

Հեջիրն ասաց. «Նա պարծանքն է ամեն իշխան ազատի,
Մեծահամբավ զորապետ է, որդին է նա Քոշվադի:

Քաջասիրտ է ու կորովի, ծանրանիստ է, ինչպես սար,
Ութսուն որդի ունի՝ փղի և առյուծի հավասար:

Փիղը անգամ վախենում է, որ գա նրա դեմ կռվի,
Սիրտ չի անում ո՛չ հովազը, ո՛չ առյուծը անտառի»:

«Իսկ այն ո՛ւմն է,- նորից ասաց,- առագաստը մուգ կանաչ,
Որի շուրջը քաջ այրերը գնում են ետ ու առաջ:

Իսկ վրանի կենտրոնում կա մի թանկագին գահաթոռ,
Որի վրա Ախտեր-կավյան դրոշակն է աստղաշող:

Գահի վրա բազմել է մի լայնաթիկունք փահլևան,
Շքեղաշուք իր կեցվածքով նույնիսկ շահի է նման:

Անգամ նստած՝ իր հասակով հսկա է նա վիթխարի,
Քան թե նրա առջև կանգնած զինվորները քաջարի:

Այնտեղ կապած երիվարը ունի ոսկե երասան,
Ես ոչ մի տեղ դեռ չեմ տեսել մի ձի՝ նրան հավասար:

Բայց անհանգիստ այդ նժույգը ծառս է լինում իր տեղում,
Կարծես տակն ու վրա լինող հսկա մի ծով է եռում:

Այնտեղ կան և պատերազմեն շատ հսկաներ փղալանջ,
Եվ անհանգիստ քաջը նույնպես շարժվում է մերթ ձախ ու աջ:

Ողջ Իրանում դեռ չեմ տեսել նրա նման փահլևան,
Գլխից մինչև ոտքի ծայրը ծամեր ունի հուրհրան:

Տե՛ս, դրոշի վրա կա մի հսկա վիշապ ծանրաքաշ,
Իսկ ամրակերտ տեգի վրա՝ մի գոռ առյուծ ոսկեբաշ:

Ասա՛, ո՛վ է այդ քաջը, որ բազմել է հանց կուռքարձան,
Որ անդադար մռնչում է առյուծի պես բարձրաձայն»:

Իսկ Հեջիրը մտքում ասաց. «Հաղթաբազուկ, մեծ Ռոստամ,
Ինչպե՞ս խաբեմ ես այս մարդուն, հիմա քեզ ի՞նչ անուն տամ:

Եթե հայտնեմ իսկությունը՝ այս առյուծը սրաճանկ
Ռոստամ-Զալին փոշի կանի, որ անի ճոխ խրախճանք:

Լավ կլինի՝ ես չհայտնեմ անունը քաջ Ռոստամի,
Կթվարկեմ այլ անուններ, որ մոլորվի թշնամին»:

Ապա դարձավ սեգ Սոհրաբին, պատասխանեց նա սրտոտ.
«Նա չինացի բարեկամ է, հյուր է եկել շահի մոտ»:

Իսկ Սոհրաբը կրկին պնդեց. «Անունն ասա չինացու»...
Հեջիրն ասաց. «Ես չգիտեմ, թե ով է և ինչացու...

Կարծում եմ նույն չինացին է, չեմ ճանաչում ես, իրոք,
Չե՞ս տեսնում որ օտար մարդ է, ունի ուրիշ զենք ու զորք»:

Սոհրաբը հոր նշանները չտարբերեց օ՜, երբե՛ք,
Թեպետ մայրը թվարկել էր ամեն մանրուք մեկ առ մեկ:

Նա անդադար որոնում էր Ռոստամ-Զալին, մտածում,
Չէր հավատամ իր տեսածին, թեկուզ աչք էր ման ածում:

Բայց անընդմեջ հարց էր տալիս, խորհրդածում էր այնքան,
Որ հուսալով գուցե գտնի նրանից ճիշտ պատասխան:

Սակայն ինչ որ պիտի լինի, այլ կերպ լինել չի կարող,
Չի պակասում ու շատանում ամեն ծնվող ու մեռնող:

Աստված եթե վերից նետի անգամ չնչին մի փետուր՝
Այդ հրաշքից ամեն էակ կծնվի խուլ և թե կույր:

«Իսկ այն ո՞վ է,- սեգ Սոհրաբը հարցեր տվեց նորանոր,-
Վրանի մոտ ես տեսնում եմ կանգնած փիղ ու ձիավոր:

Շեփորի ձայն եմ լսում ես այդ վրանից մերթ առ մերթ,
Գայլի պատկեր կա դրոշին ու բանակներ ռազմաերթ:

Առագաստի վրանի տակ կա թանկագին ոսկեգահ,
Գահի առջև հարյուրավոր ստրուկներ ու ճորտեր կան:

Ասա, ո՞վ է, ի՞նչ անուն եք տալիս դուք այդ իրանցուն,
Ո՞վ է ապրում այդ վրանում, ի՞նչ մարդ է նա, ինչացու»:

Իսկ Հեջիրը պատասխանեց. «Այդ որդին է Գուդերզի,
Ով որ ճրա ճանկը ընկնի՝ առյուծի պես կզզի...

Մեծահամբավ հսկա Գիվն է, քաջասիրտ ու խորագետ,
Իրանական բանակների երկու մասի զորապետ:

Մեր երկրում, իրոք, քիչ կա նրա նման տղամարդ,
Ռոստամ-Զալի փեսան է նա, գլխին ոսկե սաղավարտ:

Այնուհետև հարցուփորձեց. «Նայիր դեպի արևելք,
Այնտեղ ճերմակ ու դիպակե մի վրան կա կորաթեք:

Բյուզանդական վրան է այդ: Նրա առջև շարեշար
Հեծելազոր բանակներ կան և ռազմական մեծ պաշար:

Վահանակիր ամեն զինվոր ձեռքին ունի ամուր տեգ,
Այդքան բազում հետևազոր, ո՛չ, չեմ տեսել ես երբեք:

Շքեղաշուք ու շողշողուն դիպակներ կան ոսկեզարդ,
Ամենուրեք սպասավոր ծառաներ՝ կին, տղամարդ:

Երիտասարդ զորապետը փղոսկրյա գահ ունի,
Գահաթոռը նմանվում է եբենոսի վառ գույնի:

Ասա՛, ինչպե՞ս են անվանում պերճաճաշակ այդ մարդուն,
Արքայազո՞ւն հսկա՞ է նա, թե՞ ունի այլ տոհմանուն»:

Հեջիրն իսկույն պատասխանեց. «Անվանում են Ֆարիբորզ,
Շահնշահի որդին է նա, զորավար է ու հերոս...»:

«Դա վայել է,– Սոհրաբն ասաց,– արքայազուն վեհ մարդուն,
Սաղավարտից երևում է, որ ունի նա մեծ անուն...

Նրա մոտ են գալիս-գնում զորապետ ու սուրհանդակ,
Քանզի ունի և՛ բանակներ, և՛ առյուծներ ձեռքի տակ»:

Այնուհետև թե. «Ո՞ւմն է այն մեծ վրանը դեղնագույն,
Ուր շողշողուն դրոշներով զորք եմ տեսնում միշտ կանգուն:

Նրա շուրջը տեսակ-տեսակ դրոշներ են շողշողում,
Կարմիր, կապույտ, կանաչագույն, իսկ դեղինը՝ մեջտեղում:

Վագրադրոշմ նշան ունի ամրոցներով անառիկ,
Իսկ դրոշի կոթի վրա կա արծաթյա մի մահիկ:

Ո՞վ է բազմել մեծ վրանում, սպա՞ է, թե շահնշահ,
Տուր անունը այդ հերոսի, ունի՞ արդյոք այլ նշան»:

Հեջիրն ասաց. «Գորազն է նա, անսասան է, վեհ ու քաջ,
Հարձակվում է թշնամու դեմ առյուծի պես՝ աննահանջ:

Նա Կավեյան ծոռներից է, իր ծագումով արիատոհմ,
Փորձանքներից չի խուսափում, կործանող է ինչպես հողմ»:

Սեգ Սոհրաբը ինչքան էլ որ հոր նշանն էր որոնում,
Բայց Հեջիրը խորամանկ էր, ստում էր ու վարանում:

Այս աշխարհը ծագման օրից ընթանում է իր ճամփով,
Դու չես կարող նոր բան կերտել աստվածատուր քո խելքով:

Ամեն էակ մի բախտ անի, անցողիկ կյանք, կարճ ճամփա,
Ով ծնվում է՝ մեռնելու է, ինչ որ ունի՝ պիտի տա:

Ով որ կապվեց պանդխտության մշտակայան այս կյանքին,
Նա էլ պիտի թույն ճաշակի ու զրկանքներ դառնագին:

Բայց Սոհրաբը չէր դադարում, հարցուփորձում էր կրկին,
Նրա մասին, որին տեսնել էր փափագում սրտագին:

«Ի՞նչ կասես գորշ ձիու մասին և այն կանաչ վրանի,
Ինչպես նաև երկարաձիգ օղակ-օղակ պարանի...»:

«Քեզնից ոչինչ չեմ թաքցնում,- ասաց Հեջիրն Սոհրաբին,-
Այդ չինացուն ես չգիտեմ, ես իմ Աստված, իմ հոգին...»:

«Ճիշտ չես ասում,- Սոհրաբն ասաց,- չտվիր ինձ պատասխան,
Դու Ռոստամի մասին չասիր, չհիշեցիր ոչ մի բան:

Այն հսկան, որ ողջ աշխարհում հռչակված է փղամարդ,
Ո՞նց կարող է կռվի դաշտում մնալ ծածուկ կամ անհայտ:

Դու խոստացար, որ գերազանց հսկա է նա անվանի,
Որ աչքի պես պահպանում է մարզերը ողջ Իրանի:

Քաուս շահը երբ մտնում է պատերազմի ասպարեզ,
Տանում է իր թագն ու գահը, իսկ Ռոստամը քամու պես

Ընթանում է միշտ առջևից, որպես կռվի սուրհանդակ,
Երբ լսվում է պատերազմի դաշտից մահվան աղաղակ»:

Հեջիրը թե. «Գուցե դեպի Զաբուլ է նա հեռացել,
Իր փառավոր ու քաջարի բանակներով արիացել:

Որովհետև ժամանակն է խնջույքների, վարդերի,
Գարնան այս պերճ եղանակին կարոտ է նա երգերի»:

«Քո պատմելով,- Սոհրաբն ասաց,- եթե ես քեզ հավատամ՝
Քաուս շահը կռվի մեջ է, իսկ Ռոստամը ինքնակամ

Զբոսնում է պերճ Զաբուլում այս ամենին անտարբե՞ր...
Կծիծաղի՝ ով լսի քեզ, ջահել լինի կամ թե ծեր:

Կարճ ասեմ ես, այսօր քեզ հետ կանեմ միայն մի պայման.
Եթե ցույց տաս ինձ Ռոստամին, անթիվ գանձեր քեզ կտամ:

Վեր կդասեմ քեզ բոլորից, կմեծարեմ ամեն տեղ,
Դու կունենաս երջանիկ կյանք, ինչպես իշխան փառահեղ:

Իսկ եթե դու հակառակես և չունենաս ցանկություն
Իսկությունը հայտնելու ինձ, միտքդ պահես միշտ թաքուն՝

Ես ուսերից դեն կնետեմ քո գլուխը ծանրաբեռ,
Ուստի խորհիր դու այդ մասին, ժամանակ կա քանի դեռ:

Մի օր շահի մոտ մի մոբեթ մի խոսք ասաց թանկագին,
Նորից ես այն կպատմեմ քեզ, իսկ դու հիմա ականջ դիր.

«Չասած միտքը նմանվում է այն մատանուն ոսկեակ,
Որ մարդկանցից միշտ աննկատ թաքնված է գետնի տակ:

Բայց երբ գտնես ու դուրս հանես՝ այն ժամանակ կշողա,
Կհուրհրա ինչպես արև, ինչպես անգին շափյուղա»:

Այսպես, և այդ ծանր պահին Հեջիրն ասաց Սոհրաբին.
«Երբ որ շահը կկշտանա թագից, գահից, նա կրկին

Պատերազմի համար, գիտեմ, կլորոնի շարժառիթ
Ու կսպանի ահեղ փղին, հանց որսացու մի թույլ վիթ:

Եթե տեսնես նրա լանջը ու մատները սրաճանկ,
Լեզուդ ահից կպապանձվի, դու կլինես լեղաճաք:

Նրա ձեռքից չես ազատվի, ինչքան էլ որ փորձես դու,
Նա հոշոտող մի առյուծ է կամ վիշապ է ահարկու:

Իսկ եթե նա ցասման պահին հսկա գուրզով հարվածի՝
Երկու հարյուր քաջի գլուխ կանի փոշի հողմացիր:

Ռոստամի դեմ ինչ էլ որ գա՝ առյուծ լինի թե ընձուղտ,
Կջախջախի, քանզի չունի թշնամու դեմ չնչին գութ:

Ոչ մի հսկա փիղ չի կարող մենամարտել նրա հետ,
Նրա Ռախշի ոտնափոշին կարծես լինի պղտոր գետ:

Հարյուր քաջի ուժ ունի նա, ասես լինի հսկա ծառ,
Հողմի նման անհաղթելի, ճակատը վեհ ու պայծառ:

Ցասման պահին առյուծ լինի, թե մարդ՝ փղին հավասար,
Չի դիմանա նրա զարկին, թեկուզ լինի հսկա սար:

Ռոստամ-Զալի մեծ գործերը հայտնի են ողջ աշխարհում,
Ծեր ու մանուկ գիտեն նրան, քանզի ունի մեծ անուն:

Հիմալայը կխորտակի, ինչպես ռազմի թույլ վահան,
Դու չես տեսել ծանր գուրզով մի այդպիսի փահլևան:

Չին Խաքանին և Թուրանի շահին՝ արյան միշտ ծարավ,
Թրի քաշեց ու բանակի կեսը պատանդ նա տարավ»:

Իսկ Սոհրաբը պատասխանեց Հեջիրի այդ ասածին.
«Ապաբախտ է Քոշուվադի Գուդերզ որդին քաջածին,

Որ իր նման խելոք մարդը աշխարհ բերեց մի որդի,
Բայց քեզ նման տհաս է ու չի ճանաչում ոչ ոքի:

Դու չես տեսել իմ վահանը ու նիզակը սրածայր,
Ոչ էլ լսել Սամանդ ձիուս խրխնջոցը շանթաձայն:

Այդ պատճառով Ռոստամ-Զալի մասին գովքեր ես անում
Ամբողջ օրը մեծարելով նույնիսկ դու չես ձանձրանում:

Կհարձակվեմ ես նրա դեմ, ինչպես անհաղթ մի քաջայր,
Դու կտեսնես, թե ինչպես է ծովը կրծում քար ու ժայռ:

Երբ բարկության կրակից դու ահ ու սարսափ ունենաս
Կասես ծովը փառք է, քան թե կործանարար հուրը այս:

Արեգակը երբ հեռանա, երկրին իջնի խոր գիշեր,
Այնպես կանեմ, որ ամեն մի իրանացի ինձ հիշե»:

Հարցուփորձից հետո խիզախ Սոհրաբն ընկավ մտքի մեջ,
Նրա սիրտը բոցկլտում էր, ինչպես կրակ մի անշեջ:

Անփորձ, անգետ Հեջիրը միշտ նույն միտքն էր կրկնում,
Թե. «Ռոստամի նշանները հայտնեմ այս քաջ պատանուն՝

Իր գնդերով կներխուժի ռազմադաշտը Իրանի,
Զի վիշապի ուժ ունի ձին, ինչ ուզենա նա կանի:

Նա իր ճանկի մեջ կգցի ու կպպանի Ռոստամին,
Ողջ Իրանը փոշի կանի, ինչպես ահեղ մի քամի:

Մեր քաջերից ոչ ոք սրա դեմ չի ելնի կռվելու,
Շահնշահին կդարձնի միշտ հարկատու ու հլու»:

Ծեր մոբեդը ճիշտ է ասել. «Մեռիր, բայց թող մեծ անուն,
Լավ է, քան թե խաղաղ կյանքով հնազանդվես թշնամուն»:

Եթե սրա ձեռքով մեռնեմ՝ չի խավարի լուսատուն,
Ոչ էլ գետի պարզ ակունքը կդառնա սուսկ տղմաբուն:

Ողջ կմնան Գուդերզը և որդիները իր ութսուն,
Հսկա Գիվը կասպատակի, ձեռքին բռնած մի մեծ սյուն:

Կհարձակվի անպարտելի քաջ Բահրամը զորապետ,
Առյուծասիրտ գոռ Շեղուշը և Ռահամը նրա հետ:

Երբ որ նրանց սուր ականջին հասնի լուրը իմ մահվան,
Նրանք կգան ու Թուրանը կդարձնեն մոխրավան:

Ի՛նչ փույթ, եթե իմ մարմինը փոշիանա Թուրանում,
Հիշում եմ, թե ծեր մոբեդը ինչ է ասել դեռ հնում.

«Գետնից եթե ծլարձակի արմատասուն մի նոճի՝
Բնական է, որ Փասիանը խոտից էլ հոտ չքաշի»:

Ապա դարձավ նա Սոհրաբին. «Ի՞նչ ես սաստում, հանց քամի,
Ամբողջ օրը հարցնում ես լոկ անունը Ռոստամի:

Մահով ես ինձ ահաբեկում, բայց օգուտ չես քաղելու,
Ինձնից այն ես դու պահանջում, ինչ որ չունեմ քեզ տալու:

Ռոստամ-Զալի մասին տեսար, որ լուր չունեմ ես արդեն,
Դու ուզում ես քինառությամբ քո ձեռքով ինձ գլխատել:

Ցանկանում ես՝ եկ ու թափիր իմ արյունը արհացու,
Իզուր տեղը մի՛ զայրանա, քենի բաժակ մի՛ լցրու:

Դու չես կարող հաղթել նրան՝ ով վերևն է, դու՝ ցածում,
Ոչ էլ ձեռքդ նա հեշտ կընկնի, ինչպես դու ես այդ կարծում:

Այսուհետև նրա հանդեպ մեծ չարչարանք մի քաշիր,
Լուսաբացին երբ նա կգա՝ վեր կհանի քո փոշին»:

Սոհրաբը երբ լսեց նրան, գոռնաթափվեց այս անգամ,
Սիրտը հուզվեց ու Հեջիրից չհարցրեց ոչ մի բան:

Այնուհետև դեմքը շրջեց իր գերեվար թշնամուց,
Մի պահ կանգնեց ու որոտաց, ինչպես հարբած մի առյուծ:

Եվ Հեջիրի մեջքին զարկեց մի բռունցքով ծանրակի,
Ու գլորեց նրան գետին, գնաց մոտն իր բանակի:

ՍՈՀՐԱԲԸ ՀԱՐՁԱԿՎՈՒՄ Է ՔԱՈՒՍԻ ԲԱՆԱԿԻ ՎՐԱ

Մտքերի մեջ խորասուզված սեգ Սոհրաբը առանձին
Պատրաստեց գոռ պատերազմի համար ընտիր այրուձի:

Այնուհետև մեջքին կապեց կռվի գոտին ամրակուռ,
Գլխից հանեց իշխանական սաղավարտը ոսկեհուռ:

Արագ հագավ կահտանական զենք-զրահը երկաթե,
Գլխին դրեց բյուզանդական սաղավարտը պողպատե:

Ապա առավ մի մեծ պարան և մի նիզակ սրատամ,
Գուրզը դրեց ուսին, ինչպես վիշապաուժ փահլևան:

Խոր հուզմունքից նրա դեմքը հրի նման էր կարծես,
Արագ թամբեց իր նժույգը ու սլացավ հողմի պես:

Նրա Սամանդ երիվարը կարծես լիներ հսկա սար,
Մռնչացող փղի նման պատերազմի դաշտ հասավ:

Մենամարտի համար էր նա քշում իր ձին քրտնաթոր,
Ճամփի փոշին բարձրացել էր ու տարածվել սար ու ձոր:

Մտավ շահի բանակի մեջ, չվախեցավ թշնամուց,
Ինչպես բնից նոր դուրս ելած սաստիկ քաղցած մի առյուծ:

Ու սարսափից խուճապահար զորքը եղավ ցանուցիր,
Ինչպես վագրի սուր ճանկերից հազիվ փախած հսկա ցիռ:

Նրա ամուր երասանից, ասպանդակից ոսկեպատ,
Հսկա ձիուց, հզոր բազկից ու նիզակից իր պողպատ

Սարսափեցին... և Իրանի ոչ մի զինվոր անվանի
Սիրտ չարեց, որ ասպարեզում նրան անգամ խեթ նայի:

Այնուհետև հավաքվեցին քաջերն ամբողջ Իրանի,
«Թե հենց սա է փղամարմին փահլևանը Թուրանի:

Այդքան հեշտ չէր անթարթ նայել նրա դեմքին մահազդու,
Ոչ էլ կարծել, թե նրա դեմ պետք է ճոճել թուր հատու»:

Իսկ Սոհրաբը գոռգոռում էր ու Քաուսին էր կանչում,
Քանզի շահը մենամարտից խուսափում էր ու փախչում...

«Դու կրում ես մեծահամբավ անունը Քեյ-Քաուսի,
Սակայն երբեք սիրտ չես անում դուրս գալ դեմը առյուծի:

Եթե քո դեմ շարժեմ ձեռքիս սուր նիզակը հրաշող,
Ամբողջ զորքդ կտրորեմ ոտքերիս տակ, ինչպես հող:

Ժանդառազմին երբ սպանված տեսա ճերմակ այս բերդում՝
Խնջույքի մեջ ես տվեցի քինառության մեծ երդում,

Որ Իրանի մեջ չեմ թողնի ո՛չ այր և ո՛չ փահլևան,
Քեյ-Քաուսին կբռնեմ ես ու կհանեմ կախաղան:

Եթե կռվող քաջեր ունես՝ թող որ դուրս գան ասպարեզ,
Պատասխանիր, ո՛վ Քաուս շահ, սպասում եմ այստեղ քեզ:

Ո՞ւր են հապա Թուսն ու Գիվը և Գուդերզը անվարան,
Ֆարիբորզը, Գոսթեհեմը և Ռոստամը փահլևան:

Չեմ տեսնում ես Շավերանին, քաջ Զանգիին կատաղի.
Թող գան ինձ հետ մենամարտեն քենս մինչև չպաղի»:

Ասաց, հետո լռեց երկար, չորս կողմ նայեց նա հպարտ,
Բայց Իրանի հսկաներից ձայն չհանեց ոչ մի մարդ:

Ապա շահի վրանի դեմ ոստնեց գուրզը իր ձեռքին,
Յոթանասուն փայտե գամը քանդեց զարկով մեծ տեգի:

Երբ Քաուսի բանակների կեսը եղավ ցիրուցան՝
Ամեն կողմից վեր բարձրացավ տագնապահունչ փողի ձայն:

Քաուս շահը տեսնելով այդ՝ սաստիկ հուզվեց, այնուհետ
Կանչեց. «Ո՛վ իմ իրանացի փահլևաններ ռազմագետ,

Լուր հասցրեք Ռոստամ-Զալին՝ պատերազմի մեծ կուռքին,
Որ քաջերս սարսափել են սաստիկ ահից այս թուրքի:

Թուրանացի այս հսկայից շվարել եմ ես արդեն,
Իմ բանակում մարդ չկա, որ պատերազմի նրա դեմ»:

ՌՈՍՏԱՄԻ ԵՎ ՍՈՀՐԱԲԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

Արագավազ Թուսը իսկույն տարավ լուրը Քաուսի,
Ասաց. «Ո՛վ դու քաջերի քաջ, հիմա խոսեմ, ինձ լսիր...»:

Թուսը պատմեց եղելության մասին այդքան անպատեհ,
Թե Քաուսը կարծես լինի բարկության մի մեծ հրդեհ:

Իսկ Ռոստամը նրան ասաց. «Ո՛վ բարեկամ Քաուսի,
Շատ շահեր են հրավիրել խրախճանքի ու որսի...

Անակնկալ պատվերներով եղել եմ շատ մարդկանց մոտ,
Բայց Քաուսը Ռոստամ-Զալին հղել է միշտ կռվի բոթ»:

Նա պատվիրեց երթի համար շտապ Ռախշը իր թամբեն,
Զորքը այնպես հարձակվի, որ ոսոխները սարսափեն:

Երբ որ հսկա Ռոստամ-Զալը իր վրանից նայեց դուրս,
Տեսավ դաշտից արագավազ Գիվն է գալիս մտասույզ:

Նա շողշողուն թամբը դրեց Ռախշի վրա շուտափույթ,
Իսկ Գուրգինը վազվզում էր ու գոռգոռում. «Դե, շո՛ւտ, շո՛ւտ»:

Ռահամն եկավ Ռախշի մեջքին դրեց գուրզը ամրակապ,
Ասպազենը հսկա Թուսն էր ի մի բերում հապշտապ:

Մեկը մեկին ասում էր. «Շո՛ւտ, տեղումդ մի՛ կարկամիր»,
Նրանց ձայնը իսկույն հասավ սուր ականջին Ռոստամի:

Քաջը խորհեց. «Աhրիմանի հե՞տ են կռվում, թե դևի,
Սրանց վեճ ու աղաղակը մի՞թե երկար պիտ տևի»:

Նա վեր կացավ, իսկույն հագավ իր վագրենին ամրակար,
Մեջքին կապեց քեյանական ամուր գոտին ռազմական:

Ապա հեծավ իր նժույգը, ճամփա ընկավ անվարան,
Գահի համար որպես պահնորդ մնաց միայն Զևարան:

Եվ Ռոստամը նրան ասաց. «Չհեռանաս գահից դու,
Ո՛վ իմ եղբայր, աչքդ ճամփիս՝ միշտ նորանոր լուրեր տուր»:

Նա բանակի հետ էր տանում մեծ դրոշը անբաժան,
Արշավում էր թշնամու դեմ քինախնդիր ու դաժան:

Ռոստամը երբ հեռվից տեսավ սեգ Սոհրաբին թիկնավետ,
Մտքում նրան համեմատեց հռչակավոր Սամի հետ:

«Եկ այստեղից,- Ռոստամն ասաց,- գնանք մի դաշտ ամայի,
Այնտեղ չափենք մեր ուժերը առանց հայ ու հարայի»:

Հավանության նշան արեց քաջ Ռոստամի ասածին,
Նա ձեռքերը իրար շփեց ու հրճվանքից քշեց ձին:

«Առաջ ընկիր,- Սոհրաբն ասաց փղամարմին Ռոստամին,-
Մենք երկուսով քաջ այրեր ենք, բայց ոխերիմ թշնամի:

Մեզ օգնական ուժեր պետք չեն Իրանից ու Թուրանից,
Մենամարտի ասպարեզում ես քեզ փորձեմ, իսկ դու՝ ինձ:

Թեկուզ ունես բարձր հասակ, ամուր թիկունք, լայն ուսեր,
Պատերազմի փորձառու կյանք, մենամարտի տենչ ու սեր,

Բայց պատշաճ չէ իմ դեմ կռվել, գիտեմ ես այդ, չես կարող,
Իմ բռունցքի մեկ հարվածով դու կդառնաս միայն հող»:

Իսկ Ռոստամը երկար նայեց այդ պատանուն հաղթիրան,
Նրա ամուր բազուկներին, ասպանդակին հուրհիրան,

Ապա հանգիստ տոնով ասաց. «Ո՛վ պատանի վարդադեմք,
Գետինը դեռ սառն է ու չոր, իսկ երկինքը՝ սիրաջերմ:

Իմ կյանքի մեջ բավականին պատերազմներ եմ մղել,
Անթիվ քաջեր եմ տապալել, բյուր առյուծներ եմ ճղել:

Վիշապներ եմ շղթայել ես, որ չցանեն մահ ու թույն,
Կյանքում նույնիսկ ես դևերից դեռ չեմ կրել պարտություն:

Նայիր, որ ինձ լավ ճանաչես՝ այսուհետև հիշես ինձ,
Թե կենդանի դու կմնաս՝ չես սարսափի վիշապից:

Իմ պայքարի վկաներն են ամեն մի սար, ամեն ծով,
Ամենուրեք լի են դրանք թուրանացի մարդկանցով:

Ինչ արել եմ՝ տիեզերքի լույս աստղերն են ինձ վկա,
Նրանք կասեն՝ երկրի վրա ինչե՞ր կային, որ չկան:

Նրանք մեկ-մեկ քեզ կպատմեն, դու կստանաս նոր հաճույք,
Զի ինձ համար պատերազմը եղել է խաղ ու խնջույք:

Բայց իմ սիրտը չի ցանկանում նմանվել լոկ այն քաջին,
Որ ուզում է հոգիդ հանել, մարել լույսը քո աչքի...

Համոզվեցի՝ չես նմանվում արտաքնապես դու թուրքի,
Քեզ պես հսկա թուրք չեմ տեսել, իսկ իրանցի՝ ոչ ոքի»:

Իսկ Սոհրաբը քաջ Ռոստամին ասաց. «Ո՛վ դու քաջասիրտ,
Ես քեզանից ցանկանում եմ լսել մի բան ճշմարիտ.

Ովքե՞ր են քո ապուպապը կամ թե ազգ ու տոհմը քո,
Ասա, որ ես ուրախանամ, երջանկանամ լավ խոսքով:

Ես կարծում եմ, որ դու, իրոք, քաջ Ռոստամն ես զալզերյան,
Գիտեմ, ունես անվանի տոհմ, բոլորն էլ քաջ փահլևան»:

«Ճիշտ չես կարծում,- ասաց քաջը, ապա նայեց նա մի կողմ,-
Ո՛չ արիածին ծագում ունեմ, ո՛չ էլ ունեմ ազնիվ տոհմ:

Ռոստամը քաջ փահլևան է, անուն ունի ու մեծ փառք,
Ոչ իշխանի թագ ունեմ ես և ոչ էլ տոհմ հանրահայտ»:

Սեգ Սոհրաբը տեգը ուսեց ու հեռացավ, բայց անհույս,
Մոր նշանը երբ չգտավ՝ էլ ի՞նչ գիշեր ու ի՞նչ լույս...

ՌՈՍՏԱՄԻ ԵՎ ՍՈՀՐԱԲԻ ՄԵՆԱՄԱՐՏԸ

Հայր ու որդի բաց արեցին մրցության մեծ ասպարեզ,
Կարճ տեգերով իրար վրա հարձակվեցին վագրի պես:

Երբ տեգերի կապանքները կտրտվեցին՝ երկուստեք
Կռվի ելան նժույգներով, առանց նիզակ, առանց տեգ:

Հնդկական կուռ թրերն առան ու զարկեցին մեկմեկու,
Երկաթակուռ թրերից բոց ու կայծեր էր բեկբեկում:

Փշուր-փշուր եղան նույնպես և թրերը ոսկեզօծ,
Կարծես ոչ թե մենամարտ էր, այլ հարության մեռելոց:

Ապա ծանր սյունի նման բարձրացրին վերտ ու լախտ,
Հարձակվեցին իրար վրա մեկը մեկից ժիր, անհաղթ:

Հուժկու զարկից ծռմռվեցին պիրկ լախտերը երկաթե,
Քիչ էր մնում նրանց հսկա նժույգները սայթաքեն:

Նժույգներից վար թափվեցին զրահները ծանրատար,
Պատառ-պատառ եղան նրանց հագուստները ամրակար:

Թե՛ ձիերը, թե՛ քաջերը կանգ առան մի ակնթարթ,
Նրանց զարկին չէր դիմանում ոչ մի կոպալ ու երկաթ:

Մարմինները քրտինքի մեջ, իսկ դեմքերը՝ փոշեպատ,
Հոգնությունից ու ծարավից հևում էին անընդհատ:

Հայր ու որդի իրար դիմաց կանգնել էին քիչ հեռու,
Հայրը մռայլ, սակայն որդու սիրտը քենով էր եռում...

Դաժան աշխարհ, զարմանում եմ, թե ի՞նչ գաղտնիք կա քո մեջ,
Մերթ ամեն տեղ նորն ես կերտում, մերթ ավերում ես անվերջ:

Կարծես երկու հսկաների սրտում չկար գութ ու սեր,
Իրոք, կարծես խելք չունեին, կամ ապրելու լավ հույսեր:

Անասունը իր ձագուկին ճանաչում է ցամաքում,
Ձուկը՝ գետի ու ծովի մեջ, սակայն իրար չեն լքում:

Լցված մոլի ագահությամբ մարդը չա՛ր է, չա՛ր այնքան,
Որ չգիտե որդին հորը, իսկ զավակը՝ հորն անգամ:

Ռուստամ-Զալը մտքում ասաց. «Ես չեմ տեսել մի վիշապ,
Որ այս ձևով իմ դեմ կռվի, ուժ ունենա սրա չափ:

Շատ կարճ տևեց իմ կռիվը այն սպիտակ դևի դեմ,
Հիմա անհույս իմ ապագան ի՞նչ կլինի՝ չգիտեմ:

Մի մարդ, որ դեռ պատանի է, ո՛չ փորձ ունի, ո՛չ հռչակ,
Ո՛չ անվանի փահլևան է, ո՛չ գահ ունի և ո՛չ թագ,

Այսքան երկար ժամանակ ես մարտնչեցի նրա հետ,
Եվ բանակը երկու կողմի նայում էր մեզ ակնդետ...»:

Ու երկուսի ձիերը երբ հանգստացան, այնուհետ
Քաջերն առան գուրզ ու նիզակ, երկաթակուռ վերտ ու նետ:

Ռուստամ-Զալը ու Սոհրաբը ելան ուղիղ դեմուդեմ,
Ու քաշեցին աղեղները և նետերը սրաճեմ:

Իրար վրա արձակեցին նետերի մի հորդ անձրև,
Ամեն մեկը իր զենքն ուներ ու կռվելու շարժուձև:

Բայց վագրենին ու երկաթը նրանց մարմինն էր ծածկում,
Այդ պատճառով ոչ մի սուր նետ նրանց կուրծքը չէր ծակում:

Հսկաները խիստ զայրացած մենամարտից այդ դժվար,
Առաջ եկան ու վագրի պես փաթաթվեցին պինդ իրար:

Ռուստամ-Զալը ուր էլ լիներ, երբ մղում էր թեժ պայքար,
Մեծ ժայռեր էր պոկում տեղից, նետում ինչպես պարսաքար:

Իր ամեհի ուժով սար էր շարժում, ինչպես ահեղ հողմ,
Հսկա քարը նրա ձեռքում կարծես լիներ փափուկ մոմ:

Ձեռքը մեկնեց ու պինդ բռնեց ամուր գոտուց Սոհրաբի
Ու ճիգ տվեց, որ վար գցի, բայց նա կպել էր թամբին:

Ռուստամ-Զալը դեռ տեղյակ չէր, որ նա ուներ մեջք ամուր,
Ուստի ձեռքը դատարկ մնաց, սիրտը՝ ձեռքին անձնատուր:

Այնուհետև նա Սոհրաբի գոտուց ձեռքը քաշեց ետ
Ու զարմացած նայեց մի պահ, թե ո՞նց կռվի նրա հետ:

Այսպես, երկու ժանիքաբաց առյուծները կատաղի,
Կռվից հոգնած ցանկացան, որ մենամարտը քիչ պաղի,

Բայց Սոհրաբը թամբից պոկեց հսկա գուրզը, կատաղած
Խփեց Ռուստամ-Զալի ուսին, որ նա ձիուց ընկնի ցած:

Ռուստամ-Զալը երբ ցավ զգաց, սեգ Սոհրաբը ծիծաղեց,
Ասաց. «Զարկիս չե՛ս դիմանում, ո՛վ ծերունի հողմածեծ:

Քո տակինը ոչ թե ձի է, այլ մի թամբալ ավանակ,
Իսկ հեծվորը փահլևան չէ, այլ զինվոր է անճարակ:

Կարեկցում եմ, ո՛վ իրանցի, խնայում եմ ու խղճում,
Արյուն կաթեց քո դեմքն ի վար, բայց քեզ ո՞վ է ճանաչում:

Թեկուզ ունես բարձր հասակ, ինչպես հպարտ մի նոճի,
Սակայն ծեր ես, քո դեմ ոչ ոք գուրզ ու նիզակ չի ճոճի»:

Ռուստամ-Զալը ոչինչ չասաց, լուռ կանգնել էր, քարացել,
Բայց զարմացավ, որ թշնամին ունի ճկուն շարժ ու ձև:

Նայում էին նրանք իրար մենամարտից հոգնած, կուշտ,
Անգամ դաշտը ձանձրացել էր պատերազմից արյունռուշտ:

Այնուհետև հսկաները թիկունք դարձրին մեկմեկու,
Մտածմունքի ծովը սուզվեց ամեն մեկը իր հոգում:

Բայց Ռուստամը նորից եկավ, որ թուրքերին հարվածի,
Նա նման էր որս որոնող ամենազոր առյուծի:

Իսկ Սոհրաբը թափահարեց սանձափոկը նժույգի
Ու հարձակվեց իրանական բանակի դեմ, որ ջարդի:

Նա զորքի մեջ ընկավ, ինչպես փարախ մտած սոված գայլ,
Սարսափահար իրանցիք նահանջեցին քայլ առ քայլ:

Թուրքերի մոտ, երբ որ գնաց Ռուստամ-Զալը մեծափառք,
Փոշմանեց ու հոգու խորքից քաշեց ծանր հառաչանք:

Նա տխրամած մտախոհեց, որ պատանին անկասկած
Կհարձակվի շահի վրա, որ խուճապի տա հանկարծ,

Քանզի ունի այդ գոռ թուրքը զենք ու զրահ երկաթե,
Ամուր ձեռքեր, հսկա նժույգ ու շեշտակի սուր նետեր:

Անմիջապես նա ետ եկավ իր զորքի մոտ արիացեղ,
Տեսավ զորքի մեջ է մտել սեգ Սոհրաբը կռվասեր:

Եվ այդ թուրքը իր բանակին ջարդոտում էր ձախ ու աջ,
Հողը ներկվել էր արյունով, ինչպես գարնան ալ կակաչ:

Սեգ Սոհրաբը արյան մեջ էր թաթախել զենք ու զրահ,
Դաշտ ու դուրան դարձնելով կոտորածի լայն սրահ:

Ռուստամ-Զալը երբ այդ տեսավ՝ խենթի նման հոգեցունց
Աղաղակեց ամբողջ ձայնով, ինչպես հարբած մի առյուծ:

«Արյունախում, ո՛վ անգութ թուրք,- ասաց քաջը վշտակեզ,-
Այս նահատակ զինվորներից ո՞վ է կռվի կանչել քեզ:

Ինչո՞ւ ինձ հետ չկռվեցիր, երբ կոչեցիր քեզ քաջայր,
Գաղտնի մտար փարախի մեջ, ինչպես ագահ սոված գայլ»:

Պատասխանեց Սոհրաբն այսպես. «Կտրիճները իմ արդար
Անտեղյակ են այս նախճիրին, ո՛վ փահլևան, հավատա:

Պատերազմի առիթ տվիր, ինքդ եղար լոկ պատճառ,
Քանզի ոխը լափլիզում էր քո քինառու սիրտը չար»:

Իսկ Ռոստամը պատասխանեց. «Մութը պատել է արդեն,
Լուսաբացին եկ ասպարեզ՝ պատերազմենք իրար դեմ:

Մենք երկուստեք կըորոնենք մենամարտի հարմար տեղ,
Սպանվողի զորքը թող որ արցունք թափի հանց հեղեղ:

Մենամարտը ցույց կտա մեզ՝ ո՛ւմ գերեզման, կամ ո՛ւմ գահ,
Քանզի հաստատ բան չի մնում այս աշխարհում մինչև մահ:

Այս սրահում ով որ ձեռքին ունի նիզակ, վերտ ու նետ,
Նա չի մեռնի, քանզի բախտը պտտվում է նրա հետ»:

Ու քաջերը բաժանվեցին... Մութը իջավ հետզհետ,
Երկինքն անգամ սևացել էր պատերազմից չարաղետ:

Պատերազմի համար էր նա կարծես եկել լույս աշխարհ,
Նա մղել էր քաջերի դեմ բազում կռիվ ու պայքար:

Թվում էր, թե նա թամբել էր արագաճեպ քենի ձին,
Անընկճելի ոգի ուներ, հսկա մարմին՝ պղնձի:

ՍՈՀՐԱԲԸ ԳԱԼԻՍ Է ԲԱՆԱԿԱՏԵՂԻ

Սոհրաբը երբ մենամարտից վերադարձավ՝ ամպ էր, մութ,
Հոգնել էր նա ու ծանրացել կռիվներից անօգուտ:

Նա Հումանին ասաց. «Օրը թեկուզ պարզ էր, արևոտ,
Բայց արևը երկրի վրա բերեց կռվի մեծ շփոթ:

Ինձ հետ կռվող ձիավորը կարծես լիներ մի երկաթ,
Քանզի ուներ հսկա մարմին և առյուծի ուժեղ թաթ:

Իմ թշնամին փահլևան է, ուժով ինձ հետ հավասար,
Ի՞նչ հարցրեց, երբ որ եկավ, խկությունը ինձ ասա:

Չի՞ պատճառել իմ բանակին նա որևէ մի վնաս,
Նրա նման քաջ չեմ տեսել՝ գործին այդքան ձեռնհաս:

Թեկուզ ծեր է, բայց կորովի առյուծի է նմանվում,
Ոչ դաշտից է նահանջում նա, ոչ կռվից է կշտանում:

Բազուկները նմանվում են հաստ ոտքերին գոռ փղի,
Նրա ձայնից Նեղոս գետը նույնիսկ ուղին կշեղի:

Միևնույն է, ողջ աշխարհը եթե շրջես ծայրեծայր—
Դու չես տեսնի նրա նման մի ռազմագետ հսկա այր»:

Իսկ Հումանը ասաց. «Զորքը տեղից ելավ դառնաճիչ,
Բայց լսեցինք հրամանդ, սպասեցինք մենք մի քիչ...

Մինչդեռ ամեն մեկս զինված պատրաստ էինք կռվելու,
Մենք եկել ենք պատերազմի, ոչ թե գլուխ պահելու»:

Այդ ժամանակ վրա հասավ մի քաջարի փահլևան,
Թամբել էր նա մի հսկա ձի, ձեռքին բռնել կուռ վահան:

Նա հարձակվեց զորքի վրա և ուզում էր թրատել,
Կամ ծանակել, որ այսուհետ տեսնողները մեզ ատեն:

Հարբած փղի նման գոռաց, ինչպես անհաղթ մի խիզախ
Սրի քաշեց մեր զորքերին ու ձին քշեց աջ ու ձախ:

Այնուհետև երիվարի սանձը թեքեց նա մի կողմ,
Աճապարեց իրանական բանակի մոտ, ինչպես հողմ»:

«Այսպես, այդ քաջ իրանցին,- Սոհրաբն ասաց Հումանին,-
Չի վնասել մեր բանակի կտրիճներից ոչ մեկին:

Բայց ես նրանց ջարդեցի իմ թրի հուժկու հարվածով,
Դաշտ ու դուրան ես դարձրի անծայրածիր արյան ծով:

Եթե իմ դեմ անգամ ելներ ժիր առյուծը Իրանի,
Մեկ է, գուրզիս հարվածի տակ նա չէր մնա կենդանի:

Բայց ափսո՜ս որ ականատես չեղավ ձեզնից ոչ մի մարդ,
Որ իմանար, թե ինչպես եմ վագրի նման մղում մարտ:

Վիշապ էլ գա, մեկ է, զենքս նրա համար պինդ պատ է,
Կրակ ու բոց կթափեմ իմ վերտ-վահանից երկաթե:

Կռվում ով որ դեմքս տեսնի, լինի հսկա թե թույլ մարդ,
Ծվեն-ծվեն կանեմ նրա հագուստները ոսկեզարդ:

Պատերազմի նշանավոր օր է վաղը մեզ համար,
Դուք կտեսնեք ո՛վ է նսեմ և ո՛վ է լավ կռվարար:

Արարողից լիահույս եմ, նա է տերը աշխարհի,
Իմ թշնամու ոչ մի հսկա չի մնալու կենդանի:

Այժմ գինի բերեք այստեղ, անենք մի ճոխ խրախճանք,
Որ փարատենք տրտմությունը, մոռանանք հոգս ու տանջանք»:

ՌՈՍՏԱՄԸ ԶԵԿՈՒՑՈՒՄ Է ՔԱՈՒՍ ՇԱՀԻՆ

Իսկույն վազեց բանակի մոտ Ռոստամ-Զալը խորագետ,
Կանչեց իր մոտ հսկա Գիվին ու զրուցեց նրա հետ:

Թե ինչպես է պատերազմել փահլևանը այդ ջահել,
Ինչպես է նա քաջերի հետ մեն ու մենակ պայքարել:

Գիվը նրան պատասխանեց. «Ո՛վ փահլևան դու փրկիչ,
Մինչև հիմա դեռ չեմ տեսել նրա նման մի կտրիճ:

Նա հարձակվեց Թուսի վրա, խուժեց սիրտը բանակի,
Որ գնդերին տեգահարի և քաջերին նիզակի...

Այդ ժամանակ Թուսի ձեռքին կային նիզակ ու վահան,
Երբ հարձակվեց՝ սարսափահար մեր բանակը ետ փախավ:

Նա ոլորեց Թուսի տեգը, վզին տվեց մի հարված,
Եվ ուժասպառ Թուսի գլխից սաղավարտը ընկավ ցած:

Չդիմացավ Թուսը նրան, անմիջապես նահանջեց,
Այդ թուրանցին մեր բանակին սրի քաշեց ու ջնջեց:

Նա կատաղած հսկա փիղ է, անգերազանց ախոյան,
Ողջ Իրանում դու չես տեսել նրա նման փահլևան:

Դու լավ գիտես պապենական սովորույթը հինավուրց,
Խմբով մեկի դեմ չեն գնա՝ թեկուզ լինի նա առյուծ:

Չար չեղավ այդ թուրքի դեմ պատերազմել միայնակ,
Ուստի ելավ քինառության դաշտը առավ ոտքի տակ:

Ոչ մի զինվոր չխիզախեց խփել թուրքին այդ անվախ,
Զորքի ծայրից մյուս ծայրը նա սրբում էր աջ ու ձախ:

Հարձակվում էր նա ամեն կողմ, քաջերի դեմ մեր խղճուկ,
Սանձել էր նա հողմի նման արագավազ մի նժույգ»:

Ռոստամ-Զալը սաստիկ տխրեց, ապա գնաց շահի մոտ,
Քաուս շահը նրան տեսավ և ընդունեց սրտամոտ:

Հռչակավոր փահլևանը պատմեց շահին մեկ առ մեկ,
Որ Սոհրաբը և՛ ուժ ունի, և՛ ամրակուռ վերտ ու տեգ:

«Չեմ տեսել ես,- ասաց,- կյանքում նրա պես քաջ պատանի,
Նրա ծանր գուրզն ու տեգը ոչ ոք ուսին չի տանի:

Հասակ ունի, որ հասնում է մինչև երկինք կապուտակ,
Երբ քայլում է, քիչ է մնում հողը ճաքի ոտքի տակ:

Նա ջլապինդ ձեռքեր ունի և հարվածներ մահագդու,
Այնքան ճարպիկ մարտ է մղում, կարծես նման չէ մարդու:

Մենք մրցության ասպարեզում գուրզ նետեցինք և թե տեգ
Բայց նրա պես նիզակահար, օ՛, չեմ տեսել ես երբեք:

Եվ վերջապես միտս ընկան այն օրերը իմ անցած.
Քանի՛-քանի՛ հսկաներ եմ թամբից պոկել, գցել ցած.

Ձեռքս տարա ու բռնեցի կաշվե գոտուց այդ քաջի,
Ու սեղմեցի պիրկ կապանքը ամբողջ ուժով իմ աջի...

Հզոր թափով ես ձիգ տվի, նրա վրա զայրացած,
Այս ձևով ես հսկաներ եմ ձիու թամբից գցել ցած:

Եղե՛լ է, որ փոթորիկը տեղից պոկի հսկա սար,
Այնպես էլ նա թամբի վրա ամուր մնաց, անսասան:

Երբ որ տեսա չարչարանքս անտեղի է, ապա նոր
Ես հեռացա, քանզի արդեն մոտենում էր երեկոն:

Որոշեցի մյուս օրը նորից չափել ուժը իմ,
Երբ որ նորից ինձ հանդիպի իմ ոխերիմ թշնամին:

Կմրցենք, և նոր կտեսնենք մեզնից ո՛վ է լավ կտրիճ,
Բայց գիտեմ, որ տիրոջ կամքով է կատարվում ամեն ինչ,

Հաղթությունն ու պարտությունը տերը պիտի ձեռնարկի,
Քանզի նա է արարիչը արեգակի, լուսնյակի»:

Քաուս շահը պատասխանեց. «Աստված թող մեր թշնամուն
Ջարդուփշուր անի, ապա փոշին տանի տա քամուն:

Երկրպագու իմ գլուխը գետին դրած անդադար
Աստծու առջև ամբողջ գիշեր ես կաղոթեմ քեզ համար:

Մաղթանք կանեմ, որ քեզ ուժ տա և կռվի մեջ ողջություն,
Որ չարակամ թուրքի հանդեպ հաղթանակով դուրս գաս դու,

Որ թառամած քո հույսերը վերականգնի նորից-նոր,
Որ հռչակդ վեր խոյանա մինչ աստղերը հեռավոր,

Քանզի գիտես, որ Աստված է պարգևում մեզ հաղթանակ,
Բախտանիվը երբևիցե չի պտտվել հակառակ»:

Պատասխանեց քաջ Ռոստամը. «Ո՛վ Քաուս շահ ամրակամք,
Կկատարվի քո բաղձանքը՝ քո ձեռքի տակ քանի կանք»:

Շահի մոտից գնաց դեպի զորագունդը մոտակա,
Նրա հոգին ալեկոծ էր ու սրտի մեջ վրեժ կար:

Եկավ նաև դանդաղաքայլ իր եղբայրը, թեկուզ ուշ,
Կարծես երկար ճանապարհին ոտքն էր մտել մի մեծ փուշ:

Իսկ Ռոստամը Զեվարային խնդրեց, որ տա կերակուր,
Ապա պատմեց Սոհրաբի հետ պատահածը շատ տխուր:

Եվ քանի որ նա թշնամուց երկու փարսախ էր հեռու,
Ուստի զենքը ցած չդրեց, սիրտը քինով էր եռում:

Ապա դարձավ Զեվարային՝ խոսքեր ասաց նա քնքուշ,
«Միտքդ արթուն պահիր, եղբայր, որ չգործես անզգույշ:

Լուսաբացին ես անպայման կգնամ այդ թուրքի դեմ,
Բեր իմ թագը և ոսկեկար կոշիկներս, որ հագնեմ:

Կաց Քաուսի վրանի մոտ, մինչև օրը լուսանա,
Եթե թուրքին տապալեցի՝ ետ գալուց չեմ ուշանա:

Թե պատահի, որ ես մեռնեմ պատերազմում այս դժվար,
Լաց չլինես և ցույց չտաս, որ թույլ մարդ ես կամ թշվառ:

Քենի համար մեր բանակը չբերես նոր կռվատեղ,
Այլ կգնաս Դեստանի մոտ՝ Զաբուլիստանն իմ շքեղ:

Կասես նրան, որ Ռոստամի կյանքը հասավ վախճանի,
Աստված քանզի այդպես ուզեց, թող այսուհետ սուգ չանի:

Մորս սիրտը սփոփիր ու մխիթարիր դու նրան,
Քանզի Աստված կյանքիս վրա քաշեց մահու սև վրան:

Ասա մորս, որ իր սիրտը ինձ չկապի մշտապես,
Այսուհետև, ասա՝ մայր իմ, լացը օգուտ չի տա քեզ:

Այս աշխարհում ոչ մի էակ չի մնալու կենդանի,
Ես բախտի դեմ չեմ բողոքում, մահը պիտի մեզ տանի:

Ոչ մի կռվում չեմ նահանջել իմ ոխերիմ թշնամուց,
Բայց շատ անգամ եմ տապալել փիղ ու վագր և առյուծ:

Քանի՛-քանի՛ անգամ եմ ես ավերել գյուղ ու քաղաք,
Ոչ մի դեպքում չեմ ընկել իմ ոսոխի նենգ ոտքի տակ:

Նա, ով ոտք է դնում ծիու ասպանդակին, որ թռչի,
Մեկ է, պիտի գնա մահվան սև սրահը որ հանգչի:

Հազար տարի թեկուզ ապրես, կյանքը ի՞նչ է, ո՛վ էակ,
Միևնույն է, վերջիվերջո պիտի ննջես հողի տակ:

Ապա հիշիր հռչակավոր Ջամշիդ շահին բարձրագահ,
Թեհմուրասին, որ դևեր էր բռնում կապում ամեն պահ:

Ողջ աշխարհը դեռ չի տեսել նրանց նման թագակիր,
Բայց գնացին այն աշխարհը, դարձան փոշի ու մոխիր:

Գերշասպ շահից հողաշխարհը սարսափում էր մահադող,
Հիմա նրա թագն ու գահը դարձել է սոսկ մի բուռ հող:

Ո՛ւր է, ասա՛, հսկա Սամը, Նարիմանը քաջատոհմ,
Ո՛վ գիտեր որ նրանք պիտի գան ու գնան, ինչպես հողմ:

Թե աշխարհը նրանց համար դատարկ է, խուփ ու խափան,
Ինձ էլ պիտի մահվան գիրկը տանի խավար այդ ճամփան:

Մենք բոլորս պիտի մեռնենք, ջահել լինենք կամ թե ծեր,
Կենդանի մարդ չի մնալու այս աշխարհում մարդակեր:

Երբ որ մորս մխիթարես, հորս նույնպես կասես դու՝
Քաուս շահի համար թող որ լինեն ծառա, հարկատու:

Երբ որ շահը կռվի գնա՝ դու կմնաս աներեր,
Օժանդակիր քո բանակով, եղիր նրան միշտ ընկեր»:

Արեգակը երբ հավաքեց ոսկե շողերն իր պայծառ՝
Գիշերն իջավ երկրի վրա, ագռավի պես նստեց թառ:

Մինչև գիշեր սեգ Սոհրաբն էր նրանց նյութը զրույցի,
Այնքան նրանք զրուցեցին, մինչև լույսը որ բացվի:

Ռոստամ-Զալը այնուհետև հագավ ամուր վագրենին,
Իսկույն թամբեց վիշապաշունչ երիվարը ամեհի:

Առանց զենքի քշեց իր ձին, հասավ մինչև ռազմադաշտ,
Գլխին դրել էր ամրակուռ մի երկաթե սաղավարտ:

Ով ձգտում է իշխանության՝ նա կրում է դառնություն,
Ագահ մարդը կյանքում միշտ էլ ճաշակում է դառը թույն:

ՍՈՀՐԱԲԸ ՏԱՊԱԼՈՒՄ Է ՌՈՍՏԱՄԻՆ

Հենց այդ գիշեր սեգ Սոհրաբը ճաշակում էր թունդ գինի,
Նա սեղան չէր նստում երբեք, առանց չանգի ու վինի:

Ապա մի պահ դադար առավ և Հումանին ասաց նա.
«Այս խիզախը որ վաղն ևեթ իմ դեմ պիտի ընթանա՝

Ինձ պես բարձր հասակ ունի, հասակ վեհ ու վիթխարի,
Մենամարտից չի խուսափում, պատրաստ է գոռ պայքարի:

Պարանոցը, մեջքն ու լանջը ամրապինդ են, ինչպես բերդ,
Խելք ու վարքով ու գիտությամբ կարծես լինի մեծ մոբեթ:

Նրա քայլն ու ձի նստելը սեր են շարժում իմ հոգում,
Ակամայից ամաչում եմ, երբ նայում եմ այդ մարդուն:

Մորս տված նշանները նրա մեջ եմ տեսնում ես,
Իմ սրտի մեջ ինչ-որ ձգտում, ինչ-որ մի սեր կա անտես:

Մորս պատմած այս առյուծը, իրոք, իմ հորն է նման,
Աշխարհը դեռ չի ծնել մի այսպիսի քաջ փահլվան:

Իմ հարազատ հոր դեմ ինչպե՞ս դուրս գամ կռվի ասպարեզ,
Գիտեմ, սիրտս պիտի տխրի, երբ որ կանգնեմ առերես:

Այս աշխարհից սև երեսով պիտի գնամ գերեզման,
Ուր էլ լինեմ՝ Աստված պիտի նախատինք տա հավիտյան:

Ես հանդերձյալ կյանքում գուցե չգտնեմ լույս մի ուղի,
Երբ հարազատ ծնողիս դեմ կռիվ մղեմ անտեղի:

Ես աշխարհի շահերի մոտ կլինեմ միշտ սևերես,
Թե՛ Իրանը, թե՛ Թուրանը անեծք պիտի տա նույնպես:

Վատահամբավ մարդու անուն պիտի կրեմ այս դեպքում,
Թե՛ ավերակ այս աշխարհում, թե՛ հանդերձյալ այն կյանքում:

Ես կգժվեմ, երբ որ անմիտ պատերազմեմ իմ հոր դեմ,
Աշխարհում էլ ի՞նչ վատ բան կա, հորս արյուն ո՞նց թափեմ»:

Հումանը երբ լսեց նրան՝ մտերմաբար ասաց, թե.
«Կռիվներում շատ եմ տեսել փահլևանին այդ պարթև:

Մազանդարան երկրի մասին լսել ես դու երևի,
Թշնամու հետ այնպես վարվեց, ինչպես քամին՝ տերևի:

Այս ձին շատ է նման Ռախշին, ով որ աչքով լավ չափի,
Բայց սա չունի վազքը նրա, ոչ էլ ուժը վիշապի»:

Գիշերն անցավ: Լուսաբացին արևն ելավ հետզհետ,
Երկու կողմի բանակները իսկույն ելան ռազմաերթ:

Սեգ Սոհրաբը հագավ զենքը, ամուր կապեց իր գոտին,
Միտքը կռվի քենով լեցուն, բայց ժպիտը միշտ դեմքին:

Նա ռազմակոչ աղաղակով ու գնդերով բազմավաշտ,
Եզագլուխ գուրզը ձեռքին արշավեց դեպ ռազմադաշտ:

Մռնչալով եկավ կանգնեց Ռոստամ-Զալի դեմառդեմ,
Կարծես նրա հետ էր քնել, երբ հարցրեց ժպտադեմ.

«Ինչպե՞ս անցավ գիշերը քո, ի՞նչ վճռեցիր դու այսօր,
Սիրտդ ինչո՞ւ նորից դառավ քինառության ահեղ ծով:

Դեն գցիր քո թշնամության նետն ու թուրը մահացու,
Ե՛կ, իմ ու քո կյանքն ու բախտը ապավինենք Աստըծուն:

Եկ երկուսս իջնենք ձիուց, նստենք այստեղ միասին,
Գինի խմենք ու մոռանանք այս աշխարհի փառքը սին:

Եկ միասին տիրոջ առջև պայման անենք այսուհետ՝
Իրար հանդեպ էլ չլարենք թշնամության վերտ ու նետ:

Թող ուրիշ մարդ գա ասպարեզ, թե միտք ունի կռվելու,
Բայց ես քեզ հետ փափագ ունեմ հիմա գինի խմելու:

Իմ սիրտը միշտ քեզ է ձգտում, երբ տեսնում եմ դեմքը քո,
Ամաչելուց իմ աչքերը լցվում են հորդ արցունքով:

Տեսնում եմ, որ քաջ ես, ազնիվ, փահլևան ես փառահեղ,
Ես ակամա հիշում եմ քո նախնիներին հանճարեղ:

Շատ հարցրի, որոնեցի, որ գտնեմ ես քեզ իսկույն,
Բայց պատասխան չգտավ իմ հարցափորձը ապարդյուն:

Ասա՛, ո՞վ ես, մի՛ թաքցրու անունը քո այսուհետ,
Քանզի միակ ոսոխդ եմ ես, պիտի կռվես դու ինձ հետ:

Հսկա Սամի թո՞ռը չես դու կամ զավակը Դեստանի,
Մեծահամբավ Ռոստա՞մը չես, փահլևանը Իրանի»:

Իսկ Ռոստամը պատասխանեց. «Ո՛վ քաջ անուն որոնող,
Երեկ քեզ հետ պայման արի, այդ խոսքերը այժմ թող:

Այսօր պիտի մենամարտենք, ես վճռել եմ, շտապիր,
Խոսքս խոսք է, ինձ մի շեղիր ու ինքդ քեզ մի խաբիր:

Երեխա չեմ, եթե հաստատ տղամարդ ես՝ ե՛կ մարտի,
Չե՞ս տեսնում, որ քենի համար կապել եմ ես պինդ գոտի:

Այս կռիվը ցույց կտա մեր բախտի ճամփան անպայման,
Քանզի Աստված կանխորոշել՝ տվել է մեզ հրաման:

Եվ իմացիր, քաջերը երբ դուրս են գալիս մրցության՝
Չեն քննարկում մտերմության հարցեր և կամ ուրիշ բան:

Ես անցել եմ կյանքի հազար զառիվեր ու զառիվար,
Բայց երբևէ սուտ չեմ խոսել, խաբեբա չեմ, այլ քաջ այր»:

Սեգ Սոհրաբը պատասխանեց, «Ո՛վ դառնախոս ծերունի,
Իմ խրատը սրտիդ խորքում եթե այդպես տեղ չունի՝

Ցանկացածս այդ է որ կա՝ քո մտքին եմ, քո կողմում,
Քանզի սիրտս ուզում է, որ հոգիդ փչես անկողնում:

Քեզ պես մարդը իր ձեռքով է շիրիմը իր փորփրում,
Կամ հոգեզուրկ փտում է նա մի խորխորատ զնդանում:

Եթե հոգիդ ինձ ես հանձնում՝ կընդունեմ ես ի սրտե,
Գուցե տերն է ցանկացել, որ դու ինձ մոտ գաս, ո՞վ գիտե»:

Այնուհետև նժույգներից իջան նրանք ակնապիշ,
Ամեն մեկը անպարտելի մի փահլևան, մի ըմբիշ:

Նժույգները կապկպեցին ժայռերի մոտ մոտակա,
Բայց երկուսի դեմքի վրա հոգնածություն ու վիշտ կար:

Եվ կատաղած առյուծի պես սկսեցին գոտեմարտ,
Մարմիններից ծործորում էր արյուն, քրտինք հորդառատ:

Նախահարձակ սեգ Սոհրաբը ելավ ինչպես հարբած փիղ,
Առյուծի պես մռնչաց և տեղից ցատկեց շեշտուղիղ՝

Բռնեց Ռոստամ-Զալի գոտուց, ամբողջ ուժով առավ վեր,
Այնպես զարկեց, որ գետինը քիչ էր մնում պատռվեր:

Քինառության ուժը ձեռքին աղաղակեց կատաղած,
Ուզեց Ռոստամ-Զալին պոկել ու մահազարկ գցել ցած:

Չհաջողվեց սակայն, կրկին նա ուժ առավ առյուծի,
Ու Ռոստամին զարկեց գետին, ինչպես անպարտ արիացի:

Ապա չոքեց կրծքի վրա փղամարմին Ռոստամի,
Փոշին ծածկել էր երեսը մենամարտի թեժ պահին:

Նա նման էր նախահարձակ այն սրաճանկ առյուծին,
Որ ցատկելով՝ ակնթարթում բռնում է մի խսկա ցիռ:

Իսկույն քաշեց սուր դաշույնը և պատրաստ էր, որ արդեն
Ռուստամ-Զալի վիզը կտրի ու գլուխը նետի դեն...

Ռուստամ-Զալը նայեց նրան՝ բարձր գոչեց, «Դի՛ր թուրդ,
Ես կհայտնեմ մինչև հիմա դեռ քեզ անհայտ մի խորհուրդ:

Դու առյուծին պատառ-պատառ կանես, ո՛վ քաջ փահլևան,
Քանզի ունես անհաղթ բազուկ, վերտ ու վահան ու պարան:

Ավանդական սովորություն ենք պահպանում մենք հնուց,
Մեր օրենքը և հավատը տարբերվում է թշնամուց...

Մենամարտում ջահելը երբ մեկին գետին է գցում՝
Ընկած քաջի սիրտը երբեք սուր դաշույնով չի խոցում:

Երբ առաջին անգամ է նա քաջի փոշին վեր հանում,
Ինչպիսի քեն էլ ունենա՝ չի սպանում թշնամուն:

Եթե երկրորդ անգամ նրան մեջքի վրա վայր գցի՝
Նա կստանա քաջի անուն ու մեծ համբավ առյուծի:

Այդ դեպքում է միայն կտրում վիզը նա իր ոսոխի...
Ահա այդպես է հինավուրց սովորույթը մեր հողի»:

Հնարամիտ Ռուստամ-Զալը այնպես արեց, որ խաբի,
Որ ազատվի սուր ճանկերից ամենահաղթ վիշապի:

Սոհրաբը երբ լսեց խելոք խրատները ծերունու,
Չհասկացավ միտքը նրա ու ենթարկվեց նա հլու:

Պատճառն այն էր, որ խիզախ էր, ուներ նաև ամուր կամք,
Ջահել էր և մեծահոգի, սակայն չուներ քաջի փառք:

Ուստի թողեց նա Ռուստամին, գնաց դաշտը մոտակա,
Այնտեղ, ուր միշտ որսի համար երբ ցանկանար՝ եղնիկ կար:

Եղնիկներ նա տեսավ դաշտում, աղեղն առավ լայնալիճ,
Որսադաշտում անտարակույս նա մոռացավ ամեն ինչ:

Սեգ Սոհրաբը, երբ ուշացավ՝ Հումանն եկավ հողմաբեկ,
Նա հսկայից հարցուփորձեց կռվի մասին մեկառմեկ:

Իսկ Սոհրաբը պատմեց նրան, ինչ որ եղել էր այնտեղ,
Եվ թե ինչ էր Ռուստամն ասել, երբ տապալված էր արդեն:

Եվ Հումանը նրան ասաց. «Ավա՜ղ-ափսո՜ս պատանի,
Երբ որ կյանքից ձեռք ես քաշել՝ փորձանքը քեզ կտանի:

Ափսոս նոճու պես հասակդ, որ մինչ երկինք կհասնի,
Ափսոս ամուր քո ոտքերը, որ ասպանդակ չեն տեսնի:

Ընձառյուծին թակարդեցիր՝ ինչո՞ւ թողիր դու նրան,
Շա՜տ անմիտ էր քո արածը, ո՛վ Թուրանի փահլևան:

Արած քայլդ անօգուտ էր, բռնած գործդ՝ անզգույշ,
Քո գլխին մեծ փորձանք կգա, այսօր լինի կամ թե ուշ:

Հին առածը ասում է, թե. «Մի՛ ունենա թշնամի,
Թեկուզ չնչին ուժ ունենա, թեկուզ թշվառ նա լինի»:

Այդպես ասաց և Սոհրաբի սիրտը արեց վար ու վեր,
Նա հեռացավ, իսկ Սոհրաբը մնաց նորից անընկեր:

Նա քայլերը ուղղեց դեպի զորագունդը Թուրանի,
Մտածելով, որ թշնամին նորից պիտի թուր հանի:

Եվ որպեսզի նրա սրտից հանի ամեն մի կասկած՝
Քշեց իր ձին Հումանի մոտ և այսպիսի բան ասաց.

«Մի՛ մտածիր, վաղը կգա՝ կհանդիպեմ ես նրան,
Կփաթաթեմ նրա վզին կախաղանի պինդ պարան»:

ՌՈՍՏԱՄԸ ՄԱՂԹՈՒՄ Է ԱՍՏԾՈՒՆ

Ռոստամ-Զալը երբ ազատվեց սուր ճանկերից Սոհրաբի,
Նորից դառավ հսկա մի լեռ՝ իր հասակով վիթխարի:

Դանդաղ գնաց, ապա նստեց Զեմզեմ ջրի եզերքին,
Որ գեթ մի պահ հոգնությունից հանգստանա իր հոգին:

Կուշտ ջուր խմեց, ապա մաքրեց դեմքն ու լանջը իր փոշոտ,
Մաղթանք արեց նա Աստըծուն, խոսքերով մեղմ ու երկչոտ:

Նա տիրոջից աղաչեց, որ իրեն ուժ տա, հաղթություն,
Բայց չգիտեր, որ ապագան բերելու է դառնություն:

Ի՛նչ իմանար, որ օրերից մի օր Աստված իր բախտի
Սաղավարտը պիտի նետի բարձրությունից մեծ թախտի:

Լսել եմ, որ Ռոստամ-Զալը անպարտելի ուժ ուներ,
Քանզի Աստված նրա համար ոչ մի բան չէր խնայել:

Որ եթե նա ոտքը դներ ժայռի վրա մի թեթև,
Ծանրությունից անմիջապես նա ժայռի մեջ կխրվեր:

Նա շարունակ իր ուժից էր բողոքում ու տրտնջում,
Բայց ոչ մի կերպ Աստված նրա բողոքը չէր ականջում,

Որ իր ուժից մի քիչ առնի, թեթևանա նա դարձյալ,
Որ նա ոտքով մի քիչ քայլի, ոչ թե լինի միշտ հեծյալ:

Այն ժամանակ Աստված լսեց աղաչանքը Ռոստամի,
Առավ նրա ուժի կեսը, որ նա թռչի հանց քամի:

Այս անգամ, երբ անպատեհից պատահեց մի ծանր գործ,
Սեգ Սոհրաբի ահից դողաց փահլևանը բազմափորձ...

Լալահառաչ նա աղերսեց ամենազոր Աստըծուն,
Որ հնազանդ իր ծառային օգնի տերը այս գործում.

«Աղերսում եմ, ո՛վ Արարիչ, ետ տար ուժը իմ նախկին,
Այնուհետև ինչ որ ուզես՝ ապավինիր իմ բազկին»:

Աստված լսեց նրա ձայնը և ուժ տվեց Ռոստամին,
Այնպես արեց, որ Սոհրաբի դեմ հաղթանակ նա տանի:

ՍՈՀՐԱԲԻ ՄԱՀԸ

Ռոստամ-Զալը ջուր խմեց ու կրկին գնաց անապատ,
Սիրտը լի էր հոգս ու ցավով, դեմքը՝ դեղնած ու գունատ:

Իսկ Սոհրաբը քշում էր ձին, ինչպես անպարտ փահլևան,
Մի ձեռքում նա նիզակ ուներ, մյուս ձեռքում՝ վերտ, վահան:

Վարազի պես վազվզում էր, առյուծի պես մռնչում,
Քաջավազիկ երիվարը հողն էր վարում, վրնջում:

Ռոստամ-Զալը տեսավ նրան ու մռնչաց վագրի պես,
Որովհետև այդ քաջի հետ մտնելու էր ասպարեզ:

Իսկ Սոհրաբը երբ որ հեռվից նայեց առյուծ Ռոստամին,
Սրտի խորքում ալեկոծվեց ջահելության խենթ քամին:

Բայց մոտիկից տեսավ նրան հոգու աչքով մշտարթուն,
Տեսավ փառքի վեհություն էր իջել դեմքին այդ մարդու:

Նրան ասաց. «Հազիվ էիր փախել ճանկից առյուծի,
Ինչո՞ւ դարձյալ որոշեցիր թամբել կռվի ահեղ ձի:

Դու որ դեմքդ ետ շրջեցիր ճշմարտության ճամփից լայն,
Ինչո՞ւ նորից զենք վերցրիր, եկար իմ դեմ մեն-միայն:

Երկու անգամ տապալեցի մենամարտում առերես,
Բայց հարգեցի ծերությունդ, նիզակահար չարի քեզ»:

Ռոստամն ասաց. «Ո՛վ փահլևան, քաջասիրտ ես ու գոռոզ,
Ջահելության ըմբոստ հոգուց դարձել ես դու մեծախոս:

Ինձ պես ահել փահլևանից ծեծ չես կերել դու վաղուց,
Ե՛կ, ստացիր հարվածներս, թե կոչում ես քեզ առյուծ:

Վա՛յ այն մարդուն, ով որ շարժեց բարկությունս, ոխապահ
Մոմ կշինեմ իմ ձեռքի մեջ, թեկուզ լինի որձաքար»:

Այնուհետև նժույգները պինդ կապեցին, այս անգամ
Բախտանիվը նրանց գլխին պտույտ գործեց չարակամ:

Մենամարտի համար նրանք կապել էին պինդ գոտի,
Գլուխ-գլխի տվին իրար ու ձեռք-ձեռքի, ոտք-ոտքի:

Բայց այս անգամ ճախարակը չբերեց բախտ երկնահաս,
Ռոստամ-Զալի համար կարծես գործում էր նա ի վնաս:

Այդպես, իրար քաշքշեցին մինչև արփին մայր մտավ,
Մեկը մեկի ուժն էր չափում, մեկը մեկից հաղթանդամ:

Ամեն մեկը մի հսկա էր, մի ծանրանիստ ամուր որմ,
Հսկա լեռը նրանց ձեռքի մեջ կդառնար հալած մոմ:

Բայց Ռոստամը կատաղորեն մեկնեց ճանկը ամեհի,
Բռնեց վագրի նման կռվող ամուր վզից Սոհրաբի

Ու ոլորեց, ծռեց մեջքը այդ քաջարյուծ պատանու,
Օրհասական ժամից հետո էլ ի՞նչ միտք կա կռվելու...

Նա Սոհրաբին զարկեց գետին, ինչպես մի փիղ կատաղած,
Չոքեց կրծքին, բայց համոզվեց, որ չի մնա նա պառկած,

Անմիջապես կողքից քաշեց իր դաշույնը սրածայր,
Որդու սիրտը պատառոտեց, նոր իր սիրտը հովացավ:

Ո՛վ մարդ, ամեն անգամ եթե արյան ծարավ դու զգաս,
Ամեն մարդուն քենի համար սպանես կամ վնաս տաս՝

Կգա մի օր, որ քո սրտից բախտը կառնի հորդ արյուն,
Կամ մարմնիդ ամեն մազը կդառնա մի սուր դաշույն:

Եվ Սոհրաբը խոր հառաչեց, տնքաց ցավից մահացու,
Չար ու բարի իր մտքերը թողեց միայն Աստծուն:

«Մեղավոր եմ,– ասաց հորը,– կռվի կարգը դու խախտիր,
Քանզի ես իմ ձեռքով տվի քեզ բանալին իմ բախտի:

Դա անմեղ ես, բախտը ձեռքիդ դրել է մի հատու սուր,
Որ խաբելով տապալես ինձ, որ աշխարհից գնամ լուռ:

Բայց իմ մասին ընկերներս երգ կհյուսեն այսուհետ,
Թե ինչու շուտ շիրիմ իջա, շաղախվեցի հողի հետ:

Մայրս հայտնեց հորս բոլոր նշանները հանրահայտ,
Բայց հոր սիրո մեծ կարոտից շիրիմ իջա ես մինչ այդ:

Ուզում էի գտնել հորս, դեմքը տեսնել անկշտում,
Բայց անկատար մնաց իղձս, հոգիս մնաց այս դաշտում:

Ափսո՛ս, կորան իմ ջանքերը, իմ տենչերը անհատնում,
Ես չտեսա նրա դեմքը, իղձս մնաց իմ սրտում:

Եթե անգամ ձուկ էլ դառնաս՝ մտնես գետ ու ծովի մեջ,
Կամ թաքնվես խավարի պես խոր երկնքում դու անվերջ,

Կամ թե դառնաս անծայրածիր երկնի աստղ լուսատու,
Արեգակի լույսը խլես, կամ ինչ էլ որ լինես դու,

Մեկ է՝ հայրս քեզնից պիտի քենի արյուն պահանջի,
Երբ որ լսի որդու մահը՝ կռվից նա չի նահանջի:

Ծարավ էիր մարդու արյան՝ ինձ մահ տվիր քո ձեռքով,
Թաթախեցիր իմ արյան մեջ երկաթակուռ թուրը քո:

Կգա մի օր, որ մազերը քո կդառնան փուշ անգամ,
Կծակծկեն մարմինը քո, դու կլինես արնաքամ...

Բայց իմացի՛ր, իմ բանակից զինվոր լինի կամ թե պետ,
Ռոստամի մոտ կպատմի, թե ի՛նչ պատահեց որդու հետ:

Կասի՝ որդին ընկավ դաշտում, ինչպես կոտրած մի աղեղ,
Նա կարոտով հորն էր փնտրում, ամենուրեք, ամեն տեղ»:

Ռոստամը երբ նրան լսեց՝ մտայլվեց հանց թխպոտ լեռ,
Հանկարծ մթնեց աչքերը, և սիրտը դառավ ծանր բեռ:

Ուշագնաց ընկավ գետին իր հասակով վիթխարի,
Նա նման էր գետնի վրա ընկած հսկա մի ծառի:

Քիչ հետո երբ ուշքի եկավ՝ նորից հիշեց իր որդուն,
Մե՛րթ իր գլխին հող էր ցանում, մե՛րթ շորերը պատռոտում:

«Ռոստամից ի՛նչ նշան ունես, ցույց տուր՝ աչքերն իմ հանիր,
Թող վերանա իմ անունը և ծագումս իշխանի...

Հայրդ ե՛ս եմ... Քո փոխարեն ես լինեի սպանված,
Որ Դեստանը իմ դիակի վրա լիներ ողբասաց»:

Ապա փետեց մազերը և պատռեց շորերն իր հագի,
Սիրտը նրա նմանվում էր մշտաբորբոք կրակի:

Սոհրաբը երբ տեսավ հորը այդպես մոլոր ու թշվառ,
Ճիգ արեց, որ վեր բարձրանա, սակայն նորից ընկավ վայր:

«Ավա՛ղ, մի՛թե Ռոստամն ես դու,- Սոհրաբն ասաց ծնողին,-
Դու ինձ համար պատրաստեցիր հողե սառը անկողին:

Ամեն անգամ փորձում էի, որ հասկանաս ո՛վ եմ ես,
Բայց մազաչափ չշարժվեց անգութ սիրտդ քարի պես:

Քանդիր կապը իմ զրահի, նայիր կրծքիս լուսազարդ,
Բաց աչքերդ, որ համոզվես, որդիդ եմ ես, ոչ այլ մարդ:

Սեմենգանում երբ որ հնչեց դափի ձայնը շքերթի,
Մայրս վշտից առավ սուրը, որ մարմինը իր քերթի,

Նա չէր ուզում, որ Իրանի դեմ մղեն ես պայքար,
Ուստի եկավ ձեռքիս կապեց մի հիշատակ եղնգքար:

Ասաց. «Որդիս, այս հիշատակ քարը տվեց հայրը քո,
Երբ որ պետք գա, դու ցույց կտաս, նա կլինի քեզնից գոհ»:

Այժմ ամեն բան վերջացավ, հարկ չկա այն ցույց տալու,
Որդին երբ որ սպանված է, հայրը ինչպե՞ս է լալու»:

Ռոստամ-Զալը երբ որ տեսավ նվեր քարը թանկագին՝
Պատառ-պատառ արեց բոլոր հագուստները իր հագի:

Նա ողբալով աղաղակեց. «Սպանեցի՛ քեզ, որդի,
Դու փառապանծ քաջ զորապետ, դու պարծանքը քո զորքի»:

Փետում էր նա իր մազերը, թափում արյուն և արցունք,
Հողը գլխին էր շաղ տալիս, քարին զարկում ոտք ու ծունկ:

Իսկ մահամերձ Սոհրաբն ասաց. «Էլ մի թափի արտասուք,
Այսուհետև ինչքան որ լաս՝ անիմաստ է, անօգուտ:

Մեկ է, պիտի շիրիմ իջնեմ, ինչքան էլ որ դու ողբաս,
Ինչ որ եղավ՝ պետք է լիներ, փուչն այս էր ապագաս»:

ՌՈՍՏԱՄԸ ՔԱՈՒՍԻՑ ԽՆԴՐՈՒՄ Է ԲԱԼԱՍԱՆ

Մութը իջավ երկրի վրա, որ մինչև լույս լուռ նստի,
Ռոստամ-Զալը դեռ չէր եկել բանակատեղ՝ հանգստի:

Զորագնդից ճամփա ընկան քսան զինվոր անվանի,
Որ իմանան Ռոստամ-Զալը մեռա՞ծ է, թե՛ կենդանի:

Նրանք տեսան փոշեթաթախ դաշտում ձիեր են կանգնել,
Ոչ թշնամին էր երևում, ոչ Ռոստամը թրքաբեն:

Երբ որ տեսան Ռոստամի ձին դաշտում կանգնել է անտեր,
Մտածեցին, որ սպանվել կամ գերի է նա արդեն:

Ու վազելվազ վերադարձան նրանք Քաուս շահի մոտ,
Թե. «Մեծության գահը զրկվեց քո Ռոստամից սրտամոտ»:

Իրանական բանակի մեջ բարձրացավ սուգ ու շիվան,
Մահագույժը խախտեց զորքի խաղաղ քունը գիշերվա:

Քաուս շահը հրամայեց տագնապահունչ փող հարեն,
Անմիջապես հսկա Թուսին գնան և իր մոտ բերեն:

Եկավ զորքի մեջտեղ կանգնեց Քաուս շահը անհամբեր,
Ասաց. «Հիմա ուղարկեցեք արագընթաց մի բանբեր.

Նայե՛ք, դաշտում ի՛նչ է արել մեր ոսոխը չարակամ,
Ողջ Իրանը Ռոստամ-Զալի համար պիտի հեկեկա:

Եթե, իրոք, Ռոստամ-Զալը կենդանի չէ այսուհետ,
Ո՛վ կարող է Սոհրաբի հետ նետել նիզակ, գուրզ ու նետ:

Թուրքը կգա մեր երկիրը կըդարձնի արյան ծով,
Վտարանդի Ջամշիդի պես պիտի ընկնենք սար ու ձոր:

Ավարառու այդ թուրքերին ուժով պետք է մղել ետ,
Որ Իրանի սահմաններում կանգուն մնան գյուղ ու բերդ»:

Այն ժամանակ, երբ բանակում խառնաշփոթ աղմուկ կար,
Սեգ Սոհրաբը դաժան մահու հետ մղում էր դեռ պայքար:

Հորը ասաց. «Այժմ երբ իմ կյանքը հասավ վախճանի,
Իմ բանակը առանց տիրոջ, գիտեմ, ոչինչ չի անի:

Վերջին պահին որդուդ հանդեպ ցույց տուր սերդ հայրական,
Մի թողնիր, որ Քաուս շահը ջարդի զորքին թուրքական:

Պատերազմի այս առիթը իմ պատճառով եղավ լոկ,
Որ Իրանի վրա հասան թուրանացիք գողեգող:

Այնպես արա, որ չտուժեն նրանք Թուրան դառնալիս,
Բարի աչքով նայիր նրանց, որ ես հանգիստ տամ հոգիս:

Կարծում էի ողջ կմնամ, և կգտնի հայրս ինձ,
Չեմ թողնի որ ոչ մի արքա բարձր լինի նրանից:

Այն ժամանակ ի՛նչ գիտեի, ո՛վ փահլևան մեծանուն,
Որ իմ հոգին իմ հոր ձեռքով հանձնելու եմ Աստըծուն:

Իրանացի մի կտրիճ կա, մի բանտարկյալ իմ բերդում,
Իմ պարանով բռնեցի ես, գերի առա այդ մարդուն...

Քանի անգամ ես հարցրի նշաններդ մեկ առ մեկ,
Քո պատկերը աչքիս մեջ էր, չէիր խոսում դու երբեք:

Ամեն հարցիս նա տալիս էր ճիշտ հակառակ պատասխան,
Հորս հանդեպ սերս մնաց իմ սրտի մեջ արնաքամ:

Հույսս մարեց, երբ որ գերին չտվեց ճիշտ պատասխան,
Իմ լուսավոր օրը դառավ ինձ համար մի մթաշխարհ:

Ո՛վ է արդյոք այդ իրանցին, երբ հարցնես՝ կիմանաս,
Բայց խնդրում եմ քինառությամբ նրան վնաս դու չտաս:

Մորս տված նշանները տեսնում էի ճշտությամբ,
Ափսո՛ս, գերին գաղտնի պահեց, ինձ չհայտնեց ոչ մի բան:

Բայց իմ բախտը իմ ճակատին ծնված օրից էր գրված,
Որ հարազատ իմ հոր ձեռքով ինձ տեսնեին սպանված:

Շանթի նման աշխարհ եկա, հեռանում եմ հողմի պես,
Գուցե մի օր տիեզերքում ես երջանիկ տեսնեմ քեզ»:

Սաստիկ ցավը խեղճ Ռոստամի սիրտն ու հոգին էր մաշում,
Արտասուքի հեղեղ էր նա թափում, երբ ախ էր քաշում:

Հեծավ Ռախշը՝ իր զորքի մոտ գնաց, ինչպես հողմ խելառ,
Սիրտը լեցուն էր ցավերով, իսկ խոսքերը՝ վշտաբառ:

Երբ որ եկավ բանակատեղ՝ նա տարածեց վայնասուն,
Իր արածի համար անվերջ ողբի խոսքեր էր ասում:

Իրանցիք տեսան նրան՝ ողջունեցին սրտագին,
Ուրախությամբ երեսն ի վար ընկան նրա ոտքերին:

Մաղթանք արին ու փառք տվին արարողին աշխարհի,
Որ Ռոստամը կռվի դաշտից վերադարձավ կենդանի:

Բայց երբ տեսան փահլևանի դեմքը հողի մեջ կորած,
Հագուստները ծվեն-ծվեն, կուրծքը լրիվ ճանկռոտած,

Հավաքվեցին նրա շուրջը, որ պատճառը իմանան.
«Ո՞ւմ համար ես այդպես ողբում,- ասացին,- ով փահլևան»:

Նա դիպվածի մասին նրանց բարբառեց ու հեկեկաց,
Թե ինչպես է սիրած որդուն տվել մահու մեծ հարված:

Ողջ բանակը Ռոստամ-Զալի վիշտը կիսեց ու ողբաց,
Եվ այդ պահին սաստիկ ցավից փահլևանը ընկավ ցած:

Երբ որ նորից ուշքի եկավ, ավագներին ասաց նա,.
«Այսօր կարծես Ռոստամը չեմ, այլ մի մարմին անզգա:

Թուրքերի դեմ մի՛ որոնեք պատերազմի ասպարեզ,
Ինչ վատ բան որ կատարեցի՝ բավական է ինձ և ձեզ»:

Ապա եկավ Ռոստամի մոտ իր եղբայրը՝ Զեվարան,
Լաց ու կոծով դաշտը արեց ողբատեղ ու շիվարան:

Ռոստամը երբ իր եղբորը տեսավ թշվառ, վշտաբեկ,
Իր և որդու կռվի մասին նրան պատմեց մեկառմեկ.

«Ես երբևէ չէի արել այսպիսի գործ անօրեն,
Աստված պիտի ինձ չարչարի իմ մեղքերի փոխարեն:

Ծեր հասակում անմտաբար սպանեցի իմ որդուն,
Կտրեցի իմ տոհմարմատը, որ չունենամ խաղաղ տուն:

Հայրը երբ որ իր ձեռքերով խլեց կյանքը զավակի,
Աստված պիտի կրակ թափի ու հավիտյան կայծակի»:

Ողբաց նա և քաջ Հումանի մոտ ուղարկեց մի պատգամ.
«Քինառության թուրը,- ասաց,- կողքիդ կախիր այս անգամ:

Զորապետը դու ես հիմա, թեկուզ կանչես մարտակոչ,
Բայց ես կռվել չեմ ցանկանում, կուզես կռվիր, կուզես՝ ոչ:

Միայն թե դու քո վատությամբ ինձ չասացիր ոչ մի բան,
Կրակ տվիր տուն ու տեղս, կործանեցիր ինձ միայն»:

Եղբորն ասաց. «Դու Հումանին տար գետի մոտ, որ հանկարծ
Նա նեղություն չկրի իր ճանապարհին դժվարանց»:

Իսկույն նեթ գնաց հասավ Հումանի մոտ Զեվարան,
Նրան ասաց, որ Ռոստամը հղել է մի պատվիրան:

Իսկ Հումանը պատասխանեց, որ Սոհրաբի հետ մեկտեղ,
Ռազմադաշտում զորք էր վարում ձեռքին նետեր ու աղեղ:

Ապա ասաց, որ Հեջիրը մեղավոր էր այս գործում,
Չի Ռոստամի նշանները չհայտնեց նա իր որդուն:

Նա հարցեր էր տալիս, սակայն Հեջիրը նենգ, խաբեբա,
Միշտ պնդում էր իր ասածը ու չէր հայտնում ոչ մի բան:

Հեջիրի այդ չար հանցանքը ոչ մի էակ չի տանի,
Պետք չէ, որ նա այսուհետև մեր մեջ ապրի կենդանի:

Եվ Զեվարան անմիջապես եկավ բերդը Սպիտակ,
Հեջիրի նենգ արարքների մասին պատմեց շարունակ:

Սաստիկ հույզից Ռոստամ-Զալը քիչ էր մնում տրաքվեր,
Նա Հեջիրի մոտ շտապեց սրտում դաժան ոխ ու քեն:

Բռնեց կրծքից, ամբողջ ուժով թափահարեց Հեջիրին,
Ու ցանկացավ վիզը կտրել մեկ հարվածով իր թրի:

Բայց այդ պահին միջնորդ մարդիկ աչքով արին մեկմեկու,
Եվ Հեջիրին ազատեցին նրա ձեռքից ահարկու:

Այնուհետև Ռոստամ-Զալը թողեց դաշտը արյունոտ,
Անմիջապես վերադարձավ իր վիրավոր որդու մոտ:

Քաջատոհմիկ իշխանները նույնպես եկան նրա հետ՝
Գոսթեհեմը, հսկա Թուսը և Գուդերզը թիկնավետ:

«Աստված հոգիդ լուսավորի,- միաբերան ասացին, –
Թող քո որդու վերքը բուժի, ո՛վ փահլևան քաջածին»:

Բայց Ռոստամը սուր դաշույնը իսկույն հանեց պատյանից,
Որ հանցավոր իր գլուխը անջատի իր մարմնից:

Իշխանները պինդ բռնեցին բազուկներից Ռոստամի,
Նրանք նույնպես ողբում էին մահը ջահել Սոհրաբի:

Գուդերզն ասաց. «Քեզ ի՞նչ օգուտ, երբ սպանես, ո՛վ Ռոստամ,
Կամ աշխարհը կրակ տաս ու մոխիր անես դու անգամ:

Հարյուր վնաս թեկուզ քեզ տաս, անիմաստ է, անօգուտ,
Ո՛չ տանջանքդ կմեղմանա, ո՛չ կբուժես դու որդուդ:

Եթե Աստված որոշել է, որ նա մնա կենդանի,
Անհոգ եղիր, կապրես և դու, մահը չի գա քեզ տանի:

Եթե որդիդ պետք է թողնի մեծ սրահը այս ունայն,
Լավ իմացիր, մենք էլ պիտի գնանք նրա հետ միայն:

Մարդաշխարհը մահվան ձեռքին որսատեղ է մի առատ,
Գլխիդ թեկուզ թագ ունենաս կամ երկաթե սաղավարտ:

Երբ որ կգա ժամանակը՝ ճանապարհից կընկնենք դուրս,
Մենք չգիտենք, թե ինչ գաղտնիք կա երկնքում աստղալույս:

Մենք բոլորս մահվան դաժան ատամի տակ չենք մնա,
Մեր բոլորի ուղին այդ է, լինի հետո, թե հիմա:

Մահը ունի երկու ճամփա՝ մեկը երկար, մեկը կարճ,
Անվերադարձ են երկուսն էլ, անլուծելի, անճանաչ:

Մահից անդորր էլ ի՞նչ կա լավ, երբ մազերն ես քո փետում,
Ամեն մի մարդ դեռ կենդանի՝ մահվան մասին է դատում»:

«Գնա, ո՛վ դու պայծառամիտ,- Ռուստամն ասաց Գուդերզին,-
Քաուս շահին ասա՝ ծանր մեղք է ընկել իմ վզին:

Կտրիճ որդուս սպանեցի՝ հանգավ աստղը իմ փառքի,
Անգութ ձեռքով ես մարեցի արեգակը իմ կյանքի:

Ասա, եթե չես մոռացել իմ գործերը, ո՛վ Քաուս,
Գեթ մեկ անգամ կարեկցիր և տանջանք մի տուր դու հոգուս:

Քո պահեստում բալասան կա, գանձերից էլ մի թանկ բան,
Վիրավորին բուժում է այն ու դարձնում ողջանդամ:

Շնորհ արա՝ ինձ նվիրիր դրանից մի գինու թաս,
Գիշեր-ցերեկ կաղոթեմ քեզ, եթե դեղը դու ինձ տաս:

Բախտի բերմամբ գուցե որդիս ապաքինվի այդ դեղով,
Նա էլ շահին կծառայի վերտ-վահանով, աղեղով»:

Հողմի նման Գուդերզն եկավ, շահին հայտնեց լուրը այդ,
Քաուս շահը լսեց նրան, պատասխանեց բարկացայտ.

«Ռուստամի պես հսկա չունեմ ողջ Իրանամ ծայրեծայր,
Նրան վատ բան չեմ ցանկանում, մեծարում եմ ես միայն:

Բայց եթե ես կենդանարար բալասանը նրան տամ՝
Որդին նորից կառողջանա ու կդառնա նոր Ռուստամ:

Եվ անկասկած, այն ժամանակ իմ լավության փոխարեն՝
Կմատուցեն ինձ վատություն և իմ թագը կխլեն:

Նա ինձ ասաց. «Քաուսն ո՛վ է՝ մի չնչին մարդ, ոչ թե քաջ,
Թե Քաուսը շահնշահ է, ի՞նչ է Թուսը իմ առաջ»:

Իսկ Սոհրաբը իմ բանակին երբ որ արեց ցիրուցան,
Երդվեց թագով և կանչեց ինձ բոլորի մոտ բարձրաձայն.

«Այս նիզակով կշամփրեմ սիրտը գոռոզ Քաուսի,
Եվ սուր նետով նրա գանգը կմեխեմ ես իր ուսին:

Այսուհետև տեղ չի գտնի այս աշխարհում ծայրեծայր,
Նրա փառքը ու պատիվը կանեմ հողին հավասար»:

Ռուստամ-Զալը, ո՛չ, չի կարող ապրել խաղաղ ու հանգիստ,
Կխորտակի նա իմ թախտը և քաղաքս գահանիստ:

Չի հանդուրժի մեծությունս, նա իմ գահը կքանդի,
Ազատաբաղձ նրա ոգին բռնությամբ չեմ կաշկանդի:

Չեմ ցանկանամ բարի աչքով նայել քաջին այդ համառ,
Որովհետև նա ձգտում է տիրել գահիս անպատճառ:

Քանի՛ անգամ զորքիս առջև անարգ խոսքեր է ասել,
Ամոթանքից իմ աչքերից արյուն-արցունք է հոսել:

Ռոստամ-Զալի որդին եթե հիմա մնա կենդանի,
Միայն կտա մի բուռ հող ինձ, և այն էլ ոչ պիտանի:

Չէ՞ որ դու մի աշխարհատես խելոք մարդ ես, ո՛վ Գուդերզ,
Չե՞ս լսել դու սեգ Սոհրաբի նախատինքը հանդեպ մեզ.

Թե՝ «Իրանի կտրիճները իմ թրի տակ կխաղան,
Քեյ-Քաուսին մինչև անգամ կհանեմ ես կախաղան»:

Եթե հիմա Ռոստամ-Զալին նվիրեմ ես բալասան,
Նա որդու հետ ողջ Իրանը կանի հողին հավասար:

Ես չեմ կարող օգնության ձեռք մեկնել հզոր թշնամուն,
Որ աշխարհում մահից հետո՝ թողնեմ միայն վատ անուն»:

Քաջ Գուդերզը շատ զարմացավ պատասխանից Քաուսի,
Նա ծխի պես արագ գնաց, որ Ռոստամին բան ասի:

Ասաց. «Ոչ մի շահ չես գտնի, առանց ոխի ու քենի,
Քաուս շահը կարծես լինի թունապտուղ մի Կենի:

Նա ուրիշի ցավի համար կարող է տալ միայն թույն,
Դաժան մարդուց, ո՛վ փահլևան, մի սպասիր օգնություն:

Լավ կլինի ինքդ գնաս, վերադարձա ես անհույս,
Գուցե նրա խավար հոգում նորից վառես մտքի լույս»:

ՌՈՍՏԱՄԸ ՈՂԲՈՒՄ Է ՈՐԴՈՒ ՄԱՀԸ

Ռոստամ-Զալը հրամայեց պատրաստեն մի հարմար տեղ,
Որ իր որդուն պառկեցնեն բանվածքի մեջ շենշքեղ:

Այնուհետև Քաուս շահի մոտ վազեց նա սրընթաց,
Բայց գուժկանը ճանապարհի կեսին հասավ և ասաց.

Թե՝ «Սոհրաբը այս աշխարհին հոգին տվեց, բայց ավա՜ղ,
Նա քեզանից պահանջում է ո՛չ թե պալատ, այլ՝ դագաղ»:

Հայրը սարսեց, երբ որ լսեց մահվան լուրը իր որդու,
Մերթ կանչում էր, կուրծքը ծեծում, մերթ երեսը ճանկռոտում:

Փետեց գլխի մազերը նա, կրծքից հանեց խոր հոգոց,
Թարթիչներից արյուն կաթեց, ու տարածեց լացուկոծ:

Ձիուց խսկույն ցած իջավ նա, հիվանդի պես դողդողդ
Սաղավարտը նետեց մի կողմ, գլխին ցանեց քար ու հող:

Իշխանները երբ լսեցին մահվան լուրը չարաղետ,
Աղմկեցին ու լացեցին իրենց անբախտ քաջի հետ:

Հայրը ասաց. «Վա՜յ սև օրիս, իմ պատանի փահլևան,
Դու քաջերի տոհմից սերած, ինչպե՞ս լացեմ, գլխիս տամ,

Արեգակը էլ չի տեսնի քեզ պես հսկա, իմ անբախտ,
Չէ՞ որ պետք էր քեզ սաղավարտ, արքայական թագ ու թախտ:

Արարիչը ո՞ւմ է տվել այսպիսի վիշտ, որ տանի,
Ո՞վ է լսել, որ զառամյալ հայրը որդուն սպանի:

Ազնիվ ծոռն եմ հռչակավոր Նարիմանյան քաջ Սամի,
Իսկ մոր կողմից խիզախ թոռը՝ Սեմենգանի իշխանի:

Արժանի եմ, որ հանցավոր իմ ձեռքերը թրատեն,
Արժանի եմ, որ դիակս հիմա հողի մեջ նետեն:

Որովհետև Սոհրաբի պես որդուս տվի ես քամուն,
Նա՛, որի պես դեռ ոչ մի մայր չի ծնել այս աշխարհում:

Գերշասպի և Նարիմանյան Սամի պես էր նա իրոք,
Խիզախ այր էր, երբևիցե չէր խոնարհվել ծնկաչոք:

Մինչև հիմա ես եմ եղել մեծահամբավ, փառավոր,
Բայց քաջությամբ նսեմացա ես նրա մոտ, իրոք որ:

Ի՞նչ պատասխան տամ քո մորը, երբ որ լսի մահվան բոթ,
Ի՞նչ երեսով սուրհանդակին ես ուղարկեմ նրա մոտ:

Ինչպե՞ս ասեմ՝ սպանեցի անմեղ որդուդ իմ ձեռքով,
Ու ցերեկդ գիշեր արի, միայն-միայն իմ մեղքով:

Ո՞ր ծնողն է անարգանքի սյունին ինձ պես արժանի,
Հետագայում ով որ լսի՝ ինձնից պիտի սարսափի:

Իմ աները Սեմենգանի փահլևանն է իսկական,
Արած գործիս համար ինչպե՞ս հայտնի նա իր աղջկան:

Պիտի ասի, թե Ռոստամը քենի համար տմարդի
Մենամարտում սուր դաշույնով խոցեց սիրտը զավակի:

Այնուհետև Սամի տոհմին անեծք պիտի տան միայն,
Ինձ անօրեն պիտի կոչեն, պիտի ասեն անգութ հայր:

Երբևիցե չէի կարծում, որ իմ որդին շուտ կաճի,
Այս տարիքում կդառնա նա այսքան բարձր սեգ նոճի:

Եվ իր ուժն ու միտքը կտա կռվի, զենքի ու զորքի,
Որ իմ օրը խավար դառնա, արժանանամ նզովքի»:

Ողբից հետո հրամայեց բերեն շքեղ մի դիպակ,
Փռեն ջահել որդու վրա, արքայական ծածկի տակ:

Նա ձգտում էր իշխանության, որ ձեռք բերի թագ ու գահ,
Սակայն մահը եկավ, և նա ստացավ մի նեղ դագաղ:

Նրան դրին դագաղի մեջ, տարան դաշտից արյունոտ,
Հրդեհեցին առագաստը ու վրանը որդու մոտ:

Զորքը հող էր ցանում գլխին, այս աշխարհին էր անիծում,
Դիպակները հրդեհելով՝ ողբում էին ու կոծում:

Հրդեհեցին իշխանական նրա գահը ոսկեխայտ,
Եվ թանկագին ու գորշագույն ձիու թամբը՝ ամրափայտ:

Ամեն, ամեն ինչ վառեցին ու բարձրացավ ծուխ ու բոց,
Իսկ Ռուստամը գոռգոռում էր ու տարածում լացուկոծ.

«Աշխարհին արար չի տեսնելու քեզ պես հսկա մի հեծյալ,
Դու աննման պատերազմող, դու ամրակուփ քարաժայռ:

Ափսո՛ս-ափսոս պայծառ խելքդ, ո՛վ պատանի փահլևան,
Ափսոս դեմքդ և՛ աչքերդ, և՛ հասակդ հաղթիրան:

Հազար ափսոս քո հոգեմաշ, տանջված սրտիդ ըղձատենչ,
Մորից հեռու, հորը կարոտ, սուր դաշույնը՝ սրտիդ մեջ:

Խելոք մարդիկ ի՞նչ կասեն ինձ, գործեցի ես մեծ ոճիր,
Ու կտրեցի ես իմ այգուց մի նորատունկ վեհ նոճի:

Ինչպե՞ս քավեմ իմ մեղքերը, ինչպե՞ս նայեմ ես մարդկանց,
Ինչպե՞ս շահեմ նրանց սիրտը, որ հավատան ինձ սրտանց»:

Ասում էր նա, արցունք թափում, գլխին տալիս քար ու հող,
Մերթ շորերն էր պատառոտում, մերթ շուրթերը մահադող:

Քաուս շահի հուղարկավոր հսկաները եկան մոտ՝
Նստոտեցին ճամփի վրա, որ զրուցեն սրտամոտ:

Ամեն մի քաջ իմաստալից խոսք էր ասում Ռուստամին,
Սակայն նրանց խրատները ասես տանում էր քամին:

Ո՛չ խրատն էր ազդում նրան, ո՛չ խորհուրդը քաջերի,
Վիշտը խորն էր, թափվում էին արցունքները աչքերի:

Բախտանիվը ունի գաղտնի իր օրենքը հաստատուն՝
Մի ձեռքի մեջ թագ է պահում, մյուս ձեռքին՝ մահ ու թույն:

Երբ որ մեկին տեսնում է իր գահի վրա ճոխ բազմած,
Մահ-պարանը վիզն է գցում, վեր հանելով նետում ցած:

Մարդը ինչո՞ւ աշխարհի հետ պիտի կապի սիրտ ու սեր,
Վերջը մեկ է՝ մեռնելու է իր մեղքերով ծանրաբեռ:

Բախտանիվը պտտվելով կատարում է մեծ շրջան,
Շրջանի մեջ կա և՛ խավար, և՛ հարատև լույս ու ջահ:

Որքան էլ որ հարատևի գոյության քո կարճ ճամփան,
Վերջիվերջո քո քայլերով պիտի իջնես գերեզման:

Բախտանիվը չի գիտակցում ո՛վ է ստրուկ և ո՛վ՝ շահ,
Ո՛վ է խելոք և ո՛վ տգետ, նա հնձում է ամեն պահ:

Այս աշխարհը արկածների մի սրահ է մարդաշատ,
Կյանքի ճամփին միշտ հնձում է, չի տարբերում լավ թե վատ:

Մենք գիտենք, որ բախտանիվը ունի կայուն ժամանակ,
Ասենք, թեկուզ աղեղ չունի, բայց գործում է շարունակ:

Բայց իմացիր, որ հայտնի չէ բախտի վերջին մեր ճամփան,
Մեկ է, «քանզի»-ն և թե «ինչուն» չունեն ոչ մի պատասխան:

Այդ պատճառով մահվան մասին պետք չէ ողբալ նախօրոք,
Մեռնելուց ետ ինչ կլինենք՝ այդ չգիտի դեռ ոչ ոք:

ՔԱՈՒՍԸ ԳԱԼԻՍ Է ՌՈՍՏԱՄԻ ՄՈՏ

Երբ Սոհրաբի մահվան լուրը գնաց հասավ Քաուսին,
Նա Ռոստամի մոտ եկավ, որ սփոփանքի խոսք ասի:

Ասաց. «Էլբորզ սարից մինչև թաց տերևը եղեգի
Մահը պիտի փոշի անի մի հարվածով իր տեգի:

Շուտ կմեռնես թե ուշ՝ մեկ է, վերջը պիտի հող լինես,
Մենք բոլորս պիտի գնանք մտնենք մահվան դռնով ներս:

Այդ պատճառով քո կորածի մասին այդքան մի ողբա,
Եվ խելացի մարդուն լսիր ու ցավերը քո հոգա...

Թե երկինքն էլ գետին զարկես, տակնուվրա անես դու,
Թե աշխարհին էլ վառես, հետո մոխիր ցանես, ի՞նչ օգուտ:

Ինչ որ գնաց՝ ետ չի դառնա, կյանքը ոչինչ չի պահում,
Ոգին է, որ տեղ է գտնում մի նոր կյանքի սրահում:

Հեռվից տեսա որդուդ լանջը ու հասակը ամրակազմ,
Գուրզը ձեռքին մղում էր նա Իրանի դեմ պատերազմ:

Ինքս իմ մեջ մտածեցի՝ թուրքի նման չէ բնավ,
Սա արիական ծագում ունի, կամ ի՞նչ անուն տամ նրան:

Օրհասական մահը նրան մղեց դեպի պատերազմ,
Որ քո անգութ ձեռքով մեռներ Սոհրաբ որդիդ քաջազարմ:

Իսկ դու որքա՛ն ժամանակ քեզ պիտի տանջես ու լացես,
Անցածը էլ ետ չի դառնա, սուգը օգուտ չի տա քեզ:

Ռոստամ-Զալը պատասխանեց. «Այո՛, ճիշտ ես դու ասում,
Հումանը դեռ այս լայնարձակ դաշտում ինձ է սպասում:

Այստեղ բացի թուրք քաջերից կա մի քանի չինացի,
Դու դրանց դեմ քեն մի պահիր, ինչ որ եղավ՝ մոռացիր:

Թո՛ղ եղբայրս ճամփա գցի, թո՛ղ վտանգից զերծ պահի,
Ամենազոր տիրոջ կարոտ և թողությամբ մեծ շահի»:

Քաուս շահը կրկին դիմեց. «Ո՛վ փահլևան անվանի,
Այս եղեռնի տրտմությունը սրտից արագ դուրս հանիր:

Դրանք իմ դեմ վատ են վարվել ու մնացել անհատույց,
Մոխրակույտ են արել ամբողջ գյուղ ու քաղաք, թե կառույց:

Եվ քանի որ դու միտք չունես նորից գնալ նրանց դեմ,
Ես չեմ անի, որովհետև սրտիդ ցավը լավ գիտեմ:

Իմ սիրտը քո սրտի նման լի է ցավով ու հոգսով,
Ուստի բարի վճիռ կանենք կռվի մասին երկուսով:

Դու կմնաս այստեղ, մինչև վերադառնա Զևարան,
Նա շուտափույթ լուր կբերի, թե թուրքերը ո՞ւր կորան»:

ՌՈՍՏԱՄԸ ՈՐԴՈՒ ԴԻԱԿԸ ՏԱՆՈՒՄ Է ԶԱԲՈՒԼԻՍՏԱՆ

Քառս շանը գնաց Իրան ամրկարար իր զորքով,
Իսկ Ռոստամը մնաց տեղում, աչքերը լի արցունքով:

Եվ մահապուրծ Հեջիրն եկավ հայտարարեց հենց այսպես,
Թե. «Թուրանի ողջ բանակը նահանջել է վերջապես»:

Եվ Զեվարան արագավազ Ռոստամ-Զալի մոտ եկավ,
Հեծելազոր և հետևակ զորքը ընկավ ճանապարհ:

Սգի համար պոչատեցին հազար ընտիր ձիերի,
Պատռոտեցին հագուստները հոչակավոր քաջերի:

Ապա Սամանդ պոչատ ձիու թամբին դրին սգաշոր,
Ջարդոտեցին դափ ու թմբուկ, գալարափող ու շեփոր:

Ու շարեշար զորքը քայլեց առջևից սև դագաղի,
Իշխանները ողբում էին, արցունք թափում դառնաղի:

Ռոստամ-Զալը գնաց Զաբուլ, բայց չհասած սահմանին,
Նրա դարձի տխուր լուրը իսկույն հասավ Դեստանին:

Սակաստանը ոտքի ելավ, եկավ քաջին ընդառաջ,
Ողջ Զաբուլում ամենուրեք լսվում էր ողբ ու հառաչ:

Ծեր Դեստանը երբ որ տեսավ սև դագաղը Սոհրաբի,
Ոսկեպախուրց ձիուց իջավ, մոլոր կանգնեց կես ճամփին:

Փղամարմին Ռոստամ-Զալը գնաց չոքեց հոր առաջ,
Հողը առավ ցանեց գլխին, աղաղակեց բարձրականչ:

Ռազմիկները արձակեցին գոտիները ոսկեզօծ
Ու դագաղի մոտ չոքեցին, տարածելով լացուկոծ:

Ամեն մեկը դեմքն էր ճղում կամ շորերը պատռոտում,
Կամ թե հող էր ցանում գլխին, կամ Սոհրաբին վայ երգում:

Ապա նրանք սև դագաղը իջեցրին գերեզման,
Աղմկեցին. «Ափսո՛ս-ափսո՛ս, ո՛վ քաջարի փահլևան»:

Իսկ Ռոստամը Զալին ասաց. «Նայիր սրան, ո՛վ իմ հայր,
Քնած է նա սև դագաղում, ինչպես խղճուկ մի թշվառ...

Նա հեռացավ և ինձ թողեց այս աշխարհում մշտասուգ»,
Ասում էր նա և աչքերից թափում աղի արտասուք:

Ողբաց նաև Դեստանը և ասաց. «Ո՛վ իմ պատանի,
Ինչո՞ւ ծանր գուրզ վերցրիր, որ մահը քեզ տապալի:

Իշխանների մեջ դու եղար հոչակավոր մի քաջայր,
Չի ծնել դեռ քեզ պես մանուկ այս աշխարհում ոչ մի մայր»:

Երբ Ռոստամի մայրը տեսավ դագաղը իր սեգ թոռան,
Նա բարձրաձայն աղաղակեց. «Ո՛վ պատանի փահլևան.

Դու առյուծի կտրիճ կորյուն, ազնվածին իմ սերունդ,
Ոչ մի ծնող չի ունեցել քեզ պես հրաշք մի ծնունդ:

Բարձրացրու սեգ գլուխդ ու դագաղից դուրս արի,
Տես աշխարհը ոնց է ողբում, իմ խիզախ թոռ, քաջարի:

Վեր կաց, խոսիր, որ իմանանք բաղձանքը քո սև սրտի,
Ինչո՞ւ ուրախ ժպիտներդ փոխվեցին լոկ արցունքի:

Քո հասակի գարնան օրը դու գնացիր գերեզման,
Բայց կարոտից եկար մեր տուն, որ ես ողբամ, գլխիս տամ:

Վեր կաց, պատմիր, տեսնենք՝ ինչո՞ւ հայրդ պատռեց սիրտը քո,
Սիեստանը և Զաբուլը լցրիր վարար արցունքով:

Ամեն մի մայր քեզ համար է ողբում, ինչպես իր որդուն,
Մահդ արար աշխարհին արավ մի անսահման սգատուն»:

Ողբում էր նա ու խենթի պես սև մազերն էր իր փետում,
Մերթ փոշի էր գլխին ցանում, մերթ շորերը պատռոտում:

Ռոստամ-Զալը լսեց իր մոր հառաչանքը վշտաբեկ,
Թշվառ մարդու նման կարծես խինդ չէր տեսել նա երբեք:

Կարծես վերջին դատաստանը տուն էր մտել մահածունկ,
Լացող մարդկանց աչքերից էր ծորում արյուն և արցունք:

Ռոստամ-Զալը նորից գրկեց սև դագաղը զավակի,
Ողբում էր նա, որ Զաբուլում ինչքան մարդ կա՝ հավաքի:

Կրկին քանդեց տախտակները ու գամերը դագաղի,
Սև պատանը քաշեց դեմքից, որ համբույրներ նա քաղի:

Իշխաններին ցույց տվեց նա մարմինը քաջ Սոհրաբի,
Հողը ծխի սրահ էր մի, իսկ երկինքը՝ սև ամպի:

Նվաղեցին կին թե մանուկ, ջահել ու ծեր տղամարդ,
Պատառ-պատառ եղան նույնպես իշխանները ալեզարդ:

Դագաղի մեջ պառկել էր մի արու կորյուն կռվասեր,
Նման էր նա իսկա Սամին, կամ ասես թե Զալն էր ծեր:

Ռոստամ-Զալը նորից ծածկեց դագաղը իր զավակի,
Դեմքին քաշեց ոսկե դիպակ, գամերն առավ, որ փակի...

Ասաց. «Որդուս համար եթե շինեմ ոսկե մի դամբան,
Դագաղի մեջ անուշաբույր ես մուշկ լցնեմ ու համպար...

Ինչ էլ անեմ՝ մահից հետո չի մնա և ոչ մի հետք...
Կանեմ սրտիս ցանկացածը, ինձ համար էլ ի՞նչ է պետք:

Ինչպե՞ս անեմ և ի՞նչ շինեմ արդյոք սրան արժանի,
Որ աշխարհի վրա թեկուզ մի բան մնա կենդանի»:

Նա պատրաստեց խնկե դագաղ ու դրվագեց, այնուհետ
Ոսկեպախուրց ձիու թամբեր, վահան, նիզակ, վերտ ու նետ:

Ապա շինեց մի դամբարան, որ ուխտավոր մարդիկ գան
Հոր ձեռքերով դաշունահար որդու վրա հեկեկան:

Այդ օրվանից այս զրույցը տարածվեց ողջ աշխարհում,
Որ Ռոստամը դաշունահար արեց անմեղ իր որդուն:

Տխրությունը համակել էր ողջ աշխարհը ծայրեծայր,
Ով Սոհրաբի մահը լսեց՝ աղաղակեց «վայ ու վայ»:

Վիշտը բույն էր դրել վաղուց Ռոստամ-Զալի կրծքի տակ,
Նա չընդունեց ոչ մի խրատ, ոչ մի սրտի սփոփանք:

Համբերության ապավինած, սպասում էր կույր բախտին,
Թե ե՞րբ պիտի մահը գա իր կյանքի ուղին շուտ խախտի:

Աշխարհի մեջ կան այսպիսի պատմություններ սրտառուչ,
Հողաշխարհը ողբի բույն է, իսկ մեր կյանքը՝ ոչ ու փուչ:

ԹԵՀՄԻՆԵՆ ՈՂԲՈՒՄ Է ՈՐԴՈՒ ՄԱՀԸ

Քաջ Հումանը երբ որ նստեց իշխանական ճոխ թամբին,
Հասավ Թուրան, Աֆրասյաբին պատմեց մահը Սոհրաբի:

Եվ Աֆրասյաբ շահը մնաց զարմացած ու շենշվար,
Նա չգիտեր ինչպես ելնել նեղ վիճակից այդ դժվար:

Մահվան լուրը բերնեբերան հասավ մինչև Սեմենգան,
Պատռեց բոլոր հագուստները Սեմենգանի շահ-արքան:

Լուրը հասավ նաև մորը՝ Սեմենգանի թագուհուն,
Որ հոր ձեռքով դաշունահար որդին չկա աշխարհում:

Մայրը ուժգին խփեց գլխին, պատռեց կաբան վերից վար,
Բացեց չքնաղ իր մարմինը, ինչպես ճերմակ մի գոհար:

Աղաղակեց ու պալատում տարածեց նա լացուկոծ,
Մերթ ուշաթափ ընկնում էր ցած, մերթ հանում էր խոր տնքոց:

Եղունգներով դեմքն էր ճղում ու շորերն էր պատռոտում,
Գոռգոռում էր աշխարհով մեկ, կրծքից արյուն էր կաթում:

Խոպոպավոր գիսակները բռնեց ձեռքով իր ամուր,
Քաշեց, պոկեց արմատներից ու դեն գցեց բուռ առ բուռ:

Արնաշաղախ գլխին ցանեց ափուռ-ափուռ սևահող,
Սակայն հոգին մաշող ցավը բնավ մեղմել չէր կարող:

Ատամներով միսը պոկեց, գլխին ցանեց նա կրակ,
Խոպոպները այրեց, խանձեց, աղաղակեց շարունակ:

Ողբերգելով ասաց. «Ո՛վ իմ միակ որդի, իմ հոգի,
Ո՛ւր ես հիմա, որ մայրդ գա գերեզմանին քո չոքի:

Օտար որդի, գերի հոգի, դու թառամած ու նիհար,
Հողում թաղված, մտքում պահված, հնարամիտ տեգահար:

Երկու աչքս ճամփի վրա սպասեցի միշտ անքուն,
Թե Սոհրաբից ու Ռոստամից լուր կստանա՞մ ես թաքուն:

Մեծ հույսերով սպասեցի գիշերից մինչ առավոտ,
Թե աշխարհը պտույտ գալով նորից կգաս մորդ մոտ:

Կարծում էի որոնելով հորդ գտել ես վաղուց,
Ահա որտեղ որ ես հիմա՝ կգաս ինձ մոտ, իմ առյուծ:

Ի՛նչ գիտեի, որ իմ որդուց դժբախտ լուր է գալու ինձ,
Թե՝ Ռոստամը որդու սրտի մեջ սուր խրեց վրեժից:

Նա չափսոսաց, չխնայեց քո պատկերը գեղեցիկ,
Պարթևակազմ վեհ հասակդ, ինչպես նոճի սլացիկ:

Գիշեր-ցերեկ փայփայել ու սնուցել է մայրդ քեզ,
Որ խնամքով դու մեծանաս, ով իմ բալիկ հաղթավես:

Բայց գնացիր քո սեփական արյան ծովում լողացար,
Կարմիր պատանք հագար հիմա, մորդ տալով վիշտ ու ցավ:

Ո՛ւմ հետ կիսեմ իմ ցավերը, սիրտս դառնա քիչ թեթև,
Ո՛վ կարող է փարատել իմ տխրությունը հարատև:

Ո՛ւմ հետ կիսեմ հոգս ու ցավս ու տանջանքս մահացու,
Ո՛ւմ կանչեմ ես որդի Սոհրաբ, հույսս դրած Աստըծուն:

Հազար ավաղ մատաղ հոգուդ և աչերիդ վառ ճրագ,
Գարնան այգուց հեռացար, որ մտնես սառը հողի տակ:

Ողջ Թուրանի հույս ապավեն, որոնեցիր հորը քո,
Լույս ցերեկի փոխարեն դու գտար միայն երեկո:

Իղձդ սրտում որոնեցիր, բայց մնացիր դու անհույս,
Ու ննջեցիր սև հողի տակ, թշվառ մարդու պես անլույս:

Ինչո՞ւ առաջ այն նշանը, որ քո մայրը տվեց քեզ,
Ցույց չտվիր Ռոստամ-Զալին, որ նա տեսներ առերես:

Մի՞թե տված նշանը քեզ ամուր հիմք չէր ու հավատ,
Որ ճանաչես քո հարազատ հորը, դժբախտ իմ զավակ:

Ես առանց քեզ, ստրուկի պես վշտից դարձել եմ գերի,
Աչքերս ծով են արցունքի, սիրտս՝ տնակ հոգսերի:

Ինչո՞ւ քեզ հետ կռվի չեկա՝ ձեռքիս բռնած վերտ ու նետ,
Որ աշխարհը շրջելուց ետ նորից գայի տուն, քեզ հետ:

Ռոստամ-Զալը, անտարակույս, կճանաչեր ինձ իսկույն,
Կուրախանար, երբ որ տեսներ ունի քեզ պես քաջ կորյուն:

Նա ձեռքիցը սուր դաշույնը դեն կգցեր շատ հեռու,
Իր զավակի սիրտն ու թոքը չէր պատռոտի քինառու»:

Այնքան լացեց, աղաղակեց, թափեց արցունք և արյուն,
Նրա շուրջը ամեն կողմից հավաքվեց մեծ բազմություն:

Բոլոր մարդկանց աչքերը նա լճակ արեց արցունքի,
Քանզի նա էր մեծ վշտերից խփում կրծքին ու ծնկին:

Ուշագնաց ընկավ գետին, մարդիկ նրան օգնեցին,
Երբ աչքերը բացեց՝ ասաց. «Բերեք որդուս Սամանդ ձին»:

Բռնեց ձիու գլուխը և կրծքին սեղմեց կարոտով,
Բոլոր մարդիկ ապշել էին՝ աչքերը լի արցունքով:

Մերթ գլուխն էր նա համբուրում, մերթ երեսը նժույգի,
Մերթ շոյում էր սմբակները, երբ իջնում էր նա ծունկի:

Ապա բերեց իր զավակի հագուստները ոսկեգույն,
Մանկան նման գիրկը առավ, որ քուն դնի իր որդուն:

Այնքան արյուն-արցունք թափեց՝ հողը դարձավ ալ ծաղկունք,
Նա արցունքի աչքեր չուներ, այլ արյան հորդ մի ակունք:

Բերել տվեց որդու թուրը, ամուր գուրզը ծանրաքաշ,
Ե՜վ աղեղը, և՜ նիզակը, և՜ վահանը նրբատաշ:

Ապա բերեց ձիու թամբը, սանձափոկը ոսկեզօծ,
Ծանր գուրզով զարկեց իրեն ու տարածեց լացուկոծ:

Այդ բոլորից հետո, երբ նա տեսավ զենք ու սաղավարտ,
Ամբողջ ձայնով աղաղակեց. «Ո՜ւր ես, առյուծ իմ զավակ»:

Ապա բերեց նա պարանը յոթանասուն գրկաչափ,
Փռեց երկար, ինչպես ճամփի վրա ընկած մի վիշապ:

Եվ վերջապես քաշեց սուրը, ամբողջ ուժով նա ճչաց,
Կտրեց ձիու պոչն ու բաշը, որպես սգո մի նշան:

Այնուհետև աղքատներին նա բաժանեց իր որդու
Նժույգները ու սարքերը և սնդուկը լի ոսկու:

Ապարանքի դուռը փակեց ու հարձակվեց կատաղած
Որդու գահը պատվանդանից պոկեց, ապա նետեց ցած:

Նա ավերեց խրախճանքի բազմոցները Սոհրաբի,
Վերջին անգամ որտեղից որ գնացել էր նա մարտի:

Տան դռները վարագուրեց ծածկոցներով սևաթույր,
Եվ իր որդու ապարանքը նա դարձրեց սգատուն:

Ապա հագավ լեղակագույն, սևերիզ կապտաշոր,
Ու շորերը նա թաթախեց արցունքներով մշտածոր:

Գիշեր-ցերեկ արտասվում էր ու հեկեկում ողբալի,
Եվ Սոհրաբի մահից հետո ապրեց հազիվ մեկ տարի:

Նա վերջապես վշտից մեռավ, թողեց աշխարհին այս ունայն,
Անապարեց իր որդու մոտ, վերջին փափագն էր միայն:

Հողաշխարհը նրա համար եղավ հոգս ու վշտի տուն,
Ոչ մի էակ նրա ցավին ուժ չուներ տար օգնություն:

Ծանրակշիռ խոսք է ասել Բահրամ մոգը խորագետ.
«Մեռածներին մի ափսոսա, պիտի գնաս նրանց հետ»:

Այս աշխարհում երկար ապրել դու չես կարող, հավատա,
Եղիր պատրաստ, քանի որ քո վերջին օրը պիտի գա:

Այսպես է միշտ օրենքը այս սրահի կոչված աշխարհի,
Ոչ հայտնի է սկիզբը և ոչ էլ վերջը՝ վախճանի:

Հեռացումի վերջին օրդ նշել է դեռ հայրը քո,
Ժամն է արդեն, որ դու թողնես փուչ սրահը այս անգո:

Ոչ մի գաղտնիք մեզ հայտնի չէ, թե մահն ինչեր է անում,
Անօգուտ է, երբ մթան մեջ բանալի ես որոնում:

Մահվան փակած ամուր դուռը ոչ ոք բացել չի կարող,
Ինչքան էլ որ դու չարչարվես, մեկ է՝ պիտի դառնաս հող:

Ամեն մեկս մի բախտ ունենք, կարճ է ուղին այս կյանքի,
Ոչինչ անել մենք չենք կարող, առանց Տիրոջ մեծ կամքի:

Մի կապվիր դու պանդխտական այս աշխարհին ավերակ,
Քանզի անգութ հողմի նման ավերում է շարունակ:

ՍԻԱՎՈՒՇ

ՆԱԽԵՐԳ

Ավանդական այս վիպերգը այժմ պատմեմ, լսիր ինձ,
Ես այն գրի առա ֆարսի մի դեհկանի պատմածից:

Թե այսուհետ երկար չապրեմ՝ չեմ տրտնջա այս կյանքում,
Քանզի ինձնից մի պտղաբեր ծառ կմնա ճոխ այգում:

Արդ, բոլորից իմ ծերության տարելիցը հիսունութ,
Ավա՜ղ, անցավ անվերադարձ ջահել կյանքը իմ անփույթ:

Շատ ապրելով՝ ագահության ծանր բեռը չի պակասում,
Տարեցույցի, գուշակության հույս-հավատն է այդ ասում:

Տե՛ս, թե ինչ է մեզ քարոզում ձեր մոբեդը խորագետ.
«Անցած կյանքը ետ չի դառնա, մի տվայտիր մտքիդ հետ:

Դու քանի կաս այս աշխարհում, եղիր ուշիմ, իմաստուն,
Քանզի մահը թե լավ, թե վատ՝ թողնում է լուկ Աստըծուն»:

ՔԱՈՒՍ ՇԱՀԸ ԱՄՈՒՍՆԱՆՈՒՄ Է ՍՈՒԴԱԲԵԻ ՀԵՏ

Ծեր մոբեթը այս զրույցը այսպես պատմեց և ասաց.
«Աքաղաղը իր զիլ կանչով ազդարարեց լուսաբաց:

Արքայական ապարանքից ելան երեք ձիավոր՝
Թուսը, Գիվը և Գուդերզը, մեկը մեկից զորավոր:

Դաղույ կոչված հանդից ելան ու մեկնեցին այլ դաշտեր,
Եվ իրենց հետ տարան բազե, և՛ որսի շուն, և՛ աշտե:

Թուրանական սահմանի մոտ կար մշտական որսատեղ,
Իսկ գեղեցիկ որսատեղում՝ թուրք վրաններ շենշքեղ:

Իսկ քիչ հեռու կար մի անտառ, անապատից դեպ այն կողմ,
Ուր թռչում էր Թուսը Գիվի, Գուդերզի հետ ինչպես հողմ:

Թուսն ու Գիվը խիտ անտառում տեսան չքնաղ մի աղջիկ,
Այդ աղջիկը խոր բացատում մոլորվել էր հանց եղնիկ:

«Ասա, ո՛վ ես, ո՛վ լուսնատես», ասաց Թուսը լանջաբաց,
Իսկ աղջիկը Իրանի այդ քաջին դիմեց և ասաց.

«Երեկ հայրս մեր տուն եկավ գինեկործան խնջույքից,
Ու պատյանից քաշեց սուրը ու բարկությամբ ծեծեց ինձ:

Ես ամոթից անտառ փախա... Այստեղ մենակ ու մոլոր,
Ա՛խ, կորցրի մեր տուն տանող ճամփաները ես բոլոր»:

«Ի՛նչ տոհմից ես արդյոք սերում,- դիմեց Թուսը աղջկան,-
Տեսնում եմ, որ դեմքիդ վրա ազնվածին նշան կա...»:

«Գերսիվազի տոհմից եմ ես,– ասաց կույսը սիրատենչ,-
Ֆերիդունի ցեղից նույնպես արյան մասնիկ կա իմ մեջ»:

Թուսը կրկին հարցուփորձեց. «Ոտքով ինչպե՛ս դու եկար,
Ոչ ուղեկից ունես քեզ հետ, ոչ թուր և ոչ երիվար»:

«Ճանապարհի կեսին հոգնեց իմ նժույգը ոսկեսանձ,
Ինձ մոտ նույնպես կար անքանակ թե արդ ու զարդ և թե գանձ:

Բայց ամեն ինչ ինձնից տարան այնտեղ՝ հեռու անտառում,
Սրի կոթով ինձ ծեծեցին, սուրը դրին պատյանում:

Հայրս երբ որ ուշիմ դառնա, գիտեմ, անշուշտ ման կգա,
Նա ձիավոր մարդ կուղարկի, որ գտնեն իր աղջկան»:

Եվ Նուզերյան Թուսը Գիվին ասաց. «Ո՛վ դու, մտերիմ,
Քեզնից առաջ այստեղ եկա, ուստի իմն է այս փերին»:

Գիվը նրան պատասխանեց. «Ո՛վ անվանի փահլևան,
Մենք երկուսով այստեղ եկանք, մենակ չէիր, բարեկամ:

Սուտ խոսելը կտրիճ մարդուն անվայել է, անպարկեշտ,
Մի աղջկա համար քաջը չի խռովի այդպես հեշտ»:

Ու վիճեցին... Բայց ի վերջո եկան հենց այն համոզման,
Որ աղջկա համար պետք է կարել մահվան սև պատան:

Բայց այդ պահին խոր անտառից մի մարդ եկավ, մի միջնորդ,
Թե. «Աղջկան տար Քավուսին, ո՛վ քաջերի առաջնորդ»:

Թուսն ու Գիվը երբ լսեցին առաջարկը այդ մարդու,
Նրան տարան Քավուս շահին իբրև նվեր երկնատու:

Քավուս շահը երբ որ տեսավ գեղեցկադեմ այդ կույսին,
Ծեր աչքերում նսեմացան արև, աստղեր ու լուսին:

Նա իր սիրտը սիրով հյուսեց, ասաց. «Քաջեր անվեհեր,
Լավ է, կարճ էր ձեր նեղության ճանապարհը բարեբեր:

Մեր այսօրը թող անց կենա այս հնավանդ ասույթով.
«Բաշը թեկուզ արև բերի որսի շնով, թակարդով,

Սիրտ գրավող եղնիկ լինի, թե երկնառաք մի փերի,
Նրան պետք է հանձնել շահին, որ աթոռին լույս բերի»:

Ապա շահը դարձավ նրան. «Ո՛վ հրեշտակ դու սիրուն,
Ծնվել ես լոկ սիրո համար, ո՛ւմ տոհմից ես դու սերում»:

«Գերսիվազի ցեղից եմ ես, նա խիզախ է, ռազմավար,
Ե՛վ եղբայրն է Աֆրասյաբի, և՛ Թուրանի նախարար»:

Իսկ Քավուսը ասաց. «Ինչո՞ւ մոլորվեցիր ծմակում,
Դու կարող ես արևի պես փայլել իմ պերճ դղյակում»:

«Երբ քեզ տեսա,- խոսեց փերին,- սերդ թառեց իմ սրտում,
Ողջ աշխարհում քեզնից բացի՝ այլ սեր չունեմ իմ կյանքում»:

Ապա շահը Թուսին, Գիվին և Գուդերզին անվանի,
Տվեց ընտիր երիվարներ, գանձ ու գոհար, մատանի:

Իսկ աղջկան շահը տարավ իր դղյակը ոսկեզօծ,
Ապա նրա ոտքերի տակ փռեց դիպակ ու ծածկոց:

ՍԻԱՎՈՒՇԻ ԾՆՈՒՆԴԸ ԵՎ ՌՈՍՏԱՄԻ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅՈՒՆԸ

Գարնան պայծառ մի առավոտ նորից լսվեց ճիչ, աղմուկ,
Ինը լուսին երբ բոլորեց՝ աշխարհ եկավ մի մանուկ –

Լիալուսնի պես շողշողուն, արևի պես հրեղեն,
Դեռ այդպիսի արքայազարմ ողջ աշխարհում չէր եղել:

«Անվանեցեք,- ասաց շահը,- իմ զավակին Սիավուշ,
Արքայական մետաքսի մեջ պահպանեցեք քնքշանուշ»:

Ապա կանչեց ծեր մոբեթին, որ իր միակ զավակի
Չարն ու բարին և ապագան մեկնաբանի, գուշակի:

Եվ մոբեթը նրան ասաց. «Բախտի աստղը քո որդու
Խառն է այնքան, որ շատ ցավեր պիտի կրես կյանքում դու»:

Այդպես անցավ մի ժամանակ, Ռոստամ-Զալը քաջատոհմ,
Ներկայացավ Քաուս շահին, այսպես խոսեց աղիողորմ.

«Տուր քո որդուն տանեմ Զաբուլ, այնտեղ ունեմ ճոխ դղյակ,
Թող իմ գրկում սնուցանեմ և՛ հայր լինեմ, և՛ դայակ»:

Քաուս շահը երկար խորհեց՝ համաձայնեց այդ մտքին,
Եվ իր միակ որդուն հանձնեց քաջ Ռոստամի խնամքին:

Ռոստամ քաջը հիմնադրեց Նոճու համար մեծ ամրոց,
Իսկ ամրոցի մոտ տարածեց այգի, պարտեզ ու ծաղկոց:

Սիավուշի համար բերեց ընտիր նժույգ ու նիզակ
Եվ ընծայեց Խաթանգ աղեղ, գուրզ ու կապարճ անքանակ:

Ռոստամ-Զալը Սիավուշին ուսուցանեց անդադար,
Թե ինչ կերպ են վարում կռիվ թշնամու դեմ քաջաբար:

Պատմեց ինչ կերպ նետ արձակել, ասաց նրան մեկ առ մեկ,
Ինչպես աշխարհ ղեկավարել, որ չգիտեր նա երբեք:

Սիավուշը հասունացավ... Բայց մրցակից մարդ չկար,
Որ ընձառյուծ որսին աներ մեկ հարվածով նետահար:

Նա Ռոստամին մի օր ասաց. «Հագեցել եմ ուսումից,
Ո՜վ փահլևան, աղաչում եմ Քաուս շահի մոտ տար ինձ»:

Ամրաբազուկ Ռոստամ-Զալը նմանվում էր առյուծի,
Գնաց բազում երամակից ջոկեց, ընտրեց մի լավ ձի:

Այնուհետև նա բաժանեց ոսկեգոտի ու գլխարկ,
Թագ ու կնիք, ընտիր գանձեր և մետաքսե նուրբ դիպակ:

Ու տոնական խրախճանքը տևեց մինչև իրիկուն,
Սիեստանը ու Զաբուլը եկան՝ նրան ճամփեն տուն:

Ռոստամի հետ Սիավուշին ուղեկցում էր բազում մարդ,
Որ մինչև տուն Նոճու սիրտը թեթև լինի ու զվարթ:

Ողջ Իրանը աղաղակեց, զարդարեցին տուն, փողոց,
Ամենուրեք և աղմուկ էր, և ձիերի խրխնջոց:

ՌՈՍՏԱՄԸ ՍԻԱՎՈՒՇԻՆ ԲԵՐՈՒՄ Է ՔԱՈՒՍԻ ՄՈՏ

Լուրը տարան Քաուս շահին, որ գալիս է իր որդին,
Իսկ նա ռազմի թմբուկներով կանչեց Թուսին ու Գիվին,

Թե. «Գնացեք իմ զավակին՝ Սիավուշին ընդառաջ»:
Շահի բոլոր զինվորները հավաքվեցին օր առաջ:

Սիավուշը Ռոստամի հետ եկավ Իրան շահի մոտ,
Դայակ, ծառա և մատռվակ ցանում էին մշկահոտ:

Եվ ամբոխը աղաղակեց, ձայնը հասավ մինչ երկինք,
Կարծես ոչ թե խրախճանք էր, այլ արքայի հարսանիք:

Գահի վրա Քեյ-Քաուսը սպասում էր ժպտերես,
Հակինթակուռ գլխի թագը շողշողում էր լուսնի պես:

Շահը որդուն ամուր գրկեց, ապա դիմեց Ռոստամին,
Նրան սիրո խոսքեր ասաց, կրկին բազմեց իր գահին:

Հիացել էր շահը որդու գեղեցկությամբ վեհազոր,
Իր ապագան նա համարեց լուսավոր ու բախտավոր:

Սիավուշը պատանի էր, բայց այնքան էր գրավիչ,
Որ Քաուսը այսպես մաղթեց. «Ո՛վ մեծազոր Արարիչ,

Դու մահվան տեր և սիրո սեր, ամենատես ու գերող,
Որդուս կյանքը քեզնից բացի՝ ուրիշին տալ չեմ կարող»:

Բոլոր կողմից, ամեն տոհմից մարդիկ եկան բազմահոծ,
Թե զորավար, թե նախարար և թե հմուտ զինագործ:

Քաուս շահը հրամայեց. «Ազատանի և թե ճորտ,
Նիզակներով եկե՛ք, կանգնեք արեգնափայլ որդուս մոտ»:

Հոծ ամբոխը աղաղակով գնաց շահի պարայգին,
Ուր բամբիռը վայնակոծում, ծայնակցում էր պարերգին:

Արքայական այդ խնջույքը տևեց յոթ օր, յոթ գիշեր,
Այդպիսի տոն մինչև այսօր ոչ մի մոբեթ չի հիշել...

Իսկ ութերորդ օրը շահը իր պահեստի դուռը գոց
Բացեց, ապա Սիավուշին տվեց գոտի ու ծածկոց:

Եվ հնդկական սուր ու սուսեր, հանդերձանք ու մատանի,
Բայց իր որդուն թագ չընծայեց, քանզի փոքր էր, պատանի:

Այդպես, շահը Սիավուշին փորձեց ուղիղ յոթ տարի,
Տեսավ բարի ծնունդ է նա, և խելոք է, և բարի:

Ապա շահը իր մոտ կանչեց մեծահամբավ շատ մարդկանց,
Եվ նրանց մոտ որդուն հանձնեց արքայական գահ ու գանձ:

Ասաց. «Այժմ թագի, գահի արժանի է իմ որդին,
Ուստի նրան նվիրում եմ ես մի երկիր թանկագին»:

Արքայական շուք ու կարգով գրել տվեց մի երդում.
«Քեյաստանը պարգևում եմ Սիավուշին՝ իմ որդուն»:

ՍԻԱՎՈՒՇԻ ՄՈՐ ՄԱՀԸ

Սիավուշը նոր էր բազմել Քեյան գահին ոսկեհուռ,
Բայց մոր մահը նրան գցեց որբի նման դռնեդուռ:

Նա վեր կացավ հզոր գահից՝ սրտում բազում ցավ ու խոց,
Ու տարածեց Քեյաստանամ խուլ աղաղակ, լաց ու կոծ:

Դիվահարի պես գոռգոռում ու շորերն էր պատռոտում,
Մերթ բռունցքով կուրծք էր ծեծում, մերթ երեսը ճանկռոտում:

Այդպես, ուղիղ նա մեկ ամիս պահեց երկար սուգ ու վիշտ,
Սիրտը կրծող անհուն ցավից ո՛չ քուն ուներ, ո՛չ հանգիստ:

Գիշտեվազյան Գուդերզը երբ տեսավ Նոճուն թախծամած,
Հառաչանքով, արցունքներով Սիավուշի մոտ գնաց:

Ասաց, «Լսիր, ո՛վ իմ Նոճի, զուր ես այդպես մորմոքում,
Ճիշտ է, մահը ծանր բան է, բայց և այդքան չեն սգում:

Մահից ոչ ոք չի խուսափի, դա օրենքն է աշխարհի,
Ում որ ծնող մայր է բերել նա էլ պետք է որ մեռնի»:

Սիավուշը լսեց բարի խորհուրդները Գուդերզի,
Վիշտը թաղեց հոգու խորքում, որ այլևս չհուզի:

ՍՈՒԴԱԲԵՆ ՍԻՐՈՒՄ Է ՍԻԱՎՈՒՇԻՆ

Քաուս շահը իր որդու հետ ուրախ բազմեց պերճ գահին,
Ապա պալատ մտավ շահի գեղեցկատես թագուհին:

Նա երբ տեսավ Սիավուշին, ընկավ խորը մտքի մեջ,
Ինչպես հսկա սառցի կտոր՝ ընկավ սիրո հուրն անշեջ:

Այնուհետև կանանոցից լուր ուղարկեց Սուդաբեն.
«Ե՛կ Քաուսի կանանոցը, ո՛վ Սիավուշ լուսադեմ»:

Սիավուշը ի պատասխան գրեց նրան մի նամակ.
«Չեմ ցանկանում քո պատճառով դառնալ ծաղրը ու ծանակ»:

Իսկ Սուդաբեն լուսաբացին աճապարեց շահի մոտ,
Ասաց. «Ո՛վ դու աշխարհակալ, իմ արեգակ, իմ կարոտ,

Աշխարհն ամբողջ դեռ չի տեսել Սիավուշի պես զավակ,
Նա սլացիկ սեգ նոճի է, գեղեցիկ է հանց լուսնյակ:

Ասա՛, թող գա իր քույրերին եղբայրական տեսության,
Ե՛ս էլ նրան կմատուցեմ ծառայություն մայրական»:

Իսկ շահը թե. «Ո՛վ Սուդաբե, դու հարյուր մոր սեր ունես»,
Ապա դարձավ Սիավուշին. «Աստված երկար կյանք տա քեզ:

Իմ սիրելի Սիավարշան, իմ միակ սեր ու արյուն,
Դու ծնվել ես սիրո համար, ազնվազարմ իմ կորյուն:

Կանանոցում քույրեր ունես, գնա թող քեզ տան մաղթանք,
Իսկ Սուդաբեն թող հավիտյան քեզ մայր լինի ու պարծանք»:

Քաուս շահի այդ վարմունքից Սիավուշը բարեգութ
Նոր հասկացավ, որ իր հայրը սրտում ունի այլ խորհուրդ:

Եվ քանի որ Սիավուշը հեռատես էր, հասկացող,
Ուստի գտավ, որ խորթ մայրը լավ բան անել չի կարող:

Այդպես, մտքում նա խորհելով դարձավ շահին և ասաց.
«Քո մեծությամբ թագ ու գահի ես տիրացա անկասկած:

Քեզ պես հզոր ոչ մի արքա թագ չի դրել իր գլխին,
Դու ցույց տվիր ինձ գիտության, արդարության ճիշտ ուղին:

Դու ուսուցիր ինձ նետ ձգել, բռնել վահան ու նիզակ,
Թե ինչ կերպ են գոտեմարտում հեծելազոր, հետևակ:

Եվ ուսուցիր ատենական ու շահության կարգ, օրենք,
Խնջույքներում ու որսի տեղ ինչպես պիտի մեզ պահենք:

Գիտեմ, իրոք, կանանոցում չեմ սովորի ես լավ բան,
Ե՛րբ և ո՛վ է կնոջ խելքով եղել ուսյալ գիտնական»:

Շահը նրան պատասխանեց. «Դա խելք ես, իմ որդի,
Ես հպարտ եմ քո գիտությամբ, Աստված թող որ քեզ օգնի:

Ամեն բանում մի կասկածիր, կարողամիտ իմ Նոճի,
Կյանքը ամբողջ փուչ քամի է, իսկ մեր ճամփան երկար չի:

Կանանոցում քույրեր ունես, գեղեցիկ են, սիրասուն,
Իսկ Սուդաբեն ազնիվ մայր է, քո մասին է միշտ խոսում»:

Նոճին ասաց. «Վաղը ևեթ կգամ մոտը արքայի,
Հայրը ինչ որ հրամայի՝ որդին անշուշտ այն կանի»:

ՍԻԱՎՈՒՇԸ ԳՆՈՒՄ Է ՍՈՒԴԱԲԵԻ ՄՈՏ

Ապարանքում կրոնավոր կար ներքինի մի Հիրպետ,
Շահնշահի կանանոցում ուներ ազատ մուտք ու ելք:

Շահը նրան ծածկարանի թաքուն պահակ է կարգում,
Իսկ մի օր էլ շահը կանչեց խորախորհուրդ այդ մարդուն.

«Արևն,- ասաց,- իր շողերը երբ որ քաշի արևմուտք,
Նայիր, տես, թե կանանոցից ով ելք ունի և ով՝ մուտք:

Լսիր ամեն խոսք ու զրույց... Սուդաբեին էլ ասա,
Թող մուշկ ցանեն նաժիշտները, թող բաժանեն ճոխ ընծա»:

Արեգակը աշխարհով մեկ ազդարարեց լուսաբաց,
Սիավուշը մաղթանք տալով՝ Քաուս շահի մոտ գնաց:

Քեյ-Քաուսը իսկույն կանչեց այդ Հիրպետին ներքինի,
Գաղտնածածուկ ասաց նրան. «Բա՛ց աչքերդ, մի՛ քնիր»:

Ապա դարձավ Սիավուշին, ասաց. «Գնա սրա հետ,
Սիրտդ սիրով մխիթարիր, չտրտնջաս այսուհետ»:

Սիավուշը Հիրպետի հետ գնաց հասավ կանանոց,
Այնտեղ տեսավ գեղեցկահյուս թե վարսագույր, թե ծածկոց:

Կանանոցը աղաղակով դիմավորեց սեգ Նոճուն,
Ամեն մեկը ոսկի թափում ու «Սիավուշ» էր կանչում:

Ապարանքը զարդարված էր չինական նուրբ դիպակով,
Ընտիր գինին մատուցվում էր ոսկեճաճանչ բաժակով:

Կանանոցը մի դրախտ էր, մի ճոխ պալատ ոսկեշուք,
Ամեն մի կին գեղեցկավարս մի փերի էր կամ մի կուռք:

Սիավուշը այնտեղ տեսավ փիրուզակուռ գահը մոր,
Որի վրա բազմել էր ճոխ Քաուս շահի կինը նոր:

Նա Եմենի լույս աստղի պես գլխին ուներ ոսկե թագ,
Ուներ նաև բազում նաժիշտ իր մոտ կանգնած գլխահակ:

Լիալուսնի պես Սուդաբեն դրախտային տեսք ուներ,
Ուներ նաև մինչ ոտքերը շորորացող թուխ ծամեր:

Սիավուշը վարագույրը մի կողմ քաշեց, մտավ ներս,
Իսկ Սուդաբեն գահից իջավ ու մոտեցավ քնքշատես,

Սիավուշին ամուր գրկեց ու համբուրեց հրակիրք,
Ապա դարձավ ու ձեռքերը նա կարկառեց դեպ երկինք.

«Ո՛վ երկնային ամենազոր և բախտացույց արարիչ,
Ողջ աշխարհում դեռ չի ծնվել Սիավուշի պես կտրիճ»:

Սակայն Նոճին շուտ կռահեց, թե ինչ սեր էր, ինչ համբույր.
Ուստի նսեմ բան համարեց գահ ու արքա, մայր ու քույր...

Կանանոցում շրթից-շուրթ էր անցնում նման մի զրույց.
«Այս սեգ Նոճուն մարդ չի ծնել, այլ իջել է Աստղծուց»:

Սիավուշը եկավ հոր մոտ, թե. «Ո՛վ Քաուս շահնշահ,
Տեսա շքեղ կանանոցը, քո դղյակը բարձրագահ:

Քեզ համար է տրված կյանքի ամեն բարիք ի վերուստ,
Դու Ջամշիդից, Հուշենգ շահից և՛ հզոր ես, և՛ հարուստ»:

Քաուս շահին շատ դուր եկան պերճ խոսքերը իր որդու,
Ուստի կանչեց արքունական երգիչներին վայերգու:

Ու խնջույքում բամբիռները հեկեկացին վշտաձայն,
Մարդիկ մի պահ քամուն տվին ցավի աշխարհին այս ունայն:

Երբ գիշերը վրա հասավ, շահը գնաց կանանոց,
Այնտեղ տեսավ արքայական ճոխ դիպակներ ու ծածկոց:

Իր կնոջը՝ Սուդաբեին ասաց. «Հիմա ինձ ասա,
Գեղեցկությամբ ո՛վ է արդյոք Սիավուշին հավասար»:

«Ողջ աշխարհում շահից բացի,- պատասխանեց Սուդաբեն,-
Ոչ գիտուն կա, ոչ իմաստուն, ինչո՞ւ պիտի քեզ խաբեմ»:

«Որդիս երբ որ հասունանա,- ասաց շահը թագուհուն,-
Նրան պետք է չար աչքերից տանել հեռո՜ւն, շատ հեռուն»:

Իսկ Սուդաբեն պատասխանեց. «Եթե որդիդ լսի ինձ՝
Նրա համար ես կգտնեմ հարմար աղջիկ քո ցեղից:

Կանանոցում քեզնից ունեմ երեք չքնաղ աղջիկներ,
Թե հավանեց՝ թող կին առնի ազնվածին ցեղից մեր»:

«Մեծությունը իմ անունն է,– ասաց շահը,– ո՛վ իմ կին,
Իմ ուզածն էլ այդ է որ կա, համամիտ եմ քո մտքին»:

Լուսաբացին Նոճին եկավ Քաուս շահի մոտ կրկին
Բազմախոսուն մաղթանք արեց նրա գահին ու թագին:

Շահը նրան մի կողմ տարավ, որ խրատի իր որդուն,
Ուստի ասաց. «Խորախորհուրդ մի փափագ կա իմ սրտում –

Ուզում եմ, որ դու էլ ինձ պես աշխարհին տաս մի զավակ,
Մեզնից ոչ ոք չի ապրելու մշտահավերժ լուսնի տակ:

Մի ժամանակ ինձ այսպիսի խոսք է ասել մի գուշակ,
Թե՝ իմ մահից հետո ինձնից պետք է ծնվի մի զավակ.

Հետնորդ մարդիկ նրա մասին կպահպանեն լավ անուն...
Իսկ դու գտիր հարմար առիթ, եվ տեսության թագուհուն.

Ե՛կ, մտիր իմ կանանոցը, առ քեզ աղջիկ լուսնահեզ,
Քեյ-Փիշանի զարմից նույնպես կին կարող ես առնել քեզ»:

Սիավուշը պատասխանեց. «Ես մի ոստն եմ քո ցեղի,
Որդին հոր դեմ ինչո՞ւ պիտի հակառակի անտեղի:

Բայց Սուդաբեն եթե լսի՝ քեզ համաձայն չի լինի,
Կանանոցում ես գործ չունեմ, այլ ցանկություն նա ունի»:

Շահը որդուն երբ որ լսեց, նայեց նրան ու ժպտաց,
Նա տեղյակ չէր, որ հարդի տակ կա կործանող ջուր կանգնած:

Ուստի որդուն այսպես ասաց. «Ինքդ գտիր հարսնացու,
Սեր է տածում նա մայրական, ես ուրիշ բան չեմ կարծում»:

Շահի բարի այդ խորհրդից ուրախացավ սեգ Նոճին,
Եվ որոշեց, որ իր սրտից կասկածները միշտ ջնջի:

Սակայն ներքուստ համոզված էր, որ չի լռի մայրը խորթ,
Որովհետև բախտը իրեն աշխարհի բերեց որպես որբ:

Այդպես, գիտեր, որ իր կյանքում դառը օրեր կքաշի,
Ուստի հույզից սիրտն էր նեղվում, տրաքվում էր իր կաշին:

ՍՈՒԴԱԲԵԻ ԵՐԿՐՈՐԴ ՀՐԱՎԵՐԸ ՍԻԱՎՈՒՇԻՆ

Գիշերն անցավ խոսք-զրույցով, մինչև բացվեց արշալույս,
Արշալույսին արեգակը երկրին տվեց շող ու լույս:

Արքայական գահին բազմեց գեղեցկադեմ Սուդաբեն,
Հակինթակուռ թագը նրա շողշողում էր հանց եդեմ:

Նրա շուրջը բոլորեցին բազում ճորտեր, նաժիշտներ,
Ու թագուհու ապարանքը դրախտային տեսք ուներ:

Նա Հիրպետին կանչեց իր մոտ, ասաց. «Ով մարդ հեռատես,
Գնա Նոճուն ասա՝ թող գա վեհությունը ցույց տա մեզ»:

Լուրը հասավ Սիավուշին, և նա իսկույն կռահեց,
Թե ինչ բախտի աստղ պիտի փայլի իր ողջ կյանքի մեջ:

Այնուհետև եկավ շահի կանանոցը պերճաշուք,
Տեսավ գահի վրա բազմած գեղեցկուհուն, ինչպես կուռք:

Ու թագուհին գահից իջավ, եկավ նրան ընդառաջ,
Նա պերճանքի մեջ առավել գեղեցիկ էր, քան առաջ:

Սիավուշը գնաց, բազմեց Սուդաբեի դեմ-դիմաց,
Իսկ թագուհին իր ձեռքերը թեզանիքի մեջ դրած,

Ասաց. «Նայիր կանանոցի աղջիկներին լուսահեզ,
Դեռ այր մարդու ձեռք չի կպել, տե՛ս, թե որն է վայել քեզ:

Մեկը մեկից գեղեցիկ է, և՛ հեզանազ, և՛ պարկեշտ,
Ամոտանկան քո գործերը թեթևացան այսքան հեշտ»:

Կանանոցում Սիավուշին հավանեցին կին թե կույս,
Ամեն աղջիկ իր մեջ ուներ ամուսնության մի վառ հույս:

«Լուսնից անգամ գրավիչ է այս սեգ Նոճին վերսլաց»,
Ամեն մեկը սրտի խորքում սիրանվեր խոսք ասաց:

Աղջիկները երբ հեռացան, այնժամ ասաց Սուդաբեն.
«Ի՞նչ նպատակ ունես մտքում և ի՞նչ գաղտնիք՝ չգիտեմ,

Բայց դստրերս ասում են, թե՛ դու իջել ես երկնքից,
Դու բոլորին հմայեցիր, կախարդեցիր նաև ինձ:

Ջոկիր իմ հեզ աղջիկներից քեզ սիրելի հարսնացու,
Քո երջանիկ կյանքը սիրով ապավինիր Աստըծուն»:

Սիավուշը շվարել էր ու չգտավ պատասխան,
Մտքում ասաց. «Այս վիճակում լռությունը լավ է, քան

Մաքուր հոգիս կեղծ խոսքերով նվիրեմ նենգ թշնամուս...
Սուդաբեի խարդախ հայրը բազում անգամ Թուրանում

Կեղծ խաղերով ու դավերով, անկշտում ու արնախում,
Քանի՛-քանի՛ իրանական քաջեր դրեց դագաղում:

Նրա դուստր չար Սուդաբեն, հաստատ գիտեմ, անտեղի
Քամուն կտա կամ կավերի գոյությունը մեր ցեղի»:

Իսկ Սուդաբեն դեմքի քողը մի կողմ նետեց և ասաց.
«Ինչո՞ւ Նոճին իմ նկատմամբ և վախ անի, և կասկած:

Ոչ ոք բնավ չի զարմանա, եթե արևն ու լուսին
Քեյան շքեղ գահի վրա բախտավորվեն միասին:

Մի խուսափիր իմ պայմանից, ասա, ի՞նչ ես կամենում,
Տար աղջիկս, թող կին լինի քո ապագա հարեմում:

Քաուս շահի մահից հետո քոնն է նրա թագը մեծ,
Դու կբազմես ոսկեկառույց Քեյան գահին աստղամերձ:

Սիրանվեր հոգիս մի թող քեզնից հեռու, միայնակ,
Ինձ պահպանիր արքայական վսեմաշուք ձեռքիդ տակ:

Ես իմ հոգին ու մարմինը քեզ եմ տալիս, նվաճիր,
Առանց սիրո ես կյանք չունեմ, մի՛ մերժիր ինձ, ո՛վ Նոճի»:

Եվ Սուդարեն այդ ասելով՝ ամուր գրկեց, համբուրեց,
Ու ամոթից Սիավուշի նուրբ երեսը կարմրեց:

Նա աչքերով արցունքամած միտք էր անում գլխահակ.
«Կորչեմ պիտի ես աշխարհում դևի ձեռքից այս անհագ:

Ես իմ հորը ոչ կանարգեմ, ոչ կդավեմ նրա դեմ,
Եվ ոչ էլ իսկ Ահրիմանի այս վհուկի հետ կապրեմ:

Իսկ թե մերժեմ՝ անշուշտ իմ դեմ նոր որոգայթ կլարի,
Ու Քաուսի լույս ճրագը իր նենգ ձեռքով կմարի:

Լավ է, որ ես սրան խաբեմ կեղծ խոսքերով, հույսով սին»:
Ուստի ասաց. «Ինչ են քո դեմ և՛ արեգակ, և՛ լուսին:

Դու հարմար ես Քաուս շահին, ով թագուհի գեղանի,
Թող քո կամքով լույս դստրիկդ ինձ սրտակից կին լինի:

Իմ պայմանի մասին հայտնիր Քաուս շահին մեկուսի,
Լեզուս քեզ մոտ գրավական, երբեք քեզ չեմ բամբասի:

Բայց քո սերը ծածուկ պահիր ու չհայտնես ոչ ոքի,
Դու և՛ մայր ես, և՛ թագուհի, իմ հավատն ու իմ հոգին»:

Սիավուշը անմիջապես կանանոցից ելավ դուրս,
Ու դղյակում Սուդաբեին թողեց մենակ ու անհույս:

Բայց Սուդաբեն կեղծ խոսքերով դիմավորեց Քաուսին,
Սուսկ մնալով ապագայի խարդախության մեծ հույսին:

Ասաց. «Ո՛վ շահ, Սիավուշը եկավ, տեսավ իմ դստեր,
Համաձայնեց ամուսնության, բայց ասաց, թե՝ շուտ է դեռ»:

Քաուս շահը կնոջ խոսքից ուրախացավ ի սրտե,
Գնաց ընտրեց գանձարանից նվեր՝ ոսկե, արծաթե:

Իսկ Սուդաբեն դեռ զարմանքից մնացել էր լուռ, շվար,
Եվ մտքի մեջ որոնում էր նոր-նոր դավեր ու հնար:

Ուստի մտքում այսպես խոսեց. «Եթե նորից ինձ մերժի –
Մահը աչքիս առաջ կառնեմ, թեկուզ շահը ինձ պատժի:

Միևնույն է, ես նրա դեմ կլարեմ նոր որոգայթ,
Ինչ որ մարդկանց մինչև հիմա և հայտնի է, և անհայտ»:

ՍՈՒԴԱԲԵԻ ԵՐՐՈՐԴ ՀՐԱՎԵՐԸ ՍԻԱՎՈՒՇԻՆ

Ու թագուհին եկավ կանգնեց հզոր գահի առաջին,
Գլխին դրած ոսկեպսակ ու հակինթներ ականջին:

Երրորդ անգամ Սիավուշին իր մոտ կանչեց և ասաց.
«Քաուս շահը պատրաստել է քեզ համար թագ, գահ ու գանձ:

Այդքան պերճանք մինչև այժմ չի ընծայել նա երբեք,
Թե ցանկանաս բեռ պատրաստել՝ երկու հարյուր ուղտ է պետք»:

Համաձայն եմ, առ աղջիկս քեզ սիրելի հարսնացու,
Բայց քեզ սիրող կինը ես եմ, սիրտս ցավով մի լցրու:

Անգթաբար մի հեռանա սրտանվեր իմ սիրուց,
Քանզի գիտես, որ քեզ պաշտում ու սիրում եմ շատ վաղուց:

Սրտիս վերքից ցերեկն անգամ ինձ թվում է մութ գիշեր,
Արուսյակի շողերն աչքիս միշտ թվում են սև փշեր:

Յոթ տարի է սիրում եմ քեզ, գեթ համբուրիր մեկ անգամ,
Տե՛ս, իմ դեմքից սեր է կաթում, թող կարոտով գիրկդ գամ:

Քաուս շահը քեզ տալիս է բազմաքանակ ճոխ ընծա,
Բայց հասկացիր, իմ նվերից ողջ աշխարհը կցնծա:



Իսկ եթե իմ խորհուրդները և պայմանը դու մերժես,
Չեմ թողնի, որ մոտ գաս գահին, անչափ տանջանք կտամ քեզ:

Այնքան դաժան պատիժ կտամ, որ տալիս են ստրուկին,
Որ սոսկումից արևն անգամ կխավարի քո աչքին»:

Սիավուշը պատասխանեց. «Այդպիսի բան չեմ անի,
Սիրո համար սուրբ հավատս քամուն չեմ տա, որ տանի:

Ես չեմ կարող ծանր մեղքեր գործել Քաուս շահի դեմ,
Քեզ հարազատ մայր եմ կոչում, ո՛վ Սուդաբե լուսնադեմ:

Քաուս շահի կնոջ հանդեպ մոր սեր ունեմ և հարգանք,
Ուստի նրա պատվի հանդեպ չեմ գործի ես մեծ հանցանք»:

Իսկ Սուդաբեն կատաղությամբ գահից իսկույն իջավ ցած,
Ձեռքը մեկնեց Սիավուշին, այսպես խոսեց և ասաց.

«Սրտիս ամեն մի գաղտնիքը քեզ պատմեցի, ո՛վ Նոճի,
Սակայն սիրո փոխարեն ինձ հավասարիր ոչնչի»:

Այդ ասելով նա տարածեց դիվահարի լաց ու կոծ,
Աղաղակի ձայնը հասավ ապարանքից մինչ փողոց:

ՍՈՒԴԱԲԵՆ ԽԱԲՈՒՄ Է ՔԱՈՒՍ ՇԱՀԻՆ

Աղաղակի, լաց ու կոծի ձայնը հասավ Քաուսին,
Իր մեծության գահից գնաց՝ տեղեկանա այդ մասին:

Քեյ-Քաուսը տեսավ կնոջ պերճ ծիրանին ճղատած,
Նրա սրտում ծագեց ինչ-որ խորհրդավոր մի կասկած:

Հարցափորձեց, բայց չգտավ որն է սխալ, որը՝ ճիշտ
Ու չիմացավ, թե Սուդաբեն ինչ ցավ անի և ինչ վիշտ:

Իսկ թագուհին Քաուսի մոտ թափեց աղի արտասուք,
Ասաց. «Շահը գիտե՞ արդյոք ինչ վիշտ ունեմ և ինչ սուգ:

Սիավուշը եկավ այստեղ՝ տեսավ ինձ մեն ու մենակ,
Ու բռնությամբ գիրկը առավ, աչքերում կիրք ու կրակ:

Թե. «Սուդաբե,- ասաց նա ինձ,- ես ուրիշին չեմ սիրում,
Ջահել կյանքս մի՛ խորտակիր, հոգիս քեզ եմ նվիրում...»:

Տե՛ս, շորերս պատառոտեց, թագս նետեց դրան մոտ,
Ո՛վ Քաուս շահ, Սիավուշը ոչ գութ ունի, ոչ ամոթ»:

Այդ խոսքերից շահը սուզվեց խոր մտքերի ծովի մեջ,
Մտքում ասաց. «Այս արարքը պիտի տանջե ինձ անվերջ:

Սիավուշին չեմ ների ես, կգլխատեմ իմ ձեռքով,
Դավաճանը պետք է մեռնի արքայական օրենքով:

Խելոք մարդիկ բայց չե՞ն ասի իմ արածին հակառակ –
Բամբասանքի զոհ դարձրեց շահը՝ որդուն իր միակ»:

Կանանոցից դուրս գնացին ծառա, նաժիշտ ու հիրավետ,
Շահը կանչեց, որ մեկոսի խոսի որդու, կնոջ հետ:

Ու բարբառեց. «Ասա, որդիս, ի՞նչ գաղտնիք կա քո սրտում,
Ճի՞շտ են արդյոք այս բոլորը, թե՞ չար մարդիկ են ստում:

Ուղարկեցի կանանոցը, սխալվեցի չարաչար,
Հիմա դարձար ամբոխի մեջ բամբասանքի դու պատճառ:

Պատմիր լսեմ իսկությունը, ինձ դարձրիր սևերես,
Ասա, քեզ հետ ի՞նչ պատահեց, որ կորցրիր ինքդ քեզ»:

Սիավուշը պատմեց նրան իսկությունը մեկ առ մեկ,
Իսկ Սուդաբեն պատասխանեց. «Ճիշտ չէ խոսում նա երբեք:

Ինձնից բացի աղջիկներիս ձեռք չմեկնեց քո որդին,
Անտարակույս չի ցանկանում, որ ես լինեմ շահի կին:

«Ո՛վ Սուդաբե,- այսպես խոսեց,- ես աղջիկ չեմ պահանջում,
Գիշեր-ցերեկ քեզ համար եմ լոկ աղոթում, հառաչում»:

Այնուհետև Սիավուշը ամուր սեղմեց ինձ կրծքին,
Ծանր քարի պես ճնշելով՝ քանդեց, պոկեց իմ գոտին:

Իմ արգանդում Քեյան ցեղի նոր պտուղ է խլրտում,
Բայց քո որդին այնպես սեղմեց՝ որ ես վիժեմ իր գրկում»:

Շահը մտքում այսպես խորհեց. «Մի գաղտնի բան կա այստեղ,
Այս խճճված թելի համար պետք է գտնել նոր ասեղ:

Լավ է մի քիչ համբերատար ես հապաղեմ այս հարցում,
Վատ վիճակի մեջ ընկածը անմիտ բաներ է գործում:

Եվ ի վերջո նա չի կարող գալ հաստատուն համոզման,
Թե ո՛ւմ պիտի դատապարտի, ո՛ւմ ազատի անպայման:

Այս գաղտնիքը պետք է բացեմ, որ հարթ լինի իմ ուղին,
Ում մեղավոր ճանաչեցի՝ նրան կտամ սև հողին»:

Այնուհետև նա հոտոտեց Սիավուշի կուրծքը բաց,
Ոչ մերձեցման մի բան գտավ, ոչ կասկածի խոսք ասաց:

Բայց թագուհուց սրտահաճո հոտ էր գալիս բուրավետ,
Ուստի շահը մտածեց, որ մի կապ ունի որդու հետ:

Խստահայաց, կասկածանքով նայեց դաժան թագուհուն,
Մտքում ասաց. «Սրան պետք է մաս-մաս անել, տալ քամուն»:

Բայց դառնությամբ նա վերհիշեց Համավերան հողը պիղծ,
Ասաց. «Ինչո՛ւ լարեմ նորից քեն, որոգայթ հանդեպ ինձ...»:

Եվ երկրորդը՝ Սուդաբեին նա սիրում էր կույրի պես,
Իսկ երրորդը՝ ուներ չքնաղ երեք աղջիկ լուսնահեզ:

Քաուս շահը մտքում ասաց. «Որդիս ճիշտ է ու խելոք,
Այս գաղտնիքը, ինձնից բացի, թող չիմանա էլ ոչ ոք»:

ՍՈՒԴԱԲԵԻ ԴԱՎԱՃԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՍԻԱՎՈՒՇԻ ԴԵՄ

Երբ Սուդաբեն նսեմացավ, խայտառակվեց շահի մոտ,
Նոր հասկացավ, որ ապագա ճամփան նեղ է, խորդուբորդ:

Ուստի կրկին հնար գտավ, որ լարի նոր որոգայթ,
Սիավուշի դեմ սերմանեց մահու, քենի նոր արմատ:

Քաուս շահի կանանոցում ապրում էր մի կախարդ կին,
Նա արգանդի սաստիկ ցավից բողոքում էր ամենքին:

Այդ կնոջը գաղտնածածուկ իր մոտ բերեց Սուդաբեն,
Ու երկուսով պայման արին՝ շահին կեղծեն ու խաբեն:

Շահի կինը այդ վհուկին տվեց արծաթ ու ոսկի,
Ասաց. «Այնպես պետք է գործես, որ քեզ ոչ ոք չհսկի:

Դու այս գիշեր քո ամուսնուց առանձնացիր մի այլ տեղ,
Եվ ազատիր քո արգանդը՝ խմիր գաղտնի վիժման դեղ:

Ամեն կողմից իմ գլխին են թափում հազար ամոթանք,
Ինձ ազատիր կործանումից, իմ միակ հույս ու մաղթանք:

Շահին կասեմ՝ ժամանակից շուտ վիժեցի երեխադ,
Եվ այսպիսով նրա սրտում կսերմանեմ քեն ու խանդ:

Թող այս մեղքը Սիավուշի հոգին, սիրտը հար կրծի,
Հապաղումը օգուտ չի տա, արագ անցիր դու գործի:

Եթե այժմ դու ինձ չօգնես՝ կրաժանեն Քաուսից,
Ինձ կանվանեն խաբեբա կին, զուրկ՝ պատվից ու նամուսից»:

Կինը նրան պատասխանեց. «Իմ թագուհի, իմ պայծառ,
Այսօրվանից ես կդառնամ քենի պտուղ, թույնի ծառ»:

Հենց նույն գիշեր այդ ջադուկը վիժեց երկու երեխա,
Դևից անշուշտ դև կծնվի, ոչ թե կտրիճ կամ իշխան:

Շահի կինը ծածուկ պահեց դև կնոջը կռապաշտ,
Անմիջապես իր մոտ դրեց արքայական ոսկե տաշտ,

Ու տաշտի մոտ անփութորեն ընկավ գետին դառնակոծ,
Նրա ձայնը ապարանքից հասավ նույնիսկ մինչ փողոց:

Կանանոցում կին ու աղջիկ ճչում էին, աղմկում,
Եվ թագուհու կյանքի համար երկրպագում Աստծուն:

Քաուս շահը քնից ելավ ծանրաբարո ու խոհուն,
Եվ մտածեց՝ մի վատ բան է եղել անշուշտ թագուհուն:

Սուդաբեի դժբախտության լուրը տարան Քաուսին,
Սակայն նա ոչ հարցուփորձեց և ոչ խոսեց այդ մասին:

Լուսաբացին կանանոցում ոչ շարժում կար, ոչ աղմուկ,
Ուստի շահը գնաց, տեսավ տաշտի միջին զույգ մանուկ:

Իսկ Սուդաբեն լաց ու կոծով ասաց նրան վշտակեզ.
«Նայիր և տես, թե իմ գլխին ինչ ցավ եկավ մշտապես:

Անվանեցիր ինձ ստախոս, եղար որդուդ դու պաշտպան,
Ա՜խ, իմ օրը սևով պատեց, խորտակվեց իմ ապագան»:

Այնուհետև Քաուս շահը թողեց կին ու կանանոց,
Որ միայնակ որոշի թե՝ ինչ ելք գտնի, ինչ միջոց:

ՄՈԲԵԴՆԵՐԸ ԳՈՒՇԱԿՈՒՄ ԵՆ ԵՐԿՎՈՐՅԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Քաուս շահը բազմեց Քեյան հզոր գահին երկնաթագ,
Ասաց. «Իսկույն ինձ մոտ բերեք ծեր մոբեդին իմ գուշակ»:

Այնուհետև նա զրուցեց մոբեդի հետ բանիմաց,
Կնոջ մասին խելոք մարդուն գաղտնածածուկ խոսք ասաց:

Իսկ մոբեդը շահին հայտնեց, որ խաբեբա Սուդաբեն
Մի հինավուրց վրեժ ունի Քաուս շահի որդու դեմ:

Եվ կեղծիք են այդ նորածին մանուկները երկվորյակ...
Քաուս շահը ասաց. «Մոբե՛դ, միտքդ պահիր լեզվիդ տակ»:

Ճախարակը պտույտ գործեց, անցավ ևս մի շաբաթ,
Մոգը հայտնեց. «Միևնույն է, երբ թույն լցնես մի գավաթ

Եվ ասես, որ պարզ գինի է... Ես այլ բան եմ գուշակում,
Որովհետև երկվորյակը շահի տոհմից չէ ծագում:

Եթե շահի արյուն լիներ՝ աստղացույցը կասեր մեզ,
Ոչ էլ անգամ մի մասնիկ կա քո թագուհուց լուսնահեզ»:

Եվ մոբեդը ի ցույց բերեց ճիշտ նշանը այդ կնոջ,
Ասաց. «Շահին անպատվողը կենդանի է և առողջ»:

Իսկ Սուդաբեն Քաուս շահի աթոռանիստ դղյակում
Պահանջում էր արդարություն, արտասվում էր, աղմկում:

«Ո՛վ տեր Աստված,- երկրպագեց,- թող ինձ շահը գլխատի,
Բայց նախքան այդ՝ ցանկանում եմ մեղավորին նա դատի:

Իմ վիժածին մանուկների համար եմ ես միշտ սգում,
Սակայն շահը չի հավատում, գի գութ չունի իր սրտում»:

Քաուս շահը նրան ասաց. «Անմիտ բաներ մի ասիր,
Ոչ անեծք եմ ուզում լսել, ոչ լավ խոսքեր իմ մասին»:

Անմիջապես հրամայեց. «Փակել ամեն մուտք ու ելք,
Իսկ քաղաքի դարպասներին դնել ամուր, մեծ կողպեք»:

Արքունական պահնորդները փնտրում էին, տնտղում,
Եվ ջադուկին գտան ինչ-որ գաղտագողի մի տեղում:

Քաուս շահը հարցափորձեց այդ կնոջը անառակ,
Եվ խոստացավ, որ կընծայի ոսկե գանձեր անքանակ:

Համառ կինը ոչինչ չասաց, կարծես խուլ էր, համր էր նա,
Ուստի նրան Քաուս շահը տանջեց դաժան, անխնա:

Բայց տանջանքից հետո դարձյալ կինը չասաց ոչ մի բառ.
«Կախեք սյունից,- ասաց շահը,- չար կնոջը այդ համառ»:

Եվ կնոջը ի ցույց տվին սուր ու սուսեր մահաջինջ,
Կախաղանի սյուն ու պարան և սուր կացին ու դահիճ:

Այնժամ ասաց. «Ինձ մի տանջեք, ես անմեղ եմ, անտեղյակ,
Ինչ որ ասեմ՝ հիմարության խոսք կլսեք մի դատարկ»:

Քաուս շահը խիստ զայրույթից իր մոտ կանչեց թագուհուն,
Նաև բերեց ծեր մոբեդին՝ ամենագետ ու խոհուն...

Ասաց. «Մեկնիր, ո՛վ դու գուշակ, իսկությունը այս գործի,
Որ այսուհետ ոչ մի վհուկ մեզ զրպարտել չփորձի»:

Մոգը խոսեց. «Չար կնոջը գամիր սյունին աններում,
Նա անպատվեց քո մեծ գահը և անմեղ է ձևանում»:

Իսկ Սուդաբեն, թե. «Ով Քաուս, այս մոբեդը արտաքուստ
Քեզ լիահույս պատճառ բերեց, բայց նենգվում է ի ներքուստ:

Սոսկում է սա Սիավուշից և Ռոստամի անունից,
Ռոստամ-Զալը փղի ուժով գետ է շրջում իր հունից:

Կռվի ահեղ մենամարտում ոչ ահ անի, ոչ կորուստ,
Համայնաջինջ իր քաջերը ոչ մահ գիտեն, ոչ փախուստ:

Իսկ ինձ այժմ ոչ օգնող կա, ոչ էլ ունեմ մի նեցուկ,
Օր ու գիշեր իմ աչքերից միշտ հոսում է արտասուք:

Աղաչում եմ, չարախորհուրդ այս մոբեդին մի լսիր,
Գիտեմ, Ռոստամ-Զալի ահից իսկությունը չի ասի:

Ով Քաուս շահ, քեզնից ունեմ երեք աղջիկ դեռատի,
Ավանդապահ Քեյան գութ եմ տեսնում քո մեջ եռակի:

Վայրիվերո, սին խոսքերը ալեկոծեց քո հոգին,
Գիտեմ, դու ինձ կուզես մեկեն վերջ տալ թշվառ իմ կյանքին»:

Այդ ասելով՝ նա աչքերից թափեց արցունք հորդահոս,
Նա լալիս էր ու հեծեծում, ինչպես պղտոր մի Նեղոս:

Քաուս շահը մտամոլոր առանձնացավ կնոջ հետ,
Որ որոշի, թե իր գլխին ինչ մոխիր տա այսուհետ:

Նա շտապփույթ իր մոտ կանչեց մոբեդներին շրջակա,
Պատմեց նրանց և խոստացավ, թե իր սրտում ինչ վիշտ կա:

Ամենագետ մի ծեր մոբեդ նրան ասաց. «Ո՛վ արքա,
Կեղտ մաքրելու համար պետք է ձեռքում պահել կայծաքար:

Այս աշխարհում ունես միակ արու զավակ քեզ հետնորդ,
Բայց տարաբախտ որդուդ ճամփան դժվարանց է, խորդուբորդ:

Իսկ մի կողմից սիրում ես դու թուրանածին թագուհուն.
Եվ քանի որ այդ երկուսի խոսքը մեկ չէ, միևնույն,

Մեկը պետք է երդման համար անցնի մեր սուրբ կրակով,
Որ իմանաս, թե հանցանքը կատարվել է ում մեղքով»:

Քաուս շահը իր մոտ կանչեց և՛ թագուհուն, և՛ որդուն,
Թե՝ «Առայժմ ես չգիտեմ ո՛վ է ձեզնից ինձ խաբում»:

Իսկ Սուդաբեն պատասխանեց. «Իմ ասածն է ճշմարիտ,
Ինձ անպատվեց, բայց փորձում է այժմ խաբել արքային:

Հանցավորը քո որդին է, տարեք դեպի սուրբ կրակ»:
Իսկ Քաուսը այսպես խոսեց. «Դու ի՛նչ կասես, իմ որդյակ»:

Սիավուշը պատասխանեց. «Ո՛վ մեծազոր թագավոր,
Սուրբ օջախով եթե չանցնեմ՝ ինձ համարիր հանցավոր»:

Քաուս շահի հոգում իջավ մի խոր թախիծ ծանրակիր,
Քանզի որդին հոր արյունն էր, իսկ Սուդաբեն՝ սիրտը իր:

Ուստի մտքում ասաց. «Այժմ ո՛ւմ կորցնեմ, ո՛ւմ պահեմ,
Ինձ ո՛վ կասի, որ այսուհետ արդարադատ մեծ շահ եմ:

Բյուրակործան այս դիպվածին ո՛վ պիտի տա պատասխան...
Ա՜խ, ինչո՞ւ եմ սիրտ պղտորում ու հառաչում ես այսքան:

Մի իմաստուն ասել է, թե՝ «Ում սրտում որ կա մեծ վերք,
Նա չի կարող իշխան լինել, իսկ շահնշահ՝ օ՜, երբեք»:

Երբ այս վեպը լավ կլսես, էլ մի անսա դու կնոջ,
Քանզի կինը թշվառության չար աղբյուր է մի ամբողջ:

Կին ու վիշապ, այդ երկուսով լավ է թաղվեն հողի տակ,
Որ աշխարհը նենգ ու դավից մաքուր լինի ու շիտակ:

ՍԻԱՎՈՒՇԸ ԱՆՑՆՈՒՄ Է ԿՐԱԿԻ ՄԻՋՈՎ

Քաուս շահը այնուհետև առաջարկեց մի պայման.
«Անապատից իսկույն բերել հարյուր աղտ ու ուղտապան»:

Քարավանը անտառ գնաց, փայտ բերեցին բարձրադեզ,
Ապա եկան կին, տղամարդ, հավաքվեցին ասպարեզ:

Փայտակույտը վեր բարձրացավ ինչպես երկու հսկա սար,
Իսկ Սուդաբեն ուրախ էր, որ նպատակին իր հասավ:

Փայտի դեզի միջնամասով կար նեղանցում ճանապարհ,
Որ հազիվհազ գուցե անցներ մի ճեպընթաց երիվար:

Հոծ ամբոխից առանձնացան երկու հարյուր տղամարդ
Ու նավթ բերին, բորբոքեցին մի թեժ խարույկ հրավարդ:

Աստղազարդ տիեզերքը ծխի ամպից սևացավ,
Արեգակի լույսը անգամ օր-ցերեկով վերացավ:

Սիավուշը ասպանդակեց իր նժույգը սևաթույր,
Ասպարեզը պայտի փոշին ծածկեց, ինչպես վարագույր:

Նա սպիտակ իր շորերը համարում էր լոկ պատանք,
Իսկ կրակը՝ ամենակուլ մահվան ճամփա ու կապանք:

Մտամոլոր Քաուս շահին երբ մոտեցավ իր որդին,
Աշխարհազոր հետևակը ծունկի իջավ մինչ գետին:

Ամաչելուց շահի դեմքը կրակի պես շիկացավ,
Որդուն հազար մաղթանք արեց ջերմ խոսքերով սրտացավ:

Սիավուշը այսպես խոսեց, «Մի՛ մտածիր, ո՛վ արքա,
Ժամանակի այս պտույտից ազատման այլ հույս չկա:

Ես ծնվել եմ, որ գլուխս դնեմ զոհի սեղանին,
Բայց իմացիր՝ Աստված երբեք չի խնայի չար դևին»:

Այնուհետև գլխին դրեց մի սաղավարտ լուսնաշող,
Մեջքին կապեց արքայական ամուր գոտի ոսկեօղ:

Ու ձեռքերը տարածելով՝ սրտակեղեք խոսք ասաց.
«Ինձ բոցեղեն այս կրակից տուր ազատում, ո՛վ Աստված»:

Ապա սուզվեց կրակի մեջ հրասմբակ նրա ձին,
Ականջ չարավ ասպարեզի մարդկանց լացին ու կոծին:

Բայց կրակից Սիավուշը նորից ելավ ասպարեզ,
Դեմքը ցողած վարդի գույնով, շրթին՝ ժպիտ սրբահեզ:

Ու ամբոխի միջից ելավ աղմուկ, բողոք մի արդար,
Ամեն կողմից գոչում էին՝ «Ահա շահը մեր ճարտար»:

Երբ կրակից ազատվեցին Սիավուշը և իր ձին,
Նրան թվաց, թե կրակը ալ ծաղիկ է աստղածին:

Աղմկարար ժողովուրդը մեծարում էր հաղթողին,
Ամեն կողմից գոչում էին՝ «Աստված օգնեց անմեղին»:

Իսկ Սուդաբեն բարկությունից խոպոպներն էր գզգզում,
Կանանոցի սրահներում գոռգոռում էր, վազվզում:

Սիավուշը մաքուր սրտով եկավ կանգնեց իր հոր մոտ,
Ոչ փոշի կար նրա վրա, ոչ իսկ ծխի դառնահոտ:

Արքայական զորագունդը իջավ ձիուց շահի հետ,
Շահը որդուն ասաց՝ «Ների՛ր», և արտասվեց դառնաղետ:

Սիավուշը մաղթանք արեց ամենատես արարչին,
Որ բարությամբ ականջ դրեց իր ողբագին հառաչին:

«Ով քաջատոհմ Սիավարշան,- ասաց շահը իր որդուն,–
Աստված թող քեզ ուժ պարգևե, մտքի կորով՝ մշտարթուն»:

Այդ ասելով շահը գնաց բազմեց հզոր իր գահին,
Հրամայեց՝ որդու համար խնջույք սարքեն այդ պահին:

Շահը բերեց վին ու բամբիռ, գինի, երգիչ, երաժիշտ,
Ե՛վ մատռվակ, և՛ աղախին, մենապարող ու նաժիշտ:

Երեք օր ու երեք գիշեր կատարեցին խրախճանք,
Ոչ ոք չասաց, թե պահեստի դռան վրա կար փականք:

ՔԱՈՒՍ ՇԱՀԸ ԲԱՐԿԱՆՈՒՄ Է ՍՈՒԴԱԲԵԻ ՎՐԱ

Քաուս շահը իր մեծության գահից իջավ սրտնեղած,
Սուդաբեին կանչեց իր մոտ ու բարկության խոսք ասաց.

«Չէի կարծում, որ իմ կինը անազնիվ է, անպարկեշտ,
Այսքան տարի չկար մեկը, որ ինձ խաբեր այդպես հեշտ:

Ի՞նչը դրդեց, որ այսպիսի խաղ խաղացիր անխոհեմ,
Եվ հարազատ հայր ու որդու գրգռեցիր իրար դեմ:

Նույնիսկ գութի նշույլ չկա և մայրական քո սրտում,
Որ զրպարտել ու խորտակել դու ցանկացար իմ որդուն:

Այսուհետև իմ կինը չես, այդ է դատը Աստըծու,
Մարդիկ ինձնից պահանջում են արդարացի հատուցում»:

Իսկ Սուդաբեն պատասխանեց. «Քեզ խաբում են շարունակ,
Քո խստաշունչ խոսքերի մեջ արդյոք չկա՞ մի կատակ»:

Քաուս շահը դարձավ դեպի ասպարեզի հոծ մարդկանց,
Ասաց. «Այժմ ի՞նչ պատիժ տամ այս վհուկին, ո՛վ Աստված»:

Բոլոր մարդիկ միաբերան գոռացին. «Մա՛հ թագուհուն,
Արդարադատ մահ ենք ուզում, ո՛վ Քաուս շահ մեծանուն»:

Ապա շահը իր մոտ կանչեց դահճապետին արքունի,
Ասաց. «Կախեք այս վհուկին կախաղանի մեծ սյունին»:

Բայց այդ պահին Քաուս շահը աղմուկ լսեց կանացի,
Եվ մտածեց՝ կնոջ սերը իրեն պիտի հալածի...

Սիավուշը տեսավ շահի դեմքը գունատ ու դեղին,
Ասաց. «Ո՛վ շահ, այժմ լսիր քո զավակին, անմեղին,

Սուդաբեի վատ արարքը այս անգամ դու ներիր ինձ,
Նորից իմ դեմ նա չի նյութի որոգայթներ դառնալից»:

Այս ասելով՝ Սիավուշը մտածում էր, թե արքան
Հետագայում կփոշմանի և կասի, որ անպայման

Կնոջ մահվան պատճառ եղավ: Եվ այդպես է երևում,
Ջի տեսնում էր, որ ազատման պատճառներ էր որոնում:

Քաուս շահը Սիավուշի վեհությունը տեսնելով՝
Նրան ասաց. «Իմ լավ որդի, ներեցի՝ քեզ լսելով»:

Իր հոր գահը համբուրելով՝ Սիավուշը ելավ դուրս,
Սուդաբեի առջև նույնպես խոնարհվեցին կին թե կույս:

Շահի սիրտը կրկին կպավ իր թագուհուն ամբարիշտ,
Սուդաբեին նա փայփայեց, սիրեց, պաշտեց ինչպես միշտ:

Բայց Սուդաբեն որոնում էր քեն ու ոխի նոր արմատ,
Եվ Քա՛ուսի հանդեպ բնավ ոչ սեր ուներ, ոչ հավատ:

Իսկ որտեղ որ սերմանում են խարդախություն, խոսքի թույն,
Այնտեղ պետք է խելք ու հավատ, ուշիմություն, գիտություն:

Իսկ երբ մի մարդ թուլամորթ է, կասկածամիտ ու վախկոտ,
Ճարպիկ մարդը հարմար ժամին սուր կճոճի նրա մոտ:

Ժամանակը եթե մի տեղ թույն է դրել մահացու,
Անշուշտ, պետք է դու քո բախտը ապավինես Աստծուն:

Պտույտ գործող ճախարակը գաղտնիք ունի երկնքում,
Տեսանելին և անտեսը չեն երևում մեր աչքում:

ՔԱՈՒՍ ՇԱՀԸ ՏԵՂԵԿԱՆՈՒՄ Է ԱՖՐԱՍՅԱԲԻ ՀԱՐՁԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ

Քեյ-Քաուսը վայելում էր սիրո քաղցր պտուղներ,
Այդ ժամանակ հանկարծահաս վազքով եկավ մի բանբեր,

Թե՛ բերում է թուրքը իր հետ հարյուր հազար այրուձի,
Շահը պետք է Աֆրասյաբի հանդեպ կռվի ուժ փորձի:

Քաուս շահը մեջքին կապեց պատերազմի պինդ գոտի,
Իր անվանի քաջերի հետ մեկտեղ նստեց խորհրդի:

Ասաց. «Աստված Աֆրասյաբին չի շաղախել չորս տարրից.
Ոչ կրակից ու ոչ քամուց, ոչ էլ հողից ու ջրից...

Ուստի պետք է շարժեմ քենը ամենաասաստ իմ զորքի,
Որ լիովին բնաջնջեմ վայրագ ցեղը այդ թուրքի:

Եթե չանեմ, գաղտագողի, հանց աղեղից թռած նետ
Կսլանա ու կավերի իմ երկիրը գահիս հետ»:

Իսկ մոբեդը նրան ասաց. «Ինչի՞դ է պետք զենք ու զորք,
Քանզի մահից հետո գահիդ չի բազմելու էլ ոչ ոք:

Ինչի՞ համար ամեն անգամ գանձդ մահու բերան տաս,
Քանի՞ անգամ քո պահեստի դուռը փակես ու բանաս:

Երկու անգամ պարտվեցիր դու պատերազմի գոռ դաշտում,
Այժմ գտիր նոր զորավար՝ կռվից, քենից անկշտում»:

Շահը նրան պատասխանեց. «Չունեմ վստահ մի խիզախ,
Որ կարենա թուրանական զորքը ջնջի աջ ու ձախ...

Նավի նման գնամ բախտս հանձնեմ ծովի տարերքին,
Աստված գուցե հաղթանակի ուղի ցույց տա իմ զորքին»:

ՍԻԱՎՈՒՇԸ ԶՈՐԱՎԱՐՈՒՄ Է ԱՖՐԱՍՅԱԲԻ ԴԵՄ

Սիավուշը շատ դեգերեց իր մտքերի անտառում,
Ասաց. «Անշուշտ, պետք է հաղթեմ բյուրակործան այս կռվում:

Քաուս շահին ես կաղաչեմ՝ թույլ տա մեկնեմ կռվի դաշտ,
Չէ՛ որ ես և նրա կինը թշնամի ենք, միշտ անհաշտ:

Ո՜վ արարիչ, գիշեր-ցերեկ աղոթում եմ ու մաղթում,
Որ դու օրհնես, և ես հաղթեմ պատերազմի գոռ դաշտում»:

Այնուհետև Սիավուշը գնաց Քաուս շահի մոտ,
Ասաց. «Հայր իմ, ինչո՞ւ ես դու կարծում թույլ եմ ու վախկոտ:

Կռվի համար ցույց տուր դա ինձ Թուրան տանող կարճ ուղին,
Ե՛ս եմ ուզում Աֆրասյաբի հոգին հանձնել սև հողին»:

Ամենատես Աստված գուցե որոշել էր ի վերուստ,
Թե ո՞ւմ պիտի գերեվարի, և ո՞վ պիտի տա փախուստ:

Քաուս շահը պատասխանեց. «Համաձայն եմ, իմ որդի,
Այժմ գնա մեջքիդ կապիր պատերազմի պինդ գոտի:

Դու մեծատոհմ անուն ունես և հարուստ ես բոլորից,
Իրանացեղ քո բանակը ձեռքիդ տակ է այս օրից:

Ոչ մի քաջի չեն մեծարում այնպես, ինչպես այժմ քեզ,
Ողջ Իրանը քեզ փայփայում ու սիրում է որդու պես»:

Այնուհետև շահը կանչեց Ռոստամ-Զալին վեհափառ,
Նրան սիրո խոսքեր ասաց, քաջի խոսքեր քաղցրաբառ.

«Չկա մեկը Ռոստամ-Զալի պես խելացի, մեծարգո,
Նեղոս գետի ջրից վարար ընթանում է միտքը քո:

Դու Իրանի հռչակավոր փահլևանն ես մահազդու,
Եվ ուսուցիչ-դաստիարակը ու դայակը իմ որդու:

Սիավուշը պատառոտող առյուծի պես եկավ, թե՝
«Թույլ տուր Թուրան-շահի գլխին սուսեր ճոճեմ երկաթե»:

Դու այս կռվից մի խուսափիր, ո՛վ անվանի փահլևան,
Որդուս համար եղիր հսկիչ, խորհրդատու ու վահան:

Այն ժամանակ ես քուն կառնեմ, երբ որ լինես դու արթուն,
Քանզի գիտես քեզնից հեռու՝ աչքս բնավ չեմ թարթում:

Աֆրասյաբին կռվի դաշտում սարսափ կտաս քո թրով,
Աստղ ու լուսին, երկիր, երկինք, քո սրով են ապահով»:

Իսկ անվանի Ռոստամ-Զալը պատասխանեց անվարան.
«Ես նախարար փահլևան եմ և հնազանդ քո ծառան:

Նա մեզ համար մեծ պարծանք է, և հեռատես աչքի լույս,
Իսկ ինձ համար նրա շուքը հովանի է, կյանքի հույս»:

Քաուս շահը գովաբանեց Ռոստամ քաջին մեծագործ,
Ապա լսեց թմբուկի ձայն ու փողերի զիլ բողոց:

Արագաձեռ Թուսը եկավ Քաուսի մոտ, ոսկեթագ,
Իր հետ բերեց պատերազմող այրուձի և հետևակ:

Քաուս շահը իսկույն բացեց փակ դռները պահեստի,
Եվ բաժանեց զենք ու զրահ, արծաթ, գոհար ու ոսկի:

Բազմաբազում զորք հավաքեց Քեյան զարմից քաջազուն,
Ով ծագում էր իրանական բյուր ցեղերից մեծանուն:

Ապա բերեց նոր-նոր գնդեր Բիլուչներից, Իրանից,
Կցորդակից Սրուշ դաշտից, Քուչերից ու Գիլանից:

Կանչեց նույնպես երևելի, հզոր ուժի տեր մարդկանց՝
Քաջ Վահրամին ու Զանգիին, մեկը մեկից գերազանց:

Ապա եկան արիացեղ հինգ մոբեթներ՝ աստղագետ,
Որ Կավեի դրոշակը տանեն իրենց զորքի հետ:

Քաուս շահի հրամանով Թուրան մեկնեց զորքը հոծ,
Գետնի վրա ոտ կոխելու ոչ հնար կար, ոչ միջոց:

Իրանական աստեղ-Կավյան դրոշակը շողշողուն,
Լիալուսնի պես փայլում էր ուղիղ զորքի մեջտեղում:

Իջևանում Քեյ-Քաուսը պտույտ գործեց մեկ անգամ
Ու բանակի առջև կարդաց խորախորհուրդ մի պատգամ:

«Դյուցազուննե՛ր, ձեր ապագան լուսավոր է ու պայծառ,
Աստված ձեզ հետ ուղեկից է, դուք կհաղթեք անպատճառ:

Պատերազմի դաշտում խեղդեք մեր թշնամուն չարակամ,
Հաղթանակով թող տուն դառնա իմ բանակը արիական»:

Ապա փղի վրա կապած մեծ թմբուկը վայնակոծ
Կողի կանչեց Սիավուշի բանակներին բազմահոծ:

Արշավասեր Քաուս շահը ճանապարհեց զավակին,
Մերթ խոսում էր, մերթ բաժանվում և մերթ գրկում ջերմագին:

Հրաժեշտին հայր ու որդի գարնան ամպի պես մռայլ
Աղեկտուր արտասվեցին հորդ անձրևի պես շռայլ:

Դրանց սիրտը վկայում էր՝ չեն հանդիպի էլ երբեք,
Դառնապտուղ ծառից բնավ մի սպասիր քաղցր բերք:

Քաուս շահը վերադարձավ իր դղյակը ամրադիր,
Սիավուշը մինչև Զաբուլ տարավ բազում զորքը իր:

Ու Ռոստամի հետ երկուստեք եկան Դեստան-Զալի մոտ,
Ոչ թագուհուն նա վերհիշեց, ոչ Քաուսին սրտամոտ:

Մերթ խմում էր Ռոստամի հետ, մերթ Դեստանի հետ մրցում,
Իսկ մերթ Զալի ճոխ պալատից իրեն որսի էր գցում:

Իր հանգստի մեկ ամիսը անցավ Զալի դղյակում,
Նա ամեն օր Ռոստամի հետ վիթ ու ցիռ էր նիզակում:

Այնուհետև կռվի տարան հեծյալ զորքը Զաբուլի,
Եվ հետևակ հնդկաց գունդը, և բանակը Քաբուլի:

Նա Մերվերուդ գետի ափին խփեց բազում վրաններ,
Կարծես երկնից լույս աստղերը ողջունեցին անհամբեր:

Ողջ բանակը իջևանեց Բալխ քաղաքի մոտերքում,
Հոգնաթախիծ ոչ մի զինվոր չէր տրտնջում, բողոքում:

Անհավասար կռվի համար եկավ Թուրան զորքը մեծ,
Եկավ նաև Գերսիվազը արագաձեպ, հողմածեծ:

Առաջապահ զորագունդը Բարման հսկան էր կարգում,
Սեպեհրեմը վերջապահ էր, աչքը բնավ չէր թարթում:

Քամուց արագ լուրը հասավ, թե քաջերը Իրանի
Բազմաքանակ զորք են բերել սահմանի մոտ Թուրանի:

Գերսիվազը Աֆրասյաբի մոտ ուղարկեց մի հեծվոր,
Արագաձեպ սուրհանդակը ասաց. «Ով մեծ թագավոր,

Սիավուշը իր քաջերի ու բանակի հետ մեկտեղ
Արշավում է դեպի Թուրան, հանց ավերիչ մի հեղեղ:

Ռոստամ-Զալի ձեռքում տեսա մահու պատանք ու դաշույն,
Աֆրասյաբ շահ, իզուր ես դու ժամանակը քո մաշում:

Գերսիվազը անմիջապես գլխին դրեց սաղավարտ,
Բալխ քաղաքի դարպասի մոտ մղեց ահեղ մենամարտ:

Երեք օրում երկու անգամ հոսեց արյան մեծ հեղեղ,
Մեզ կոտորեց Սիավուշը, հանց ավերիչ պրկաղեղ...

Բալխ քաղաքում նա տարածեց իր բանակը կատաղի,
Սեպեհրեմը վախից փախավ, առանց զորքի, պարենի»:

ՍԻԱՎՈՒՇԻ ՆԱՄԱԿԸ ԵՎ ՔԱՈՒՍԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ

Սիավուշը նամակ գրեց սև թանաքով, ամբրով,
Ու նամակը նա ծրարեց նրբաթերթիկ մետաքսով:

Գրեց, որ «թուրք Սեպեհրեմը կռվից փախավ մինչ Տերմեդ,
Իսկ Բարմանը անճաշակ ու աղեղից թռած նետ:

Եվ որ մինչև Ջիհուն գետը ավերակ է ու դատարկ,
Ինչպե՛ս վարվել, ի՛նչ կերպ պահել այդ ամբողջը ձեռքի տակ:

Գրեց նաև, որ Թուրանի Աֆրասյաբը նենգամիտ,
Իր զորքերով ամրացել է Սողդ քաղաքում ամրապինդ:

Ի՛նչ է, արդյոք, առաջարկում Քաուս շահը քաջատոհմ,
Թե ուզում է՝ հիմա կանցնեմ Ջիհուն գետից էլ այն կողմ»:

Այս նամակով Քաուս շահը ուրախացավ ի սրտե,
Մաղթանք արեց նա Աստծուն՝ որդուն չարից ազատե:

Այնուհետև շահը հղեց խորախորհուրդ մի նամակ,
Որ իր որդին բախտավորվի արևի և լուսնի տակ:

Ապա գրեց. «Դու ես միակ Քեյան գահի ինձ հետնորդ,
Բայց չահել ես, քո շրթունքից դեռ գալիս է կաթի հոտ:

Պատերազմում կռփվել է պետք Տուղի ամուր նետի պես,
Երբ որ կռվում հաղթանակես՝ իսկույն նամակ հղիր մեզ:

Բայց ծանրաբեռ քո բանակը դու մի դարձրու հոգնաբեկ,
Աչքդ ընդմիշտ արթուն պահիր Թուրան-շահից չարանենգ:

Աֆրասյաբը դավադիր է Աիրիմանից առավել,
Ոչ անմիտ է, ոչ միամիտ, խորամանկ է նա ծնվել:

Նա էլ ինձ պես շահնշահ է, և զորք ունի, և պարեն,
Մի՛ թող մեր դեմ նենգ թուրքերը պատերազմի փող հարեն:

Բայց երբ Ջիհուն գետը անցնի՝ իր փեշերը կարյունի,
Նա այն դեպքում քո դեմ կգա, եթե կովի միտք ունի»:

Քաուս շահը այդ նամակը կնքեց, տվեց մի մարդու
Ու պատվիրեց՝ գաղտնածածուկ տանի, հանձնի իր որդուն:

ԳԵՐՍԻՎԱԶԸ ՋԵԿՈՒՑՈՒՄ Է ԱՖՐԱՍՅԱԲԻՆ

Գոռոզամիտ Գերսիվազը գնաց Թուրան-շահի մոտ,
Ասաց. «Ով դու երկայնամիտ, իմ ապավեն ու կարոտ.

Արքայազարմ Սիավուշը և Ռոստամը ռազմավար,
Գրավեցին Բալխ քաղաքը, առան գերի ու ավար:

Մեր ամեն մի նետի դիմաց նրանք ունեն հիսուն նետ,
Ունեն բազում գուրզ ու կապարճ և սպաներ ռազմագետ:

Նրանց ահից բնում մնաց անգամ արծիվն անվեհեր,
Եռահարձակ գոտեմարտում զորք չմնաց ցեղից մեր»:

Հանկարծահաս սաստիկ լուրից Աֆրասյաբը անհամբեր,
Խիստ զայրացավ, քիչ էր մնում, որ եղբորը թրատեր:

Անմիջապես դուրս վռնդեց Գերսիվազին չարլեզու,
Որովհետև իր եղբորը նսեմ տեսնել չէր ուզում:

Անմիջապես իր մոտ կանչեց իր քաջերին անվանի,
Որ գինեհար խրախճանքում՝ ցավը սրտից դուրս վանի:

Աթոռանիստ Սողդ քաղաքը նա զարդարեց փառավոր,
Ճոխ խնջույքը շարունակեց մինչ ծիրանի առավոտ:

Ապա ելավ ու գինեհար գնաց ընկավ անկողին,
Քունը հաղթեց թե քաջերին, պարողին, թե երգողին:

ԱՖՐԱՍՅԱԲԻ ԵՐԱԶԸ

Աֆրասյաբը քնից ելավ ու որոտաց հանց հեղեղ,
Գահից սողաց, ինչպես քաջի ձեռքից ընկած մի աղեղ:

Տենդ ունեցող հիվանդի պես դողդողում էր անդադար,
Նրա ձայնից սարսափահար քնից ելան կին թե այր:

Այդ աղմուկից Գերսիվազը նույնպես ելավ անկողնուց,
Աֆրասյաբին տեսավ գետնի վրա ընկած հանց առյուծ:

Գերսիվազը ամուր գրկեց և հարցրեց. «Ո՛վ վսեմ,
Ի՞նչ պատահեց արդյոք քեզ հետ, մի բան խոսիր, որ լսեմ»:

Աֆրասյաբը պատասխանեց. «Ամուր պահիր քո գրկում,
Մինչ ուշքս գա: Բայց ինչո՞ւ են մարդիկ այդպես աղմկում»:

Ու ճրագի լույսի ներքո տեսան շահը հևիհև,
Դողդողում էր, ինչպես քամու բերան ընկած մի տերև:

Այնուհետև ասաց, թե. «Ես տեսա երազ մահազդու,
Իմ երազի պես մի երազ չես երազել անգամ դու:

Տեսա անծայր մի անապատ, անապատում՝ բյուր իժեր,
Փոշեծածկ էր դաշտ ու դուրան, իսկ երկնքում՝ արծիվներ:

Բայց դաշտերը խիստ երաշտից դարձել էին անապատ,
Թվում էր, թե չէր տարածվել անձրևաբեր երկնի տակ:

Ապա իմ դեմ կռվի ելան ընտիր զորք ու փահլևան,
Որ հարազատ իմ Թուրանում տարածեն ողբ ու շիվան:

Այնուհետև վրա հասավ հողմաշառաչ մի քամի,
Իմ վրանից պոկեց տարավ մեծ դրոշը Թուրանի:

Տեսա ամեն կողմից հոսող հեղեղատներ ու գետեր,
Որ տանում ու խեղդում էին բանակները իմ անտեր:

Եվ բռնաշունչ քամուց արագ իմ դեմ ելավ մի հեղեղ,
Արիացեղ ամեն զինվոր ձեռքին ուներ նետ-աղեղ:

Ապա եկան տասը հազար բյուրակործան այրուձի,
Անտարակույս իմ բանակը նրանց հանդեպ չէր մրցի:

Սևասքեմ մի զորագունդ ելավ իմ դեմ մարտազեն,
Շղթայակապ և ինձ գերված ստիպեցին, որ վազեմ...

Եվ ինձ տարան Քաուս շահի ապարանքը վիմակերտ,
Տեսա գահի վրա բազմած մի փահլևան լուսնակերպ,–

Տասն և չորս տարին հազիվ նոր բոլորած մի տղա,
Լուսնից կարծես նոր էր իջել, որ իմ բախտի հետ խաղա:

Նոճին տեսավ ինձ կապկպած ու որոտաց շանթի պես,
Ապա թրի մի հարվածով ինձ դարձրեց երկու կես:

Ես երազում գոռգոռացի իմ ցավերից ահավոր,
Անմիջապես քնից ելա՝ իմ գոռ ձայնից անսովոր»:

Գերսիվազը պատասխանեց. «Բարի է դա, ոչ այլ բան,
Հենց այս գիշեր քո երազը մեկնել է պետք անպայման:

Գնամ կանչեմ ամենագետ բախտագուշակ մոբեդին,
Թող գա լուծի, մեկնաբանի առեղծվածը այս խրթին»:



ԱՖՐԱՍՅԱԲԸ ՄՈԲԵԴԻՑ ՀԱՐՑՆՈՒՄ Է ԵՐԱԶԻ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆԸ

Աֆրասյաբը իր մոտ կանչեց մոբեդներին խորագետ,
Ապա բազմեց Թուրանական գահաթոռին, նրանց հետ:

Իր երազը պատմեց նրանց, ասաց. «Գիտուն ո՛վ մոգեր,
Դուք կարող եք երազ մեկնել և ցավերս ամոքել...

Սակայն, եթե գաղտնիքներս մեկնաբանեք այլ մարդկանց,
Հաստատապես լավ իմացեք՝ դուք կստանաք մեծ հարված»:

Շահը տեսավ, որ մոգերը սարսափում են, կարկամում,
Ուստի առատ ոսկի դրեց ամեն մեկի գրպանում:

Այնուհետև առաջ եկավ վախը սրտում մի մոբեդ,
Ասաց. «Լավ է մենք նախօրոք պայման կապենք իրար հետ,

Եթե շահին մեկնաբանենք ինչն է սխալ ու շիտակ,
Բարկությունից նա չի՞ դնի մեր ձեռքերին պինդ կապանք»:

Աֆրասյաբը պատասխանեց. «Երդվում եմ տեր Աստղծոն՝
Ձեզ չեմ պատժի, դրա համար գրավ կտամ իմ լեզուն»:

Թուրանական շահին ասաց մի ծեր մոբեդ պերճախոս.
«Շուտով քո դեմ կռվի կգա բյուրակործան մի հերոս...

Աշխարհազոր մեծ բանակներ կբերի նա արիական,
Ողջ Թուրանում նորից պիտի տարածվի լաց ու կական:

Նա կավերի գյուղ ու քաղաք, կառնի գերի և ավար,
Ամենուրեք ցրիվ կտա ոսկի, արծաթ ու գոհար:

Եթե կռվես դու նրա դեմ՝ քեզ չի օգնի ոչ մի մարդ,
Եվ կավերի, մոխիր կանի ողջ Թուրանը ծաղկազարդ:

Աթոռանիստ քո քաղաքը նույնպես կանի ավերակ,
Թուրք ամբոխից մարդ չի մնա՝ գլխին դնի շահի թագ:

Այն ժամանակ թե գլխատես, քեզ ի՞նչ օգուտ, ինչ արդյունք,
Քանզի նրա քենի համար պիտի հոսի հորդ արցունք:

Եթե անգամ թռչուն դառնաս՝ քեզ ազատել չես կարող,
Որովհետև մեզնից վերև զորեղ աչք կա քեզ նայող»:

Աֆրասյաբի դեմքի վրա իջավ ծանր մի թախիծ,
Ասաց. «Աստված պիտի պատժի թե Թուրանին և թե ինձ»:

Ապա կանչեց իր եղբորը, ասաց. «Ո՛վ իմ Գերսիվազ,
Արագ թամբիր քո նժույգը ու սլացիր վազեվազ,

Սիավուշին տար իմ կողմից ոսկի, արծաթ ու գոհար,
Ասա՝ խաղաղ կյանք եմ ուզում, ոչ թե քենի երիվար:

Արյունահեղ պատերազմում դու չես մեռնի, ոչ էլ ես,
Խռովարար ժողովուրդը չի ենթարկվի ինձ ու քեզ:

Մանուչեհր շահը, իրոք, ճիշտ չբաշխեց աշխարհն այս,
Իր թագի հետ Աֆրասյաբին տվեց չնչին երկրամաս:

Նորից բաժին ես կհանեմ մեծատարած Իրանին,
Կտամ նրան սահմանամերձ լավ հողերը Թուրանի,
Միայն թե այս փորձությունից ես մշտապես մնամ զերծ,
Որ թշնամին կրակ չտա դղյակներս երկնամերձ:

Նվերներով ես կշահեմ շատ ժամանակ ու միջոց,
Եվ իմ ձեռքում Քաուս շահին կդարձնեմ լոկ ջնջոց:

Ժամանակի այս պտույտից ավել բան չեմ պահանջում,
Հողից պետք է այնպես բուսնել, ինչպես կանաչն է աճում»:

ԱՖՐԱՍՅԱԲԸ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒՄ Է ՄԵԾԱՄԵԾՆԵՐԻ ՀԵՏ

Երբ մայրամուտ իջավ կարմիր արեգակը դանդաղկոտ,
Թուրանացեղ իսկաները իսկույն եկան շահի մոտ:

Աֆրասյաբը բերեց բոլոր կտրիճներին փորձառու,
Ասաց. «Կռվի այս նեղ ճամփան մեզ չի տանի շատ հեռու:

Հիմնահատակ ավերեցի գյուղ ու քաղաք ամեն տեղ,
Էլ ոչ մի կերպ չի կանաչի այգի, պարտեզ ծաղկագեղ:

Ամենուրեք երևում է արյան հետքն իմ բանակի,
Ես տեսնում եմ բերդ ու դղյակ ավերակված կրկնակի:

Շահը եթե անարդար է՝ կայլափոխի ամեն բան,
Կույր կծնվի և սրատես գոռ բազեի ձագն անգամ:

Եվ առյուծի կաթը նույնիսկ կցամաքի իր կրծքում,
Իսկ աղբյուրի զուլալ ջուրը ձյութ կդառնա ակունքում:

Անգամ մուշկը կկորցնի առողջարար իր բույրը,
Եվ կեղծիքը ամենուրեք կտարածի իր գույնը:

Ա՜խ, իմ սիրտը հագեցել է պատերազմից արնահոտ,
Աստվածային խաղաղ օջախ, ճամփա տվեք դեպի տուն:

Այսուհետև իմ բանակով ես չեմ իջնի ասպարեզ,
Ես չեմ տանջի անմեղներին, անգթածին մարդու պես:

Ինչիս են պետք բազմաբազում գյուղ ու քաղաք ու դղյակ,
Չի տնքում է աշխարհ կոչված այս սրահը ոտքիս տակ:

Իմ ձեռքի տակ ունեմ մարզեր ինձ ենթակա, հարկատու,
Այժմ պետք է Ռոստամ-Զալի մոտ ուղարկեմ մի մարդու,

Թող նա գնա՝ բարեխոսի, Սիավուշին զեկուցի,
Որ Աֆրասյաբ շահը նորից չի թամբելու կռվի ձի»:

Այնուհետև Աֆրասյաբը Գերսիվազին ասաց, թե.
«Արագ գործը պահանջում է տոկունություն երկաթե:

Իմ բանակից քեզ հետ դու տար երկու հարյուր այրուձի,
Բաց դռները իմ պահեստի, արդ ու զարդի ու գանձի:

Որպես նվեր տար զանազան պերճ մետաքսե հանդերձանք,
Ոսկեպատյան հինդու թրեր, կաh-կարասի ու պերճանք:

Սիավուշին տար, պարգևիր բազմատեսակ ուղտ ու ձի,
Եվ լուսնահեզ ստրուկ աղջիկ, որ արևի հետ մրցի:

Ասա նրան՝ պատերազմել բնավ քեզ հետ չեմ ուզում,
Խաղաղ կյանքի համար եմ ես մտահոգվում, երազում:

Ես Իրանում ոտ չեմ դնի, քանզի Չինից մինչ Զիհուն
Մեծատարած մարզեր ունեմ և քաղաքներ բազմանուն:

Քաղաքամայր Սողդը հիմա գահատեղն է Թուրանի,
Ուր որ այժմ բնակվում է թուրի ցեղը անվանի:

Մեր երկիրը պատկանում էր հզոր Թուրին ու Սելմին,
Բայց Իրեջը պատճառ եղավ կոտորածին ու քենին:

Եվ Իրանը, և Թուրանը եղել են հաշտ ու հանգիստ,
Անմտաբար սուր չեն ճոճել մեկմեկու դեմ այսքան խիստ:

Ես Աստըծուց մեծ հույս ունեմ՝ կգա օրը բախտավոր,
Մի կարասից գինի կըմպենք, իբրև եղբայր, մերձավոր:

Ֆերիդունի պես կվարվենք միշտ խելացի, ողջախոհ,
Նրա օրոք Իրն ու Թուրը խռով չէին և դժգոհ:

Թագաժառանգ Սիավուշը բանիմաց է, քաջարի,
Քաուս շահին նա չի թողնի՝ պատերազմի քեն վարի:

Փղամարմին Ռոստամին ես նույնպես կտամ նվերներ՝
Անթիվ ճորտեր, ոսկի, գոհար և ոսկեթամբ նժույգներ:

Նա մեծազոր փահլևան է, կռվից անկուշտ և անհագ,
Սակայն պետք չէ, որ նա կրի շահին վայել ոսկեթագ»:

ԳԵՐՍԻՎԱԶԻ ՊԱՏԳԱՄԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ ՍԻԱՎՈՒՇԻ ՀԵՏ

Արագաճեպ Գերսիվազը գնաց հասավ մինչ Ջիհուն,
Սիավուշի համար տարավ լավ ընծաներ բազմանուն:

Նա Իրանի ու Թուրանի սահմանի մոտ անհամբեր
Իր բանակից մի մարդ ընտրեց և ուղարկեց մի բանբեր:

Ու մեկ օրում սուրհանդակը եկավ հասավ մինչև Բալխ,
Արքայազարմ Սիավուշին նա զեկուցեց գլխակախ:

Բայց երբ տեսավ Գերսիվազին, Սիավուշը ինքնագոհ
Գնաց նրան դիմավորեց Ռոստամի հետ ծանրախոհ:

Գերսիվազը տեսավ շահին ու զարմացավ ինքն իրեն,
Քանզի Նոճին լուսնից չքնաղ պատկեր ուներ հրեղեն:

Այնուհետև բերեց բազում մետաքսեղեն, գանձ ու փող,
Ընծաների այդ քանակը ոչ ոք հաշվել չէր կարող:

Բերեց նաև ստրուկ մարդիկ, նետ ու աղեղ և կապարճ,
Եվ մատռվակ, սիրուն տիկնայք, թե աղախին և թե հարճ:

Գերսիվազը Բալխ քաղաքի փողոցներից մինչ պալատ,
Հեղեղել էր Աֆրասյաբի նվերներով բազմառատ:

Ռոստամ-Զալը նրան ասաց. «Այժմ գնանք խնջույքի,
Սիավուշի հետ միասին՝ այնտեղ կտանք խելք-խելքի»:

Ու խորամանկ Գերսիվազը չոքեց գետին հանց կծիկ,
Ի ապացույց՝ որ Նոճու դեմ ոչ քեն ունի, ոչ կեղծիք:

Այնուհետև նրա համար պատրաստեցին մի սենյակ,
Ծառայության համար եկան նաժիշտ, պահակ, սուրհանդակ:

Ռոստամի հետ Սիավուշը առանձնացավ խորհրդի,
Որ Աֆրասյաբ շահը նրանց ծուղակի մեջ չնետի:

Բայց քաջարի Ռոստամ-Զալը երկյուղահար կասկածեց,
Ուստի լրտես պահապաններ քաղաքի մոտ ման ածեց:

Սիավուշը Ռոստամի հետ զրույց արավ ընդերկար,
Ասաց. «Արդյոք այս նվերից ի՞նչ համոզման դու եկար...

Ի՞նչ նպատակ ունի թուրքը կամ ապագա ի՞նչ հաշիվ,
Այս նվերի ծածկի տակ նա չի՞ դրել թույն կամ հաշիշ:

Եթե շահը ցանկանում է խաղաղություն իսկական,
Ապա թող որ մեզ ուղարկի հարյուր պատանդ թուրքական:

Գիտեմ, որ նա՝ Աֆրասյաբը մեր զորքից է սարսափում,
Սակայն ծածուկ՝ կապերտի տակ կռվի թմբուկ է զարկում:

Մի մարդ է պետք, որ այս լուրը տանի Քավուս շահի մոտ,
Քանզի նա էլ խաղաղ կյանքի և սեր ունի, և կարոտ»:

Ռոստամ քաջը պատասխանեց. «Հիմա ճիշտ ես դու, իրոք,
Այս պայմանը նա կընդունի սիրով, առոք ու փառոք»:

ՍԻԱՎՈՒՇԸ ԱՖՐԱՍՅԱԲԻՆ ԱՌԱՋԱՐԿՈՒՄ Է ՀԱՇՏՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆ

Լուսաբացին Գերսիվազը տեղից ելավ ու հպարտ
Գլխին դրեց թուրանակուռ մի երկաթե սաղավարտ,

Եկավ, կանգնեց գեղեցկատես Սիավուշի դեմ-դիմաց,
Նրան սիրո, ջերմ մաղթանքի, մեծարանքի խոսք ասաց:

Սիավուշը հարցուփորձեց. «Արդյոք գտա՞ր հանգիստ քուն,
Իմ բանակի գիշերախոս պահնորդների աղմուկում...

Ռոստամի հետ մտածել ենք անքուն գիշեր մի ամբողջ,
Որ դու տանես Աֆրասյաբին խաղաղության մի նոր կոչ:

Թող որ նա էլ սրտից հանե թշնամության ոխ ու քեն,
Երբ տեսնում են մահը մոտ է՝ թող վտանգից խուսափեն...

Ամեն մի շահ, եթե խելոք բան մտածի ու գործի,
Կբարձրանա իր արժեքը, քան թե գինը բյուր գանձի:

Գինեգործը թե հնձանում գինին թույնով չքաշի,
Արբեցումի գլխացավը մարդու սիրտը չի մաշի:

Եթե շահը ցանկանում է դաշինք կնքել իսկական,
Թող ուղարկի հարյուր պատանդ ցեղակից կամ ազգական:

Քաջ Ռոստամը կասի նրանց անունները մեկ առ մեկ,
Հայտնիր նրան՝ այս պայմանից ուրիշ պայման չունենք մենք:

Այնուհետև Աֆրասյաբը պահում է իր թրի տակ
Իրանական սահմանամերձ բազում գյուղեր ու քաղաք:

Թող ազատի մեր երկիրը ու հեռանա տունը իր,
Թող Թուրանում սրի քաշի ոսոխներին ուխտադիր:

Մեր պայմանը պետք է լինի արդարացի և անխախտ,
Որ անտեղի, թշնամաբար չկործանվեն թագ ու թախտ:

Ես էլ նույնպես խաղաղության գործի համար անհամբեր
Քաուս շահի մոտ կուղարկեմ արագաճեպ մի բանբեր»:

Այնուհետև գոռոզամիտ Գերսիվազը անհողդողդ,
Անմիջապես մարդ ուղարկեց՝ գնա հասնի մինչև Սողդ:

Խոսեց. «Բանբեր, ասա նրան՝ ո՛վ Աֆրասյաբ ոսկեթագ,
Ինչ որ եկա որոնեցի, այն էլ ունեմ ձեռքիս տակ:

Թե ուզում է շահը լինել վտանգներից միշտ հեռու,
Թող ուղարկի թուրք պատանդներ և պատգամներ ինձ հլու»:

Սուրհանդակը գնաց հանձնեց Թուրան-շահին մի պատգամ,
Աֆրասյաբը երբ որ լսեց՝ խիստ մոլորվեց այս անգամ:

Ասաց. «Եթե նրան հանձնեմ իմ բանակից հարյուր այր,
Չէ՞ որ կասեն իմ բանակը քայքայում եմ ծայրեծայր:

Եթե հայտնեմ՝ ձեր պայմանին համաձայնել չեմ կարող,
Կասեն, որ ես վախկոտ մարդ եմ ու ճորտի պես խարխափող:

Ուստի լավ է՝ ես ուղարկեմ հարյուր ընտիր կտրիճ մարդ,
Որ չլարի նորից իմ դեմ Իրան-շահը նոր թակարդ»:

Այսպես ջոկեց հարյուր զինվոր, ազգական ու մերձավոր,
Ոմանց տարան հետիոտն, ոմանց տարան ձիավոր:

Հրաժեշտի համար հնչեց զալարափող ու թմբուկ.
Ողջ Թուրանում նորից լսվեց մարտակոչի մեծ աղմուկ:

Նա ազատեց ողջ Իրանը Սեմենգանից մինչև Չաջ,
Սեփենջաբը և Բուխարան նա դատարկեց օր առաջ:

ՍԻԱՎՈՒՇԻ ՆԱՄԱԿԸ ՔԵՅ-ՔԱՈՒՍԻՆ

Սիավուշը եկավ բազմեց փղոսկրյա իր գահին,
Գլխին դրեց արեգնափայլ մի ոսկե թագ երկնային:

Ապա մտքում կանխորոշեց՝ գտնի հարմար ռազմագետ,
Որ ունենա ճարտար լեզու, բանախոսի շահի հետ:

Իսկ Ռոստամը նրան ասաց. «Միտքդ սուր է ու գերող,
Բայց համոզել Քաուս շահին, գիտեմ, ոչ ոք չի կարող:

Միևնույն է, Քեյ-Քաուսը իր կարծիքը չի փոխի,
Նա հաշտության ձեռք չի մեկնի առանց քենի ու ոխի:

Եթե Նոճին հրամայի՝ ես կգնամ անհապաղ,
Քո Ռոստամը գործի համար չի դանդաղի ոչ մի պահ»:

Սիավուշը ուրախացավ լավ խոսքերից Ռոստամի,
Քանզի նրա միտքը սուր էր ավանդական դեսպանից:

Այնուհետև Սիավուշը շահին գրեց մի նամակ,
Գրեց բազում, սրտահաճո քաղցր խոսքեր անքանակ:

Նախ ներբողեց ամենատես ու զորավոր Աստծուն,
Քանզի մարդու միտքն ու հոգին նրա ուժով է գործում:

Նա է տերը մեր գոյության, խելքի, մահու ու հոգու,
Պտտույտ գործող ժամանակից չի անջատում ոչ ոքու:

«Նա է ծնել արև, լուսին ու երկինքը աստղալից,
Թող որ նա էլ Քավուս շահին հեռու պահե չարիքից:

Ո՛վ անվանի, ընտրելագույն, մտահասու Քեյ-Քավուս,
Դու տեր ծովի ու ցամաքի, տեր աստղերի երկնասույզ:

Երբ որ Աստված մեզ ավետեց գարնան բույրը ծաղկավետ,
Անմիջապես ես Բալխ հասա աշխարհասասա զորքիս հետ:

Իմ արշավի լուրը հասավ թուրանական բանակին,
Ու սևացավ Աֆրասյաբի աչքի պայծառ ապակին:

Սաստիկ վախից նա աշխարհը հայտարարեց փուչ քամի,
Չի Աստըծու նետած քարը մենք ենք, նրա թշնամին:

Իր եղբորը՝ Գերսիվազին նա ինձ մոտ է ուղարկել,
Եվ թուրքական պատանդներով, նվերներով է հարգել:

Աֆրասյաբը քեզ աշխարհում բոլորից վեր է դասում,
Եվ խնդրում է խաղաղություն ու հաշտության խոսք ասում:

Խոստանում է, որ մեր հողում ոտ չի դնի այսուհետ,
Ու Իրանի երկրի վրա չի արձակի ոչ մի նետ:

Այդ պատճառով նա Թուրանից ուղարկել է հարյուր մարդ,
Ռոստամ-Զալը քեզ կպատմի՝ ինչ մարդիկ են, ինչ պատանդ»:

ՌՈՍՏԱՄԸ ՆԵՐԿԱՅԱՆՈՒՄ Է ՔԱՈՒՍ ՇԱՀԻՆ

Ռոստամ-Զալը թռավ ինչպես հսկա առյուծ այդ պահին,
Ձեռքը դրած թեզանիքին՝ ներկայացավ իր շահին:

Քեյ-Քավուսը տեղից ելավ, եկավ նրան ընդառաջ,
Հարցում արավ. «Ինչո՞ւ դարձար ճամփի կեսից օր առաջ»:

Այնուհետև Ռոստամ քաջին հարցուփորձեց դառնախիստ
Եվ զարմացավ, թե ինչու է որդին բարի ու հանգիստ:

Ու չոքելով գետնի վրա Ռոստամ-Զալը մեծափառք,
Աշխարհակալ Քեյ-Քավուսին բարեմաղթեց երկար կյանք:

Այնուհետև գովաբանեց Սիավուշին անվանի
Եվ նամակը հանձնեց շահին, որ իր ձեռքով բաց անի:

Բայց մեծազահ Քավուս շահը խորամանկ էր, գաղտնատես,
Ուստի նրա պայծառ դեմքը խիստ սևացավ կուպրի պես:

Նա Ռոստամին այսպես ասաց. «Ենթադրենք, թե տղաս
Կռվի հարցում փորձառու չէ և անմիտ է, և տհաս.

Բայց չէ՞ որ դու մեծահամբավ փահլևան ես, ռազմագետ,
Մինչև այժմ ոչ մի հսկա ուժ չի փորձել ուժիդ հետ...

Դու չգիտե՞ս ուխտադրուժ Աֆրասյաբին չարադեմ,
Այսուհետև ինչպե՞ս պիտի կռիվ վարեք իրար դեմ:

Երբևիցե ես իմ կյանքում չէի խաբվել այսքան հեշտ,
Չէի կարծում, որ իմ որդին խաբեբա է, անպարկեշտ:

Երբ չարի դեմ բարի եղար՝ կստանաս չար հատուցում,
Այդ պատճառով բախտը մեր դեմ միշտ դավեր է հարուցում:

Աֆրասյաբը սիրաշահեց ձեզ նվերով աղծապիղծ,
Ի՞նչ փույթ նրան, զի գանձերը կողոպտում է ամենից:

Նա ձեզ խաբեց՝ նվիրելով թուրք ցեղերից մի սերունդ,
Նույնիսկ իրենք չգիտեն, թե ինչ հորից են, ինչ ծնունդ:

Աֆրասյաբի համար մեկ է, պատանդ ունի, թե պայման,
Ջիհուն գետը քթի տակ է, նա կարշավի անպայման:

Դուք անխելք եք և միամիտ, որ այդքան հեշտ խաբեց ձեզ,
Նա անպատվեց թե՛ իմ գահը, թե՛ իմ որդուն, և թե՛ քեզ:

Սիավուշի մոտ կուղարկեմ հնարամիտ մի զինվոր,
Որ շուտափույթ ինձ մոտ բերի պատանդներին իր բոլոր:

Ես կկախեմ այդ թուրքերին կախաղանի սյուներից,
Ավարառու թուրքի ընծան մի՞թե պետք է քեզ ու ինձ:

Թող իմ որդին Թուրանի դեմ կռիվ վարի անհապաղ,
Մահու, կենաց կռի՞վ է սա, թե՞ ձիերի մրցախաղ:

Իմ բանակը թող նա կանչի դեպի կռվի ասպարեզ,
Ոչխար սիրող Աֆրասյաբը կհարձակվի գայլի պես:

Այնժամ խիզախ իմ այրուձին կռիվ կանի, կողոպուտ,
Մենք Թուրանից երբևիցե չենք ստացել մեծ օգուտ»:

Ռոստամն ասաց. «Մի բարկանա, ով Քեյան ծառ քաղցրաբերք,
Ողջ Թուրանը մոխիր կանի քո բանակը մշտաերթ:

Քո պատվերով զորքը տարանք մինչև գետը մեր Ջիհուն,
Կարծում էինք, թե դեմ կգա Աֆրասյաբը արնախում:

Մենք այրուձի զորքեր տարանք պատերազմի ասպարեզ,
Բայց հաշտության պատգամ հղեց Թուրան-շահը մեզ ու քեզ:

Եթե մի մարդ որոնում է այսուհետև հանգիստ քուն,
Ինչո՞ւ պիտի մենք ցանկանանք կրակ ու սուր, մահ ու թույն:

Շահին բնավ վայել չէ, որ խախտի պայման և օրենք,
Պապենական կարգերի դեմ ինչո՞ւ պիտի պայքարենք:

Եթե շահը մեր պայմանին հակառակի անխոհեմ,
Նույնիսկ անխելք մարդիկ պիտի մեզ պարսավեն, հայհոյեն:

Սիավուշը եթե կռվի մեծ ցանկություն ունենար,
Ռազմագետի հզոր անուն և շահի թագ կունենար:

Ո՛վ Քաուս շահ, մի՛ որոնիր պատերազմի նոր առիթ,
Մահկանացու մարդ կոչվածը որսի էշ չէ, ոչ էլ վիթ:

Կռվի դաշտից չի հագեցել Ռոստամ-Զալը: Բայց չէ՞ որ
Ժիր առյուծի որսի համար խիտ անտառ է հարկավոր:

Սիավուշը ոչ մի դեպքում իր պայմանը չի խախտի,
Թեկուզ Քաուս շահը նրան անգթաբար գլխատի:

Մի խորտակիր քո զավակի ջահել կյանքը հին ոխով,
Չի ծերության տարիներդ պիտի մաշես ախ-վախով»:

Ռոստամ-Զալի խոսքից շահը դառավ շանթված մի առյուծ,
Սիրտը նորից ալեկոծեց իր վերքերից հինավուրց:

Ասաց. «Գիտեմ ինչու ես դու խաղաղություն պահանջում,
Որովհետև գահիս համար չես հառաչում, տրտնջում:

Դու կուրացար Աֆրասյաբի նվերներով լիառատ,
Այդ պատճառով կռվի գործը թողիր կիսատ ու պռատ:

Դու կաց այստեղ, մինչև Թուսը պատերազմի ձի թամբի,
Զորավար է նա արժանի, Քաուս շահին չի խաբի:

Եթե որդիս չի ցանկանում հակառակել իմ կամքին,
Ապա թող որ զորքը հանձնի Թուսի բարի խնամքին»:

Բայց Ռոստամը խիստ բարկացավ, աղաղակեց բարձրագոչ.
«Իմ փոխարեն,- ասաց,- թող որ Թուսը զարկի մարտակոչ:

Եթե ինձնից նա առավել գերազանց է ու գերող,
Այսուհետև Քաուս շահին զինվոր լինել չեմ կարող»:

Նա դուրս եկավ շահի մոտից՝ բռնեց ճամփան իր դարձի,
Եվ Սիստանի կողմը տարավ իր բազմագունդ այրուձին:

Իսկ Քաուսը կանչեց Թուսին, ասաց. «Ո՛վ իմ քաջ առյուծ,
Ձեռքիդ պահիր ամուր վահան, նետ ու նիզակ ու պախուրց:

Քեզ եմ տալիս խռովախոս, մահազեկույց մի նամակ,
Բալխ քաղաքի կողմը դու տար մեր բանակը անքանակ»:

Քաուս շահի ապարանքից Թուսը գնաց շատ արագ,
Ջոկեց, տարավ ընտրելագույն այրուձի և հետևակ:

ՔԱՈՒՍԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ ՍԻԱՎՈՒՇԻՆ

Քաուս շահը որդուն գրեց խստաբարո մի նամակ,
Որ նա կռվից վերադառնա խաթանգ նետից էլ արագ:

Բայց նախօրոք փառաբանեց ամենատես Աստծուն,
Որ աշխարհի էակներին անչափ սեր է միշտ տածում:

Գրեց. «Ո՛վ դու Քեյան գահի իմ թագազարդ և իմ բախտ,
Թող Աստված քեզ միշտ պարգևի հաստատահիմք թագ ու թախտ:

Տեսնում եմ, որ կռվի դաշտից դու երես ես ետ թեքում,
Իմ խորհուրդը մի՞թե այդքան նսեմացավ քո մտքում...

Մի որոնիր Աֆրասյաբից խաղաղություն, հաշտություն,
Թեկուզ, գիտեմ, ցանկանում ես ժամանակից շուտ գալ տուն:

Խաբեությամբ ջահել կյանքդ մի ենթարկիր վտանգի,
Քանզի Աստված քեզ չի ների և կպատժի կրկնակի:

Քեզ մոտ պահած պատանդները հեծվոր լինի, հետիոտ,
Դիր բոլորին էշի վրա, շղթայակապ բեր ինձ մոտ:

Չեմ զարմանամ, թե ինչ կերպ է Աֆրասյաբը քեզ խաբել,
Բազում անգամ ինձ ստել է՝ պատերազմից ետ ճամփել:

Ես հաշտության մասին երբեք խոսք չեմ ասել ոչ մեկին,
Եվ չգիտեմ ի՞նչ պատճառով, ո՞նց մոլորվեց քո հոգին:

Գուցե խելքից քեզ հանել է այդ սևահոն թրքուհին,
Եվ կուրացավ Ռոստամ-Զալը նվերներից թանկագին:

Մի՛ տատանվիր, առ քո ձեռքը սրաթռիչ նետ, նիզակ,
Ողջ Թուրանը փոշի արա սև նժույգիդ պայտի տակ:

Քաջ զորավար Թուսը հիմա կգա քեզ մոտ և կօգնի,
Նա պատերազմ վարել գիտե, կռվից երբեք չի հոգնի:

Քո հաշտության նոր պայմանը մեզ կբերի մեծ աղետ,
Քեզ Իրանում կպարսավեն հայրենադավ մարդկանց հետ:

Թշնամու դեմ դու կատարիր գիշերախաբ հարձակում,
Զի Թուրանի շահը մեզնից դողդողում է, սարսափում:

Եթե թուրքի հանդեպ ունես, իրոք, և՛ սեր, և՛ հարգանք,
Այսուհետև քեզ կանիծենք, քո ծնունդը կլրողբանք:

Քո բանակը հանձնիր Թուսին, ու ետ դարձիր, եկ Իրան,
Չէ՞ որ հիմա դու չես կարող բանակ շարժել դեպ Թուրան»:

Շահը կնքեց այդ նամակը և ուղարկեց անհամբեր,
Ճամփա ընկավ մի ուղտ հեծած մեծահամբավ մի բանբեր:

Սուրհանդակը Սիավուշին շահից հանձնեց մի նամակ,
Իսկ նամակում կային քաղցր ու սուր խոսքեր անքանակ:

Սուրհանդակը պատմեց նրան Քաուս շահից ու Թուսից,
Այնուհետև, թե Ռոստամը ոնց նեղացավ երկուսից:

Սիավուշը շատ մտածեց թուրքերի և հոր մասին,
Ասաց. «Եթե պատանդներին տանեմ հանձնեմ Քաուսին,

Հաստատ գիտեմ՝ անմեղ մարդկանց այնտեղ պիտի գլխատեն,
Այդ պատճառով մեծ ու փոքր ինձ կանիծեն ու կատեն:

Ի՞նչ լավ բանի համար, կամ ի՞նչ հույսով կռվեմ թուրքի դեմ,
Անտարակույս աշխարհն ամբողջ կբամբասի, լավ գիտեմ:

Եթե զորքս հանձնեմ Թուսին, ապա շահի մոտ գնամ,
Թե՛ նախատինք պիտի կրեմ, թե՛ հալածանք այս անգամ:

Թե առջևում, թե հետևում ամենուրեք կա վտանգ,
Ո՞վ կարող է ճիշտը ասել՝ ինչո՞ւ եկանք, ո՞ւր ընկանք»:

ՍԻԱՎՈՒՇԸ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒՄ Է ԲԱՀՐԱՄԻ ԵՎ ՇԱՎԵՐԱՆ-ԶԱՆԳԻԻ ՀԵՏ

Ե՛վ Բահրամը, և թե Զանգին Սիավուշի դղյակում
Առանձնաբար վիճում էին, մեկ-մեկու դեմ առարկում:

Ասպարեզից երբ որ գնաց Ռոստամ-Զալը քաջորդի,
Այս երկուսի հետ էր նստում Սիավուշը խորհրդի:

Սիավուշը նրանց ասաց. «Դժբախտ եմ ես իսկապես,
Այդ պատճառով տառապում եմ բազմաչարչար որբի պես:

Քաուս շահը գոռովագութ ու բարի էր իմ հանդեպ,
Բայց Սուդաբեն այնպես արեց, որ վատ վարվի նա ինձ հետ:

Շահնշահի ապարանքում տեսա խարդախ կանանց,
Զահել կյանքս այնտեղ թոշնեց, սիրտս պատեց վերք ու խոց:

Ինձ Իրանից դուրս վռնդեց շահի կինը սիրապաշտ,
Խաղաղ կյանքի փոխարեն ես նախընտրեցի կռվի դաշտ:

Աֆրասյաբը մեծ բանակ էր դրել Բալխում ու Սողդում,
Բայց պարտության ու նահանջի սարսափից էր դողդողում:

Պատերազմով ազատեցի ես Իրանը թշնամուց,
Ավարառու թուրքը այնտեղ սուր էր ճոճում դեռ վաղուց:

Մենք շահեցինք պատերազմը, առանք պատանդ ու ոսկի,
Իսկ մոբեդը ասաց. «Աստված թող ձեր ուղին լավ հսկի:

Քաուս շահը որոնում է պատերազմի նոր առիթ,
Որ սպանի անմեղ մարդկանց, հանց անտառի մոլոր վիթ:

Գիտեր կյանքի լավն ու վատը Քեյ-Կոբադը բարձրագահ,
Մեկ անգամ է ծնվում, ափսոս, մի այդպիսի խելոք շահ:

Քաուս շահը նենգամիտ է, ինքնահավան ու գոռոզ,
Պատճառ չունի, բայց մղում է պատերազմի մեծ քարոզ:

Ես ո՞նց փոխեմ սուրբ պապերիս ճանապարհը իմ շիտակ,
Ջի ապրում եմ տիրոջ հզոր, ամենատես աչքի տակ:

Նա ուզում է, որ ես զրկվեմ թե այս կյանքից, թե մեկի,
Որ ինձ պատեն լոկ չարիքներ ու տանջանքներ բազմակի:

Ո՞վ կարող է հիմա ասել՝ ինչ կլինի վերջը մեր,
Ո՞ւմ կնետի Աստված ներքև, ո՞ւմ կտանի դեպի վեր:

Ա՜խ, երանի թե իմ մայրը ինձ չբերեր լույս աշխարհ,
Չէի լինի կասկածանքի կամ թե խանդի լոկ պատճառ:

Այս աշխարհը վեր խոյացող դառնապտուղ ծառ է մեծ,
Իսկ դեղնահար տերևները՝ գետին իջնող մահ ու ծեծ:

Գնամ գտնեմ մի նոր անկյուն,- հառաչանքով ասաց նա,-
Մեռած լինեմ, թե կենդանի, միայն շահը չիմանա:

Ով անվանի, իմ քաջ Զանգի, գնա հայտնիր թշնամուն,
Ետ եմ բերում պատանդները, նվերները բազմանուն»:

Ապա դարձավ իր զինակից Բահրամին ու Գուդերզին,
Ասաց. «Մինչև Թուսի գալը հսկեք զորքին ու մարզին»:

Այս խոսքերից քաջ Բահրամի սրտում ցավեր ծովացան,
Իսկ Շավերան-Զանգին այնժամ արցունք թափեց ողբաձայն:

Ու չիմացան այդպես նրանք ինչ ելք գտնեն, ինչ հնար,
Եվ երկուսով կանգնել էին մտամոլոր ու շվար:

Բայց Բահրամը ասաց. «Մենակ ինչպե՞ս պիտի դու ապրես,
Օտար հողում ոչ ծնողներ և ոչ ընկեր դու ունես:

Արի Քաուս շահին գրենք մի այսպիսի լավ նամակ,
Թե ուզում ենք սիրաշահել Աֆրասյաբին խորամանկ:

Մեծ ամոթ չէ, եթե Քաուս շահից խնդրես դու ներում,
Բայց Ռոստամին ետ կանչելով՝ մեծ ուժեր ենք մենք բերում:

Այս նամակում կռվից բացի ուրիշ մի նոր խոսք չկա,
Շուտ ազատիր պատանդներին, ոչ տեսնող կա, ոչ վկա:

Քաուս շահի հրամանով գնանք կռվի ասպարեզ,
Թող Թուրանը տագնապահար վայնակոչի խենթի պես:

Սին մտքերով մի պղտորի ջահել սիրտդ նորակերտ,
Քո կորուստով Քաուս շահը չի վշտանա ոչ մի կերպ:

Քեյ-Քաուսի մահից հետո շահ կդառնաս անպատճառ,
Քո տերության, գահի ներքո չի չորանա ոչ մի ծառ:

Ինչո՞ւ պիտի իրանական գահը թողնես դու թափուր,
Քանզի գիտեմ, շահնշահ ես, արդարադատ ու մաքուր»:

Գուցե Աստված փաղտնիք ունի ամենատես աչքի տակ,
Որ քաջերի խելոք միտքը նա համարեց ոչ չիտակ:

Ասաց. «Ավեր այս աշխարհում լվից մինչև փիղը մեծ,
Իր գոյության ողջ օրերում կրում է միշտ մահ ու ծեծ:

Քաուս շահը պահանջում է արյուն-արցունք մշտահորդ,
Ցանկանում է, որ այս կռվում լինեմ քենի լոկ միջնորդ:

Իսկ թուրքերի հարցում, գիտեմ, անհողդողդ է ու համառ,
Եթե նրանց Իրան տանեմ՝ կգլխատի անպատճառ:

Իմ վարմունքը, հաստատ գիտեմ, նա չի ների ոչ մի կերպ,
Գլխիս պիտի լուտանք թափի՝ կարկտի պես անվրեպ:

Եթե սիրտը ձեր զայրացավ իմ խոսքերից չարամիտք,
Ամենուրեք դուք իմ մասին տարածեցեք վատ կարծիք:

Ձեզ եմ թողնում մեծ վրանս և դրոշը Կավեի,
Բախտս քամու բերան կտամ, որ նա տանի՝ ավերի:

Ինքս անձամբ ես կլինեմ ինձ ուղեցույց ու դեսպան,
Եվ կազատեմ պատանդներին ու չեմ լինի մարդասպան:

Աֆրասյաբին ետ կուղարկեմ պատանդներին այս ընտիր,
Թող իմ վիշտը այսուհետև բեռ չլինի ձեր սրտին»:

Սիավուշի այդ խոսքերից քաջ Բահրամը և Զանգին
Խիստ երկյուղից արտասվելով՝ խոնարհվեցին մինչ գետին:

Իսկ Շավերան-Զանգին ասաց. «Քո ծառան ենք, ո՛վ անհաղթ,
Մեր պայմանը թող մինչև մահ ամուր լինի և անխախտ»:

ՍԻԱՎՈՒՇԻ ՊԱՏԳԱՄԸ ԱՖՐԱՍՅԱԲԻՆ

Սիավուշը քաջ Զանգիին ասաց. «Մեկնիր դու Թուրան,
Աֆրասյաբին տար իմ կողմից մեծ պատգամ ու պատվիրան:

Ասա նրան, որ Քաուսը չի ցանկանում հաշտություն,
Քաղցր գինի ես ցանկացա, բայց մատուցեց դառը թույն:

Թող ինձ զրկեն թագ ու գահից, ես պայմանս չեմ խախտի,
Այսուհետև գուցե Աստված ցույց տա ուղին իմ բախտի:

Ամենազոր տերը միակ ապավենն է իմ հույսի,
Այսօրվանից ես չեմ ուզում թագն ու գահը Քաուսի:

Թող գետինը ինձ գահ լինի, իսկ երկինքը՝ ոսկե թագ,
Ես չեմ կարող նորից գնալ, ապրել իմ հոր ձեռքի տակ:

Աֆրասյաբից չեմ պահանջում երկրներ և ապարանք,
Մի անկյուն է ինձ հարկավոր, որ ես ապրեմ խաղաղ կյանք:

Միայն թե ես հեռու լինեմ Քաուս շահի չար աչքից,
Արքայական խրախճանքից, պատերազմի աղմուկից»:

Զանգին ելավ, իսկույն տարավ պատանդները Թուրանի,
Գերսիվազի բերած գանձը, և մի մասը թալանի:

Զանգին հասավ պահակակետ, լսեց ինչ-որ մի աղմուկ,
Իսկ այդ պահին մի մարդ եկավ, որի անունն էր Տիվրուկ:

Նա Զանգիին ընդառաջեց մինչ դղյակը քարակերտ,
Որ զրուցի Աֆրասյաբը պատգամախոս հյուրի հետ:

Բայց Շավերան-Զանգին իրոք հեռատես էր, գործարար,
Նա Թուրանի շահին հանձնեց գաղտնածածուկ մի ծրար:

Աֆրասյաբը հրամայեց. «Հյուրին տվեք լավ վրան»,
Բայց նամակը սաստիկ հուզեց, սարսափ պատեց խիստ նրան:

Այնուհետև նա Փիրանին նստեցրեց իր կողքին,
Չի կարոտ էր նրա խելքը, համախորհուրդ լավ խոսքին:

Շահը նրան ասաց. «Ո՛վ քաջ, բավ է լսենք լաց ու կոծ,
Այս նեղության ծանր պահին պետք է գտնել նոր միջոց»:

Ծեր-Փիրանը պատասխանեց. «Թուրանի շահ մեծազոր,
Թող Աստված քեզ երկար կյանք տա, երջանկության ամեն օր:

Դու ես տերը աշխարհամարտ բանակների ու գանձի,
Իմաստասեր ոչ մի գիտուն խելքով քեզ հետ չի մրցի:

Բայց աշխարհում դեռ չի ծնվել Սիավուշի պես էակ,
Նա նոճու պես սլացիկ է, գեղեցիկ է հանց լուսնյակ:

Անչափ վեհ է նա իր տոհմից, հոգին անուշ է խնկից,
Որ կարծես թե մայր չի ծնել, այլ իջել է երկնքից:

Եթե անգամ նա չունենար այդքան ազնիվ հատկություն,
Նա, որ կռվի չելավ մեր դեմ՝ պետք է կնքել հաշտություն:

Պատճառ չեղավ կոտորածի ու զայրացավ իր հոր դեմ,
Աֆրասյաբից տուն է ուզում, ոչ թե պարտեզ կամ եդեմ:

Ո՛վ Աֆրասյաբ, գտիր ծայրը այս խճճված կծիկի,
Այնպես վարվիր, որ մեր հողից մի այլ երկիր չծլկի:

Հզոր մահը Քաուս շահին շուտով կանի գահընկեց,
Սիավուշը պիտի բազմի իր հոր գահին երկնամերձ:

Եթե շահը ցանկանում է դուրս գալ այս նեղ վիճակից,
Սիավուշին նամակ գրիր, թող հեռանա իր զորքից:

Թող գա մեզ մոտ և իր կյանքը ապավինի Աստծուն,
Տուր աղջկադ կրոնական կարգով նրան հարսնացու:

Մաքուր սիրով նա կսիրի քո աղջկան որպես կին,
Այսուհետև միտ չի բերի Քեյան տոհմից ոչ մեկին:

Եվ բարեբեր գործի համար քեզ կսիրեն Թուրանում,
Եվ թշնամի մարդիկ նույնպես կմեծարեն Իրանում:

Այդպես երկու կողմի զորքը քեն չեն պահի այսուհետ,
Ի՞նչ իմանանք, գուցե Աստված ուղարկել է, որ հաշտվենք»:

Աֆրասյաբը ուշիմ լսեց Ծեր-Փիրանին և, իրոք,
Նա համոզվեց, որ Փիրանը և՛ բարի է, և՛ խելոք:

Ասաց. «Լեզուդ հոգուդ մեջ է, իսկ սուր միտքդ՝ շրթունքիդ,
Թող բարեգութ Աստված երկար կյանք պարգևե ծերունիդ:

Ամեն էակ կյանքում ունի աստվածային մի հասույթ,
Բայց ես կասեմ քո խրատին հակակարծիքը այլ ասույթ.

«Ինչքան էլ որ էգ կորյունին դու խնամես, փայփայես,
Երբ մեծանա՝ գիտեմ, պիտի սուր-սուր ճանկեր ցույց տա քեզ»:

Իսկ Փիրանը թե. «Թող շահը նորից խորհի այդ մասին,
Իր ծնողից փախչող մարդը՝ երբեք մեզ չի վնասի:

Քաուս շահի մահը մոտ է, ո՞վ կփոխի այդ անձին,
Պարզ է, որդին պիտի տիրի նրա գահին ու գանձին:

Այսուհետև ողջ Իրանը պինդ կպահես քո ձեռքում,
Այդպիսի բախտ դեռ ոչ մի շահ չի երազել իր կյանքում»:

ԱՖՐԱՍՅԱԲԻ ՆԱՄԱԿԸ ՍԻԱՎՈՒՇԻՆ

Աֆրասյաբը արքունական դպիրի հետ երկուսով,
Սիավուշին գրեցին մի նամակ մուշկով, ամբրոսով:

Նախ նամակում փառաբանեց ամենատես էակին,
Որը վեր է, անձեռնհաս, բայց սիրելի ամենքին:

Նա է տերը մտքի, հոգու, անէության ու գոյի,
Առանց նրան՝ աշխարհն ամբողջ հավասար է զրոյի:

«Դու ես տերը թագի, գանձի, քեզ տիրոջից ողջություն,
Աֆրասյաբը ցանկանում է լավություն ու բարություն:

Ինձ Շավերան-Ջանգին պատմեց նպատակդ հեռատես,
Ու զարմացա, որ Քաուսը քեզ հետ վարվեց ոչ հոր պես:

Խելոք մարդուն էլ ի՞նչ է պետք այս անցավոր աշխարհից...
Արի՛ ինձ մոտ, ես հարուստ եմ, ե՛կ, ապավեն եղիր ինձ:՝

Քեզ անհամբեր սպասում է ողջ Թուրանը մշտահույր,
Իմ քաջերը, ես և զորքս, և ամբոխը բազմաբյուր:

Ես կարոտ եմ քո տեսության, դու կլինես իմ որդի,
Քեզ կսիրեմ քո ծնող հայր՝ Քաուս շահից կրկնակի:

Քեզ հարազատ իմ հարկի տակ դու նեղության չես քաշի…
Ես ծերության իմ օրերը ախ ու վախով չեմ մաշի:

Դու գրում ես, որ քեզ համար ես որոնեմ ուրիշ հող,
Չէ՞ որ մարդիկ ինձ կանիծեն, այդպիսի բան չեմ կարող:

Իմ Թուրանում դու կգտնես քեզ արժանի մի անկյուն,
Չինաց ծովն էլ թե որ անցնես՝ նորից պիտի գաս մեր տուն:

Դու համարձակ արի ինձ մոտ, ես քեզ կտամ ձի, արոտ,
Քեզ հարազատ հայր կլինեմ, աչքս ճամփիդ է կարոտ:

Եթե մի օր դու ցանկանաս նորից հաշտվել քո հոր հետ,
Արցունքներով կհեղեղեմ քո ողջ ճամփան, ինչպես գետ:

Քաուս շահը արդեն ծեր է, նոր կռիվներ չի մղի,
Զառամ մարդու կյանքը ընդմիշտ երազներով է հղի:

Վաթսուն և հինգ քայլից հետո մարդ մաշվում է մեջքնումեջ,
Էլ ի՞նչ կրակ, երբ մարում է ծերության պաղ ջրի մեջ…

Քաուս շահի մահից հետո քոնն է գահը Իրանի,
Արի ինձ մոտ, երդվում եմ քեզ՝ բնավ վատ բան չեմ անի»:

Թշնամին միշտ թշնամի է, ի՞նչ բարեկամ, ազգական,
Թեժ կրակը բորբոքվում է սառը քամուց մշտական:

ՍԻԱՎՈՒՇԸ ՄԵԿՆՈՒՄ Է ԹՈՒՐԱՆ

Սիավուշը Քաուս շահին արագ գրեց մի նամակ.
«Աստված մանկուց ինձ սնուցեց մտքի կորով ու ճաշակ:

Բայց Քաուսի վատ արարքը պղտոր միտքը խանդաբորբ,
Ինձ դարձրեց սիրտը խոցված թշվառական ու միշտ որբ:

Արքայական կանանոցը լի էր դավով ու քենով,
Ուր որ ձեռքս ես լվացի իմ սեփական արյունով:

Ամենակուլ սուրբ կրակի միջով անցա ես համառ,
Եվ անտառում եղնիկն անգամ արցունք թափեց ինձ համար:

Պալատական խաղ ու դավից փախա, եկա կռվի դաշտ,
Որ Իրանը և Թուրանը խաղաղ լինեն ու միշտ հաշտ:

Իմ վարմունքից խիստ դառնացավ Քաուս շահը կռվասեր,
Պատերազմի համար նորից նա վերցրեց սուր սուսեր:

Շահի աչքը չի կշտանում իր գեղեցիկ թագուհուց,
Ուստի առիթ նա որոնեց, որ ազատվի իր որդուց:

Թող հավիտյան հաստատ մնա Քեյան գահը երկնահաս,
Արքունական պահեստները՝ ոսկուց, գինուց անպակաս»:

Այնուհետև Բահրամին, թե. «Ո՛վ Իրանի քաջ զավակ,
Քո անունը թող աշխարհում լինի երդման օրինակ:

Քեզ եմ հանձնում իմ վրանը ու դրոշը Կավեի,
Եվ փղերը արքունիքի, որ թշնամուն ավերի:

Թուր երբ որ քեզ մոտ կգա՝ տուր նրան զորք ու պարեն,
Իսկ դու ամեն պատահարին՝ հրամայիր փող հարեն»:

Սիավուշը իր բանակից ջոկեց հարյուր ձիավոր,
Արիածին նետաձիգներ, բարեկամներ մերձավոր:

Ջոկեց նաև հարյուր ծառա, ընտիր ձիեր ոսկեսանձ,
Տարավ նույնպես Աֆրասյաբի նվերները բազմազանձ:

Անմիջապես նա բարձրաձայն իր բանակին ասաց, թե.
«Արդ մեկնում եմ թշնամու մոտ, ով իմ քաջեր երկաթե:

Ինձնից հետո քաջ Բահրամը թող որ կապի պինդ գոտի...»,
Ու հարգալից զինվորները խոնարհվեցին մինչ գետին:

Արեգակը իր շողերը երբ որ քաշեց մայրամուտ,
Երկրի վրա նորից իջավ խորհրդավոր մուժ ու մութ,

Այդ ժամանակ Սիավուշը գնաց հասավ մինչ Ջիհուն,
Տերմենդ ու Չաչ քաղաքներում խրախճանք էր մի անհուն:

Ծաղկազարդ էր բակ ու փողոց, կային խռիվ բյուր մարդիկ,
Կարծես ոչ թե տոն էր այնտեղ, այլ արքունի հարսանիք:

Դիմավորման եկան բազում փողահար ու թմբկահար,
Իսկ Փիրանը իր հետ բերեց ճերմակ փղեր ծանրաքայլ:

Փղի վրա գահ դրեցին, գահի վրա՝ ապարոշ,
Ապարոշի մեջտեղ նույնպես՝ մահիկաձև մի դրոշ:

Ու բերեցին ազնվացեղ հազար նժույգ ոսկեթամբ,
Ասես տիրոջ լայն գոգնոցից սեր էր տեղում խնդությամբ:

Սիավուշը հեռվից լսեց ժիր փղերի զիլ բողոց,
Արագաճեպ նժույգների սմբակի ձայն, խրխնջոց:

Մեծահամբավ Տեր-Փիրանը եկավ Նոճուն ընդառաջ,
Նրան գրկեց ու համբուրեց, ասաց. «Ո՛վ իմ Քեյան քաջ,

Ես ծնկաչոք աղոթում եմ ամենազոր Աստծուն,
Որ դու հարգանք, սեր ես տածում քո հարևան թուրանցուն,

Աֆրասյաբը երբ կդառնա քեզ հարազատ հայր-ծնող,
Այն ժամանակ դու կստանաս առատ նվեր, կայք ու հող»:

Իսկ շահի մոտ կոնծում էին կարմիր գինին մշտահոս,
Ամենուրեք ցանում էին մուշկ ու քրքում և ամբրոս:

Սիավուշը խոր հուզմունքից թափեց աղի արտասուք,
Նորից հիշեց հայրենիքը, իր օջախը տրտմաշուք:

Հիշեց նաև Ռոստամ-Զալին ու քաջերին այլանուն,
Ինչպես էին մենամարտի ու մրցության փող հարում:

Հիշեց նաև Քաուս շահին, սիրտը տխրեց կրկնակի,
Ու երեսը մի կողմ շրջեց, որ Փիրանը չակնարկի:

Բայց Փիրանը լավ հասկացավ անհուն վիշտը այդ քաջի,
Եվ հիացած նայեց նրա սեգ ուսերին ու լանջին:

Ասաց. «Ո՛վ իմ բարեծնունդ դու արքայի քաջորդի,
Այժմ քո մեջ տեսնում եմ ես Քեյան գահի հաջորդին:

Արիածին ծագում անես, ո՛վ Կոբադի վեհ ժառանգ,
Քեզնից անշուշտ պետք է ծնվի աշխարհատեր մի զավակ:

Քեզ ի վերուստ շնորհված է մի սուր լեզու պերճախոս,
Գեղեցկատես քո վառ դեմքից մուշկ է բուրում և ամբրոս:

Մայրդ նույնպես Գերսիվազի բուն տոհմից է զտարյուն,
Չէ՞ որ պայծառ ծագում ունես, անմրցելի դու կորյուն»:

Սիավուշը պատասխանեց. «Ո՛վ գերազնիվ ծերունի,
Թուրանական հողում ոչ ոք քեզ պես բարի սիրտ չունի:

Դու հեռու ես Աhրիմանի նենգությունից իսկապես,
Դու չես դրժի քո պայմանը, եթե նույնիսկ կախեն քեզ:

Բարյացակամ քո ցանկությամբ ես կմնամ այս հողում,
Իմ կատարած քայլի համար միտքս սրտիս չի նեղում:

Եթե այստեղ իմ լինելը անօգուտ է, անիմաստ,
Ցույց տուր գնամ ուրիշ երկիր, քո պատգամին եմ պատրաստ»:

Իսկ Փիրանը պատասխանեց. «Դու շիտակ ես ու խելոք,
Ես կաշխատեմ, որ Թուրանում ուրախ ապրես և անհոգ:

Աֆրասյաբը թեկուզ ունի չարի անուն, վատ համբավ,
Բայց բարեսիրտ շահնշահ է, քինազուրկ է ու անդավ:

Նա էլ բարի ծնունդ է մի, շնորհ ունի ի վերուստ,
Նույնպես բարձր մտքի տեր է, ամրաբազուկ ու հարուստ:

Անմիտ մարդու պես չի վազում հարվածի դեմ շեշտուղիղ,
Ես էլ նրա արյունակից մի ուստիկն եմ, մի շավիղ:

Թե շահի մոտ, թե Թուրանում ունեմ հարգանք ու պատիվ,
Ունեմ հարյուր հազար հեծվոր և հետևակ բազմաթիվ:

Զորքի կեսը իմ տոհմից է, ինձ սիրում են ու պաշտում,
Անակնկալ հարձակումը խեղդում եմ բուն իսկ դաշտում:

Իմ գանձերը քեզ կընծայեմ, եթե մնաս Թուրանում,
Տե՛ս, ամեն պահ, ամեն մի մարդ քեզ գլուխ է խոնարհում:

Քանի դեռ կամ, քեզ չի հասնի չարի չնչին մի հարված,
Ամեն բարի քայլից առաջ՝ չարն է իշխում անկասկած»:

Սիավուշը շատ հավանեց Ծեր-Փիրանին խորագետ,
Համեմատեց նրան խելոք, արդարամիտ շահի հետ:

Այդպես, նրանք զրուցելով հասան մինչև Գանգակերտ,
Նա հիացած աչք չէր թարթում պերճ դղյակից քարակերտ:

Բերդ-քաղաքը կառուցված էր շքեղ ոճով հաստատուն,
Որ թվում էր մի մեհյան է, կամ թե չինաց կռատուն:

ԱՖՐԱՍՅԱԲԻ ԵՎ ՍԻԱՎՈՒՇԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

Սիավուշը տեսավ շահը մոտենում է հետիոտ,
Ձիուց իջավ ու վազեվազ առաջացավ նրա մոտ:

Աֆրասյաբը նրան գրկեց, ասաց. «Տեսա վատ երազ,
Այսուհետև ես չեմ վարի մահակործան պատերազմ:

Մի աղբյուրից թող ջուր խմեն էգ առյուծն ու եղջերուն,
Որ երբեք էլ չթափենք աղի արցունք ու արյուն:

Թուրանական հողը կրեց մեծ վիշտ՝ Թուրից նախահայր,
Առաջինը նա է եղել պատերազմի փողահար:

Առաջներում չեն հասկացել ինչն է դժոխք ու դրախտ,
Դու մեզ բերիր խաղաղություն, արքայական փառք ու բախտ:

Իմ Թուրանից քեզ եմ տալիս շեն քաղաքներ ու գյուղեր,
Եվ մարգակից ու բերքատու, անծայրածիր, լավ հողեր:

Դու երջանիկ կապրես այստեղ իմ բարեգութ ձեռքի տակ,
Չի պղտորվի անբիծ հոգիդ, պայծառ սիրտը քո շիտակ:

Քեզ եմ տալիս արքայական իմ գանձերը լիառատ,
Միայն քաղցր ժպիտ ցույց տուր քաջ Փիրանին ալեզարդ»:

Այնուհետև շահը բռնեց քաջի ձեռքը ամրաբուռ,
Եվ նրա հետ գնաց բազմեց Թուրի գահին ոսկեհուռ:

Նա հիացած և ակնդետ նայեց Նոճու երեսին,
Ասաց. «Ով քաջ, աշխարհին ամբողջ գովք է անում քո մասին:

Չկա մի մարդ՝ քեզ հետ մրցի իր մեծությամբ լուսավառ,
Քեյան գահից դու առավել վեհ ես, վսեմ, մեծափառ:

Համոզվեցի, որ Քաուսը բնավ այր չէ խոհամիտ,
Քանզի կրծքի տակ է պահում քենով լեցուն մի բիրտ սիրտ»:

Այդ միջոցին Աֆրասյաբի գեղաքանդակ դղյակում
Կին, տղամարդ, նաժիշտ, ծառա երգում էին, աղմկում:

Սիավուշի համար դրվեց ցլագլուխ մի մեծ գահ,
Նաժիշտները գահի շուրջը բոլորեցին գլխակախ:

Շահի շքեղ ապարանքում հավաքվեցին խնջույքի,
Մի օր ևս մարդիկ իրենց նվիրեցին հաճույքի:

Այնուհետև պալատ եկան թուրք քաջերը մեծամեծ,
Ամենաձայն բամբիռները հեկեկացին ողբաձեծ:

Բայց Թուրանշահ Աֆրասյաբը մշտարթուն էր ողջ գիշեր,
Անցած կյանքի դառը փորձը նա չէր կարող չհիշել:

Խելակորույս գինին թեկուզ բացեց լեզուն երգողի,
Բայց գինեհար, հոգնաթախիծ մարդիկ մտան անկողին:

Սիավուշը հագեցել էր հրահոսան գինուց հորդ,
Նա Իրանը մի պահ ջնջեց մտաշխարհից իր շփոթ:

Աֆրասյաբը խիստ պատվիրեց քաջ Շիդեին, ասելով.
«Սիավուշին պահպանեցեք նետ-աղեղով, սուսերով»:

Այդպես նրանց գինարբուքը անցավ ևս մի շաբաթ,
Ամենուրեք մատուցվում էր ոսկի, գոհար և արծաթ:

ԱՖՐԱՍՅԱԲԻ ԵՎ ՍԻԱՎՈՒՇԻ ՃՈԿԱՆԱԽԱՂԸ

Մի երեկո Աֆրասյաբը Սիավուշին ասաց, թե.
«Ճիշտ են ասել՝ խիստ ձանձրույթից մարդու սիրտը կպայթե:

Լուսաբացին արի գնանք ձիախաղի ասպարեզ,
Այնտեղ ճոկան, գնդակ ունեմ, դու ինձ խփիր, իսկ ես՝ քեզ:

Ասում են, թե՝ ձիախաղում լավ ճոկան ես դու շարժում,
Բոլորի հետ մրցում ես դու, անոխակալ, անզիջում»:

Նոճին ասաց. «Թող արքայից հեռու լինի ձեռքը չար,
Իմ ապագա բախտի ճամփին լույս փռեցիր հայրաբար:

Դու երկնատուր մի հսկա ես ու հոմայի մի թռչուն,
Ոսոխները սարսափահար նիզակից են քո փախչում»:

Ու քաջերը լուսաբացին մեկտեղ ելան ասպարեզ,
Ասպարեզը օրորվում էր մշտաշառաչ ծովի պես:

Աֆրասյաբը Սիավուշին ասաց. «Ջոկիր օգնական,
Որ մրցության հարմար պահին խփեն գնդակ ու ճոկան:

Այնուհետև բազմությունը կբաժանեմ ոնց կուզես,
Որ մի մասը ինձ ձայնակցի, իսկ մի մասը՝ կանչի քեզ»:

Սիավուշը պատասխանեց. «Քո դեմ կռվել չեմ կարող,
Թող մի ուրիշ փահլևան գա, ձեռքին ճոկան ոսկեօղ:

Մրցադաշտում քեզ օգնում են բազմաբազում թուրանցի,
Անհավասար այս կռվի մեջ ես միայնակ չեմ մրցի»:

Աֆրասյաբը շատ հավանեց Սիավուշի միտքը խոր,
Ուստի դատարկ բան համարեց խրատները իր բոլոր:

Այնուհետև շահը ասաց, «Ո՛վ անստվեր դու արփի,
Քո ճոկանով այնպես զարկիր, որ տեսնողը սարսափի:

Ցույց տուր այժմ ասպարեզում քո ուժերը գերազանց,
Թե Թուրանի իմ քաջերին, թե արիացի քո մարդկանց»:

Սիավուշը պատասխանեց. «Շահը մեծ է ու գերող,
Նրա խոսքից բացի այլ բան այստեղ լինել չի կարող»:

Աֆրասյաբը իսկույն կանչեց իր քաջերին՝ Ջեհանին,
Քելբադինին, Գերսիվազին, Փոլադին ու Փիրանին:

Ապա բերեց քաջ Հումանին և հսկային Նեստիհեն,
Որոնք ճապուկ ձիեր հեծած ջրից գնդակ կհանեն:

Ապա Նոճուն օգնող եկան Ռույինը և քաջ Շիդեն,
Առյուծ պատռող գոռ Էխվաստը, Անդրիմանը հաղթադեմ:

Սիավուշը շահին ասաց. «Ես մնացի մեն-մենակ,
Թուրք զինվորը չի արձակի քո դեմ անգամ մի գնդակ:

Եթե շահը ցանկանում է՝ ես կշոկեմ իրանցի,
Ասպարեզում գնդակ որսող՝ ինձ օգնական այրուձի»:

Աֆրասյաբը շատ հավանեց առաջարկը այդ խելոք,
Սակայն Նոճին որոշել էր՝ ում պիտ ջոկեր նախօրոք:

Ասպարեզից վեր բարձրացավ որոտընդոստ մի աղմուկ,
Ասպարեզի փոշին պատեց արևելքից արևմուտք:

Թմբուկների և ամբոխի մրցակոչից հաղթաձայն,
Կարծես մեկեն ասպարեզի հողը ելավ ցիր ու ցան:

Աֆրասյաբի մրցամասում ընկավ հսկա մի գնդակ,
Կտրիճների աղաղակը վեր բարձրացավ մինչ լուսնյակ:

Աֆրասյաբը իր ճոկանով եկավ զարկեց գնդակին,
Ու գնդակը վեր բարձրացավ, գնաց կպավ երկնքին:

«Գնդա՛կ տվեք Սիավուշին», ասաց շահը մեծասատ,
Որ կանգնել էր ասպարեզի ծայրամասում միշտ պատրաստ:

Շահի տված այդ գնդակը Սիավուշը համբուրեց,
Արքայական փողի ձայնը մրցադաշտին ահ բերեց:

Այնուհետև հեծավ ուրիշ արագավազ երիվար,
Ասպարեզի մրցամասում կատարելով վեր ու վար:

Ու ճոկանով այնպես զարկեց, որ գնդակը այնուհետ
Աներևույթ երկինք գնաց և համբուրվեց լուսնի հետ:

Ոչ ոք չկար ասպարեզում Սիավուշին հավասար,
Իսկ ամբոխը ձայնակցում էր. «Հաղթանակի դու հասար»:

Շահը ասաց. «Ես չեմ տեսել մի այսպիսի ձիավոր,
Տերը թող որ մաղթանք տալով քեզ դարձնի բախտավոր:

Ես նախօրոք ասել եմ, որ, ո՛վ սլացիկ իմ Նոճի,
Քո համբավը մեր երկրում քանի գնա պիտ աճի»:

Ասպարեզից մի քիչ հեռու բերեցին մի ոսկեգահ,
Գահի վրա արքայական շուքով բազմեց երկու շահ:

Աֆրասյաբը գոչեց. «Ով իմ թուրանցիներ մշտարթուն,
Ասպարեզը մերն է այժմ, մաղթում եմ ձեզ հաղթություն»:

Եվ թուրքերը խիկոյն ելան, որ հարվածեն անընդմեջ,
Բայց իրանցոց գնդակն ընկավ թուրքերի հոծ շարքի մեջ:

Սիավուշը այդ խենթ խաղից սաստիկ հուզվեց ու հանկարծ
Իր քաջերին պահլավերեն խրատական խոսք ասաց.

«Ասպարեզը կռվի՛ տեղ է, թե հաշտության մրցախաղ,
Մրցախաղի այդ գնդակը ե՛տ վերցրեք անհապաղ»:

Աֆրասյաբը հասկանում էր պահլավերեն ու ասաց.
«Սիավուշը նետ ու նիզակ խփել գիտե, անկասկած»:

Գերսիվազի ճիգ ու ջանքը ևս անցավ անարդյունք,
Ու ամոթից ասպարեզը աչքին թվաց գինարբուք...

Սիավուշը առավ նետը, ձեռքը քսեց աղեղին,
Քաշեց, լարեց ու հիացմունք նա պատճառեց նայողին:

Աֆրասյաբը նրան ասաց. «Քո պիրկ, նետով մահարձակ
Կարելի է երկինք ճեղքել, հասնել նույնիսկ մինչ լուսնյակ:

Կար ժամանակ՝ ոչ մի նշան չէր վրիպում իմ նետից,
Անցավ ջահել ժամանակս, ծերությունը հաղթեց ինձ:

Պատերազմում ոչ ոք ինձ պես ուղիղ նշան չէր խփում,
Բացի հսկա քաջ Ռոստամից, որից դևն էր սարսափում»:
Մրցախաղի էլ միտք չուներ Սիավուշը քաջածին,
Ուստի ազատ նա արձակեց հողմասլաց նժույգ-ձին:

Նա ամրակուռ մի նետ խփեց ճիշտ նշանի մեջտեղին,
Եվ շվարած թուրք քաջերը աղեղները վայր դրին:

Աֆրասյաբը նրան ասաց. «Գնանք պալատ խնջույքի,
Ու քեզ համար մեզ նվիրենք համանվագ հաճույքի»:

ԱՖՐԱՍՅԱԲԻ ՈՐՍԸ ՍԻԱՎՈՒՇԻ ՀԵՏ

Աֆրասյաբը Նոճուն ասաց. «Արի գնանք որսատեղ,
Ունեմ ընտիր նետ ու նիզակ և հեռաձիգ պրկաղեղ:

Այնտեղ մի քիչ ուրախանանք ու քամուն տանք հոգս ու ցավ,
Երբ ոտք դրիր դու Թուրանում՝ վիշտս անչափ մեղմացավ»:

Սիավուշը պատասխանեց. «Համաձայն եմ, այսուհետ
Շահը երբ որ հրամայի՝ ես կունենամ լարած նետ»:

Աֆրասյաբը իր հետ տարավ և որսկաններ, և բազե,
Եվ հոտառու որսի շներ, որ իրենց հետ վազվզեն:

Սիավուշը դաշտում տեսավ վայրագասուն մի մեծ ցիռ,
Ուստի որսի վրա քշեց իր նժույգը աստղաթիռ:

Հզոր թրի մի հարվածով էշին արավ երկու մաս,
Որ մի մասը մյուս կեսից ոչ ավել էր, ոչ պակաս:

Շահի բոլոր որսորդները հավաքվեցին խորհրդի,
Համոզվեցին, որ թուրքերից ոչ ոք Նոճուն չի հաղթի:

Որսորդներից մեկը ասաց. «Արժանի ենք պարսավի,
Այս ամոթից հետո ինչպե՞ս նորից գնանք արշավի»:

Իսկ ամրակազմ Սիավուշը հարձակվում էր ու որսում,
Որսատեղում տարածելով որսի ճիչ ու վայնասուն:

Նորից ելան-արշավեցին, անցան հանդեր ու դաշտեր,
Եվ իրենց հետ տարան նիզակ, նետ ու աղեղ և աշտե:

Որս անելով նրանք այդպես անցկացրին մեկ տարի,
Սիավուշի հանդեպ շահը սիրալիր էր ու բարի:

ՓԻՐԱՆԸ ԻՐ ԱՂՋԿԱՆ՝ ՋԵՐԻՐԵԻՆ ՏԱԼԻՍ Է ՍԻԱՎՈՒՇԻՆ

Մի երեկո Ծեր-Փիրանը երկար խորհեց, այնուհետ
Սիավուշին իր մոտ կանչեց ու զրուցեց նրա հետ:

Ասաց. «Գիտե՞ս, որ տարաբախտ մարդու պես ես ապրում դու,
Կյանքը ի՞նչ է, մի փուչ քամի, իսկ աշխարհը՝ մահվան դուռ:

Այստեղ չունես արյունակից և հարազատ բարեկամ,
Սերը միակ մի միջոց է, որ գտնես նոր ազգական:

Ինչո՞ւ պիտի դու չունենաս քեզ սրտակից սիրող կին,
Դու նման ես մարգագետնի եզրին բուսած մեն ծաղկի:

Դու քեզ համար գտիր հարմար մի գեղեցիկ հարսնացու,
Եվ Իրանի հոգս ու ցավը իզուր սիրտդ մի լցրու:

Եվ իմացիր, շահի մահից հետո ի՞նչ է հարկավոր–
Որ սևահեր գլխիդ դնես Քեյան թագը բախտավոր:

Իմ պալատի կանանոցում կան աղջիկներ հիասքանչ,
Ամեն մեկը մի արև է կամ մի լուսին գիշերաչ:

Շքեղազարդ իր դղյակում Գերսիվազը բարեսեր,
Տարբեր մորից, բայց մեկ հորից ունի երեք աղջիկներ:

Այդ բոլորը Ֆերիդունի ազնիվ տոհմից են սերում,
Լիալուսին այդ կույսերից տես, թե ո՞ւմ ես դու սիրում:

Իմ հյուրընկալ տանը նույնպես ունեմ դստրեր գեղանի,
Գեղեցկուհի իմ Ջերիրեն միայն քեզ է արժանի:

Համաձա՞յն ես ամուսնության, տար աղջիկս հարսնացու,
Ո՛վ իմ Նոճի, ապա բախտդ հանձնիր հույսին Աստըծու:

«Գիտեմ,- ասաց Սիավուշը,- ունես դստրիկ լուսնալույս,
Իմ հույսերի ճամփին դու ես առաջնորդ և ուղեցույց:

Ջերիրեին սիրում եմ ես, գեղեցիկ է, լուսահեզ,
Քո աղջիկը անտարակույս սիրտ կունենա և քեզ պես:

Ուրախ եմ, որ քո ցեղից ինձ վիճակվեց մի լույսի բախտ,
Բայց իմացիր՝ չեմ տրորի սուրբ պայմանը մեր անխախտ»:

Լուսնի պայծառ շողերի տակ Ծեր-Փիրանը ժպտերես,
Եկավ կնոջ մոտ և ասաց. «Բարի լուր եմ բերել քեզ:

Ջուր ես նստել մտամոլոր, մի սրտալի խոսք ասա,
Արարիչը ում է տվել Սիավուշի պես փեսա…»:

Սիրազեկույց Գյուլշահերը իսկույն գնաց դստեր մոտ,
Ասես չքնաղ Ջերիրեից տարածվում էր խնկի հոտ:

Մայրը դստեր գլխին դրեց ոսկեպսակ, ծաղկի պես,
Եկավ քաջն Սիավուշը Փիրանի մոտ հարսնատես:

Նա երբ տեսավ Ջերիրեին՝ ասես ժպտաց բախտը իր,
Քաուս շահին իսպառ ջնջեց մոլոր մտքից անխտիր:

Ճախարակը ինչքան էլ որ փոխեց ուղին իր բոլոր,
Նա շահի մոտ պատիվ ուներ և ապրում էր բախտավոր:

ՓԻՐԱՆԸ ՍԻԱՎՈՒՇԻՆ ԱՌԱՋԱՐԿՈՒՄ Է ԱՖՐԱՍՅԱԲԻ ԴՈՒՍՏՐ ՖԱՐԱՆԳԻՍԻ ՁԵՌՔԸ

Ծեր-Փիրանը Սիավուշին այսպես ասաց մի անգամ.
«Վեհ ու մեծ է Աֆրասյաբի ոսկե գահը երկնագամ:

Գիշեր-ցերեկ չես հեռանում նրա մտքից լուսամիտ,
Մի ցանկություն ունի շահը՝ ժպիտ տեսնի միշտ դեմքիդ:

Ամուր կապով դու հաստատվիր Աֆրասյաբին բարեկամ,
Այնուհետև դու կստանաս ավելի մեծ աստիճան:

Իմ աղջիկը քո կինըն է, բայց ավելի լավ է, որ
Աֆրասյաբի հարուստ փեշից գոհար փնտրես նորանոր:

Ողջ Թուրանում դու չես գտնի Ֆարանգիսից գեղեցիկ,
Եվ Իրանում դեռ չի ծնվել մի այդպիսի լավ աղջիկ:

Շահին ասա, որ գտել ես հարմարավետ հարսնացու,
Եվ Քաբուլում ու Քաշմիրում չկա նման թեկնածու:

Այսուհետև Աֆրասյաբը ամուր հենք է պնդարմատ,
Ողջ Թուրանում դու չես գտնի մեծահոգի նման մարդ:

Հրամայիր, որ շուտ գնամ ես Թուրանի շահի մոտ,
Նրան հաճո խոսքեր ասեմ, քաղցրալեզու, սրտամոտ»:

Նոճին ասաց. «Ծնված օրից մենք անզոր ենք, խարխափող,
Աստվածային գաղտնիքները ոչ ոք լուծել չի կարող:

Ես ի՞նչ խղճով դավաճանեմ քո աղջկան գեղապերճ,
Այդ կլինի զուտ կրքի գործ և մեղանչում սիրո մեջ:

Ջերիրեից բացի, գիտցիր, այլ կին առնել չեմ ուզում,
Ես չեմ ձգտում թագ ու գահի, ինձ իզուր ես համոզում:

Գուցե նորից, այսուհետև, չհանդիպեմ Քաուսին,
Փղամարմին քաջ Ռոստամին, Դեստան-Զալին, Գուդերզին:

Երբևիցե ինձ չեն տեսնի մեր քաջերը ամրակամ,
Ո՛չ քաջ Զանգին, ո՛չ Բահրամը, և ո՛չ Գիվը հաղթանդամ:

Խորտակվել է ամեն լավ բան իմ վիրալից սրտի մեջ,
Եվ չգիտեմ, թե ինձ համար որն է սկիզբ, որը՝ վերջ:

Իմ ապագան անորոշ է, բայց ապրելու հույսեր կան,
Համաձայն եմ, առաջարկիր Աֆրասյաբի աղջկան»:

Ապա Նոճին սրտի խորքից մի ախ քաշեց վշտաբեկ,
Որ կարծես թե ամբողջ կյանքում չէր հառաչել նա երբեք:

Իսկ Փիրանը նրան ասաց. «Խելոքությամբ գործ վարիր,
Մարդու կամքին բախտը միշտ էլ հակառակ է, անհարիր»:

ՓԻՐԱՆԸ ԲԱՐԵԽՈՍՈՒՄ Է ԱՖՐԱՍՅԱԲԻՆ

Քաջ Փիրանը ձիուց իջավ, եկավ կանգնեց գահի մոտ,
Շահը բնավ չէր նկատել նրան այդքան մտածկոտ:

Ուստի այսպես հարցուփորձեց. «Ի՞նչ կա, իմ քաջ նախարար,
Եվ ի՞նչ ցավ է սիրտդ մաշում, ինչո՞ւ ես լուռ ու շվար:

Քո ձեռքի տակ ունես ընտիր զորքեր, մարզեր ու գանձեր,
Քո խորհուրդով արձակեցի ստրուկներին խեղճ ու ծեր:

Ես մեկընդմիշտ քամուն տվի կռվի դաշտը քինահույզ,
Ի՞նչ է այժմ ցանկացածդ, խոստովանիր ի սիրույս»:

Իսկ Փիրանը պատասխանեց. «Ո՛վ լուսամիտ առաջնորդ,
Ինձ համար չէ արագ գործը բերել Թուրան-շահի մոտ:

Աղքատ մարդ չեմ, որ աղաչեմ մի կտոր հող կամ թե փող,
Ստորադաս ճորտ չեմ նաև մութ խցերում խարխափող:

Սիավուշը երեկ ասաց. «Ո՛վ իմ Փիրան բարեգութ,
Քո հայրական խորհուրդներով ես շահեցի մեծ օգուտ...

Բայց ուզում եմ հիմա գնաս Աֆրասյաբին ասես, որ
Քո փառավոր գահի ներքո ես ապրում եմ բախտավոր:

Աֆրասյաբի կանանոցում կա մի աղջիկ ոսկեգիս,
Ասում են, որ մայրը նրան անվանում է Ֆարանգիս:

Աֆրասյաբը թող իր ձեռքով բացի դուռը իմ բախտի,
Որ Իրանը և Թուրանը ոչ մի պայման չխախտի»:

Իսկ Թուրանի շահը հույզից թափեց աղի արտասուք,
Ասաց. «Սրտիս վրա իջավ կրկին ծանր վիշտ ու սուգ:

Մի ժամանակ մի աստղագետ ինձ այսպիսի խոսք ասաց –
Քեյան և քո Թուրի ցեղից աշխարհի կգա անկասկած

Արդարադատ մի թագավոր... Եվ զորավոր իր ձեռքով
Նա կավերի ողջ Թուրանը, քամուն կտա գահը քո...

Մեծ չարիքներ պիտի տեսնեմ, երբ ծերանամ, ո՛վ Փիրան,
Մահից հետո իմ աճյունը էլ չեն դնի դամբարան:

Ինչո՞ւ պիտի ես իմ ձեռքով իմ դեմ տնկեմ քենի ծառ,
Որ իմ ճամփան ծածկեն մահվան տերևները դեղնահար:

Քեյան ցեղի և Թուրանի տարբեր արյան դիպվածով
Կառաջանա մի անշեջ հուր կամ խորտակիչ մի մեծ ծով:

Թե ապագան ինչ կլինի՝ ոչ ոք ասել չի կարող,
Գուցե վաղը նա պահանջի ինձնից աթոռ կամ թե հող:

Սիավուշին կպահպանեմ ինչպես հայրը իր որդուն,
Երբ ցանկանա վերադառնալ՝ ես կուղեկցեմ մինչ Ջիհուն»:

Ծեր-Փիրանը ասաց նրան. «Ո՛վ մեծասաստ շահնշահ,
Աստղագետի մեկնությունից չես ստանա ոչ մի շահ:

Աֆրասյաբի և Կոբադի երկու ցեղից խառնածին
Ինչ սերունդ էլ աշխարհ որ գա՝ է՛լ նրա հետ չեն մրցի:

Ոչ մի մոբեթ չի գուշակի մեր բախտորոշ ապագան,
Լոկ Աստված է ի ցույց տալիս լուսնի ներքո ամեն բան»:

Աֆրասյաբը պատասխանեց. «Միտքդ սուր է, լուսափայլ,
Այսուհետև քո խորհուրդով ես կընթանամ քայլ առ քայլ»:

Քաջ Փիրանը ուրախությամբ ծունր իջավ մինչ գետին,
Գովեց շահի թագն ու գահը և մարտական կուռ գոտին:

ՖԱՐԱՆԳԻՍԻ ԱՄՈՒՍՆՈՒԹՅՈՒՆԸ ՍԻԱՎՈՒՇԻ ՀԵՏ

Բոլորաշուրջ արեգակը պտույտ գործեց անխափան,
Մով երկնքի դաշտի միջին փայլեց ինչպես մի վահան:

Քաջ Փիրանը մեջքին կապեց ամուր գոտի, ռազմավես,
Ասպանդակեց իր նժույգը ու սլացավ քամու պես,

Գնաց, հասավ Սիավարշան ապարանքը քարակերտ,
Նոճուն քաղցր խոսքեր ասաց, ողջագուրվեց նրա հետ:

Ապա դարձավ, թե՝ «Հենց հիմա Ֆարանգիսը լուսնադեմ
Քեզ մոտ կգա, գնամ նրան վայել խնջույք պատրաստեմ»:

Բայց անհարմար իր վիճակից Սիավուշը նրա մոտ
Խիստ կարմրեց, ու նոր կինը նա համարեց մեծ ամոթ...

Չէ՞ որ Նոճին ամուսինն էր Ծեր-Փիրանի աղջկա,
Այդ պատճառով նա գտնում էր՝ նոր կնության հարկ չկա:

Նա Փիրանին ասաց. «Ոչ մի գաղտնիք չունեմ իմ սրտում,
Համաձայն եմ առաջարկիդ, Ֆարանգիսին բեր իմ տուն»:

Այդ լսելով՝ Ծեր-Փիրանը ուրախացավ ի սրտե,
Գնաց, որ իր պահեստներից ոսկի, գոհար, լալ փընտրե:

Տիկնանց-տիկին Գյուլշահերը Ծեր-Փիրանի հետ մեկտեղ
Բերեց բազում գանձ ու գոհար ու չինական սկուտեղ:

Եվ նվերի համար նրանք հավաքեցին լալ, ագաթ,
Ընդելուզած ոսկե թասեր, մետաքսեղեն և արծաթ:

Ամբողջ ընծան կազմեց ուղիղ երեք տասը ուղտաբեռ,
Բացի երեք արքայական պերճ աթոռից ոսկեհեռ:

Ապա բերին երեք հարյուր աղջիկ ծառա հեզանազ,
Ամեն մեկը ձեռքին ուներ խրախճանքի ոսկե թաս:

Գյուլշահերը իր դստեր հետ պալատ մտավ ժպտադեմ,
Ֆարանգիսը գահի վրա տարածվել էր հանց եդեմ:

Չոր գետինը նա համբուրեց ու շշնջաց քաղցրաձայն.
«Լուսինը և արեգակը իրար հավետ մերձեցան:

Ուրախության ձեր այսօրը թող որ տևի մինչև մահ,
Դուք վայելեք մշտահավերժ արքայական թագ ու գահ»:

Այնուհետև պալատ մտան երկու հսկա, երկու քաջ՝
Աֆրասյաբը և Փիրանը, երկու ձեռքեր՝ ձախ ու աջ:

Սուրբ օրենքով հաստատեցին միացումը այդ վսեմ,
Ու նախանձից լուսինն անգամ դարձավ չնչին ու նսեմ:

Գյուլշահերը այսպես խոսեց. «Աստված բերք տա մեր հողին,
Որ այս գիշեր ալ կակաչով դուք զարդարեք անկողին»:

Այսպես, յոթ օր ու յոթ գիշեր հողը թնդաց սաստկալից,
Եվ թռչունը փախավ բնից, և գազանը իր որջից:

Երգասրահ կարծես լիներ լայն աշխարհը բովանդակ,
Ոչ մրջյունը բնում քնեց, և ոչ փիղը՝ ծառի տակ...

ԱՖՐԱՍՅԱԲԸ ԻՐ ԵՐԿՐԻ ՄԻ ՄԱՍԸ ՏԱԼԻՍ Է ՍԻԱՎՈՒՇԻՆ

Այդ երջանիկ միացումից հետո անցավ մի շաբաթ,
Շահը բերեց ու բաժանեց ոսկի, գոհար և արծաթ:

Աթոռանիստ իր քաղաքից հաշվեց մինչև Չինաց ծով,
Ու պարգևեց Սիավուշին Քեյանների օրենքով:

Այնուհետև նա բաց արեց փակ դռները իր բանտի,
Ասաց. «Թող որ ամեն ստրուկ գտնի ճամփան իր բախտի»:

Իսկ ութերորդ օրը Նոճին Ծեր-Փիրանի հետ մեկտեղ
Թուրանական գահը տեսավ փիրուզակուռ ու շքեղ:

Նրանք շահին շնորհ բերին, որ լուսնի պես շողշողա,
Որ աշխարհը Աֆրասյաբին և՛ ճորտ լինի, և՛ ծառա:

Բոլորաշուրջ ճախարակը պտույտ գործեց մեկ տարի,
Թե Իրանը, թե Թուրանը խաղաղ էին ու բարի:

Աֆրասյաբը Սիավուշի մոտ ուղարկեց մի բանբեր,
Ասաց. «Գնա, հղիր նրան բյուր ողջույններ անհամբեր:

Եվ բացի այդ, նրան ասա՝ արդյոք սիրտդ չի՞ նեղվում,
Կամ նո՞ր տեղ ես դու որոնում մեծատարած իմ հողում:

Թուրանից դու գնա շրջիր մինչև հեռու Չինաստան,
Եթե գտնես քեզ հարմար տեղ, այնտեղ գտիր ապաստան»:

Արքայական մեծ թմբուկը ազդարարեց նոր շքերթ,
Այդ շքերթի հետ ընթացավ պարսից զորքը մշտաերթ:

Սիավուշը իր հետ տարավ և հարեմը բազմակին,
Ֆարանգիսի համար բերին մի պատգարակ թանկագին:

Քաջ Փիրանը նույնպես թամբեց մի ճեպընթաց երիվար,
Հիպթաղների ճամփաներով պտտվեցին վեր ու վար:

Այսպես, ուղիղ երեսուն օր անքուն գիշեր ու ցերեկ
Բազում ճամփա կտրեց-անցավ քարավանը հոգնաբեկ:

Բայց ի վերջո նրանք հասան նորակառույց բերդը այն,
Փողոցներում կային մարդիկ խառնիխուռըն, բազմաձայն:

Այդ երկիրը հեքիաթային մի դրախտ էր լուսնի տակ,
Որսի համար այնտեղ կային ցիռ ու գազան, բազում հավք:

Օդը մեղմ էր, առողջարար, հողը զմրուխտ մի դիպակ,
Կային անթիվ սառն աղբյուրներ, հազար առու ու գետակ:

Մարդիկ այդտեղ բուժում էին մահակործան ախտ ու վերք,
Տարվա բոլոր ամիսներին կար դաշտերում առատ բերք:

Նոճին ասաց. «Ամենուրեք կտարածեմ ճոխ այգի,
Մինչ աստղերը կխոյանա գմբեթը իմ դղյակի»:

Ապա դարձավ ու մոբեթին ասաց. «Խոսիր, իմաստուն,
Ինչպե՞ս պիտի ապրեմ այստեղ, իսկությունը պատմիր դու»:

Իսկ մոբեթը պատասխանեց. «Ինչ որ ցանես ու հնձես,
Ո՛վ տարաբախտ, վերջիվերջո դատարկ ձեռքով պիտ նստես»:

ՍԻԱՎՈՒՇԸ ԿԱՌՈՒՑՈՒՄ Է ԿԱՆԳԴԵԺ ԲԵՐԴԸ

Այժմ բացեմ ես ձեր առաջ հին պատմության դուռը փակ,
Ականջ դրեք զրույցներին ու խոսքերին իմ շիտակ:

Պատմեմ Կանգդեժ բերդի մասին այս զրույցը սրտառուչ,
Թե ո՛նց փոխվեց մի պարտեզի՝ անապատը մերկ ու փուչ:

Մի համառիր, թե դու երկար պիտի ապրես այս կյանքում,
Ժամանակը ամեն լավ բան խեղդեց դաժան հորձանքում:

Ասա, ո՞ւր են մեծ գահերը ու թագերը ոսկեզօծ,
Փղամարմին մեր քաջերը ու շահերը մեծագործ:

Ո՞ւր գնացին մեծահանճար գիտունները ծանրախոհ,
Երգիչները ողբահառաչ, պատմիչները մեր դժգոհ:

Եվ ի՞նչ եղան հեզաճկուն, չքնաղ կանայք ոսկեծամ,
Ավա՛ղ, կորան, փշուր եղան բամբիռները ողբաձայն:

Ասա, ո՞ւր է այն հերոսը, որ որսում էր ընձառյուծ,
Գիտե՞ս, որ հող, մոխիր եղան այդ բոլորը շատ վաղուց:

Դու երանի տուր այն մարդուն, որ բարության սերմ ցանեց,
Գերեզմանում հավասար են թե ճորտ և թե մեծամեծ:

Շատ գաղտնիքներ կան աշխարհում, իմաստություն՝ ծայրեծայր,
Բայց ափսոս, որ մարդու կյանքը անիմաստ է և ունայն:

Եվ քանի որ այս աշխարհը մի շիրիմ է ավերակ,
Էլ ինչո՞ւ ես գլխիդ դնում շահնշահի ոսկե թագ:

Այժմ լսիր ավանդական մի պատմության հինավուրց,
Կանգդեժ բերդի մասին պատմեմ եղելություն ու զրույց:

Մի ամսօրյա ճանապարհ է Չինաց ծովից մինչ այս կողմ,
Ծովից դեպի բերդն է փչում մշտաշառաչ, դաժան հողմ:

Բայց քարակոփ Կանգդեժ բերդը անառիկ է, լեռնանիստ,
Պարփակում են ամեն կողմից քար ու ժայռեր ծանրախիստ:

Հայրյուր ֆարսախ պտույտ ունի այդ ամրոցը քարակուռ,
Ունի նաև ամրակառույց հսկա դարպաս ծանրադուռ:

Ժայռի ներսում՝ քաղաքի մեջ կան պուրակներ ու փողոց,
Բազմաբազում ապարանքներ, այգի, պարտեզ ու ծաղկոց:

Իսկ քաղաքի փողոցներով առուներ են հոսում պարզ,
Հովիտներում եղնիկներ կան, իսկ դաշտերում՝ մեղվապարս:

Բարեխառն է օդը այնքան, վարդանոց է ամեն տեղ,
Գերառողջ են բոլոր մարդիկ, ոչ բժիշկ կա և ոչ դեղ:

Կանգդեժ բերդը անձեռակերտ մի մեհյան է, մի ամրոց,
Այնտեղ ապրող մարդը բնավ չունի ցավեր դառնախոց:

Սիավուշը այնտեղ ցանեց վարդ, մանիշակ ու կակաչ,
Եվ ամայի անապատը դարձավ հովիտ մի կանաչ:

Սիավուշկերտ անվանեցին բերդաքաղաքն այդ արձակ,
Քանզի երգի մեր հերոսը չէր խնայել միտք ու ջանք:

ՍԻԱՎՈՒՇԸ ԵՎ ՓԻՐԱՆԸ ԶՐՈՒՑՈՒՄ ԵՆ ԱՊԱԳԱՅԻ ՄԱՍԻՆ

Անապատում Սիավուշը կառուցեց մեծ մի ամրոց,
Սակայն հիշեց նա Իրանը ու արտասվեց դառնակոծ:

Վիսի որդի քաջ Փիրանը իսկույն գնաց Նոճու մոտ,
Բարեխորհուրդ ծնողի պես խոսքեր ասաց սրտամոտ:

Սիավուշը պատասխանեց. «Ո՜վ իմ բարի բարեկամ,
Մինչ իմ մահվան վերջին օրը պիտի ողբամ, քանի կամ:

Ինչի համար ես կերտեցի պերճ դղյակներ ու մեհյան
Երբ իմ մահից հետո պիտի Աֆրասյաբը տիրի այն:

Ինձ դավադիր և հետախույզ մարդը չար է, մշտարթուն,
Անտարակույս ինձ կսպանի և չի ների իմ որդուն:

Բայց իմ մահը կալեկոծի ժողովրդին իմ ամբողջ,
Եվ Թուրանում նորից պիտի ինչի կռվի մարտակոչ:

Վրիժառու Քաուս շահի զորքը կգա օր-գիշեր,
Կշողշողան իրանական կարմիր, դեղին դրոշներ:

Նրանք այստեղ և՛ կավերեն, և՛ կտանեն կողոպուտ,
Աղբյուրները կչորանան ու կդառնան սև տղմուտ:

Աֆրասյաբը իր արածի համար պիտի փոշմանի,

Իբրև շահի՝ ոչ մի զինվոր նրան վիհից չի հանի:

Ողջ Թուրանը իմ վրեժ համար կանեն լոկ մոխիր,
Բոլորաշուրջ ճախարակը իր ընթացքը չի փոխի»:

Բայց ազդեցիկ այդ խոսքերից Ծեր-Փիրանը իր մտքում
Ուղենշեց, որ սեգ Նոճին ճիշտ բաներ է գուշակում,

Ուստի մենակ այսպես խորհեց. «Այո՛, ճիշտ ես գուշակում,
Ինձ լսելով՝ հաստատվեցիր Աֆրասյաբի դղյակում...

Թուրան-շահը բազում անգամ՝ ինձ հայտնել է միտքը այս –
Արդի լավը հետագայում թե վտանգ է, թե վնաս...»:

ԱՖՐԱՍՅԱԲԸ ՓԻՐԱՆԻՆ ՈՒՂԱՐԿՈՒՄ Է ՀԱՐԿԱՀԱՆՄԱՆ

Գինարբուքից ութ օր հետո շահը ղեղեց մի նամակ,
Թե. «Փիրանին ես կարգում եմ իմ աշխարհի հարկհավաք:

Արագաճեպ քաջ Փիրանը թող սլանա ինչպես հողմ,
Թող արշավի հնդկաց երկիր, չինաց ծովից էլ այն կողմ:

Թող Խազարի երկիր գնա, իսկ այնտեղից՝ մինչև Սինդ,
Հարկ հավաքի ամեն տեղից, ամեն բերդից ամրապինդ»:

Թուրանական հողում լսվեց զորակոչի մեծ աղմուկ,
Նորից հնչեց զինվորական գալարափող ու թմբուկ:

Հավաքվեցին բազում քաջեր ուժով, թվով գերազանց,
Նժույգների սմբակի տակ ողջ Թուրանը հեծեծաց:

ՍԻԱՎՈՒՇԿԵՐՏԻ ԿԱՌՈՒՑՈՒՄԸ

Արագավազ ուղտի վրա մի մարդ եկավ, մի բանբեր,
Աֆրասյաբից խորախորհուրդ նամակ բերեց անհամբեր:

Նա նամակում այսպես գրեց. «Ո՛վ Սիավուշ քաջորդի,
Դու հեռացար, բայց կարոտից մորմոքում է իմ հոգին:

Քեզ արժանի տեղ որոնիր մեծատարած Թուրանում,
Շրջիր ամեն մի երկրամաս, տե՛ս, որտեղ ես հավանում:

Երբ հավանես՝ այնտեղ հիմնիր շքեղազարդ մի դղյակ,
Որ դղյակիդ սուր գմբեթը միշտ շողշողա լուսնի տակ»:

Այնուհետև Սիավուշը հրամայեց, որ արագ
Անապատից բերեն ուղտեր ու նժույգներ ոսկեսարք:

Ապա բեռնեց արքայական հանդերձանքներ, կահ ու կայք,
Իր հետ տարավ մատռվակներ, ծառա, աղջիկ ու կանայք:

Ամեն մեկը իր հետ ուներ ապարանջան ու վզնոց,
Եվ կանացի ոսկեերիզ մետաքսեղեն ու ծածկոց:

Կարմրամազ երեսուն ուղտ բեռնեց ընտիր ամբրոսով,
Եգիպտական նուրբ դիպակով ու չինական մետաքսով:

Երևելի Սիավուշի զորագունդը դիմացկուն
Գնաց, հասավ մշտագարուն, հեքիաթային մի անկյուն:

Այնտեղ շինեց երկու ֆարսախ երկարությամբ մի քաղաք,
Եվ քաղաքի մեջ կառուցեց գեղակառույց մի դղյակ:

Այդ հոյաշեն ապարանքը ուներ պարտեզ ու այգի,
Ուր որ մարդիկ գալիս էին գինեկործան խնջույքի:

Այդ դղյակը ուներ հարմար ճեմասրահ ու դահլիճ
Իսկ դահլիճում կային բազում նետաղեղներ լայնալիճ:

Եվ նկարներ կային գունեղ Սիավուշի սրահում,
Քաուս շահը և Ռոստամը՝ վերստ-վահանում, զրահում:

Պատի վրա քանդակած էր Աֆրասյաբը իր զորքով,
Գերսիվազը և Փիրանը նախարարի վեհ տեսքով:

Սիավուշկերտ անվանեցին գեղակառույց բերդը այդ,
Մինչև այժմ նրա տեղը չի իմանում ոչ մի մարդ:

ՓԻՐԱՆԻ ՎԵՐԱԴԱՐՁԸ

Ծեր-Փիրանը վերադարձին եկավ մինչև Գանգակերտ,
Տեսավ այնտեղ Սիավուշկերտ, մի նոր քաղաք, մի նոր բերդ:

Իր բանակից զոկեց, տարավ թուրք կտրիճներ անվանի,
Որ նրանց հետ նոր քաղաքում ուրախության տոն անի:

Սուրհանդակը Սիավուշին լուր հաղորդեց այն մասին՝
Թե Փիրանը մոտենում է բերդ-քաղաքի դարպասին:

Ծեր-Փիրանը տեսավ Նոճուն՝ խսկույն իջավ իր ձիուց,
Ապա գրկեց ու համբուրեց՝ ջերմ կարոտից ու սիրուց:

Բայց զարմացավ, որ ավերակ ու անապատ վայրը այդ,
Որտեղ անգամ ոտ չէր դրել թե բորենի և թե մարդ,

Այժմ չքնաղ մի պարտեզ է, ունի գյուղեր ու քաղաք,
Ամեն մի տուն շողշողում է հանց հրավառ մի ճրագ:

Ասաց. «Թող որ Քեյանների տոհմը մնա ամրահիմք,
Որ քո փառքը վեր բարձրանա հողաշխարհից մինչ երկինք:

Սիավուշկերտ քո քաղաքը միշտ կմնա անսասան,
Քեզ կգովի ամեն երգիչ, ամեն կտրիճ ու գուսան»:

Ապա դիմեց Ֆարանգիսի ապարանքը քարակուռ,
Տեսավ նրա արքայաշուք թագն ու գահը ոսկեհուռ:

Իսկ Ջերիրեն արագավազ գնաց ընկավ գիրկը հոր,
Բաժանումի մեծ կարոտը արցունք քամեց մեղմածոր:

Սիավուշը բերեց ընտիր թե մատովակ, թե նաժիշտ,
Իսկ խնջույքի համար նաև գինի, երգիչ, երաժիշտ:

Արքայական խրախճանքը տևեց յոթ օր, յոթ գիշեր,
Ավանդական ոչ մի մոբեթ այդպիսի օր չի հիշել:

Ծեր-Փիրանը հիպթաղների հողով Թուրան շտապեց,
Ինչպես նավը վեր-վար կանի ծովի վրա հողմածեծ:

Ներկայացավ Աֆրասյաբին իր հարկերով-տուրքերով,
Ու պարծեցավ ավարառու և կռվազան թուրքերով:

Նրան պատմեց՝ քանի՜-քանի՜ կռիվ մղեց սարեսար,
Չինաստանը, Հինդուստանը հողին արեց հավասար:

Ապա պատմեց, թե սեգ Նոճին ինչպես կերտեց մի մեհյան,
Կանգդեժ բերդից մինչ ամրոցը երկու ֆարսախ է միայն:

Ասաց. «Մարդիկ Սիավուշին և՛ սիրում են, և՛ պաշտում,
Սիավուշկերտ քաղաքի պես՝ քաղաք չկա Բեհեշտում:

Աստված, իրոք, Սիավուշին պարգևել է ուժ ու խելք,
Անապատը նա դարձրեց ծաղկատարած արևելք:

Տեսա նաև Ֆարանգիսի ապարանքը նրբակերտ,
Նա կարող է գեղեցկությամբ մրցել շահի գահի հետ:

Հեռվից փայլող գանձի պես են դղյակները այդ շքեղ,
Եվ այդպիսի հոյակառույց շեն չես գտնի ոչ մի տեղ:

Եթե շահը նոր հոգս չունի կամ սրտամաշ մի այլ ցավ,
Հաստատապես թող իմանա, որ իր փառքը մեծացավ:

Սիավուշը թուրանական հողում ցանեց նոր արմատ,
Էլ չեն կռվի Իրան-Թուրան բանակները քինախանդ»:

ԱՖՐԱՍՅԱԲԸ ԳԵՐՍԻՎԱԶԻՆ ՈՒՂԱՐԿՈՒՄ Է ՍԻԱՎՈՒՇԻ ՄՈՏ

Աֆրասյաբը Գերսիվազին ասաց. «Մեկնիր շուտափույթ
Սիավուշկերտ քաղաքը, տես՝ ինչ ելք ունի և ինչ մուտք:

Սիավուշի պայծառ հոգուն հարազատ է հողը մեր,
Նա Իրանի գահի համար թերհավատ է, անտարբեր:

Քեյ-Քաուսի գահի նման նա գահ անի մեր հողում,
Մոռացել է Ռոստամ-Զալին, որից աշխարհն է դողում:

Նա ամայի անապատում շինեց շքեղ մի քաղաք,
Ֆարանգիսի, Ջերիրեի համար դղյակ՝ բազմահարկ:

Երբ կտեսնես նրան բազմած փղոսկրյա իր գահին,
Գինու թասով գովիր ջահել, գեղեցկատես այդ շահին:

Իբրև ընծա տար մատանի, ոսկեգոտի, հանդերձանք,
Տար ծանրագին գոհարեղեն և չինական կահ ու կայք:

Եթե հյուրը իրեն ցույց տա նվիրական, բարեգութ,
Ոչ թե երեք օր կպահեն, այլ հինգ օրից մինչև ութ»:

Գերսիվազը երամակից ջոկեց հարյուր ընտիր ձի,
Որ մրցության ասպարեզում ոչ ոք իրենց չմրցի:

Սուրհանդակը լուրը տարավ Սիավուշին օր առաջ,
Իսկ նա արիաց իր քաջերով գնաց նրան ընդառաջ:

Գերսիվազը շահի կողմից Նոճուն հղեց ջերմ ողջույն,
Ձոխ նվերներ հանձնեց նրան բազմատեսակ, բազմագույն:

ՍԻԱՎՈՒՇԻ ՈՐԴԻ՝ ՖՈՒՐՈՒԴԻ ԾՆՈՒՆԴԸ

Սիավուշի մոտ սլացավ մի լրաբեր ձիավոր,
Ասաց. «Աչքը քո լույս լինի, ո՛վ անվանի, փառավոր.

Քո Ջերիրեն աշխարհի բերեց գեղեցկատես մի մանուկ,
Ու Փիրանի աչքից կաթեց ուրախության արտասուք:–

Քո զավակին անվանեցին Ֆուրուդ-որդի Սիավուշ,
Թող անսասան մնա հավերժ նրա տոհմը Քեյանուշ:

Ծեր-Փիրանը ուղարկել է քեզ սրտաբուխ մի նամակ,
Ասաց՝ թեկուզ ծեր եմ, սակայն Աստված տվեց ջահել կյանք»:

Սիավուշը սուրհանդակին ուրախության խոսք ասաց.
«Թող զավակս փառքով բազմի Քեյան գահին երկնաբարձ»:

Քինախնդիր Գերսիվազին նույնպես լուրը այդ հասավ
Ու բարբառեց, թե՝ «Փիրանը շահ է, շահի հավասար»:

Աչքալուսի լուրը տարան Ֆարանգիսին սիրասուն,
Սիավուշին ջերմ մաղթանքի, քաղցր խոսքեր էր ասում:

Բայց նախանձոտ Գերսիվազը այսպես խոսեց մեկուսի.
«Կգա մի օր, մենք կտեսնենք թոռան-թոռը Քասուսի:

Իսկ մի օր էլ Սիավուշը կասի՝ ո՛վ եք, ի՛նչ եք դուք,
Ես Թուրանում աթոռ ունեմ, գյուղ ու քաղաք բազմաշուք»:

Նա ներքնապես սրտի խորքում գալարվում էր ու նեղվում,
Իսկ արտաքուստ մարդկանց աչքին գունատվում էր ու դեղնում:

ՍԻԱՎՈՒՇԻ ՃՈԿԱՆԱԽԱՂԸ ԳԵՐՍԻՎԱԶԻ ՀԵՏ

Սիավուշը ասպանդակեց իր նժույգը երկնաթիռ,
Ասես ոչ թե խաղի մեջ էր, այլ որսում էր վայրի ցիռ:

Շահի եղբայր՝ Գերսիվազը նույնպես ելավ ասպարեզ,
Սիավուշին գնդակ նետեց ու մռնչաց վագրի պես:

Բայց ճոկանով Սիավուշը այնպես զարկեց գնդակին,
Որ գնդակը վեր սլացավ, կպավ ուղիղ երկնքին:

Ասպարեզը ալեկոծվեց հոծ ամբոխի աղմուկում,
Կարծես թուրքի հոգին մնաց անձեռահաս երկնքում:

Այդպես, արիաց թագազարմը թուրքից տարավ մի գնդակ,
Այս անգամ էլ բախտը ժպտաց արևի և լուսնի տակ:

Ու հակառակ բանակները իսկույն ելան մրցադաշտ,
Ասես ոչ թե ասպարեզ էր, այլ պատերազմ մի անհաշտ:

Գերսիվազը այսպես խոսեց. «Ո՛վ անվանի փահլևան,
Ցույց տուր ո՛նց ես դու նիզակում և ո՛նց ճոճում՝ վերտ-
վահան»:

Սիավուշը շատ հավանեց Գերսիվազի միտքը այդ,
Եվ արձակեց սրաթռիչ իր նժույգը ամրապայտ:

Նա իոր նվեր՝ իր նիզակը ամուր սեղմեց կուռ ձեռքում,
Ու թվում էր՝ ուր որ իիմա պիտի մեխի երկնքում:

Քաուս շաիը այդ նիզակով միշտ որսում էր ընձառյուծ,
Այժմ Նոճին այնպես նետեց, կարծես իարբել էր գինուց:

Ապա թողեց սանձափոկը իր սևաթույր նժույգի
Ու նիզակով ծակեց բոլոր զրաիները գոռ թուրքի:

Այնուիետև Սիավուշը ասաց. «Այժմ, ո՛վ թուրքեր,
Ձեռքս կառնեմ մի լայնալիճ նետ ու աղեղ մաիաբեր»:

Ապա ամբողջ ուժը լարեց իանց ավերիչ, իզոր փիղ,
Ու խաթանգե նետը խրեց լուսնի կրծքում շեշտուղիղ:

Գերսիվազը նրան ասաց. «Ո՛վ անվանի Սիավուշ,
Հիմա իաստատ գիտեմ, որ դու ունես իազար փղի ուժ:

Եկ միասին մրցենք իիմա ասպարեզում այս արծակ,
Մրցախաղում քեզնից բացի՝ մի մարդ չկա իամարձակ:

Արագաճեպ իմ ձիու պես ձի չես գտնի Թուրանում,
Ում մեջքին որ ձեռք եմ տալիս՝ նվաղում է, թուլանում:

Ողջ Թուրանում չկա քեզ պես գեղեցկատես մի խիզախ,
Վտանգներից չես խուսափում, ո՛չ մաի գիտես և ո՛չ վախ:

Եթե ես քո գոտուց բռնեմ, պոկեմ թամբից նժույգի,
Ապա իաշվիր, որ քեզանից գերազանց եմ կրկնակի:

Իսկ եթե ինձ նետես գետին ինչպես անպետք մի վաիան,
Այսուիետև չեն անվանի ինձ Թուրանի փաիլաև»:

Սիավուշը այսպես խոսեց. «Դու ուժեղ ես իանց առյուծ,
Ունես ընտիր թե ոսկեթամբ, թե երիվար, թե պախուրց:

Ազերգեշասպ իրեշտակ է քո գլխարկը ինձ իամար,
Բայց իմացիր՝ ասպարեզում մրցակից չեմ քեզ իարմար:

Աֆրասյաբի եղբայրն ես դու, քեզ իետ կռվել չեմ կարող,
Քո իարվածով աշխարիին ամբողջ կդարձնես փոշի, իող:

Թող որ իմ դեմ ձեր քաջերը ոչ գնդակ տան, ոչ ճոկան,
Ով որ ընկավ իմ ձեռքի մեջ՝ փոշի կանեմ խսկական»:

Գերսիվազը դարձյալ դիմեց իր թուրքերին բազմամբոխ.
«Մի՞թե թուրքը արյաց քաջին իրոք իաղթել չի կարող»:

Գորոյ-Զարեհ քաջը կանչեց. «Այժմ ես եմ քաջունի»,
Գերսիվազը իաստատեց, թե՝ «իր նմանը դեռ չունի»:

Նոճին դեմքը խիստ խոժոռեց նրա խոսքից մաիասաստ,
Ասաց. «Երկու իոգու կանչիր, մեկը քիչ է անկասկած»:

Գորոյ քաջից բացի, եկավ Դեմուր իսկան մեծանուն,
Նրա աիից մարդ ու գազան սարսափում են Թուրանում:

Դեմուր քաջը և Գորոյը իջան մրցման ասպարեզ,
Նախաիարձակ Սիավուշը վազեց պատռող վագրի պես:

Նա ամրակուռ ձեռքը մեկնեց, պոկեց ձիուց Գորույին
Ու շպրտեց գետնի վրա, անցավ կրկին գրոհի:

Եվ Դեմուրին իր գուրզի հետ այնպես պոկեց պինդ թամբից,
Որ դիվահար թուրք քաջերը արձանացան սարսափից:

Գերսիվազը նսեմացավ արյաց հսկա քաջի մոտ,
Նա իր կյանքում ոչ մի անգամ չէր զգացել մեծ ամոթ,

Ուստի ելավ իր աթոռից սիրտը տխուր ու շվար,
Մտքում ասաց. «Մի՞թե թուրքը այսքան թույլ է ու թշվառ:

Աֆրասյաբը Սիավուշին բերեց որպես մեծ աղետ,
Ամոթապարտ կնոջ շոր է պետք բոլորիս այսուհետ»:

ԳԵՐՍԻՎԱԶԻ ԴԱՎԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՍԻԱՎՈՒՇԻ ԴԵՄ

Գերսիվազը եկավ, հասավ մայր քաղաքը Թուրանի,
Սրտում պահած գաղտնիքները պատմեց շահին մի առ մի:

Այնուհետև Աֆրասյաբին հանձնեց ծածուկ մի նամակ,
Ու դրանով պատճառելով ուրախություն ու զարմանք:

Օտար մարդիկ ազատեցին ապարանքը պերճաշուք,
Աֆրասյաբը Գերսիվազի աչքում տեսավ արտասուք:

Գերսիվազը նրան ասաց. «Մի՛ հավատա նամակին,
Ոչ էլ նրա հավատապաշտ, մեհյանասուրբ կրակին:

Գաղտնի կապեր ունի հոր հետ, այստեղ եկավ, որ խաբեր
Չինաց, հոռնաց սուրհանդակին սպասում է անհամբեր:

Քեյ-Քաուսի կենաց թասն է միշտ դատարկում խնջույքում,
Իսկ մենք նրան պահպանում ենք գորովագութ մեր գրկում:

Հետագայում նա կդառնա կործանարար մի ոսոխ,
Չէ՛ որ այստեղ բանակ ունի, գյուղ ու քաղաք բազմամբոխ:

Մեր նախահայրը Թուրը գիտեր՝ ինչ պիտի լինի բախտը մեր,
Այդ պատճառով Իրեջ քաջին հարկ համարեց գլխատել:

Եթե երկու տարբեր տարրեր՝ մեկը կրակ, մեկը ջուր,
Իրար կցես՝ չի գոյանա ոչ պրկաղեղ և ոչ թուր:

Այս ամենը չէի կարող գաղտնի պահել, ով հանճար,
Չէ՞ որ դու ինձ կանվանեիր արքայադավ մի եղբայր:

Շահը հույզից դողդողում էր տերևահար ծառի պես,
Ասաց. «Աստված, ո՛վ իմ եղբայր, թող ապավեն լինի քեզ:

Մեզ միասին խորհել է պետք համբերատար, օր-գիշեր,
Որ ավելի չխճըճվի այս կծիկը գաղտնաթել»:

Այդ ասելով՝ Աֆրասյաբը ցանկանում էր ի սրտե
Ամենակուլ թեժ կրակին պաղ ջուր ցանել իբրև թե:

Չորրորդ օրը Գերսիվազը եկավ եղբոր՝ շահի մոտ,
Ոչ մարդկային գութ նա ուներ, ոչ պատկառանք, ոչ ամոթ:

Շահը նրան ասաց. «Ո՛վ իմ Փաշանակի հիշատակ,
Քեզնից բացի էլ ի՞նչ անեմ իմ հարազատ հարկի տակ:

Սիավուշի մասին խոսիր, ի՞նչ գաղտնիք ես լսել դու,
Ոչ ցերեկը դադար ունեմ, ոչ գիշերը՝ հանգիստ քուն:

Ես նրանից երկյուղ չունեմ, ուստի պատժել չեմ կարող,
Ի՞նչ պատճառ կա, որ նրա դեմ վարեմ արյան քեն ու ոխ:

Նրան տվի գանձ ու երկիր և աղջիկս նրբիրան,
Ասա տեսնեմ ի՞նչ գաղտնիք կա, որ ձգտում է դեպ Իրան:

Այդքան բանից հետո ինչպե՞ս ձեռք երկարեմ աղեղի,
Չէ՞ որ մարդիկ կբամբասեն, ինձ կանիծեն անտեղի:

Ով առյուծի ժանիք ունի՝ չի վախենա թշնամուց,
Կյանքի բոլոր դառնությունը ճաշակել եմ դեռ մանկուց:

Սիավուշը չարամիտ չէ, նա բարի է և անմեղ,
Եթե նրան վատ բան անեմ՝ ինձ կանիծեն ամեն տեղ:

Թե իսկապես նա ձգտում է շահի թագի ու գահի,
Թող հեռանա իմ Թուրանից, ոչ ոք նրան չի պահի»:

Գերսիվազը պատասխանեց. «Ո՛վ շահնշահ երկնաթագ,
Ծանր գործը մի համարիր այդքան չնչին ու դատարկ:

Սիավուշի հեռանալը օգուտ չի տա քեզ երբեք,
Նա լավ գիտե, թե Թուրանը ինչ հող ունի և ինչ բերք:

Եթե օտար մարդուն պահես քո օջախում մշտահյուր,
Նա կիմանա՝ քո աշխարհում ինչն է ուժեղ, ինչը թույլ:

Արթուն եղիր Սիավուշի որոգայթից չարաչար,
Մի որոնիր նրա համար արդարացման այլ պատճառ:

Մի ժամանակ ես այդ մասին լսել եմ մի հին առած.
«Էգ առյուծին սնուցողը՝ ճանկ կտեսնի անկասկած»:

«Հավանում եմ քո խոսքերը, ով իմ եղբայր Գերսիվազ,–
Ասաց շահը և զայրույթից ալեկոծվեց հանց հովազ,–

Երբ հաստատվի, որ նա իմ դեմ վրեժ ունի ուխտադիր,
Փոշի կանեմ նրա գահը և ամրոցը, անխտիր»:

Գերսիվազը նորից պնդեց. «Ճշմարտախոս թագավոր,
Ինչո՞ւ պիտի որոնես, թե՛ ով է անմեղ, մեղավոր:

Սիավուշը չի գա քեզ մոտ առանց նետի ու գուրզի,
Միշտ արևին ձգտող մարդը՝ լուսին դառնալ չի ուզի:

Ո՞վ է տեսել, որ կրակը ներքև լինի, ջուրը՝ վեր,
Էգ կորյունին դու շաքար տուր՝ նա ցույց կտա սուր ճանկեր»:

Աֆրասյաբը նորից խոսեց. «Ով Գերսիվազ քաջորդի,
Անժամանակ զուր ես կապում մեջքիդ ռազմի պինդ գոտի:

Ասում են, թե թեթև մարդը նախարար չի լինի մեծ,
Թեկուզ պարծե իր հասակով՝ Նոճուց լինի բարձրաբերձ»:

ԳԵՐՍԻՎԱԶԸ ԳՆՈՒՄ Է ՍԻԱՎՈՒՇԻ ՄՈՏ

Աֆրասյաբը բազմել էր իր գեղակառույց դղյակում,
Բայց անսովոր ներքին ցավից հուզվում էր ու բորբքվում:

Մի օր շահը Գերսիվազին իր մոտ կանչեց և ասաց.
«Քո խոսքերից իմ սրտի մեջ կրկին ծագեց նոր կասկած:

Ո՛վ Գերսիվազ, այժմ գնա Սիավուշի հետ մեկտեղ
Իմ դստերը՝ իմ սիրասուն Ֆարանգիսին բեր այստեղ:

Ինձ մոտ կա և լավ որսատեղ, և մրգադաշտ գեղեցիկ,
Կարմիր գինին մառաններում փայլում է հանց մեղեսիկ:

Թող գա՛ գնանք որսատեղում ուրախանանք մի միջոց,
Այնտեղ լսենք նետի շառաչ, նժույգների խրխնջոց:

Պատճառ չկա, որ սեգ Նոճին նորից հիշի գահը հոր,
Քանզի ես եմ նրան տվել աստվածային մեծ շնորհ»:

Բայց չարամիտ Գերսիվազը լարում էր նոր որոգայթ,
Քանզի դևը նրա հոգում տարածել էր խոր արմատ:

Երբ վազեվազ գնաց հասավ Սիավուշկերտ ամրոցին,
Մի պերճախոս մարդ ուղարկեց, որ Նոճու հետ բանակցի:

Նա պատվիրեց. «Սիավուշին ասա՛ ո՛վ շահի մեծանուն,
Քեզնից խելոք ու հզորը չկա Իրան-Թուրանում:

Թո՛ղ պերճաշուք քո նոր գահը, ե՛կ ընդառաջ քո զորքով,
Դուրս արի քո բերդ-քաղաքից, դիմավորիր ինձ ոտքով»:

Գերսիվազի արագաճեպ սուրհանդակը բազմափորձ,
Հողմի նման սուրաց, գնաց անապատից մինչ ամրոց:

Նա գլխահակ գնաց մինչև Սիավուշի գահի մոտ,
Ասաց. «Ո՛վ դա ամրաբազուկ, աշխարհի սեր ու կարոտ,

Քեզ եմ բերել Գերսիվազից փառավայել մի պատգամ–
Պետք է նրան ընդառաջես, ոտքով գնաս այս անգամ»:

Բայց կասկածը կրկին շարժեց Սիավուշի միտքը խոր,
Որովհետև կապերտի տակ տեսավ գաղտնի մեծ ջրհոր:

Ապա գնաց և իր ձեռքով բացեց բերդի դուռը փակ,
Բարեմաղթեց թե արքային և թե գահը երկնաթագ:

Գերսիվազը Աֆրասյաբից Նոճուն բերեց հրավեր,
Տիկնանց-տիկին Ֆարանգիսին՝ բազմաբազում նվերներ:

Սիավուշը պատասխանեց. «Բայց առայժմ շուտ է դեռ,
Թեկուզ ունեմ ուղևորման համար պատրաստ նժույգներ:

Բայց նախքան այդ, այս հոյակապ, ոսկենկար ծաղկոցում
Մեզ նվիրենք գինարբուքի, բարեմաղթենք Աստծուն,

Քանզի ավեր այս աշխարհում շատ ենք տեսել ցավ ու վիշտ,
Անորոշ է մեր ապագան, անմեկնելի մեկընդմիշտ»:

Գերսիվազը այսպես խորհեց. «Սա հսկա է, խելացի,
Փղից ավել մեծ ուժ ունի և սուր ճանկեր՝ առյուծի:

Եթե տանեմ՝ Աֆրասյաբի մոտ գաղտնիքս կբացի,
Ինձ ամոթանք, անեծք կտան իրանցի թե թուրանցի»:

Այնուհետև իր բնույթին գտավ հարմար մի միջոց՝
Հագուստները պատառոտեց ու տարածեց լաց ու կոծ:

Սիավուշը տեսավ նրան վշտակեղեք ու նսեմ,
Ասաց. «Եղբայր, ի՛նչ պատահեց, խոսիր, ես էլ քեզ լսեմ:

Գուցե ցավիդ բուն պատճառը Աֆրասյաբն է մեծաշուք,
Թե՛ քո հանդեպ վարվում է նա չար մարդու պես գթազուրկ:

Քեզ հետ կգամ, նրան կասեմ՝ ինչո՞ւ համար ես ճնշում,
Գերսիվազը իր օրերը ախ ու վախով է մաշում...

Ինչքան էլ որ թագավորը անզիջում է ու դաժան,
Կամրապնդեմ եղբայրության մեր կապերը անբաժան:

Գուցե քեզնից բամբասել է քո թշնամին չարլեզու,
Դու հանգիստ կաց, այնպես կանեմ, ինչ որ սիրտդ է ուզում»:

Գերսիվազը պատասխանեց. «Ո՛վ անվանի Սիավուշ,
Հաստատ բան է, մենք բոլորս պիտի մեռնենք վաղ թե ուշ:

Ինչի՞դ է պետք այսքան շքեղ գյուղ ու քաղաք, գանձ ու գահ,
Չէ՞ որ գիտես, դաժան մահը լրտեսում է ամեն պահ:

Մանուչեհր և Աֆրասյաբ արքաները, շատ անգութ
Իրան-Թուրան երկիրն արին ավերակի մոխրակույտ:

Աֆրասյաբը իր բնույթով ոխակալ է ի ծնե,
Այնպես կանի, որ քո հոգին Ահրիմանը փախցընե:

Նրա դաժան ձեռքով մեռավ Էղրիրեսը մեր անմեղ,
Աշխարհին արավ արյան լճակ ու արցունքի հորդ հեղեղ:

Նա գլխատեց Նովզար շահին, միակ որդուն Իրեջի,
Մի ցանկություն այժմ ունի՝ քեզ էլ նրանց պես ջնջի:

Ահրիմանը նրա հոգին պղտորել է քո հանդեպ,
Իր արածի համար շահը չի փոշմանի ոչ մի կերպ:

Այստեղ ունես քեզ ողջություն միշտ կամեցող բարեկամ.
Բացի բարի Ծեր-Փիրանից, քեզ համար ես կամ ու կամ:

Չէի կարող այս ամենի մասին լինել համր ու լուռ,
Այժմ կարծեմ լավ հասկացար, թե ինչու եմ ես տխուր»:

Սիավուշը նրան ասաց. «Ո՛վ վեհասիրտ Գերսիվազ,
Դու կարծում ես բարությունից զո՞րկ է միթե աշխարհն այս:

Աֆրասյաբին սիրում էի որպես բարի թագավոր,
Կարծում էի, թե ապագա կդարձնի լուսավոր:

Ի՞նչ հիմունքով նա ընծայեց ինձ երկրամաս, փող ու հող,
Այս գաղտնիքի մեկնությունը ոչ ոք լուծել չի կարող:

Բայց Աֆրասյաբ շահի հանդեպ և հույս ունեմ, և հավատ,
Ինչ որ գիտեմ՝ կասեմ նրան, երբ որ հասնեմ ես պալատ:

Աֆրասյաբին ես ցույց կտամ սիրտն ու հոգին իմ պայծառ,
Գիտեմ, որ նա կհասկանա, ինձ կսիրի անպատճառ:

Ով որ ոտքի տակ տրորի սև գլուխը վիշապի,
Աստված նրան շիտակ ճամփից չի մոլորի, չի խաբի»:

Գերսիվազը պատասխանեց. «Ո՛վ սիրելի բարեկամ,
Մի կարծիր, թե Աֆրասյաբից ավելի վատ մարդիկ կան:

Դևի ճարտար իր արվեստով նա գրավեց սիրտը քո,
Քեզ պարգևեց իր դստերը, նաև խաբեց իր ոսկով:

Քեզ պես խելոք, բայց միամիտ մարդ չեմ տեսել դեռ կյանքում,
Թուրանի չար շահից դևը սարսափում է երկնքում»:

Գերսիվազը և՛ խոսում էր, և՛ արտասվում կեղծաբար,
Սրտում գաղտնի որոգայթներ՝ շրթին քաղցր խոսքեր կար:

Այնուհետև շարունակեց. «Կա՛ց, մի շարժվիր քո տեղից,
Նա դավադիր իր գործերով ետ չի մնում չար դևից:

Աֆրասյաբին նամակ գրիր, բայց քո մասին բողոքիր,
Ես անպայման ջուր կցանեմ նրա անզուսպ բորբոքին:

Եթե տեսնեմ ուրախության փայլ է գալիս երեսին,
Արագաճեպ սուրհանդակը լուր կբերի այդ մասին:

Իսկ թե տեսնեմ հակամիտ է, միտքը մութ է ու պղտոր,
Ես անպայման մարդ կուղարկեմ, չեմ հապաղի ոչ մի օր:

Հարյուր քսան ֆարսախ է ըռկ Թուրանից մինչ Չինաստան,
Ու վեց հարյուր քառասունհինգ կարծեմ մինչև Ֆարսիստան:

Քառս շահը սպասում է քեզ հայրական կարոտով,
Շահի բոլոր խիզախները կառաջնորդեն քեզ ոտքով:

Մի՛ հապաղիր, դու շտապ-փութ նամակ գրիր ամեն կողմ,
Թամբիր քո ձին ու սլացիր դեպի Իրան, ինչպես հողմ»:

Սիավուշը պատասխանեց. «Հավանեցի միտքը քո,
Իմ կնոջը ես կտանեմ, կհեռանամ իմ զորքով»:

ՍԻԱՎՈՒՇԻ ՆԱՄԱԿԸ ԱՖՐԱՍՅԱԲԻՆ

Սիավուշը Աֆրասյաբին գրեց հուզիչ մի նամակ,
Թուրան-շահին բարեմաղթեց առողջություն, երկար կյանք:

Սիավուշը նախ գովերգեց ամենատես Էակին,
Որ երկնային շնորհ բերի շահի գահին ու թագին:

Գրեց. «Անչափ կարոտել եմ, ով քաջարի թագավոր,
Ժամանակից շուտ հյուր լինել, գիտցիր, բնավ չեմ կարող:

Հիմա կինս՝ Ֆարանգիսը, հիվանդ պառկած անկողնում
Ինձ գամել է իր մահիճին, նույնիսկ որսի չի թողնում:

Երբ լավանա՝ անտարակույս մենք հյուր կգանք երկուսով,
Քեզ հետ մեկտեղ զրույց կանեմ ապագայի մեծ հույսով»:

Գերսիվազը առավ նամակն ու սլացավ հանց քամի,
Շրթին՝ ստեր որքան ասես, սրտում՝ դավեր շանթալի:

Չորրորդ օրը հասավ շահի ճոխ պալատը լայնաճեմ,
Իր եղբորը՝ Աֆրասյաբին, ողջագուրեց սիրաշերմ:

Ապա շահը նրան ասաց. «Ինչո՞ւ այսքան շուտ եկար,
Չէ՞ որ գալն ու գնալը պետք է տևեր դեռ երկար...»:

Գերսիվազը փակ նամակը հանձնեց շահին և ասաց.
«Ճանապարհը մեծ չարչարանք ինձ հասցրեց անկասկած:

Իսկ երբ տեսա Սիավուշկերտ պերճ քաղաքը գեղեցիկ,
Ինձ թվաց, թե անձեռակերտ մի ամրոց է անառիկ:

Բայց զարմանքս մի պահ տևեց, մթնեց աշխարհն իմ աչքին,
Քանզի Նոճին ինձ անվանեց. «Նսեմ մարդուկ դու չնչին»:

Նա և՛ ծաղրեց, և՛ ծանակեց շահի գահը երկնաբարձ,
Ոչ խոսքերիս ականջ արեց, ոչ նամակդ նա կարդաց:

Բայց ինձ ծածուկ հայտնի դարձավ, որ կապ ունի իր հոր հետ,
Չինաստանից գաղտագողի բերում է զուրզ, վերտ ու նետ:

Ով շահ, շուտով գլխիդ վրա պիտի պայթի մեծ ամպրոպ,
Առանց գահի պիտի մնա ողջ Թուրանը խեղճ ու որբ»:

Աֆրասյաբը ցասմամբ զինեց իր բանակը խաժամուժ,
Ու պատվիրեց հնչեցնել շեփոր, թմբուկ, ռազմագույժ:

Սիավուշի նամակը նա պատռեց, նետեց ոտքի տակ,
Ու զայրույթից ձեռքը առավ թշնամության սուր նիզակ:

ՍԻԱՎՈՒՇԸ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒՄ Է ՖԱՐԱՆԳԻՍԻ ՀԵՏ

Չարագուշակ լուրը սրտում, աչքը ճամփին մշտատև,
Դողդողում էր Սիավարշան շահը ինչպես մի տերև:

Գեղեցկուհի Ֆարանգիսը տեսավ նրան թախծամած,
Ընկավ Նոճու գիրկը, ապա ողբահառաչ հեկեկաց:

Նոճին ասաց. «Ի՞նչ հանցանք եմ գործել ամբողջ իմ կյանքում,
Որ Թուրանի շահը իմ դեմ նոր դավեր է բորբոքում:

Եթե, իրոք, Գերսիվազը ճիշտ լուր բերեց ինձ համար,
Ուստի պետք է գնամ տաշեմ ես ինձ համար շիրմաքար»:

Իսկ գեղեցիկ Ֆարանգիսը արտասվում էր, հառաչում,
Մերթ թշերն էր արյունոտում, մերթ Աստծուն աղաչում:

Ապա դարձավ իր ամուսնուն. «Ի՞նչ ես կանգնել դու մոլոր,
Չե՞ս տեսնում, որ ոսոխներդ սուր են ճոճում չորսբոլոր:

Ամեն կողմից քեզ են բերում հազարավոր վատ լուրեր,
Բայց վերահաս վտանգի դեմ կանգնել ես լուռ, անտարբեր»:

Սիավուշը պատասխանեց. «Իմ ոսկեծամ Ֆարանգիս,
Եթե, իրոք, մեղք ունենամ՝ Աստված առնե թող հոգիս:

Իմ բարեկամ Գերսիվազը ինձ կուղարկի բարի լուր,
Նա չի թողնի, որ ես ընկնեմ օտար հողում դռնեդուռ»:

ՍԻԱՎՈՒՇԻ ԵՐԱԶԸ ԵՎ ՆՐԱ ՎԵՐՋԻՆ ԽՈՍՔԵՐԸ ՖԱՐԱՆԳԻՍԻՆ

Վատ երազից Սիավուշը տեղից ելավ շեշտուղիղ
Ու մռնչաց ինչպես հսկա, ամեհաձայն, հարբած փիղ:

Ֆարանգիսը նրան ասաց. «Ի՞նչ տեսար դու երազում,
Որ սարսափից վեր ցատկեցիր, ու պապանձվեց քո լեզուն»:

Սիավուշը պատասխանեց. «Ֆարանգիս իմ լուսնահեզ,
Իմ երազը ես կպատմեմ, բայց այդ գաղտնի պիտ պահես:

Տեսա պղտոր ու սրընթաց մի անանցում, հսկա գետ,
Իսկ գետափին՝ մի մեծ խարույկ, սևասքեմ մահու հետ:

Բազմացրիվ բոցերի մեջ հրդեհվում էր բերդը իմ,
Իսկ քո հայրը՝ փղի վրա շրջում էր լուռ գետափին:

Այնուհետև խոր զայրույթով Աֆրասյաբը նայեց ինձ
Եվ գլխահակ թեքեց ճամփան ու հեռացավ ամրոցից:

Բայց ինձ թվաց, թե գետափին՝ ամենաշեջ օջախում
Խորովում է անբիծ հոգիս Գերսիվազը արնախում»:

Իսկ գեղեցիկ Ֆարանգիսը այսպես մեկնեց երազն այդ.
«Քո թշնամին այժմ քո դեմ լարում է մեծ որոգայթ:

Բայց երազդ վատ երազ չէ, ես վատ բան չեմ գուշակում,
Գերսիվազի խարդախ հոգին կաշկանդել ես քո ձեռքում»:

Բոլորաշուրջ լուսինն ելավ՝ կիսեց ճամփան մենավոր,
Սիավուշկերտ բերդից գնաց մի հետախույզ ձիավոր:

Բայց քիչ հետո վերադարձավ, Սիավուշին ասաց, թե.
«Լուսինն երբ որ երկրի վրա փռեց շողերն արծաթե,

Դաշտում տեսա, որ Թուրան-շահ Աֆրասյաբը չարձնունդ
Մեր ամրոցի կողմն է բերում իր բանակը գունդ առ գունդ»:

Այդ միջոցին Գերսիվազից նույնպես եկավ մի բանբեր,
Ասաց. «Նոճին ինչո՞ւ այսքան սառնասիրտ է, անտարբեր:

Այսուհետև մի՛ որոնիր աստվածային օգնություն,
Քանզի կենաց քո բաժակում տերը լցրեց մահու թույն»:

Սիավուշը չհասկացավ՝ ի՞նչ գաղտնիք կա երկնի տակ,
Ո՞րն է սխալ այդ լուրերից, ո՞րն է ուղիղ ու շիտակ:

Իսկ աննման Ֆարանգիսը այսպես խոսեց. «Ո՛վ քաջ մարդ,
Ազատման դուռ որոնեցիր, սակայն ընկար նեղ թակարդ:

Գնա թամբիր քո նժույգը ու հեռացիր Թուրանից,
Ե՛վ քեզ, և՛ ինձ կգլխատի Աֆրասյաբը թունալից»:

Սիավուշը պատասխանեց. «Ճիշտ էր, իրոք, երազն իմ,
Պարզ աղբյուրիս ջուրը դառավ պղտոր առու, թանձր տիղմ:

Հազար երկու հարյուր տարի ապրես թեկուզ լուսնի տակ,
Վերջը փոշի պիտի դառնաս հողի խորքում անհատակ:

Քո դրյակը թեկուզ հասնի մինչ աստղերի ծայրն անգամ,
Դարձյալ պիտի դու թույն խմես, ինչպես գինի քաղցրահամ:

Ոչ մի գիտուն չի գուշակի գաղտնիքները աշխարհի,
Մարդ տվածով պիտի ապրի ու խավարում խարխափի:

Արգասաբեր քո արգանդը շուտով կտա մի պտուղ,
Քո պատվաստած քեյան ծառից պիտի աճի մի նոր ճյուղ:

Իմ ապագա քաջ զավակին դու կանվանես Քեյ-Խոսրով,
Նա կդառնա անվանի շահ թագով, սրով ու ոսկով:

Այս ավերակ հողաշխարհից մինչ երկնային փայլածուն,
Հզոր փղից մինչ մրջյունը ենթակա է Աստըծուն:

Թուրանական հողում պիտի թողնեմ շիրիմն իմ անտեր,
Կամ թե գուցե իմ դիակը դառնա գայլի համեղ կեր:

Բայց իմացիր՝ քեզ էլ նույնպես կչարչարեն, կտանջեն,
Սակայն կգա Ծեր-Փիրանը, քեզ կընդունի սիրաջերմ:

Քեզ կտանի և կպահի իր դղյակում պերճաշուք,
Այնտեղ քեզնից աշխարհ կգա ազնվատոհմ մի մանուկ:

Բայց քիչ կանցնի ժամանակից և Աստըծու մեծ կամքով
Հզոր Գիվը Թուրան կգա, աշխարհասասան իր զորքով,

Խոսրով որդուս նա կտանի մինչև Սողդը ու Ջիհուն,
Մինչև արհաց աթոռանիստ պերճ քաղաքը, մինչև տուն:

Որդիս այնտեղ կմեծանա ու կստանա շահի թագ,
Իր ձեռքի տակ նա կունենա բյուրաքանակ ծով, ցամաք:

Գարնան մի օր, երբ գետինը կտարածվի կանաչով,
Իսկ սարերը կհուրհրան արյունատես կակաչով,

Այնժամ Խոսրով որդիս կգա՝ այստեղ սրի կքաշի,
Ողջ Թուրանում կտարածի հող ու մոխիր ու փոշի:

Դու կտեսնես շատ դրոշներ՝ կարմիր, կանաչ ու դեղին.
Ռոստամ-Զալը չի ավերի ողջ Թուրանը անտեղի:

Իսկ իմ արյան քենի համար և՛ առայսօր, և՛ հետո
Թուրանական հողում երբեք չես տեսնի լավ երեկո:

Մնաս բարով, իմ Ֆարանգիս, հեռանում եմ մեկընդմիշտ,
Իմ վախճանից հետո պիտի կրես բազում ցավ ու վիշտ»:

Ու երկուսով իրար գրկած արտասվեցին ողբաձայն,
Նրանց լացի ձայնը անգամ սարեր, ձորերն էլ անցան:

Սիավուշը ախոռից դուրս բերեց արագ իր սև ձին,
Հողմից ահեղ սլացք ուներ այդ նժույգը հրածին:

Այնուհետև ձիուն գրկեց ու փսփսաց ականջին.
«Այժմ լսիր իմ ողբակոծ աղաչանքին, հառաչին.

Իմ զավակը՝ Քեյ-Խոսրովը երբ կգա այս հողը պիղծ,
Տուր քո սանձը ձեռքը նրա, միշտ հնազանդ, ինչպես ինձ:

Եվ մոռացիր գոմը խաղաղ, եղիր նրան օգնական,
Քո սմբակի տակ ջարդոտիր ինչքան վայրագ թուրքեր կան:

ԱՖՐԱՍՅԱԲԸ ՁԵՐԲԱԿԱԼՈՒՄ Է ՍԻԱՎՈՒՇԻՆ

Թուրք բանակի հոծ գնդերը պաշարեցին սար ու ձոր,
Կռվի ելան նիզակահար թե հետևակ, թե հեծվոր:

Բայց իրանցի ռազմիկները կանգնել էին լուռ, շվար,
Այդ միջոցին չգիտեին՝ ինչ ելք գտնել, ինչ հնար:

Սակայն նրանք Սիավուշին բողոքեցին անհամբեր.
«Ով լուսամիտ, չե՞ս տեսնում, որ օղակվել է զորքը մեր:

Թույլ տուր կռվենք, կամ թե մեզ հետ մի բան խոսիր ու դատիր,
Ոչ ոք մեզնից չի ցանկանում մեռնել նսեմ, անպատիվ»:

«Ի՞նչ խորհուրդ տամ,- ասաց զորքին Սիավուշը այդ պահին,-
Եթե կռվենք՝ այդ կլինի մեծ նախատինք մեր պատվին:

Անվայել է կտրիճ մարդուն դիմել կռվի և ուժի,
Թե կռվեմ էլ՝ Աֆրասյաբը, հաստատ գիտեմ, չի տուժի:

Ով որ ծնվեց չար աստղի տակ, նա դժբախտ է իր կյանքում,
Այս լավ միտքը ավանդել է մի բանիմաց իմաստուն»:

Ապա դարձավ Աֆրասյաբին Սիավուշը անհամբեր.
«Հնարամիտ ով փադիշահ, դու ցամաքի, ծովի տեր,

Ո՞ր հանցանքիս համար ես դու կռիվ մղում, ով արքա,
Կամ ինչ մեղք եմ գործել քո դեմ, թե՞ մի ուրիշ պատճառ կա»:

Բայց չարամիտ Գերսիվազը խոսեց շահի փոխարեն.
«Դո՛ւ կռչեցիր, որ շահի դեմ պատերազմի փող հարեն»:

Սիավուշը պատասխանեց. «Մի՛ բարբառիր, նենգամիտ,
Ո՛վ դավադիր, քեզ լսելով՝ թակարդ ընկա ինչպես վիթ:

Անմեղ մարդիկ դեռ շատ պիտի թափեն արցունք ու արյուն,
Բայց Իրանում և Թուրանում դու կունենաս վատ անուն»:

Այնուհետև Աֆրասյաբին ասաց քաջը զորնդեղ.
«Ո՛վ թագավոր, աշխարհին արիր արյան գետեր ու հեղեղ:

Ինձ գլխատիր, բայց այսուհետ չես ունենա հանգիստ քուն,
Քանզի անմեղ մարդու վրա հարձակվեցիր դու թաքուն:

Ականջ դրիր ուխտադրուժ Գերսիվազին բանսարկու,
Կգա մի օր, թշնամաբար չեք վստահի մեկ-մեկու»:

Իսկ խորամանկ Գերսիվազը այդ խոսքերից զայրացավ.
«Պետք չէ,- ասաց,- թշնամու հետ լինել այդքան սրտացավ»:

Ապա շահը հրամայեց, որ արիացող նիզակեն.
Այնպես նետեր արձակեն, որ մեռելները աղմկեն:

Սակայն կռվից մի կողմ կանգնեց Սիավուշը ռազմազեն,
Արգելակեց իր քաջերին, որ թուրքի դեմ չվազեն:

Աֆրասյաբը իր բանակին մարտակոչի էր կանչում,
Պատերազմի ասպարեզում զենք ու զրահ էր շաչում:

Սիավուշը իր ձեռքի տակ ուներ հազար թիկնազոր,
Մենամարտում մեկը մեկից հնարամիտ ու հզոր:

Եվ բոլորը քաջի մահով կռվում ընկան անհատաս,
Հողը նրանց արյան գույնից եղավ կարմիր մի կակաչ:

Իսկ վիրավոր Սիավուշը իր նժույգից ընկավ ցած
Ու թավալվեց գետնի վրա, կարծես գինով էր հարբած:

Իսկ Գորույը կապկպում էր և հարվածներ էր տեղում,
Քաշքշելով Նոճուն տարավ դրեց ճամփի մեջտեղում:

Այնուհետև Սիավուշին պատառոտված, արյունոտ
Տարան մինչև բերդաքաղաք, թուրանական շահի մոտ:

«Հեռո՛ւ տարեք,- ասաց շահը ատելությամբ, զայրույթով:-
Տարեք դաշտում վիզը կտրեք կացինով կամ թե թրով:

Այնպես արեք, որ արյունը թափվի միայն չոր քերծին,
Որ նոր արմատ այնուհետև ծլարձակել չփորձի»:

Բայց Թուրանի զորքը գոչեց. «Ո՛վ Աֆրասյաբ մեծանուն,
Դու իզուր ես այս անմեղին մահվան պատիժ սահմանում:

Ողջ Իրանը պիտի սգա քաջի համար իր պայծառ,
Իսկ քո ձեռքով դու տնկեցիր քինապտուղ թույնի ծառ»:

Ծեր-Փիրանի քաջ եղբայրը ծառայում էր բանակում,
Մեծ ու փոքր Փիլսոմ էին ասում ազնիվ այդ մարդուն:

Աֆրասյաբին այսպես խնդրեց. «Ո՛վ երկնային դու պարգև,
Բազում անգամ ծանր բեռ ես դնում ուսին քո թեթև:

Այդքան չնչին բան մի կարծիր այս եղեռնը քո անգութ,
Աhրիմանը ե՛րբ է տվել մարդկանց բարիք կամ օգուտ:

Անմեղ մարդուն մի՛ գլխատիր, մի՛ անիծիր Թուրանին,
Մի՛ նորոգի հին վերքերը Քաուս շահի, Ռոստամի:

Թե չես կարող Նոճու գլխին դնել շահի ոսկե թագ,
Մի՛ գլխատիր, նրա մահը մեզ կբերի մեծ փորձանք:

Դիր պատյանում թուրանակերտ սուր դաշույնը քո ռազմի,
Քանզի մահից հետո ոչ ոք քո աթոռին չի բազմի:

Մոռացե՞լ ես աշխարհասաստ, մեծ քաջերին Իրանի,
Թե չես հիշում՝ հիմա կասեմ անունները մի առ մի:

Հիշիր առյուծ պատառոտող քաջ Գուրգինին ու Թուսին,
Հնարամիտ մեծ Ֆարիադին, փղից ուժեղ Գուդերզին:

Ամրաբազուկ Ռոստամ-Զալը կհարձակվի վագրի պես,
Նրա ահից Թուրանը դու պիտի թողնես ու փախչես:

Քո դեմ կգա կռվից անկուշտ Քաուս շահը ոսկեթագ,
Քանզի ունի ընտիր քաջեր՝ այրուձի և հետևակ:

Կգան նաև Ֆարիբուրզը, Գոսթեհեմը, Զեվարան,
Ֆարամարզը, Գեժդեհեմը, Բահրամը և Շավերան:

Եվ Թուրանը նրանք կանեն նշանառու մի վահան,
Ո՛չ Գորույը կդիմանա, ո՛չ Դեմուրը անվարան:

Դու լավ գիտես, որ Փիրանը պատերազմում չի հոգնի,
Բայց երբ տեսնի այս եղեռնը՝ նա քեզ բնավ չի օգնի»:

Աֆրասյաբը շատ հավանեց Փիլսոմի այդ միտքը սուր,
Բայց չարամիտ Գերսիվազը շահին լավ բան չէր ասում:

Նա ամոթը մի կողմ դրեց, ասաց. «Ո՛վ շահ երկնաթագ,
Ականջ մի դիր դու Փիլսոմի խորհուրդներին սին-դատարկ:

Ոտքիդ տակ է նրա գանգը, ջարդի՛ր, ի՞նչ է պատահել,
Երբևիցե ո՞վ է լսել՝ օձին ներում շնորհեն:

Հարկ կա՞ այժմ մտածել, թե ինչն է սխալ, ինչը՝ ճիշտ,
Ով թշնամուն չի գլխատում՝ անիծվում է մեկընդմիշտ»:

Ապա Գորայ-Զարեհ հսկան գոռ Դեմուրի հետ մեկտեղ
Եկան, թե. «Շահ, մի՛ խնայիր մեր ոսոխին այլացեղ:

Գերսիվազի խելոք խոսքին ականջ արա ու դատիր,
Զի թշնամուդ ջախջախելով դու կստանաս մեծ պատիվ»:

«Սա մեղք չունի,- ասաց շահը,- չի տա վնաս ինձ երբեք,
Բայց իմաստուն խոսք է ասել ինձ մի անգամ մի մոբեթ –

Սիավուշը եթե ապրի՝ ոչ վնաս է, ոչ օգուտ,
Իսկ թե մեռնի՝ ցավ ու տանջանք պիտի բերի քո հոգուն:

Նրա մահով արևն անգամ պիտի կորչի փոշու մեջ,
Բազմաբազում արիաց զորքը Թուրան կգա մեջընդմեջ:

Սիավուշին ազատելը և՛ տանջանք է, և՛ հարված,
Գլխատելով՝ նոր վրեժի հիմք եմ դնում անկասկած»:

Այս անիմաստ փուչ աշխարհից ուսում առանք իբրև թե,
Ոչ հիմարը բան հասկացավ, ոչ խելոքը բան գիտե...

ՖԱՐԱՆԳԻՍԻ ԼԱՑ ՈՒ ԿՈԾԸ ԱՖՐԱՍՅԱԲԻ ՄՈՏ

Ֆարանգիսը չոքեց գետին, գլխին ցանեց մի բուռ հող,
Արտասուքով ասաց. «Ով շահ, հնարամիտ ու կարող.

Մոլորվեցիր շիտակ ճամփից խաբեության պատրանքով,
Դու ուզում ես մոխիր դառնա Թուրանը քո հանցանքով:

Կույր աչքերով դու մի նայիր գահից գետին, ով արքա,
Չէ՞ որ ճորտից մինչ ազատը քո կամքին է ենթակա:

Մի՛ գլխատիր անմեղ մարդուն, Արարիչը չի ների,
Նա ծնողից փախավ, որ քեզ դառնա նեցուկ անթերի:

Գալով քեզ մոտ՝ վիշտ պատճառեց թե Իրանին, թե շահին,
Որ քո գահը հաստատ մնա, որ խորտակվի թշնամին:

Սրահ կոչված այս աշխարհում մեզնից ոչ ոք չի մնա,
Ով մեկ անգամ աշխարհ եկավ՝ մեկ անգամ էլ կգնա:

Աստված մեկին ոսկե թագով խոր շիրիմ է ուղարկում,
Ով որ զուրկ է թագից, գահից՝ շահնշահ է նա կարգում:

Աշխարհում կա երկու ճամփա՝ մեկը երկար, մեկը՝ կարճ,
Մեկը դեպի գահ է տանում, մեկը՝ գահից մինչև հարճ:

Այդ երկուսը մեկ է, պիտի վերջիվերջո հող դառնան,
Էլ ինչո՞ւ ես վատ ճանապարհ դու որոնում անպայման:

Ամեն մի մարդ պիտի գործով շիտակ լինի իր կյանքում,
Երբևիցե թե չի ուզում, որ խճրճվի ծուղակում...

Մի՛ հավատա Գերսիվազին, նա խարդախ է, խաբեբա,
Մի՞թե շահը չի հասկանում, որ աշխարհում անեծք կա:

Ֆերիդունը գիտես ինչպես չարդեց գանգը Զոհակի,
Այդ չարագործ, արյունարբու Աhրիմանի զավակին:

Կամ ի՞նչ թողեց Մանուչեհր շահը ամբողջ Թուրանում,
Սելմ ու Թուրի հետ վաղօրոք հող են դառել դամբանում:

Մի մոռանա, Քաուս շահը կենդանի է, ունի գահ,
Ողջ Թուրանը Ռոստամ-Զալից պիտի տեսնի ահ ու մահ:

Չե՛ս մոռացել ամրաբազուկ Փիշտեվազյան Գուդերզին,
Նա առյուծ է պատառոտում առանց սրի ու գուրզի:

Փահլևանի թուրը նույնպես չնչին բան են համարում
Քաջ Ռահամը, հսկա Զանգին, հզոր Գիվը աշխարհում:

Ապա հիշիր խիզախ Թուսին, Գոսթեհեմին, Գուրգինին,
Եվ Աշկեկին, մեծ Բահրամին, Շեդուշին ու Բորզինին:

Դու քո ձեռքով պատրաստեցիր քո դեմ հարված մահաբեր,
Հետագայում կհասկանաս խոսքի գինը քո դստեր:

Որս չես անում, որ ես ասեմ՝ վայրի ցիռ ես վայր գցում,
Քաջ որսորդը որսից առաջ աղոթում է Աստըծուն:

Սիավուշի քենի համար չէ՞ որ Աստված կպատժի,
Իմ խոսքերից գուցե սիրտդ նրա հանդեպ գութ շարժի:

Շահը պիտի ներող լինի, խելքով վարի պետություն,
Շահի համար ավելորդ են բռնություն ու խստություն»:

Ապա փետեց իր մազերը, թափեց աղի արտասուք,
Գլուխն ամբողջ՝ հողաթաթախ, մարմինը՝ մերկ, սիրտը՝ սուգ:

ԳՈՐՈՒՅ-ԶԱՐԵՀԸ ՍՊԱՆՈՒՄ Է ՍԻԱՎՈՒՇԻՆ

Քարապատնեշ ամրոցի մեջ կար մթապատ մենախուց,
Ուր որ անգամ ոտք չէր դրել մարդ էակը դեռ վաղուց:

Ֆարանգիսին քաշքշելով տարան դեպի մենարան,
Դռան վրա պահակ դրին և ամրակապ հենարան:

Բայց այդ պահին Սիավուշը բացականչեց. «Ո՛վ Աստված,
Իմ սերնդից դիր պատվաստ ճյուղ՝ հզոր ձեռքով քո հաստված,

Որ նա լինի և՛ լուսեղեն, և՛ հրացայտ հանց արև,
Եվ բոլորից բազմագիտուն, խիզախ զինվոր, հանճարեղ,

Որ իմ քենի համար առնի Աֆրասյաբից մեծ վրեժ,
Եվ գրավի մեհյանասուրբ բերդ-քաղաքը իմ Կանգդեժ»:

Եվ Փիլսոմին այսպես խնդրեց. «Ո՛վ անվանի նետաձիգ,
Թող Թուրանը լոկ թել լինի, իսկ դու՝ անծայր մի կծիկ...

Ինձնից բարև տար Փիրանին՝ քո եղբորը բարեպաշտ,
Ասա շահի թագը առան, գլխիս դրին զոհի տաշտ»:

Չար Գորույը Գերսիվազից առավ հատու մի դաշույն,
Առանց խղճի, պատկառանքի, նա գլխատեց սեգ Նոճուն:

Այնուհետև արյունալից տաշտը թափեց մի չոր տեղ,
Այդ արյունից մի բույս աճեց, մի բորբ ծաղիկ ոսկեգեղ:

Աստված գիտե, թե ոնց աճեց այդ ծաղիկը կարմրախայտ,
Խունսիվուշ է անվանում այդ ծաղիկին ամեն մարդ:

Ժողովուրդը ամենուրեք թափեց անեծք ու լուտանք,
Եվ Գորույին անվանեցին Աhրիմանի չար զավակ:

Մահից հետո ինչի են պետք հող ու քաղաք, թագ ու բերդ,
Արեգակը և լուսինը թող խավարեն աստղաց հետ:

Թե երկնքում ինչ գաղտնիք կա՝ մտածում եմ շատ վաղուց,
Ուժից վեր է լուծել սակայն, նույնիսկ չնչին մի հանգույց:

Դու այս կյանքի խոր ցավերը մի դարձրու քեզ ընկեր,
Սրահ կոչված այս աշխարհը դատարկ տուն է, մահու բեռ:

Այս հողաբույր օթևանում միշտ հոսում է արյան գետ,
Ինչ որ եղավ՝ պիտի լինի, չես խուսափի ոչ մի կերպ:

Սիավուշկերտ ապարանքից նորից լսվեց լաց ու կոծ,
Ֆարանգիսի ձայնը հասավ մենախցից մինչ փողոց:

Նա ճղատեց իր շորերը ու երեսը վարդաշուք,
Սև աչքերից ամպի նման թափեց աղի արտասուք:

Աղաղակի ձայնը հասավ Աֆրասյաբի ականջին,
Գերսիվազին ասաց. «Լսիր հրամանը իմ վերջին –

Իմ աղջկան քաշքշելով տարեք հեռու մի խուլ վայր,
Կամ ամրոցի բարձր պատից նետեք նրան դեպի վար:

Թող որ մարդկանց առջև դառնա ամոթահար ու նսեմ,
Որ Թուրանում երբևիցե նա չցանի քենի սերմ:

Սիավուշի պատվաստ ծառից թող չլինի բերք ու բար,
Թող կործանվի գահը նրա իր բերդի հետ հավասար»:

Բայց այդ պահին շահի զորքը աղաղակեց դառնաճիչ,
Աֆրասյաբին անվանեցին արյունախում ու դաժիճ:

Հոգին խոցված հեզ Փիլսոմը աղաղակով, արցունքով
Ներկայացավ Ֆերշիդվարդին ու Լեհակին այս խոսքով.

«Լավ է, որ մարդ դժոխք գնա, քան Աֆրասյաբ շահի մոտ,
Մեր աշխարհում ոչ հանգիստ կա, ոչ ազնիվ մարդ սրտամոտ:

Գնանք և այս դեպքի մասին տեղյակ պահենք Փիրանին,
Գեհինների բախտը պետք չէ հանձնել մարդկանց Թուրանի»:

Ու թամբեցին երեք նժույգ, հողը առան ոտքի տակ,
Փոշու ամպը վեր բարձրացավ մինչ երկինքը կապուտակ:

Նրանք հասան Տեր-Փիրանի ապարանքը զորանիստ,
Սիավուշի մահվան մասին զեկուցեցին դառնախիստ:

Տեր-Փիրանը չէր սպասում մի այդպիսի դաժան գործ,
Նա շորերը պատառոտեց ու տարածեց լացուկոծ:

Բայց Լեհակը ասաց նրան. «Ո՛վ անվանի փահլևան,
Աֆրասյաբը որոշել է նույնիսկ կախել աղջկան...»:

Ու Փիրանը հրամայեց՝ բերեն ընտիր նժույգներ,
Որ շուտափույթ նա Ռույինի, Ֆերշիդվարդի հետ մեկներ:

ՓԻՐԱՆԸ ԱԶԱՏՈՒՄ Է ՖԱՐԱՆԳԻՍԻՆ

Տեր-Փիրանը անքուն օրեր ճամփա կտրեց հոգնատանջ,
Եկավ, հասավ Աֆրասյաբի ապարանքը օր առաջ:

Տեսավ շփոթ հանդեսի մեջ ամեն փողոց, ամեն տուն,
Ասես, իրոք, նոր էր եղել մեռելների հարություն:

Տեսավ նաև Ֆարանգիսին արտասվաքամ ու թախծոտ,
Նրա գլխին շողշողում էր մահվան սուրը մահաբեր:

Ֆարանգիսը աղաղակեց. «Ով փահլևան բարեգութ,
Չէի կարծում, որ ապագաս սև կլիներ, այսքան մութ»:

Եղեռնալուր Տեր-Փիրանը ընկավ գետին վշտածեծ,
Հագուստները պատառոտեց, մանկան նման արտասվեց:

«Աֆրասյաբի գլխում, իրոք, ճիշտ են ասում՝ խելք չկա,
Իր փեսայի կյանքը խլեց, մահ է սաստում աղջկան...»:

Ապա դարձավ բանտապահին, ասաց. «Թողեք մինչև գամ,
Ես կբերեմ թուղթը ներման Աֆրասյաբից չարակամ»:

Նա վազեվազ գնաց, ասաց. «Ով Աֆրասյաբ խորագետ,
Դու Թուրանի երկիրն արիր մի հորդառատ արյան գետ:

Գուցե նորից Աhրիմանը հոգու խորքն է մտել քո,
Որ մեր պայծառ օրը արիր մթաշխարհի երեկո:

Այստեհետև նսեմացավ թագը, գահը քո վսեմ,
Խաղաղ մարդիկ նորից պիտի պատերազմի ձայն լսեն:

Մարդիկ կասեն Աֆրասյաբը կարճամիտ է, անխոհեմ,
Սիավուշի մահվան համար անշուշտ պիտի քեն պահեն:

Կանցնեն օրեր ու տարիներ՝ կփոշմանես անպատճառ,
Ո՛վ գիտի, թե ինչ պատիժ է Աստված պահել քեզ համար:

Սիավուշին գլխատեցիր, ինչո՞ւ կպար քո դստեր,
Նա ո՛չ գահ է քեզնից ուզում, ո՛չ հողամաս, ո՛չ ճորտեր:

Քո արարքով նսեմացար Իրանում թե Թուրանում,
Հղի կնոջ գլխի վերև ո՛վ է արդյոք սուր հանում:

Ո՛վ Աֆրասյաբ, մի տրորիր դու իմ սիրտը խորախոց,
Աղաչում եմ, Ֆարանգիսին թույլ տար տանեմ կանանոց:

Եթե չարը երեխայի մասին է լոկ երկմտում,
Երբ որ ծնվեց՝ անտարակույս ետ կբերեմ ես քո տուն:

Այն ժամանակ նրա մահը դու կտեսնես քո ձեռքով,
Բայց համբերիր, որ աշխարհի գա բնականոն երկունքով»:

Աֆրասյաբը պատասխանեց. «Համաձայն եմ, ո՛վ Փիրան,
Բանտից դուրս բեր՝ տար կանանոց իմ աղջկան նրբիրան»:

Ծեր-Փիրանը Ֆարանգիսին տարավ առանց նեղության,
Թուրանական հողից անցավ, գնաց հասավ մինչ Խոթան:

Նա երբ հասավ իր դղյակը, լսեց ուրախ աղաղակ,
Աղաղակի ձայնը հասավ ապարանքից մինչ լուսնյակ:

Իր կնոջը՝ Գյուլշահերին ասաց. «Ո՛վ կին լուսնահեզ,
Տար կանանոց Ֆարանգիսին և ծառայիր ճորտի պես»:

Բախտանիվը պտույտ գործեց բավականին ժամանակ,
Ֆարանգիսը աշխարհի բերեց գեղեցկատես մի զավակ...

ՖԻՐԴՈՒՍԻ

ՇԱՀՆԱՄԵ

FIRDOWSI

SHAHNAMEH

ФИРДОУСИ

ШАХНАМЕ

Թարգմանիչ՝ Ս. Ումառյան
Նկարիչ՝ Վ. Զաքարյան
Խմբագիր՝ Ա. Նիկողոսյան
Տեխն. խմբագիր՝ Ա. Թովմասյան
Սրբագրիչ՝ Ա. Մարգարյան
Համակարգչային ձևավորող՝ Մ. Էդիլյան
Կազմը՝ «Անտարես» մեդիա հոլդինգի

Չափսը՝ 60 x 84 1/16: Ծավալը՝ 34 տպ. մամուլ: Թուղթը՝ օֆսեթ 80 գ/քմ.:
Տպագրության եղանակը՝ օֆսեթ: Տառատեսակը՝ "GHEA Parmani": Տպաքանակը՝ 500:

Формат 60 x 84 1/16. 34 печ.л.. Бумага офсетная 80 г/м². Печать офсетная.
Гарнитура "GHEA Parmani". Тираж 500.

«Անտարես» հրատարակչատուն
Երևան 0009, Մաշտոցի պ., 50ա/1
Հեռ.՝ +(374 10) 58 10 59, 56 15 26
Հեռ./ֆաքս՝ +(374 10) 58 76 69
antares@antares.am
www.antares.am

8(55)
Ֆ-65

ՖԻՐԴՈՒՍԻ

(Մոտ 932/935/936 թ., ք. Թուս, Խորասան, Միջին Ասիա - 1020/1026 թ., ք. Թուս)

Հաքիմ Աբուլղասեմ Ֆիրդուսի-ե Թուսի («Ֆիրդուսի» պարսկերեն նշանակում է «դրախտային») մանկության և պատանեկության մասին շատ քիչ տեղեկություններ են պահպանվել: Ստացել է լավ կրթություն. տիրապետել է նոր պարսկերենին, արաբերենին, իմացել է հին պարսկերեն:

976 թ-ին Թագավորական պալատի պատվերով շարունակել է գրել «Շահնամե» («Արքայապատում») պոեմը, որը սկսել էր վաղամեռիկ բանաստեղծ Դաղիղին:

«Շահնամե»-ում նկարագրվում է Իրանի պատմությունը հնագույն շրջանից մինչև Խոսրով II-ի ժամանակները՝ մահմեդականության ներթափանցումը երկիր (VII դ.):

Առաջին տարբերակն ավարտել է 994 թ-ին, իսկ երկրորդը՝ 1010 թ-ին:

Ֆարսի բլբուլը, անմահ Ֆիրդուսին...
ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ

9 789939 513454
Antares
www.antares.am